



Է. Բ. ԱՂԱՅԱՆ

ԴՐՎԱԳՆԵՐ  
ԱՐԵՎԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

1 9 7 1

ԵՐԵՎԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԳՐՈՇԻ ՇՔԱՆՇԱՆՍԿԻՐ  
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ


---

Ց 11(5)  
Ա - 44

Է. Բ. ԱՂԱՅԱՆ

ԴՐՎԱԳՆԵՐ ԱՐԵՎԵԼԻԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

469



ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1971



## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Սույն գրքի մեջ ամփոփված են մի քանիսը այն դաստիարակ-  
թյուններից, որոնք հեղինակը կարգացել է Երևանի պետական հա-  
մալսարանի հայկական բանասիրական ֆակուլտետի արևելյան լե-  
զուների բաժնում: Հեղինակը նպատակ է ունեցել հանրամատչելի  
շարադրանքով ծանոթացնել հայ ընթերցողին Արևելքի ժողովուրդ-  
ների մի քանի նշանավոր բանաստեղծների ստեղծագործություննե-  
րին (Ֆիրդուսի, Նիզամի, Նավոի և այլն): Նկատի ունենալով, որ  
այս գրքում տեղ գտած բանաստեղծների ստեղծագործություններից  
շատերը հայերեն լեզվով թարգմանված չեն, հեղինակն աշխատել  
է բովանդակության հնարավորին չափ ընդարձակ շարադրանքով  
ընթերցողներին պատկերացում տալ այս կամ այն ստեղծագործու-  
թյան մասին:

Գրքի մեջ տեղ գտած հեղինակների ընտրությունը կատարվել  
է որոշակի սկզբունքով. այդ բանաստեղծներից յուրաքանչյուրը  
հիմնադիր է կա՛մ գրական որևէ ուղղության (Խայամ, Գորգանի),  
կամ էլ որևէ ժողովրդի գրականության (Նիզամի, Նավոի): Աշ-  
խատության մեջ հատուկ անունների տառադարձության համար ըն-  
դունել ենք հետևյալ սկզբունքը. եթե հատուկ անունը ավանդված է  
մեր գրականության մեջ և ստացել է հայացի ձև, ապա պահպանել  
ենք նույնությունը (օր. Ֆիրդուսի, Վշտասպ և այլն), հակառակ  
պարագայում ելակետ ենք ընդունել ժամանակակից պարսկական  
արտասանությունը:

Հրատարակության հանձնելով սույն գիրքը, հեղինակը կար-  
ծում է, որ այն որոշ չափով կարող է օգնել արևելագիտական ֆա-  
կուլտետի ուսանողությանը՝ Արևելքի ժողովուրդների գրականու-  
թյան ուսումնասիրության գործում:

ՊԱՐՄԱՎԱ-ԹԱՋԻԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԻՉԲԸ

(Համառոտ ակնարկ)

Յոթերորդ դարի առաջին կեսին, երեք ճակատամարտերի հետևանքով Իրանը վերջնականապես և ամբողջությամբ նվաճվեց արաբների կողմից: Վերջին Սասանյան Հազկերտ երրորդի տապալումով անդառնալիորեն պատմության գիրկն անցավ Սասանյան հարստության շորհարչության արքայական փառքը: Արաբները վերջ ավին իր ներսում արդեն քայքայվել սկսած Սասանյան Իրանի անկախությանը և նրա տերն ու տնօրենը դարձան: Սակայն արաբական նվաճումները դրա հետ միասին վերջ տվին նաև Իրանի սնտեսական քայքայմանը, թեև, իհարկե, ոչ ընդմիջու: Նրանք երկիրն ազատեցին հույներ ու աշխարհիկ ֆեոդալների միջև եղած և օրավուր սրվող հակասություններից՝ մի կողմից, և համեմատաբար թեթևացրին, թեև ժամանակավորապես, բնակչության հիմնական մասը կազմող գյուղացիության դրությունը՝ հարկերի որոշ թեթևացումով՝ մյուս կողմից: «Պարսիկ ֆեոդալների անընդճատ պայքարի գորղյան հանգույցը ժամանակավորապես լուծվեց արաբական զորքերի կողմից, և բոլորովին քայքայված երկիրն սկսեց աստիճանաբար կարգի ընկնել»<sup>1</sup>: Բայց տիրող արաբները, չնայած իրենց ամբողջ հզորությանը, չէին կարող հաշվի շահնել Իրանի մտտիկ անցյալը, հատկապես նրա վարչական սխտեմը: Խալիֆաթն իր տիրած երկրների կառավարման գործում հաճախ հետևում էր պարսիկների օրինակին: Եվ այդ էր պատճառն, ահա, որ հենց Աբրահայան խալիֆաների օրոք պարսիկ ֆեոդալներն սկսում են մեծ դեր խաղալ խալիֆաթի կյանքում: Բավական է հիշել Բարմադայան տոհմի խաղացած դերը խալիֆաթում մոտ հիսուն տարվա ընթացքում, որպեսզի պարզ լինի պարսից ֆեոդալական արխատոկրատիայի նշանակությունն արաբական պետության մեջ: Հարուն ալ-Ռաշիդի որդի Մամուն խալիֆն այնքան առաջ գնաց այդ քաղա-

<sup>1</sup> А. Болотников, Омар Хаям, „Восток“, сборник, II, М.—Л., 1935, стр. 184.



քականության մեջ, որ վիճարկվող դահին տիրանալու և հակառակորդներին հաղթելու համար հենվեց Իրանի արևելյան շրջանի ֆեոդալների վրա, իսկ գահին տիրելուց հետո ամբողջ Խորասանը՝ Մերվ քաղաքով հանդերձ՝ ի տրիտուր հանձնեց նշանավոր պարսիկ Քահիրի կառավարմանը։ Քայց հենց այդ բանով էլ սկսվեց պարսից անկախության վերածնունդը։ Քահիրը և նրա հաջորդները բոլորովին յուրովի դիտեցին իրենց դիրքը։ Նրանք ուղղակի Խորասանի տերը հռչակեցին իրենց՝ հիմնելով Քահիրյան հարստությունը, բայց պահպանելով դեռևս վասալական հարաբերությունները խալիֆայի նկատմամբ։

Իրանի անկախությունը էլ ավելի մեծացավ Մաֆթարյանների հարստության շրջանում։ Հարստության հիմնադիրը՝ Յակուբը, որ Մաֆթար (պղնձագործ) մականունն էր կրում, տապալեց Քահիրյաններին և հիմնեց Մաֆթարյան թագավորությունը։ Նա, ճիշտ է, խալիֆայի գորքերից պարտվեց, բայց դա չխանգարեց, որ, այնուամենայնիվ, ավելի անկախ լինի խալիֆայից, բան իր նախորդները։

Մաֆթարյաններից ավելի հզոր գտնվեցին Անդրամուզարիայի (Մավերաննահր, Transoxania) իրանական տիրակալները՝ Մամանյանները։ Նրանք X դարում խլեցին Մաֆթարյաններից Խորասանն ու Մազիստանը և ստեղծեցին խալիֆայից իրապես անկախ մի տերություն, որ տարածվում էր Բուխարայից մինչև Պարսից ծոցը և Պարսկական Իրաքից մինչև Հնդկաստան։ Այդպիսով, ահա, Մամանյաններն ստեղծեցին նոր և անկախ Իրանը։ Սակայն նրանք էլ չկարողացան երկար ժամանակ պետությունն իրենց ձեռքում պահել։ Իրենց թագավորության հիմքերն անխախտ պահելու քաղաքականության մեջ նրանք՝ հետևելով խալիֆայի օրինակին, ստեղծում էին թուրք ստրուկներից կազմված թիկնապահ զորքեր։ Հենց այդ սովորությունն էլ նրանց կործանման պատճառը դարձավ։ Թուրք ստրուկը, մտնելով այդ, այսպես կոչված, «պրիտորական զվարդիանները», կարող էր ժամանակի ընթացքում հասնել բարձրագույն աստիճանի։ Անձնվեր ու աշքարաց թուրք զվարդիականը, որոշ ժամանակից հետո, կարող էր հասնել նույնիսկ առանձին գավառի կուսակալի աստիճանին։ Եվ այդպիսի մի թուրքի հզորության առջև էլ, ահա, ծնկի շոքեցին Մամանյանները։

Տասներորդ դարի երրորդ քառորդում Մամանյան էմիր Աբդ ալ-Մալիքի (954—961) օրոք Խորասանի կուսակալը դարձավ բարձր աստիճանի հասած թուրք ստրուկ զվարդիական Ալիթաքինը։ Նա մեծ նշանակություն էր ստացել ո՛չ միայն զորքի մեջ ունեցած յուր

ազդեցությամբ, այլև իր առասպելական հարստությամբ. սակայն Ալիթաքինը չկարողացավ երկար ժամանակ վաչելել կուսակալության բարեբներն ու էմիրի շնորհները։ Նրա նշանակվելուց չէր անցել դեռևս մի տարի, որ էմիր Աբդ ալ-Մալիքը մեռավ (961)։ Ակրսվեցին Արևելքին հատուկ խոսովություններն ու պայքարը գահին տիրանալու համար։ Այն արքայորդին, որի գահ բարձրանալը պահանջում էր Ալիթաքինը, տապալվեց հակառակորդ կուսակցության կողմից, և բուխարական էմիրների գահի վրա հայտնվեց հանպույժալ էմիրի Էզրայրը (Մանսուր Ա, 961—976), որի թեկնածության գեմ էր եղել Ալիթաքինը։ Միանգամից խախտվեց Ալիթաքինի դիրքը և բնկավ հեղինակությունը։ Նրանից խլվեց նաև Խորասանի կուսակալությունը. հաստատապես կարելի էր, իհարկե, սպասել նաև կալվածքների բռնադրավումը։

Թուրքական զվարդիայի մեջ Ալիթաքինն, այնուամենայնիվ, գտավ մի քանի հազար նվիրված համախոհներ, որոնք ամբողջապես բաժանում էին նրա դժգոհությունն ու ցասումը Մամանյան հարստության կողմից իր բազմամյա հավատարիմ զինվորի նկատմամբ ունեցած «անշնորհակալության» համար և պատրաստ էին մահ բնդունել հանուն իրենց պարավարի։ Ալիթաքինը նրանց հեռափախավ... Աֆղանական լեռների ետևը, Ղազնին (Ղազնա) քաղաքը... այնտեղ տապալեց տեղական իշխանիկին և հիմնեց իր սեփական՝ Ղազնեյյան թուրքական անկախ տերությունը<sup>1</sup>։

Մի կողմից Մամանյան տերության ներքին դրուժյունը, մյուս կողմից Ղազնայի լեռնային դիրքը բավականաչափ նպաստավոր վիճակ էին ստեղծում Ալիթաքինի իշխանության համար։ Համենայնդեպս, նա կարող էր առանձնապես երկյուղ շղրել սամանյան զորքերի հարձակումից։ Չնայած դրան, Ալիթաքինը, այնուամենայնիվ, չկարողացավ վերջնականապես ամրացնել իր դիրքերը և զրաված նահանգի սահմանները որոշել, ըստ որում, Ղազնայում հաստատվելուց մեկ տարի հետո նա մեռավ (963)։

Նրան հաջորդեց իր որդին, որ Ղազնայի նախկին տիրակալի գեմ վարած պայքարում ստիպված եղավ փախչել Բուխարա, խրնդրել Մամանյանների օգնությունը՝ հպատակվելով Մամանյաններին ու նրանց վասալը դառնալով։ Դրուժյունը փոխել չկարողացան նաև վերջինիս երկու հաջորդները։ Ղազնայի պետությանը վիճակված էր վասալական կախման մեջ մնալ մինչև Մաբութաքինի

<sup>1</sup> А. Крымский, История Персии, ее литературы и першишеской теософии, М., 1944, ч. I, стр. 71—76.



գահ բարձրանալը: Սարոբթաքինը նույնպես գնված թուրք ստրուկ-գվարդիական էր, որ ամուսնացել էր Ալփթաքինի աղջկա հետ: Շարունակելով ճանաչել իրեն Սամանյանների հպատակը՝ նա ճկուն քաղաքականությամբ կարողացավ պահպանել բարեկամական հարաբերությունները Բուխարայի տիրակալների հետ, իսկ մյուս կողմից՝ իր իշխանության սահմաններն ընդարձակել դեպի հարավ-արևմուտք՝ Միստանի ու Քելուչիստանի մարզերը և դեպի հարավ-արևելք՝ մինչև Հնդկաստանի հյուսիսային ծայրամասերը: Անշեղորհն ու մեծ հմտությամբ վարելով այդ քաղաքականությունը՝ Սարոբթաքինը կարողացավ ամրացնել իր տերության հիմքերը և մեծացնել ռազմական ուժը:

«Անցավ Սարոբթաքինի իշխանության 17 տարին, և հասավ այն պահը, երբ Բուխարայի էմիրն զգաց իր ղազնավյան անվանական վասալի իրական օգնության կարիքը (994): Բուխարա մայրաքաղաքը հենց նոր էր ենթարկվել թուրքերի արշավանքներին՝ հյուսիսից, ամեն տեղ Անդրամուղարիայում (Մավերանահր) տեղի էին ունենում ներքին խռովություններ, իսկ խորասանում և Մերվում երկու զորավար վասալներ միացել էին և ապստամբել էմիրի դեմ:

Սամանյան տերությունն այդ երկու խռովարար վասալներին զսպելու համար իրեն օգնության կանչեց երրորդին՝ Սարոբթաքինին:

Նա իր խիզախ թուրքերի և աֆղանցիների հետ զոհունակությամբ հայտնվեց ու հաջող գործողություններ վարեց... Արդյունքն այն եղավ, որ Բուխարայի էմիրի անհնազանդ վասալները պարտվեցին և էմիրը, իբրև վարձատրություն, զսպված խորասանի կուսակալության կառավարումը հանձնեց Ղազնավյաններին՝ Սարոբթաքինի որդի Մահմուդին: Իսկ ինչպես հայտնի է, խորասանի կուսակալությունը Սամանյան տերության մեջ շատ անկախ էր Բուխարայի կենտրոնական իշխանությունից»<sup>1</sup>:

Մահմուդը մնաց խորասանում մինչև հոր մահը, որից հետո, 999-ին տիրացավ Ղազնավյան գահին և, ընդարձակելով յուր տերության սահմանները, վերջապես կործանեց Սամանյան հարստությունն ու ստեղծեց Ղազնավյան անկախ ու հզոր պետությունը: Սակայն իր տիրապետության ավելի քան երեսուն տարիների ընթացքում ստեղծած այդ մեծ ու հզոր պետությունը նույնպես չկարողացավ երկար ժամանակ պահպանել իր գոյությունը: Մահմուդի մահ-

վանից (1030) հազիվ մի տասնամյակ էր անցել, որ 1035 թ. կիրգիզական ստեպներից՝ Սիր-Գարյայի ստորին հոսանքի ափերից ներգաղթած ու խորասանում (Մերվի շրջանում) հաստատված սելջուկները Ղազնավյան պետությունից խլեցին խորասանը (1040): Սելջուկյան երկու առաջնորդները՝ Չաղրի-բեկ ու Թողրու-բեկ եղբայրները, տիրանալով խորասանին (Մերվ քաղաքով հանդերձ) և հաստատելով այնտեղ իրենց գահը՝ շարունակեցին իրենց նվաճումները երկու ուղղությամբ. Չաղրի-բեկը՝ դեպի արևելք՝ Ղազնավյանների տիրապետությունը, Թողրու-բեկը՝ դեպի արևմուտք՝ Զիարիդների և Թուլիդների տերությունները: Դրա արդյունքն այն եղավ, որ արդեն 1058—1059 թվականներին Ղազնավյաններն ամբողջապես զրկվեցին իրենց պարսկական տիրապետություններից, իսկ Թողրու-բեկը, 1042—1055 թվականների ընթացքում խլելով Զիարիդներից Գուգանը՝ Քարաթիստանով հանդերձ, և Թուլիդներից՝ նրանց բոլոր տիրապետությունները, հաղթականորեն մտավ Բաղդադ (1055) և 1058-ին «ուղղափառների գլխավորի» կողմից սուլթան հռչակվեց: Այսպես, ահա, արաբների կողմից նվաճված Իրանում խալիֆաթի թուլացման ու քայքայման շնորհիվ մոտ երկու դարում (IX դարի առաջին քառորդի վերջից մինչև XI դարի կեսերը) իրար հաջորդեցին շոք հարստություններ, մինչև որ վրահասան սելջուկյան ավերիչ արշավանքները:

\* \* \*

Արաբական տիրապետությունը, սակայն, միայն քաղաքական անկախությունից չէ, որ զրկեց պարսիկներին՝ «նվաճողների ազդեցությունը թափանցեց ժողովրդական կյանքի ուղղակի խորքերը, փոխելով և վերակառուցելով հնացած կենցաղը»<sup>2</sup>:

Տապալելով Սասանյաններին ու տիրելով երկրին՝ արաբները ասպարեզից վտարեցին նաև պրադաշտական կրոնն ու Սասանյանների շրջանի լեզուն՝ պահլավերենը: Տարածելով մահմեդականությունը, արաբները կործանեցին պահլավական այն հարուստ մշակույթն ու զրականությունը, որ ստեղծել էին պարսիկները մոտ մեկ հազարամյակի ընթացքում: Հրի ու սրի միջոցով պարսիկներին կրոնափոխ էին անում. մահմեդականությունը տարածվում էր անսպասելի արագությամբ: Եվ, ահա, նորադարձ պարսիկների<sup>2</sup> առջև,

<sup>1</sup> E. Э. Бертельс, Очерк истории персидской литературы, Л., 1928 стр. 22.

<sup>2</sup> Անշուշտ նկատի է առնվում բարձր դասը՝ մտավորականությամբ հանդերձ,

<sup>1</sup> А. Крымский, Унш., էջ 75—76.



ինքնին ծառայալ տրդեն իսկ մահվան դատապարտված պահլավի-  
րենից հրաժարվելու և Ղուրանի լեզուն սովորելու խնդիրը, որին և  
նրանք անհապաղ ձեռնարկեցին: Այդ խնդիրը համեմատաբար հեշ-  
տությամբ լուծվեց գործին ժրաշան կերպով լծված ուշիմ պարսիկ-  
ների կողմից: Շուտով պարսկական մտավորականությունը կատա-  
րելապես տիրապետեց նվաճողների լեզվին. երկար ժամանակ չէր  
անցել նվաճումներից, և, ահա, պարսիկների դիտական ու բանաս-  
տեղծական ոգին բարբառեց արաբերեն լեզվով: Հրաժարված մայ-  
րենի լեզվից, նվաճվածները միառժամանակ ամեն ինչ վարում էին  
Ղուրանի սրբազան լեզվով՝ «Ղուրանի լեզուն դուրս մղեց պահլա-  
վերենը գրականությունից, կրոնից, պետությունից և պարսկական  
մուսան երգեց արաբերենով»<sup>1</sup>: Այդպես շարունակվեց շուրջ հար-  
յուր տարի: Նվաճումներից հետո Օմայան խալիֆաթի ամբողջ գո-  
յությունը շրջանը պարսիկների համար, այսպես ասած, վերածնուն-  
դի նախապատրաստական շրջանը հանդիսացավ: Տիրապետելով  
արաբերեն լեզվին, պարսիկներն սկսեցին ուսումնասիրել նաև տի-  
րողների մշակույթը, գիտությունը, գրականությունն ու արվեստը:

Արաբների տիրապետության այդ շրջանում պարսից ազգային  
գիտությունն ու գրականությունն իր դադարի շրջանին անցավ,  
պահլավական գրականությունը դարձավ մի բուռ գրադաշտական-  
ների սեփականությունը և իր գոյությունը պահպանեց նրանց մաս-  
ձիշտ է, կային բազմաթիվ գիտնականներ ու բանաստեղծներ, ո-  
րոնք յուրացրել էին նվաճողների ամբողջ մտավոր հարստությունը,  
սակայն նրանք էլ, երբ գործն ստեղծագործելուն էր հասնում, գրում  
էին արաբերեն լեզվով: Արաբական գրականությունից մեզ հայտնի  
են շատ բանաստեղծներ, որոնք ծագումով պարսիկներ են, բայց  
գրել են արաբերեն լեզվով: Այսպես, օրինակ՝ տասը—տասնմեկ-  
երորդ դարի հեղինակ Նիշափուրցի Քալիբի կազմած արաբական  
բանաստեղծության ժողովածուի երրորդ ու չորրորդ հատորները  
նվիրված են արաբերեն լեզվով գրած պարսիկ բանաստեղծների  
ստեղծագործություններին<sup>2</sup>:

Պարսիկների գերն արաբական կամ, ավելի ճիշտ, արաբալեզու  
գիտության ու մշակույթի զարգացման գործում սկսվեց առաջին  
հերթին թարգմանական աշխատանքներով: Եթե Օմայան խալիֆա-

թի գոյության առաջին կեսում արաբները բարձրից էին նայում  
նվաճված պարսիկների անցյալի մշակույթին ու գրականությանը,  
ապա երկրորդ կեսից արդեն սկսվում է հակառակ երևույթը: Պար-  
սիկներն իրենք արաբերենի էին թարգմանում պահլավական գրա-  
կանությունը, որով և արաբական մտավորականությունը ծանոթա-  
նում էր պահլավական հարուստ մշակույթին: Եվ, ահա, սկսվում է  
թարգմանական մի եռանդուն գործունեություն, որի շնորհիվ արա-  
բերենի են թարգմանվում պահլավական գրականության լավագույն  
նմուշները: Հատկապես նշանավոր է VIII դարի թարգմանիչ Իբն ալ-  
Մուկաֆֆան (724—759), որ արաբերենի է թարգմանել պահլավա-  
կան բազմաթիվ գրքեր, որոնց թվում՝ «Քալիլա ու Գիմնա» հնգ-ի-  
բանական վեպը, «Մազդակի գիրքը» և պարսից թագավորների  
պատմությունը՝ «Տերերի գիրքը» (Խվաթայ նամակ): Խիստ ազգա-  
յին ոգով սագորված օմայանները հաճախ արգելում էին պահլա-  
վական այդ գրքերի օգտագործումը, հայտնի է խալիֆ Մութասի-  
մի (833—842) պալատական ականավոր գործիչ, պարսիկ Աֆշի-  
նի (մահապատժի ենթարկված 841-ին) դատը թլիփատված շինե-  
լու համար, որի ժամանակ մեղադրում էին նրան նաև պահլավա-  
կան գրքեր կարդալու մեջ: Սակայն որքան էլ օմայանները հակառակ  
լինեին դրան, այնուամենայնիվ, ի վիճակի չէին սկսվածի առաջն  
առնել: Արաբ մտավորականները ծանոթանալով պահլավական,  
հատկապես Մասանյան շրջանի գրականությունը՝ հասկացել էին  
նրա արժեքը և ջանասիրաբար ուսումնասիրում էին այն: Թե ինչպիսի  
բարձր արժեք էր ստացել այդ գրականությունն արաբ մտավորա-  
կանների աչքում, երևում է բանաստեղծ ալ-Աթթարիի (IX դար)  
հետևյալ դատողությունից. «Եվ սրեկ ուրիշ տեղ կա՞ն արդյոք մըտ-  
քեր, բացի պարսկական (իմա՝ միջին պարսկական կամ պահլա-  
վական) գրքերից: Պերճախոսությունն ու դասական լեզուն մերն  
են, իսկ մաքրը՝ նրանցը»<sup>3</sup>: Պահլավական գրականության նկատ-  
մամբ եղած հետաքրքրությունն ու բարձր արժեքավորումը, որ ար-  
տահայտված է այդ դատողության մեջ, հատկապես ուժեղանում է  
Աբրասյան խալիֆների օրոք և այն աստիճանի է հասնում, որ եթե  
տիրապետության առաջին շրջանում պարսիկներն էին սովորում  
արաբերեն լեզուն ու յուրացնում նրանց մշակույթը, իսկ արաբները  
արհամարհանքով էին նայում տիրվածների մշակույթին, ապա  
հետագայում արաբներն են իրենց հերթին սկսում սովորել պահլա-  
վերեն լեզուն և յուրացնել նրանց հազարամյա գրականությունը:

ստորին խաղը իստում էր ժողովրդական պարսկերենով, որ և հետագայում պար-  
սից նոր գրականության լեզուն դարձավ:

<sup>1</sup> Darmesteter, Les origines de la poésie persanne, Paris, 1887, p. 3.

<sup>2</sup> А. Крыжский, Увг. 168.

<sup>3</sup> А. Крыжский, Увг, 162.



Այս պայմաններում և հատկապես Արքայան խալիֆայի օրոք արաբալեզու գիտությունն ու գրականության զարգացման գործում մենք համատեղ գործունեության մեջ ենք տեսնում արաբ ու պարսիկ մտավորականներին: Արքայանների օրոք է, որ իր զարգացման բարձր աստիճանին է հասնում գիտությունն իր բոլոր ճյուղերով (աստվածաբանություն, կրոնա-իրավաբանություն, բժշկություն և այլն), և հենց այդ ժամանակ է, որ պարսիկների համար վերջանում է, այսպես կոչված, նախապատրաստական շրջանը:

Շուրջ հարյուր հիսուն տարվա ընթացքում պարսիկները խորապես ուսումնասիրեցին տիրոջների ամբողջ գիտությունն ու մշակույթը և դրանից հետո միայն աստիճանաբար ստեղծեցին իրենց գրականությունը, իհարկե, արդեն ոչ զբաղաշտական-պահպանական, այլ՝ մահմեդական ոգով:

Առաջին հարցը, որ ծառայում էր պարսիկների առջև հայրենի գրականությունն ստեղծելու գործում, լեզվի հարցն էր. ի՞նչ լեզվով պետք է գրի առնվիր ազգային նոր գրականությունը. պահպանվե՞նք գործածությունից դուրս էր մղված և IX—X դարերում արգեն հասկանալի չէր միջին մակարդակի վրա կանգնած պարսիկին. նա դարձել էր զբաղաշտական կրոնի ու նրա հետևորդների լեզուն: Ուրեմն՝ ընտրությունն այսպես թե այնպես կանգ էր առնում իրականում արգեն իսկ կյանքի կոչված ու գոյություն իրավունք նվաճած, ժողովրդի առօրյա խոսակցության լեզուն դարձած և ժողովրդական ստեղծագործությունների միջոցով էլ բավականաչափ մշակված նոր պարսկերենի վրա: Եվ, իրոք, այդ լեզուն էլ դարձավ պարսկական նոր գրականության լեզուն, գրականություն, որ մի ամբողջ հազարամյակի ընթացքում հարստացրել է համաշխարհային գրականությունն իր անղուգական կոթողներով: Այդ լեզուն, շնչին փոփոխություններով, այժմ էլ մնում է իրրև պարսկական ժամանակակից պետական, գրական ու գիտական լեզուն:

Լեզվի հետ միասին էլ ծագել էր նաև այբուբենի խնդիրը, որ պարսիկները լուծեցին ավելի հեշտությամբ. նրանք ուղղակի յուրացրին արաբական այբուբենը:

Վերջապես գրականագիտական տեսակետից ավելի կարևոր էր տաղաչափության հարցը. ինչպիսի շափով (մետրիկայով) պետք է գրվեին պարսկերեն բանաստեղծությունները: Այստեղ էլ արաբական տաղաչափությանը լիովին տիրապետած պարսիկները վերցրին հենց արաբականը<sup>1</sup>, և փորձը ցույց տվեց, որ «նոր հազուատը

պարսկերեն լեզվին սաղում է անկարելիուն շափ լավ: Արաբական շափով գրված պարսկերեն բանաստեղծությունը հյուսվում է այնպես հարթ ու սահուն, այնպես զգվում է լսելիքը, որ նույնիսկ զրգվար է ճանաչել այդ շափի մեջ օտարը, դրսից բերվածը, փոխառյալը»: Բացի շափից, արաբական գրականությունից պարսիկները փոխ առան նաև քնարերգական ժանրերը՝ դասիզն ու գազելը: Արաբական տաղաչափությամբ էլ գրված է, ահա, պարսկական հենց առաջին բանաստեղծությունը: 809 թվականին, երբ Հարուն ալ-Ռաշիդի որդի Մամունը հաղթականորեն մտավ Մերվ քաղաքը, պարսիկ բանաստեղծ Արբաս Մերվեցին ձոնեց նրան մի ներքող, որ և ավանդաբար նոր պարսկերենով գրված առաջին բանաստեղծությունն է համարվում: Ահա Արբաս Մերվեցու այդ ներքողը.

Ով դու հզոր, որ վե՛ն հակառոգ երկնքին ևս արդ պարզել,  
Զույգ ձեռքերդ՝ բարիքներով մինչ բեռներ տարածել,  
Պաշտան ևս դու խալիֆական գահին, ինչպես բիրք՝ աչին,  
Վայել՝ աստու սուր կրոնին, ինչպես աչինը՝ մեր դեմքին:  
Ինձե՛նց առաջ այսպիսի երգ և ոչ մի մարդ դեռ չի գրել.  
Այս աեսակը պարսից լեզվին նույնիսկ հայանի էլ չի եղել:  
Բայց այս գովքը՝ քեզ նվիրված, նրա համար և՛մ ևս գրում,  
Որ ստանա պարսից լեզուն՝ քեզ զովելուց՝ վայելչություն՝:

Վերջին շորս տողերն արևելագետների միջև վիճարանության առիթ են դարձել, արդյո՞ք դա առաջին պարսկերեն բանաստեղծությունն է, արդյո՞ք դա իսկապես 809 թվականին է գրված, մի բան,

որ պահպանված շրջանում եղել են երգեր ու շափածո բանավոր ստեղծագործություններ, որոնցից իրրև նմուշ բերվում է սովորաբար ռուբային (քառյակ). այդ կենթադրությունը շատ հավանական են դարձնում հետևյալ փաստերը. պարսից գրականության մեջ քառյակն ամենատարածված ու շատ սիրված ժանրերից մեկն է եղել և է, մինչդեռ արաբական պոեզիայում նա թիչ է հանդիպում, իսկ VII—VIII դարերի պոեզիայում նա շափազանց սակավ օգտագործված ժանր է: Պարսից գրականության ժողովածուներում պահպանված են քառյակներ, որոնք գրված են VIII դարում, այսինքն՝ նոր գրականության հիմնադրումից առաջ, Ահա դրանցից մեկը, որ վերագրվում է VIII դարում ապրած ոմե Աբու Մալիքի.

Թո թարթիչներով գողացար ինձե՛նց սիրտս վշտագին.  
Օհ, քո բերանը դատավորի է, թարթիչդ՝ գողի,  
Պարզես ևս ուզում դու նրա համար, որ սիրտս տարար,—  
Օ, զարմանալիք, բայց ո՞վ է տեսել՝ պարզե տան գողին:

<sup>1</sup> E. Յ. Бертельс, Անդ. էջ 24:

<sup>2</sup> Ինչպես այս, այնպես էլ մյուս մեքերումները թարգմանել ենք մենք: Լեդ.

<sup>1</sup> Պարսկական տաղաչափություն, ասենք, գոյություն էլ չունեն. ենթադրվում է,



որ կասկածելի է դառնում լեզվի ու շափական արվեստի կատարելությունը, մանավանդ, եթե ընդունելու լինենք բանաստեղծի այն խոսքերը, թե մինչ այդ «այս սեսակը պարսից լեզվին նույնիսկ հայտնի էլ չի եղել»:

Այդ խնդրի բնութայունը, սակայն, մեզ շատ կհետացնեն բուն նյութից: Կարևորն այստեղ այն է, որ Աբրահամյան խալիֆաների և Խորասանի պարսիկ տիրակալների՝ Քահիրյանների շրջանից արդեն սկիզբ է առնում պարսից նոր գրականությունը: Ճիշտ է, Քահիրյանները շափականց արաբասեր էին և արհամարհանքով էին վերաբերվում ազգային-պարսկական մշակույթին ու գրականությանը, բայց նրանց հաջորդած Սաֆիարյաններն արդեն կանգնեցին պարսից գրականության, պարսկական մեղամաղձիկ քնարերգության իսկական գարգացման փաստի առջև և իրենք էլ սկսեցին հովանավորել այդ հայրենի բանաստեղծությունը: Վերջապես, Սամանյանների շրջանում պարսկական բանաստեղծությունը հասավ յուր ծաղկման աստիճանին: Սամանյան առավել զարգացած տիրակալներն ամեն կերպ օժանդակում, հովանավորում էին գիտուններին ու բանաստեղծներին, իսկ այդ հովանավորության արդյունքն այն եղավ, որ X դարը դարձավ պարսից նոր գրականության ու գիտության ոսկեդարը: Զարգացնելով պարսկական գրականությունը մայրենի լեզվով, Սամանյանները չէին հրաժարվում նաև արաբալեզու և արաբական գրականությունից ու գիտությունից: Հենց նրանց շրջանում էլ բազմաթիվ պարսիկ բանաստեղծներ գեռես գրում էին արաբերեն լեզվով, և Քալիբիի հիշյալ ժողովածուի շորթորդ հատորն ամբողջությամբ ընդգրկում է միայն Սամանյան շրջանի պարսիկ բանաստեղծների արաբերեն ստեղծագործությունները:

Ինչ վերաբերում է գիտությանը, ապա այն գրիթե բացառապես արաբերեն է գրվում. հայտնի են այդ շրջանում կազմված երկու հանրագիտարաններ, որոնք ընդգրկում են դարի գիտության բոլոր ճյուղերը. գրանցից առաջինը Քասրայի «հավատարիմ բարեկամներին» (Իսլամն առ-սեֆա) կազմած հանրագիտարանն է, երկրորդը՝ Խորեզմիի կազմած ու Սամանյան էմիր նուհ հրկրորդին (976—997) նվիրված «Գիտությունների բանալին» (Աեֆաթիհ ուլ-ուլում): Վերջապես, շախար է մոռանալ դարի փիլիսոփային, բանաստեղծին ու ամենանշանավոր բժշկին՝ Աբու Ալի իբն Սինային, որ եվրոպայում հայտնի է Ավիցեննա ազավադյալ անունով: Նա իր ժամանակի և՛ նշանավոր պետական գործիչներից մեկն է, և՛ ամենամեծ բժիշկը: Նրա դրած բժշկական կանոնագիրը՝ «Գիրք բուժման» (Քի-

թաբ աշ-շաֆա) ո՛չ միայն Արևելքի, այլև Եվրոպայի մասշտաբով գիտական մտքի լավագույն արտադրանքներից մեկն է: Այդ գիրքն ամենամեծ շափերով օգտագործվել է Եվրոպայում քնդհուպ մինչև XVII դարը. «այդպիսի նշանակություն չի ունեցել ոչ մի գիրք և գեռես աասնյոթերորդ դարում էլ Արևմուտքում նա մեծ համբավ էր վայելում»:

Գիտական մտքի այս աննախընթաց զարգացման պայմաններում և տիրող էմիրների հովանավորության տակ էր, ահա, որ ծաղկեց պարսկական նոր գրականությունը Սամանյանների օրով: Բանաստեղծների մի ամբողջ շարան, բնքուշ քնարական ստանավորների բազմաթիվ հեղինակներ իրենց փառաբանված անուններով պարգարում են Սամանյանների պատվը, բազմաթիվ քնարական ստեղծագործություններ արտահայտում են պարսիկների նուրբ զգացումները, երգում նրանց հոգու տառապանքը, խինդն ու տրտրությունը: Մեզ հայտնի են Աբու Սալիբի, Շահիդ Բալխեցու և ուրիշների անունները, որոնց ստեղծագործություններից մեզ չենք հասվածներ են հասել միայն. այդ հատվածները թեև հնարավորություն չեն տալիս ամբողջական գաղափար կազմելու իրենց հեղինակների մասին, բայց և այնպես ցույց են տալիս, որ նրանք չեն չիջում իրենց փառաբանված հաջորդներին: Մեզ հասած այդ սակավաթիվ բանաստեղծություններն այսօր էլ հուզել կարող են ամենախստապահանջ ու նրբաձաշակ գրականագետին: Դեռ ավելին. ավելի քան մի հազարամյակ առաջ ապրած ու ստեղծագործած այդ բանաստեղծներն իրենց արտահայտած զգացումների նրբությունը, արտահայտությունների յուրօրինակությամբ ու պարզությամբ «ավելի մոտ են մեզ, քան նրանց ավելի հուշակավոր հաջորդներից որե՛ մեկը»: Ահա, օրինակ, Շահիդ Բալխեցու մի քառյակը, որի մեջ Իրանի անցած փառքի կորստյան ողբը և մոռյլ իրականության ցավերով համակված իր սնամոքելի վիշտն է արտահայտում.

- եղա երեկ երեկոյան Թուսի տվեր պալատում,  
Ահաղաղի տեղ ևս տեսա՝ հավանցում թառած բուն:  
Ասի,—ավեր այս պալատից ինձ ի՞նչ կասես արդյո՞ դու:  
Ասաց,—մի բան՝ ափսոս միայն, ափսոս կասեմ օրեկրուն:

<sup>1</sup> Meÿer-Штейнег и К. Зудгоф, История медицины, Гиз. 1925, стр. 156.

<sup>2</sup> Darmesteter, Անդ, 6.



Այս անհուն վիշտը, այս հոսանքաբեկությունը ստատիկ խտանում են հետևյալ տողերում.

Հրո պես վիշտը մեր երե ծովս ունենար,  
Այս աշխարհն ամապես խավարում կմնար.  
Չն'ս գտնի ոչ մի տեղ երջանիկ իմաստուն,  
Թեկուզ ողջ երկրագունդը փնտրես ծայրեծայր:

Մակայն Սամանյան շրջանի փառքն ու պարծանքն են կաղմում ոչ վերսհիշյալ հեղինակները, այլ Ռուզաբին ու Գաղիղին, որոնք այսօր էլ հավասարապես դասվում են ամենահռչակավոր բանաստեղծների շարքը: Ռուզաբին (մեռել է 951-ին կամ 954-ին), որ իր արտակարգ տաղանդի ու բեղմնավորության շնորհիվ «Բանաստեղծության Աղբյուր» մականունն էր ստացել, Սամանյան նասր երկրորդի (914—943) պալատական բանաստեղծն էր: Ինչպես բոլոր ժամանակների պալատական բանաստեղծների, այնպես էլ Ռուզաբին ստեղծագործությունների մի զգալի մասը կազմում են ներբողները: Վաչեկելով նասր երկրորդի սերն ու հովանավորությունը, լինելով նրա հետ ամեն տեղ՝ թե՛ խնջույքների և թե՛ որսորդությունների մեջ, Ռուզաբին բաղմամբիվ ներբողներ է ձոնել յուր մեկենասին, ներբողներ, որոնց տակ ամենայն հաճույքով կարող էր ստորագրել Մահմադ Ղաղնավիի հռչակավոր ներբողագիրը, յուր ժամանակի «բանաստեղծների արքան» (մալիք աշ-շուրա)՝ Օնտորին: Մեծ բանաստեղծի բաղմակողմանի տաղանդը, սակայն, չէր կարող, անշուշտ, սահմանափակվել միայն ներբողների նեղ շրջանակներով և շահմանափակվեց: Նրա ստեղծագործությունների ավելի մնայուն և մեղ համար ավելի հույզիչ ու հետաքրքրական մասն են կազմում քնարական-սիրային բանաստեղծությունները, որոնք իրենց ներթափանցում ու ներդաշնակությունը ընդունակ են հրապուրելու շատ սրտեր: Այդ քնարական բանաստեղծությունների մեջ նա միաժամանակ գրվում է գինին, քարոզում կյանքի վայելքներից օգտվել և «բաղջրացնել հողին» գինու թովչանքով:

Սարգիսնի գույն ունեցող գինին այս,  
Սարգիսնից հալած կասես տեսնելուց,  
Իրականում երկուսն էլ մի տարբ են, բայց  
Այս սառած է իր վիճակով, իսկ նա՝ լույծ.  
Չշոշափած՝ ներկեց ձեռքերդ երկու,  
Չճաշակած՝ նոր կյանք տվեց քո հոգուն:

Բայց միայն գինին դեռ բավական չէ. գինին հաճելի է, զվարճությունն իմաստ է ստանում, երբ վայելում ևս այն «սեւաշյա գեղեցկուհուն» հեռ. ուստի և՛

Ուրախացի՛ր դու սեւաշյա գեղուհու հետ միասին,  
Ուրովնեռն այս աշխարհը քամի, առակ է մի սին:


Բայց այդ «քամին» էլ իր բնահաճույքներն ունի, և, այդ բնահաճույքն հյու՛ մարդիկ երբեմն բախտի շնորհներն են վայելում, երբեմն ընդհանուրի գույթն ու կարեկցությունը շարժում իրենց վիճակով: Ռուզաբին էլ վիճակվեց այդ հիասթափությունը: Նասր երկրորդի անկումը ուժեղ հարված էր նրա համար: Կորցնելով իր հովանավորին, զրկված շնորհներից, նա շարունակում էր դարձյալ երգել ու դուրսնել մարդկանց սրտերը, բայց այս անգամ նրա երգերում իշխում է ո՛չ ներբողների խրոխտ ու ինքնաբավ ոգին, ո՛չ էլ հաճույքների հեշտասեր ու գգվող շունչը: Այս շրջանի նրա երգերում լսվում է արգեն վշտի ու թախծի մեղամաղձիկ ձայնը.

Երբ շուրթերս փակ, տեսնես ինձ մեռած,  
Եվ հոգուց, կրկից մարմինս զրկված,  
Սնաբխ վերև նստի ու ասա՛.  
— Ես մեացրի քեզ, արգ զղջում եմ քայց:

Հիրավի, նրա համար ժամանակն էր արգեն մտածել մահվան մասին. ոչ միայն հովանավորից ու շնորհներից զրկված լինելը, այլև տարիքն արդեն առիթ էին ծառայում այդ բանին: Նրա վիշտն օր-ավուր մեծանում էր ո՛չ միայն իր դրությունը, այլև երիտասարդ հասակում վայելած կյանքի ու խորին ծերության մեջ կրած դժբախտների ու հիասթափության ծայրահեղ հակադրությամբ, որ նա այնքան վարպետորեն արտահայտել է յուր սքանչելի եղբերեզրում: Այդ վիշտը մոռանալու, հուսախաբության անդադար տվալատանքներից ազատվելու համար էլ, ահա, նա ապավինեց «աստու մարդարեին» և իր կյանքի վերջին օրերն անցկացրեց աշխարհից ու մարդկանցից հեռու՝ խաղաղ մենություն մեջ:

Իր տաղանդով Ռուզաբինց ետ չի մնում նաև բանաստեղծ՝ զրադաշտական (և ոչ մահմեդական) Մոհամմեդը, որ իր բանաստեղծությունների ներթափանցում ու գեղեցկության շնորհիվ էլ արժանացել է Գաղիղի (քնքույշ) մականունով: Ռուզաբին նման Գաղիղին էլ երգում է սերը, կյանքի վայելքն ու գինին, բայց նա գրան ա-

694





վերացնում է նաև իր դավանած գրադաշտական կրոնը, որ այնպես ներգաշնակում էր իր վայելչասեր հոգուն:

Աշխարհի ողջ լավ ու վատից, չար ու բարուց այս կյանքի  
Չորս բան միայն, չորս տարր բնաբեց իր կյանքի մեջ Գաղիզին:  
Հակիրթագույն շուրթերը վառ, մեղմ նվազը տավիղի,  
Զբաղաշախ կրոնը սուրբ և արեագույն այս գինին:

Սակայն Գաղիզին միայն քնարական հասովածներով չէ, որ նվաճել է իր փառքը: Պատվեր ստանալով էմիր ՆուՏ հրկրորդից (976—997), նա ձեռնարկեց պարսկական էպոսի մշակմանը և սկսեց հենց իր սիրած նյութից՝ Զրադաշտ մարգարեի հայտնվելուց ու Գոշտասպ (Վշտասպ) արքայի կողմից գրադաշտական կրոնն քնդունելու և տարածելու պատմությունից: Նա գրեց այդ հասովածից հազար բնիթ (երկառոյ) և հենց դրանով էլ անակնկալ կերպով փակեց իր կյանքը՝ սպանվելով իր սիրեցյալ ստրուկի կողմից ու կիսատ թողնելով պարսից էպոսի մշակումը:

Այդ մեծ գործը հանձն առավ և ի կատար ածեց մի ուրիշ բանաստեղծ՝ Սամանյանների շրջանում արգեն իր գրական գործունեությունն սկսած, բայց հետո՝ Մահմուդ Ղազնավիի պալատում հոչակված Ֆիրդուսին: Նա յուր ամբողջ կյանքը նվիրեց այդ մեծ էպոսի՝ «Շահ-նամեի» մշակմանը և ստեղծագործեց մի այնպիսի հոչակապ դյուցազնավեպ, որ համաշխարհային գրականության կոթողներից մեկն է հանդիսանում: Իր աներևակայելի տաղանդով, իր ստեղծագործության անհասանելի կատարելությամբ նա նսեմացրեց իր նախորդների ու ժամանակակիցների փառքը՝ յուր դեմ հարուցելով Մահմուդ Ղազնավիի պալատական բանաստեղծներին ու հալածանքի ենթարկվելով հենց նույն Մահմուդի կողմից: Բայց ոչ մի հալածանք այլևս չէր կարող մազաչափ անգամ սովեր ձգել այն փառքի վրա, որ նվաճել էր մեծ դյուցազնավեպի հանճարեղ հեղինակը:

## ՖԻՐԴՈՒՍԻ

1. ԿՅԱՆՔԸ

Ֆիրդուսու կյանքի մասին վստահելի շատ քիչ բան է հայտնի: Այն ամենը, ինչ-որ ավանդաբար հասել է մեզ պարսկական «թաղքերանների» (կենսագրական ժողովածուներ) մեջ, կրում է առասպելական-հնքիաթային բնույթ և ուշ շրջանում է հորինված: Մտուզապես հայտնի չէ նաև նրա անունը, նրան անվանում են Մանսուր, Իբնե Ղառան, Ահմադ և այլ անուններով: Մտուզ է նրա պատվանունը՝ որդու անունից բաղադրված Աբու-Ղասեմ, այսինքն՝ Ղասեմի հայր: Ֆիրդուսի անունը նրա բանաստեղծական մականունն է (Թախալուս), որ նշանակում է գրախտային: Մտուզ է համարվում նաև բանաստեղծի ծննդավայրը՝ Թուսը, Խորասանի քաղաքներից մեկը, որ բանաստեղծի ծննդյան հազարամյակի առթիվ վերանվանվեց Ֆերդուս:

Ֆիրդուսու ծննդյան թիվը որոշելուն հիմք են հանդիսացել իր իսկ բանաստեղծի տվյալները: «Շահ-նամե»-ի մեջ գանաղան տեղեկրում հեղինակը խոսում է իր տարիքի մասին: Այսպես, օրինակ, մի տեղ նա գրում է. «Սրբ ևս հասա 71 տարեկանիս, երկինքը թեքվեց իմ պոեմի առջև (պոեմը վերջին մտտեցավ): Իմ աշխատությանը ես հատկացրել էի 35 տարի՝ այս անցավոր աշխարհում գանձ վատակելու համար, բայց սրովհետև իմ ջանքերը քամուն մատնեցին, այդ 35 տարիներս արդյունք չունեցան: Իմ հասակն այժմ մտեհնում է 80-ին, և իմ բոլոր հույսերը հօգս ցնդեցին: Ես վերջացրի Հազկերտի պատմությունը Սեֆոնդարմոդ ամսի Աբադ օրը:

<sup>1</sup> Ֆիրդուսի, ավելի ճիշտ՝ Ֆիրդուսի կազմված է արաբական Բեղաուս բառից, որ կղակիի ձևն է հունարեն paradeisos-ից կազմված Iaradis-ի, որը համարվել է հոգնակի: Հունարեն բան իր հերթին փոխառված է ավեստայի pairi-daeza՝ օդրախտի պարսեզ բառից, որից ծագում է նաև հայերեն պարսեզ բառը:



ծրք հիշրից անցել էր արդեն հինգ անգամ 80 տարի, ես վերջացրի արքաներին վայել այս գիրքը»:

Այս տողերի վրա հիմնվելով՝ ֆրանսիացի արևելագետ Մոհլը Ֆիրդուսու ծննդյան թիվն է համարել 939 թվականը, որ և երկար ժամանակ ընդունված էր արևելագիտության մեջ: Բայց հետագայում շատերը, այլևայլ տվյալներ համեմատելով իրար հետ, Ֆիրդուսու ծննդյան տարին համարեցին 934 թվականը: Այս թվականն էլ պաշտոնապես ընդունվել է Իրանի կառավարության կողմից՝ բանաստեղծի ծննդյան հարազամյակը տոնելու համար: Սակայն ժամանակակից արևելագիտությունը այդ թվականն էլ ստույգ չի համարում: Բանն այն է, որ հնում ելնում էին այն ենթադրությունից, թե բանաստեղծը «Շահ-նամեն» ստեղծագործել է սկզբից մինչև վերջ հեռուդական հաջորդականությամբ, մինչդեռ այժմ արդեն հաստատված է, որ որոշ հատվածներ վերամշակված ու վերախմբագրված են տարբեր ժամանակներում, ստեղծագործության վերջին գլուխներից որոշ հատվածներ մշակված են եղել ավելի վաղ շրջանում և այլն, ուստի և հեղինակի տվյալները այս կամ այն գլխի ավարտման ժամանակի մասին չի կարելի ընդունել իբրև տվյալ՝ ստեղծագործությունն ավարտելու ժամանակի վերաբերյալ: Այսպիսի դատողություններից ելնելով՝ ժամանակակից արևելագետները Ֆիրդուսու ծննդյան տարին զետեղում են 932—934 թվականների միջև, առանց ստուգապես ընդունելու որևէ թվական:

Նրա մանկությունից ոչինչ հայտնի չէ: Հայրը եղել է մուլա՝ Մավլան Ահմադ, մի բավական կիրթ մարդ, որ որդուն լավ դաստիարակություն է տվել: Առանձնապես նշում են այն, որ նա որդուն սովորեցրել է պահլավերեն ու արաբերեն, որը հետագայում մեծապես օգնել է բանաստեղծին հին աղբյուրների օգտագործման գործում: Ֆիրդուսին հորից ժառանգել է մի փոքրիկ կալված, որ, ինչպես երևում է «Շահ-նամե»-ում տեղ գտած ակնարկներից, բավական չէր իր կարիքները հոգալու համար: Վկայում են, որ մանուկ հասակում եղել է ժրջան ու համեստ: Ամենօրյա սովորությունն է եղել նստել իրենց պարտեզի կողքով հոսող ջրանցքի ափին և երազել ապագայի մասին: Ջրանցքի ջուրը Թուսի գետից էր վերցված, և շատ հաճախ, գետի վարարման հետևանքով, ամբարտակը քանդվում էր: Ֆիրդուսու իրձն էր, ինչպես պատմել են ժամանակակիցները, հարստանալ և ամբարտակը շինել քարով ու ցեմենտով: Այդ բանը, սակայն, նա չկարողացավ անել, և միայն նրա մահվանից հետո իրականացավ նրա երազը:

Իր հասուն հասակի մասին ինքն է պատմում:

Մուսավորագես 36—37 տարեկանից սկսում է աշխատել «Շահ-նամե»-ի վրա: Նա արդեն վաղ հասակից ուզում էր պարսից էպոսը շափածոյի վերածել, իսկ երբ լսեց Դավղիի մասին, որը ձեռնարկել էր էպոսի մշակմանը, բայց գործը կիսատ էր մնացել նրա մահվան պատճառով, ավելի բուռն եռանդով ձեռնամուխ եղավ գրան: Այդ մասին նա իր ստեղծագործության մեջ հետևյալն է ասում. «Ես կամենում էի ձեռք բերել այդ գիրքը («Տերերի գիրքը») իմ լեզվով թարգմանելու համար: Ես պահանջեցի այն շատ մարդկանցից, բայց ես վախենում էի, որ իմ կյանքը բավական երկար չլինի, և ես էլ ստիպված լինեմ իմ անավարտ գիրքն ուրիշին թողնել: Այսպես անցավ բավական ժամանակ, որի ընթացքում ես ոչ ոքի չհայտնեցի իմ ծրագրերը, որովհետև չէի դանում մի արժանի մարդ իմ այս գործին աջակից դարձնելու համար: Բայց ես ունեի մեր քաղաքում մի անձնվեր քարեկամ, այնքան անձնվեր, որ ասես մի կաշվի մեջ էինք երկուստ: Նա ինձ ասաց. այդ մի լավ ծրագիր է և դա քեզ կատաշնորդի դեպի երջանկություն: Ես կբերեմ քեզ պահլավերեն այդ գիրքը. մի՛ բնիր այլևս. դու երիտասարդ ես և ունես խոսքի ձիրք, դու պիտես ստեղծագործել հերոսական պատմություններ, պատմի՛ր, ուրեմն, նորից արքաների այս գիրքը և նրանով խնդրիր քո փառքը մեծերի մոտ:

Ապա նա բերեց այդ գիրքն ինձ մոտ և դրանով իմ տխրությունը փոխվեց ուրախության»:

Առաջին հատվածը, որ դրեց Ֆիրդուսին, Զոհակի և Ֆերիդունի (Հրիզոն) պատմությունն էր:

Սկզբում նա գաղտնի էր աշխատում, բայց երբ իմացվեց, ժողովուրդը պահանջեց, որ նա ընթերցի իր գրածը: Այդ բանը հատկապես պահանջեց նույն զավառի կուսակալ Աբու Մանսուրը, որը շատ հավանեց և խոստացավ ապահովել նրա բոլոր կարիքները մինչև նրա կյանքի վերջը: Բանաստեղծը երախտագետ զանվից իր հովանավորի նկատմամբ և «Շահ-նամե»-ի նախերգանքի մեջ գրեց մի զովք՝ նույն Աբու Մանսուրին ձոնված: Վերջին հատվածը, որ գրեց Թուսում, Միավուշի պատմությունն էր: Այդ ժամանակ նա 58 տարեկան էր: Դա համընկնում է Մահմուդի գահ բարձրանալու ժամանակին: Թե ինչպես է Ֆիրդուսին այդ իրադարձությունը ընկալել, դժվար է ստուգապես որոշել: Իր ստեղծագործության մեջ նա թուրանցիներին ամեն շարիքի պատճան է համարում: Մահմուդը թուրք էր. և բնական է կարծել, որ Ֆիրդուսին բարյացակամ չէր կարող լինել նրա նկատմամբ: Սակայն, մյուս կողմից էլ, ժողովուրդը պահպանել է նրա և Մահմուդի մասին առասպելախառն



ավանդուցիւնը, որ ըստ երևույթին, պատմական որոշ հիմքից զուրկ չէ: Ըստ այդ ավանդուցիւն, Մահմուդը, զահ բարձրանալով, Ֆիրզուսուն հրավիրում է իր մտա: Ֆիրզուսին Քուսից ուղևորվում է դեպի Ղազնա: Որոշ ժամանակ մնում է Հերաթում, ապա՝ գնում Ղազնա: Սկզբում նա այնտեղ արժանավայել զիրք չի գրավում՝ արքունական բանաստեղծների նախանձի հետևանքով: Բավական ժամանակ հետո, իր բարեկամ Վարնզի միջոցով սուլթանին է ուղարկում «Ռոստամի և Իսֆանդիարի պատմութիւնը»: Մահմուդը հիանում ու Ֆիրզուսուն կանչում է իր մտա: Մի օր սուլթանը հավաքուցթի ժամանակ հիանում է նաև Ֆիրզուսու արասասանած ութ տաղանի բանաստեղծութիւնք և հիացմունքից զրդված նրան անվանում է Ֆիրզուսի (գրախաւային), որովհետև նա հավաքուցթը գրախտի վերածեց: Հասնում է Ֆիրզուսու ցանկացած ժամանակը, սուլթանը հատկացնում է նրան մի պալատ և հրամայում, որ ոչ ոք չխանգարի նրան: Ֆիրզուսու մտա մտնելու իրավունք ունեին միայն մի ծառա և սուլթանի Այազ բարեկամը:

Այդ պալատը նա զարգարել տվեց պարսկական հերոսների, գանազան կենդանիների ու գազանների նկարներով և ամեն տեսակ զենքերի պատկերներով, այսինքն՝ այն բուրբուրով, ինչ որ Ֆիրզուսին նկարագրել է իր «Շահ-նամե»-ում:

Ֆիրզուսին շուտով դարձավ արքունիքի ամենասիրելին: Մահմուդը հրամայեց Հասան Մեյմանզի վեզիրին ամեն երկտողի համար վճարել մեկ ոսկի: Ֆիրզուսին հայտնեց, որ ամբողջ զումարը կատանա միանգամից, երբ ստեղծագործութիւնն ավարտի: Քե՛ այս առատաձեռնութիւնը՝ և թե՛ պալատականների սերը նախանձ առաջացրին Հասան Մեյմանզիի մեջ, և նա սկսեց առիթ որոնել Ֆիրզուսուն խոցելու համար: Մի ուրիշ դեպք առիթ դարձավ, որ ավելի սրվեն նրանց հարաբերութիւնները: Ֆիրզուսու գրածները արտագրութիւնք տարածվում էին: Ռոստամ Ֆախր ադ-Դին Գովլի անունով մի մեծահարուստ մարդ, ստանալով «Ռոստամի և Իսֆանդիարի պատմութիւնը», 500 ոսկի նվիրեց բերողին և գրա կրկնակին էլ՝ հեղինակին: Հասան Մեյմանզին այս առիթը օգտագործեց. Ռոստամ Ֆախր ադ-Դինը Մահմուդի քաղաքական և կրոնական թշնամին էր: Ռոստամ Ֆախր ադ-Դինը և Ֆիրզուսին շիա էին, իսկ սուլթանը և Մեյմանզին՝ սուննի: Օգտվելով սրանից՝ Մեյմանզին գրգռեց սուլթանին և՛ մեկի, և՛ մյուսի դեմ: Սկսվեցին նաև գրական խարդավանքներ: Գրական շրջանում Ֆիրզուսին նույնպես մրցակիցներ ու թշնամիներ ունեւր: Այդպիսիները Մահմուդին համոզում էին, որ Ֆիրզուսու աազանդի շնորհիվ չէ նրա տողերի գեղեցկութիւնը:

պատմութիւնը պահլավերենով ևս գեղեցիկ է: Մահմուդը որոշում է ապա անձանոթ մի հատված, որպեսզի Ֆիրզուսին նույն օրն և եթ մշակի և վերագարձնի: Գա Ռոստամի և Աշբարուս Քեշանիի պատեւրագմի պատմութիւնն էր, որ Ֆիրզուսին նույն օրն էլ գրեց և հանձնեց: Կարգացին ու հիացան, սուլթանը նորից կրկնեց իր սիրած խոսքերն այն մասին, որ այդ պատմութիւններն ինքը շատ է լսել, բայց Ֆիրզուսու գրվածքում նրանք իր համար նորութիւն են դառնում և նոր հմայքով տոգորում:

Այդ ժամանակ Ֆիրզուսին կորցրեց իր 38-ամյա որդուն, իր վիրշը նա արտահայտել է «Շոսրով Փարվիզ» պիսում: Այդ պայմաններում Ֆիրզուսին Մահմուդի արքունիքում մնաց 12 տարի և վերջացնելով գյուցագնեբրութիւնը, Այազի միջոցով ուղարկեց Մահմուդին: Շահը Մեյմանզիին հրամայեց՝ Ֆիրզուսուն տալ այնքան ոսկի, որքան որ կարող է տանել մի ուղտ, բայց Հասանը համոզեց սուլթանին, թե այդ գործի համար մի բեռ արծաթն էլ բավական է և 60 հազար գիրհամ արծաթ Այազի միջոցով ուղարկեց Ֆիրզուսուն: Ֆիրզուսին բաղնիքումն էր և երբ տեսավ, որ արծաթ է, 20 հազարը տվեց Այազին, 20 հազարը՝ բաղնիքանին և 20 հազարն էլ բաղնիքի դուռը գտնվող մուրացկաններին: Ապա Այազին ուղարկեց սուլթանի մտա, որ հայտնի, թե ոսկու և արծաթի համար չէ, որ ինքը գրել է «Շահ-նամե»-ն: Սուլթանն իմանալով այդ, կշտամբում է Հասանին, բայց վերջինս այստեղ էլ կարողանում է արդարանալ՝ տակով «Կարեորն այն չէ, թե ինչ է նվիրում արքան. արքայի նվիրածը արդեն թանկարժեք է, իսկ եթե չի ընդունում, վիրավորում է թագավորական մեծութիւնը»: Սուլթանը այս լսելով՝ գայրանում և հայտարարում է, որ վաղն իսկ նրան պետք է նետի ուղտի ոտքերի տակ:

Հաջորդ օրը Ֆիրզուսին հանդիպեց Մահմուդին պարսեկում, ստքերն ընկավ, ներում խնդրեց, ասելով, մեծ է սուլթանի տերութիւնը, որի մեջ ապրում են թե՛ մահմեդականներ և թե՛ քրիստոնյաներ, թող ինքն էլ լինի անհավատներից մեկը և որպես այդպիսին ապրի: Սուլթանը ներում է նրան, պայմանով, որ անմիջապես հեռանա Ղազնայից:

Ֆիրզուսին գնում է Ղազնայի ամենանշանավոր մզկիթը և պատի վրա գրում է երկու բնութ՝ հետեյալ բովանդակութիւնք.

«Մահմուդի՝ Զարոխստանի արքայի՝ երջանիկ պալատը մի ծով է, և ի՛նչ ծով: Չեն երևում նրա ափերը: Երբ էս լողում էի այդ ծովում առանց մարգարիտներ գտնելու, այդ իմ աստղի մեղքն էր և ոչ այդ ծովի»:



Տուն գնալով, պատուում է բոլոր ձեռագրերը, բացի «Շահ-նամե»-ից և միայն մի փաթաթած թուղթ է հանձնում Այազին, որ նա հինգ օրից հետո առ շահին, իսկ ինքը ցուպը ձեռքին մեկնում-հեռանում է Ղազնայից: Մկավում է նրա թափառական կյանքը:

Հինգ օրից հետո Այազը սուլթանին է հանձնում այդ փաթեթը, որ Մահմուդի դեմ ուղղված երգիծանք էր: Չայրացած շահը մարդիկ է ուղարկում նրան որոնելու՝ խոստանալով նրանց 50 հազար դինար: Այդ ժամանակ Ֆիրզուսին գտնվում էր Մազանդարանում, որ արժանացել էր լավ հյուրընկալության այդտեղի տիրակալ Քարուսի մոտ: Նրան էր ներկայացրել իր «Շատ-նամե»-ն, և Քարուսն էլ խոստացել էր հագալ նրա կարիքները, բայց երբ իմացավ, որ Մահմուդը հետապնդում է նրան, խնդրեց հեռանալ իր գավառից:

Ֆիրզուսին զնաց Բաղդադ, որ ոչ մի ծանոթ չուներ և մի քանի օր մնաց անօթևան, բայց հետո մտերմանալով մի վաճառականի հետ, նրանից ստացավ բնակարան: Վերջինս՝ ծանոթանալով Ֆիրզուսու կյանքին, խոստացավ նրա մասին հայտնել խալիֆին: Ֆիրզուսին գրեց մի փոքրիկ պոեմ, որ կարգացվեց գիտունների շրջանում: Պոեմը գրված էր արաբերեն: Բոլորը հավանեցին և վեզիրը ուղևորված հայտնեց խալիֆ Կադիր Բիլլահին, որը ցանկություն է հայտնեց անձամբ տեսնել Ֆիրզուսուն: Ֆիրզուսին ներկայացավ և պատմեց ամեն ինչ: Խալիֆը հավանեց և՛ պոեմը, և՛ «Շահ-նամե»-ն, թեև դրանք պարսից հին թագավորների մասին էին: Ֆիրզուսին այդ արդարացնելու համար գրեց Ղուրանի պատմություններից մեկի մասին «Յուսեֆ ու Զուլեյխա» վերնագրով, բաղկացած 9000 երկտողից:

Մահմուդը լսեց այդ մասին և պահանջեց խալիֆից, որ Ֆիրզուսուն իրեն հանձնեն: Ֆիրզուսին փախավ Իրաքի Աջեմ գավառը և այդ պոեմը ձոնեց այդտեղի կուսակալին: Այդտեղից էլ զնաց Քուհիստան, որտեղի կուսակալ նասիր Լեքը սիրում էր Ֆիրզուսուն և հովանավորեց նրան: Ֆիրզուսին հայտնեց, որ Մահմուդի մասին մի բան էլ պետք է զրի, բայց նասիր Լեքն արգելեց՝ անպատշաճ համարելով այդ, և Մահմուդին նամակ գրեց՝ հանդիմանալով նրան իր վերաբերմունքի համար:

Ասում են, թե նամակն այն օրը հասավ, երբ Մահմուդը մղկիթում կարգացել էր պատին զրված տողերը և հուզվել էր. նամակն ավելի քան հուզեց նրան և նա Հասան Մեյմանդիին մահվան դատապարտեց, իսկ Ֆիրզուսուն ուղարկեց իր խոստացած դամարը և պատվո պատմուճան: Այդ բոլորը հասավ այն օրը, երբ Ֆիրզուսու թաղումն էր կատարվում: Գումարը հանձնեցին աղջկան, բայց նա

հրաժարվեց և բանաստեղծի քույրը՝ վերցնելով գումարը, կառուցեց նրա երազած ամբարտակն ու մի իջևան:

\* \* \*

Ֆիրզուսու կենսագրությունը ժողովրդի կողմից ստեղծված ավանդություն է. իր ժամանակակիցներից ոչ մեկը նրա մասին չի գրել, ինքը շատ բան չի ասել իր մասին, եղածներն էլ հակասում են իրար:

Ավելի արժեքավոր է Ահմեդ Արուզիի տված տեղեկությունը, որը Ֆիրզուսու մահից մոտավորապես հարյուր տարի հետո զնացել է թուս և ինչ որ լսել է Ֆիրզուսու մասին՝ գրի է առել: Ըստ նրա գրածի, Ֆիրզուսին ծնվել է 934 կամ 935 թ.: Կարևոր է այն տեղեկությունը, որ նա հաղորդում է «Շահ-նամեի» ստեղծագործության ժամանակաշրջանի մասին: Արևելագետ Նյուլդերեն, Արուզիի հաղորդածի վրա հիմնվելով, ապացուցում է, որ «Շահ-նամե»-ն ավարտված է ևղել 999 թ.: Ֆիրզուսին այն ներկայացրել է Մահմուդին և առատ պարգևներ է ստացել:

Այս տեղեկություններն էլ, սակայն, ժամանակակից արևելագետները կասկածի տակ են առնում: Այժմ հավանական են համարում նույնիսկ այն ենթադրությունը, որ Ֆիրզուսին անձամբ սուլթան Մահմուդի արքունիքը չի գնացել, այլ ավարտելով իր ստեղծագործությունը, նրան նվիրված ձոնը գրելով՝ ուղարկել է արքունիք: Մահմուդի զայրույթը Ֆիրզուսու դեմ բացատրում են մի կողմից կրոնական պատճառներով, մյուս կողմից նրանով, որ «Շահ-նամե»-ն ամբողջապես զրված է հակաթուրանական (= հակաթուրքական) ոգով, որ բնականաբար չէր կարող շայրացնել Մահմուդին:

Ինչպես էլ զնահատելու լինենք ժողովրդի պահպանած ավանդություններն ու զանազան տեղեկությունները, մի բան անվերապահորեն կարելի է ընդունել. Ֆիրզուսին ստեղծագործել է «Շահ-նամե»-ն նյութական ծանր պայմաններում: Իր ամբողջ կյանքում նա չի ուղատվել առօրյա հոգսերից և ստեղծագործությունն ավարտելուց հետո էլ ըստ արժանվույն չի զնահատվել ու չի վարձատրվել: Անվերապահորեն կարելի է ընդունել նաև ավանդության այն մասը, որ Մահմուդը թշնամական դիրք է բռնել Ֆիրզուսու նկատմամբ: Ֆիրզուսու երգիծանքը դրա լավագույն ապացույցն է: Բնականաբար այդ թշնամանքն է պատճառ դարձել այն բանի, որ Ֆիրզուսին կծու ծաղրի է ենթարկել Մահմուդին, ըստ որում, պատահական չէ, որ հատկապես շեշտում է Մահմուդի ոչ արքայական տոհմից ծագելը: Միանգամայն ընդունելի է այն կարծիքը, որ սուլ-



թանի թշնամանքը ավելի խոր, քաղաքական հիմքեր ունեն, քան ստեղծագործության հակաթուրանական ողին: Իր ժամանակին Մահ-մուղի համար ավելի կարևոր էր «Շահ-նամե»-ի մեջ, հատկապես նրա վերջին մասում արտահայտված հակաաթաբական ողին, որ, վերջին հաշիով, հակամուսուլմանական բնույթ է ստանում: Մահ-մուղի համար, որ խալիֆից էր հրովարտակ ստացել Հնդկաստանի դեմ «սրբազան կովի» գուրս գալու, դա, իհարկե, շատ կարևոր հանգամանք էր: Վերջապես, շատ ավելի կարևոր էր ամբողջ ստեղծագործության խորասպես ժողովրդական ողին, որ չէր կարող չզգրգռել միահեծան ու բռնակալ Մահմուդի զայրույթը:

Ի վերջո, ինչպես վերը շարադրված, այնպես էլ ուրիշ ավանդությունները Ֆիրդուսու մասին, որ այնքան գեղեցիկ կերպով հորինել է ժողովուրդը, անվերապահ կերպով արտահայտում են այն խոր սերը, որ տածել է ժողովուրդը Ֆիրդուսու նկատմամբ: Բուր կարգի ավանդությունների մեջ Ֆիրդուսին ներկայացված է սրպես ազնիվ, վեհանձն, իր ժողովրդին նվիրված ու նրա հոգսերով տառապող մի հերոս: Իսկ դա, բնականաբար, արտահայտում է ժողովրդական լայն մասսաների սերն իր մեծ բանաստեղծի նկատմամբ: Տարբեր վերաբերմունք են ցուցաբերել Ֆիրդուսու նկատմամբ, տարբեր գնահատականի են արժանացրել նրա ստեղծագործությունը թե՛ իրեն ժամանակակից ու թե՛ հաջորդող դարերի մեծամեծները, իշխաններն ու արքաները, բայց ժողովուրդը միշտ էլ մեկ գնահատական է տվել նրա ստեղծագործությանը և մեկ, բացարձակապես զրական վերաբերմունք արտահայտել նրա նկատմամբ:

## 2. «ՇԱՀ-ՆԱՄԵ»-Ի ՀԱՄԱՌՈՑ ԲՈՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Շահ-նամե»-ն, 60000 բեյթից (երկտողից) բաղկացած այդ բնդարձակածավալ դյուցազնավեպը, իրար հյուսված բազմաթիվ առասպելական-դիցաբանական ու իրական պատմությունների այդ հիանալի վեպը իր կառուցվածքով բաժանվում է երեք մասի. դիցարանական, դյուցազնական և պատմական:

Բուն ստեղծագործությանը նախորդում են ներածական հատվածները, որոնցից առաջինում՝ նախերգանքում, հեղինակը, Ղուրանին հետևելով, պատմում է աշխարհի արարչության, լուսատուների, կենդանական ու բուսական աշխարհի, ապա և՛ այդ բոլորի

գլուխ գործոցի՝ մարդու ստեղծագործության մասին: Առանձին զբլ-խով նա գովաբանում է մարդուն ու նրա բանականությունը:

Այնուհետև նա պատմում է իրանական էպոսի գրի առնելու հանգամանքները՝ հիշելով առանձնապես Դանիշվար կաշբարիին:

Առանձին զբլով պատմում է Դադիդի մասին, բացահայտ գրական գնահատական տալով նրա ձեռնարկած գործին, հայտնում, որ իբրև երախտագիտական տուրք, նրա դրած հազար տողը անփոփոխ կերպով մուծում է իր ստեղծագործության մեջ:

Մի հատված էլ նա նվիրում է իր ձեռնարկության պատմությանը: Այստեղ նա հայտնում է, որ նախապես ինքը չէր հանդգնում ձեռնարկել այդ գործին, վախենալով, որ ինքն էլ չի կարող ավարտել այն: Բայց իր բարեկամներից մեկը, իմանալով նրա մտադրությունը, խրախուսել է նրան ու դուրս է նրա համար պահելով իր ստեղծագործության համար:

Նախաբանը վերջանում է երկու ներբողով, որոնցից մեկը նվիրված է Աբու Մանսուրին, մյուսը՝ Մահմուդին:

## Ա. Դիցարանական մաս

1. Ք ա յ ու մ ա ր ս.— աշխարհի առաջին մարդն է: Նա է հիմնադրել արքայական դահլը, որ հաջորդաբար անցել է ժառանգների: Դեռևս շխաին քաղաքներ ու գյուղեր, նա բնակություն է հաստատում անտառի մեջ: Համերաշխ սպրում է զաղանների հետ, բայց շարիքի աստված Ահրիմանը նախանձում է նրան և իր որդու՝ սև դևի ձեռքով սպանել է տալիս Քայումարսի որդի Միամաքին: Վերջինիս վրեժը լուծում է իր որդի՝ Հուշանգը: Պապի օգնությամբ նա հաղթում է սև դևին ու վերականգնում բարու թագավորությունը:

2. Հ ու շ ա ն գ.— Երեսուն տարի թագավորելով՝ կառավարում է երկիրը արգարություն: Հայտնագործում է կրակը, պնում երկաթը քարից դառնուլու միջոցը և հիմք դնում դարբնության: Զրանցըներ է անցկացնում, ոտոգում է հողը, և մարդիկ սկսում են հերկել երկիրը, ցանել ու հնձել հացահատիկը:

3. Ք ա հ մ ու ր ա ս.— Արգարությամբ կառավարում է երկիրը երեսուն տարի. կովի է ելնում զեբրի դեմ, հաղթում ու կապում է նրանց, որի համար էլ Դիվրանդ (զեբրին կապող) անունն է ստանում: Դեերը խնդրում են նրան՝ շապանել իրենց, խոստանալով



միշտ ծառայել նրան: Նա արձակում է նրանց ու նրանցից սովորում գրելու արվեստը:

4. **Ջ ա մ շ ի դ.**—Յոթհարյուրամյա թագավորության սկզբնական շրջանում արդար էր ու համեստ: Հիմնում է հյուսելու և հագուստեղեն պատրաստելու արվեստը, գտնում է սակին ու արծաթը բարից կատելու միջոցը, հիմք է դնում զինագործության, բարեկարգում է երկիրը: Տիրելով երկրին, մարդկանց, գազաններին ու դևերին և դեերի օգնությունը երկինք բարձրանալով՝ այնքան է գոտզանում, որ իրեն աստծուց մեծ է համարում ու պահանջում, որ մարդիկ իրեն երկրպագեն: Մեծամեծները որոշում են հրավիրել Արարիայի արքայազնին՝ Ջամշիդին տապալելու համար: Արարիայի թագավորի որդին՝ Ջոհակը, մականվանված Բիվրասը (= Բյուրասպ «տաս հազար ձի ունեցող»), խելացի մի տղա էր, բայց Բրլիսի ներշնչումով սպանում է հորը և դա՛հ բարձրանում: Զարանենգ Իրլիսը պատանու կերպարանքով երկրորդ անգամ է գալիս Ջոհակի մոտ, խոհարար դառնում ու նրա սիրուն արժանանում: Ջոհակն ուզում է վարձահատույց լինել, և Իրլիս-խոհարարն ասում է. «Թույլ տուր երկու ուսիդ փաթաթվեմ և դեմքս դեմքիդ քսեմ»: Այդպես էլ անում է ու չքանում: Ջոհակի ամեն մի ուսից մի օձ է զուրս գալիս, և որքան կտրում են, դարձյալ բուսնում է: Նորից հայտնվում է Իրլիսը բժշկի կերպարանքով, և ասում, որ օձերին սպանելու համար Ջոհակը պետք է նրանց սնի մարդկային ուղեղով: Ջոհակն ամեն օր իր հպատակներից երկուսին սպանել է տալիս ու նրանց ուղեղով կերակրում օձերին: Այդ միջոցին է, որ Ջամշիդի ամբարտաճանությունից զայրացած իրանական ժողովուրդը ապստամբում է և դիմում Ջոհակի օգնությանը: Ջոհակը հարձակվում է Իրանի վրա, տիրում երկիրը, Ջամշիդի երկու ազգիկներին՝ Աննավազին ու Շահրնազին տանում իր պալատը, իսկ Ջամշիդը փախչում է: Հարյուր տարի հետո միայն Ջոհակը բռնում է նրան ու սպանում:

5. **Ղ ա ն ա կ.**—Թագավորում է հազար տարի: Տիրելով Արարիային և Իրանին՝ կառավարում է Իրլիսի թելադրությունները: Ամեն օր երկու հողու մորթում է իր վիշապներին սնելու համար: Երկու բարեսիրտ մարդիկ դրա առաջն անելու համար Ջոհակի պալատում խոհարար են դառնում: Ամեն օր, երբ երկու երիտասարդներին բերում են սպանելու, մեկին սպանում են, իսկ մյուսի փոխարեն ոչխար մորթում. այսպիսով ամիսը երեսուն հողի փրկվում է, որոնք գնում և բնակություն են հաստատում լեռներում:

Ըստ Ֆիրդուսու, դրանցից է առաջացել քուրդ ժողովուրդը:

Մի գիշեր Ջոհակը երազում տեսնում է, թե Իրանի հին արքայական ցեղից Լրեք երիտասարդներ են գալիս, որոնցից կրտսերը ցրազուլու գուրդը ձեռքին գալիս և մի հարվածով իրեն գետին է նետում, ապա ամուր կապելով՝ տանում է և Դամավանդ լեռում պահում: Ջոհակը սարսափահար զարթնում է և պատմում է իր երազը Աննավազին ու Շահրնազին: Նրանց խորհրդով կանչում է բոլոր մեծամեծներին ու մողպետներին և պահանջում երազի մեկնությունը: Գիտուններից համարձակը մեկնում է այսպես. Ջամշիդի ցեղից Ֆերիզուն անունով մեկը պետք է իրեն տապալի և դրավի դահլը: Ջոհակն իր հանգիստը կորցնում է, այս ու այն կողմ մարդիկ է ուղարկում Ջամշիդի ցեղի մնացորդներին որոնելու և ոչնչացնելու համար, բայց հաջողություն չի հասնում: Մի առժամանակ հետո ձևվում է Ֆերիզունը, որից հետո Ջոհակին հաջողում է բռնել նրա հորը՝ Արթինին և սպանել: Մանուկը հանձնվում է մի պարսիկ պանի, որ կոզի կաթով սնում է նրան: Կարճ ժամանակից հետո այդ էլ է իմանում Ջոհակը. մայրն ստիպված է լինում որդուն այդանից էլ տանել և տալ մի ձոնավորի, որ բնակվում էր Էլբրուս լեռան վրա: Ջոհակը՝ շփանելով Ֆերիզունին, այրում է ամբողջ պարտեզը և սպանում կովը:

Երբ Ֆերիզունը 16 տարեկան է դառնում, մայրը բերում է նրան իր մոտ և պատմում ամեն ինչ, ինչպես և հայտնում է, որ Ֆերիզունը սերում է Քահմուրասից: Ֆերիզունն ուղում է կովի ելնել Ջոհակի դեմ, բայց մայրը թույլ չի տալիս: Ջոհակը հանգիստ չի մնում, հավաքում է բոլոր մեծամեծներին ու զիտուններին և պատմելով իր վախի մասին, պահանջում է, որ մի համախոսական գրեն, թե ինքը մի բարի ու արդար թագավոր է եղել և ոչ ոքի չի նեղացրել:

Մեծամեծները կազմում են այդ համախոսականը և ստորագրում: Այդ պահին պալատից լսվում է աղմուկ. ներս է գալիս դարբին Քավեն և Ջոհակից պահանջում խիղճ ու արդարություն, ասելով, թե իր որդիներին մորթել են վիշապներին կերակրելու համար, իսկ մեկին էլ բռնել են, որ մորթեն: Ջոհակը խոստանում է ազատել՝ այն պայմանով, որ Քավեն էլ ստորագրի այդ համախոսականի առակ, բայց Քավեն պատում է այն և մյուս ստորագրողներին էլ գեերի գործակից անվանում:

Դուրս գալով պալատից՝ Քավեն գնում է իր արհեստանոցը, դարբնի մորթն զոգնոցը ամրացնում է նիզակի վրա, դուրս գալիս շուկա և բաղձուսթյան մեջ բարձրաձայն բողբոջելով Ջոհակի անարդարության դեմ՝ կոչ է անում, որ իր հետ գնան Ֆերիզունի մոտ և նրա գլխավորությունը տապալեն Ջոհակին: Բաղձությունը հետևում է



նրան, և գնում են Ֆերիզունի մոտ: Վերջինս վերցնում է նիղակի վրա ամբացրած մորթին, զարգարում ակնեղեններով, կերպասով երիզները կարում և կոչում «Քավեյան գրուչ», ապա մորթից մաղթանքներ խնդրելով, նախապատրաստվում է հարձակման: Կանչում է իր եղբայրներին, գետնի վրա նկարում է մի ցլազլուխ գուրդ և պատվիրում, որ անմիջապես պատրաստեն այն: Ապա՝ ստանալով այն, դիմում է դեպի Ձոհակի պալատը: Ճանապարհին ասածու կողմից իջնում է բարի հրեշտակը և սովորեցնում է Ֆերիզունին կախարհության արվեստը: Եղբայրները նախանձում են և Ահրեմանի գրգամք բարձրանում են լեռան գագաթը ու մի մեծ բար դռնում՝ Ֆերիզունին շտիջախելու համար, բայց Ֆերիզունը դարձնում է և իր սովորած կախարհությամբ ազատվում փորձանքից: Հետևյալ օրը հարձակվում և գրավում է Ձոհակի պալատը, բայց Ձոհակը պալատում չի լինում: Ֆերիզունը կանչում է Առնավազին և Շահնապին ու տեղեկանում, որ Ձոհակը գնացել է Հնդկաստան և իրեն փոխարինելու է թուղի Քոնզրո անվամբ մի պալատականի:

Քոնզրոն ողջունում է Ֆերիզունի մուտքը, բայց զազանի փախչում է Ձոհակի մոտ և պատմում եղելությունը: Ձոհակն իր ամբողջ բանակով հարձակվում է Ֆերիզունի վրա, բայց պարտվում է: Ֆերիզունը ցլազլուխ գուրդով դեպին է զցում նրան, կապկպում, տանում Գամավանդ լեռը և մեխերով ամրացնում լեռան խորշերից մեկում:

6. **Ֆ Ե Ր Ի Ղ Ա Ն .**—Քաղաքում է հինգ հարյուր տարի՝ վերացնելով աշխարհից շարի բոլոր հետքերը: Հիսուն տարի թագավորելուց հետո Ֆերիզունն ունենում է երեք որդի, երկուսը Շահեր-նապից, մեկը՝ Առնավազից: Երբ նրանք մեծանում են, Ֆերիզունը նրանց ամուսնացնում է Արաբիայի թագավորի երեք աղջիկների հետ, ապա բաժանում իր թագավորությունը երեք որդիներին: Սալմին տալիս է Իրանի հյուսիսը և Արաբիան, Քուրին՝ Քուրանը (բոս Ֆիրզուսու՝ Քուրբեստան և Չինաստան) և Իրազին՝ Իրանը: Սալմը՝ նախանձելով Իրազին, նամակով հայտնում է Քուրին, թե որպես ավագի, Իրանի գահը ինձ պետք է պատկաներ, իսկ եթե ևս անարժան էի, ապա՝ քեզ: Երկու եղբայրները մի պատգամավորով հայտնում են հորը իրենց դժգոհությունը և սպառնում պատերազմով: Ֆերիզունը կանչում է Իրազին և հայտնում ու կարգադրում, որ պատրաստվի պատերազմի, բայց Իրազը, հակառակ հոր խրատների, գնում է եղբայրների մոտ՝ հարցը խաղաղությամբ լուծելու և արչունահեղությունից խուսափելու համար: Հանդիպման պահին Սալմը դաշրանում է ու իր ոսկի աթոռով խփում Իրազի գլխին, իսկ

Քուրը սրով անջատում է նրա գլուխը մարմնից և գլուխն ուղարկում Ֆերիզունին: Այստեղից էլ սկիզբ են առնում Իրանի ու Քուրանի անդադար պատերազմները:

Ֆերիզունը Իրազի կանանցից մեկի աղջկան՝ Մահաֆերիզին ամուսնացնում է իր եղբոր տղայի՝ Փաշանդի հետ: Ինն ամիս հետո ծնվում է մի աղա՝ Մանուչեհրը, որի դաստիարակությունը Ֆերիզունը հանձնում է նարիմանի որդի Սամին: Երբ Մանուչեհրը մեծանում է, Ֆերիզունը կանչում է Քավեի որդի Կարանին (Կարենին), նարիմանի որդի Սամին, իր խնամի և դասօնոր Սարվին և այլոց ու հանձնարարում, որ լսեն իր օրինական ժառանգին և օգնեն նրան իր վրեժը լուծելու գործում: Ապա պատմում է Իրազի սպանության մասին և կարգադրում, որ զորքով գնան շարադորձներին պատժելու: Այդ միջոցին լուր է ստացվում, որ Սալմն ու Քուրը զորքով դալիս են դեպի Իրան: Մանուչեհրը անցնում է բանակի գլուխը և դիմադրում: Իրանի զորքը հաղթում է. Քուրին և Սալմին սպանում են և գլուխներն ուղարկում Ֆերիզունին: Վերջինս ուրախանում է, որ լուծվել է որդու վրեժը: Կանչում է մեծամեծներին, նրանց ներկայությամբ գահը հանձնում է Մանուչեհրին, հրամայում բոլորին հավատարիմ լինել երիտասարդ թագավորին: Սամին էլ պատվիրում է, որ իր վիթխարի ուժով պաշտպանի Մանուչեհրին և Իրանի ժողովրդին:

## Բ. Դ յ ո յ ց ա զ ն ակ ա ն մ ա ս

7. **Մ ա ն ո շ Ե Կ Ե .**—Քաղաքում է 120 տարի: Արդարությամբ ու բարեպաշտությամբ կառավարում է Էրկիրը և զոհացնում մեծերին ու փոքրերին:

Ա. **Ս ա մ ի և Ջ ա յ ի պ ա տ մ ու թ յ ու ն Ե .**—Փեհևան Սամըն անզավակ էր. աստված լուր է նրա աղաչանքը և մի որդի պարգևում, որը սակայն ծնված օրից սպիտակահեր էր: Կինն ու երեխայի խնամողները վախենում են այդ հայտնել Սամին, բայց յոթ օր անցնելուց հետո դայակը գնում և տեղեկացնում է նրան եղելությունը: Սամը տեսնում է որդուն և վախենալով մեծամեծների ծաղրանքից, հրամայում է մանկանը նետել էլբրուս լեռը: Հրամանը կատարվում է: Անտեր մանուկը քաղցից իր մատներն էր ծծում:

Լեռան գագաթին իր բույն էր շինել Սիմորդ թռչունը, որն իր ձագերին կերակրելու համար բնից դուրս թռչելիս նկատում է մա-



նուկին: Աստված զուրկ է առաջացնում նրա սրտում. նա մանկանք վերցնում, տանում է իր բույնը և իր ձագերի հետ խնամում: Անցնում են տարիներ, մանուկը մեծանում, բայց խոսել չի իմանում: Մի գիշեր Սամը երազում տեսնում է, որ Հնդկաստանից մի ձիավոր է գալիս և ասում, որ որդին կենդանի է: Քնից զարթնելով՝ նա պատմում է մոգայետներին իր երազը և մեկնություն խնդրում: Հետևյալ գիշերը կրկին նույն երազն է տեսնում: Զարթնում, հավարում է իր մեծամեծներին ու գիմում դեպի էլբրուս լեռը: Հասնելով այնտեղ, սարի գագաթին տեսնում է Միմորդի բույնը, բայց դեպի բույնը ոչ մի ձանապարհ չի գտնում: Հուսահատված նստում է սուտրոտում: Միմորդը նկատում է նրան և կոահում ամեն ինչ: Խորհուրդներ տալով իր ինամյալին՝ Միմորդը հայտնում է նրան, որ ինքը նրա անունը գրել է Կասթան-և Սամ, տալիս նրան իր փետուրներից մեկը, որ կախարդական գորությունը էր օժտված, և իր թևերի վրա աննկելով՝ իջեցնում է Սամի մոտ: Վերջինս հիանում է որդու գեղեցկությունը ու հուժկու բազուկներով:

Որդուն անվանում է Զալ-հ-Ջեր: Լուրը հասնում է Մանուշեհ-բին, որն ուզարկում է իր որդի՝ Նոզարին իր շնորհավորանքները հայտնելու և Զալին իր պալատը հրավիրելու համար: Սամը վերադառնալով Միմորդի մոտից՝ իր մոտ է կանչում մեծամեծներին ու պատվիրում, որ որդուն օգնեն և սովորեցնեն արքայական բարքն ու վարքը: Զալին էլ հանձնարարում է կառավարել իր երկիրը՝ Զարոլխտանը, իսկ ինքը գնում է Մազանդարան՝ ապստամբած իշխաններին հնազանդեցնելու:

**Զալի և Ռուզարեի պատմությունը.**—Հոր մեկնելուց հետո Զալը որոշում է շրջագայել երկրում. գնում է Հնդկաստան, Քարուլ (Արարիս), Քարուլի արքա Մեհրաբը՝ լսելով, որ Զալը գալիս է իր երկիրը՝ մեծամեծ նվերներով ընդառայում է նրան: Զալն իմանալով այդ, իր հերթին պատրաստվում է ընծաներով ու արքայավայել պատիվներով հանդիպել նրան: Քե՛ մեկը և թե՛ մյուսը շատ են հավանում իրար: Երբ Մեհրաբը հեռանում է Զալի վրանից, վերջինս իր մարդկանց մոտ գովում է նրան, իսկ նրանցից մեկը հայտնում է, որ Մեհրաբի կանանցում կա մի լուանաղեմ աղջիկ, որ վաչել է Զալ արթային:

Մի օր Մեհրաբը աչցելում է իր կանանցը. սրահում հանդիպում է լուանաղեմ Ռուզարեին և նրա մորը՝ խելացի Մինդոխտին: Մինդոխտը հարցնում է Մեհրաբին Զալի մասին: Վերջինս շատ է գովում Զալին և նրա միակ թերությունը համարում սպիտակ մազերը: Ռուզարեն լսելով այդ գովքը, սիրահարվում է նրան և այդ

մասին պատմում իր հինգ թրբուհի ստրուկներին, որոնք խոստանում են նրան օգնել: Նրանք գնում են գետափ և զարդարվում վարդերով. գետի մյուս ափից Զալը նկատում է նրանց և տեղեկանալով, որ Ռուզարեի ստրուկներին են, գալիս է գետափ և նետ ու աղեղով նշան բռնում մի ջրային թռչունի. ստրուկները հիանում են նրա նշանառությունը: Զալի ծառան գնում է նրանց մոտ և գովում է իր տիրոջը, իսկ նրանք էլ՝ Ռուզարեին: Ապա Զալը մոտենում է նրանց և պայմանավորվում Ռուզարեին հանդիպելու մասին: Ստրուկուհիները այդ բոլորը հայտնում են Ռուզարեին: Երեկոյան Զալը գաղտնի տեսակցում է Ռուզարեի հետ և խոստանում հավատարիմ լինել: Զալը նամակով հայտնում է Սամին իր մտադրությունը: Ատղաբաշխների խորհուրդով Սամը հայտնում է իր համաձայնությունը և միաժամանակ հանձնարարում սպասել, մինչև որ ինքը կգնա և կստանա Մանուշեհի համաձայնությունը:

Քեև Մանուշեհը սկզբից համաձայնություն չի տալիս և պահանջում է, որ Սամը գնա ու բնաջինջ անի Զոհակի հաջորդներին ու նրանց երկիրը, բայց Ռուզարեի մոր՝ Մինդոխտի միջամտությամբ և Զալի խնդրանքով նա վերջապես զիջում է: Զալը ամուսնանում է Ռուզարեի հետ, գնում Զարոլխտան, իսկ հայրը մեկնում է Մազանդարան:

Ռուզարեն հիանում է Միմորդի խորհրդով, պատում են որովայնը և մանկանը հանում: Մայրը, ուշքի գալով, բացազանչում է Ռոստամ «ազատվեցի» և այդտեղից էլ որդու անունը մնում է Ռոստամ:

Դեռ մանուկ հասակից Ռոստամը աչքի է ընկնում իր առասպելական ուժով. սպանում է կապանքից փախած, կատաղի սպիտակ փղին, տիրում Սեփանդ լեռան ամբողջը, որի մարդիկ սպանել էին նարիմանին: Ռոստամն իր համար ընտրում է մի ձի, որին անվանում են Ռախշ: Ռոստամը Իրանի թագավորների սպավենն է գառնում Քուրանի դեմ մղած դարավոր պատերազմի ամբողջ ժամանակաշրջանում:

Մանուշեհը մոտենում է իր մահվան: Ատղաբաշխները գուշակում են նրա մահվան օրը. նա կանչում է իր որդուն՝ Նոզարին, զահր նրան հանձնում, անհրաժեշտ խրատներ տալիս ու մեռնում:

8. Ն Ո Ղ Ա Ր.—Սկզբից արդար էր ու բարի, բայց շուտով գոռոզանում ու ոտնահարում է հոր հիմնած կարգն ու կանոնը: Ժողովուրդն ապստամբում և գիմում է Սամի օգնությունը. վերջինս համոզում է Նոզարին՝ լավ վարվել իր հպատակների հետ: Իրանի թագավոր Մանուշեհի մահվան լուրն աննկելով՝ Քուրանի թագավոր Փա-



շանգը իր որդի Աֆրասիաբի հետ մեծ բանակով կովի է ելնում Իրանի դեմ, պարտութիան մատնում նոզարին, գերում նրան և իրանական զորքի շատ առաջնորդների, ապա զխառնում է նոզարին, իսկ մյուսներին բանտարկում: Վերջիններին ազատում է Քելվազը՝ Աֆրասիաբի եղբայր Աղբիրասի օգնությամբ. վերջինիս Աֆրասիաբը սպանում է դավաճանության համար: Չալը մեծ զորքով հարձակվում Աֆրասիաբի վրա և սկսվում է ահեղ կռիվը:

9. Զ ո՞ թ ա հ մ ա ս պ ի ու ռ զ ի.—Չալի առաջարկով գահը հանձնում են Ֆերիզունի ցեղից սերած, Քաջմասպի որդի, ութսունամյա Ջոնն՝ անարժան համարելով նոզարի որդիներին: Իրանի և Քուրանի միջև զեռ զեռ շարունակվում էր պատերազմը, բայց վրա է հասնում սովը, երկու կողմերն էլ ստիպված են լինում հաշտություն կնքել: Մկսվում է խաղաղ կյանքը:

10. Գ ա ռ շ ա ս պ.—Մերունի հոր՝ Ջոնի մահվանից հետո ժառանգում է գահը և թագավորելով հինգ տարի՝ մեռնում: Իրանի գահը թափուր է մնում: Քուրանի թագավոր Փաշանգը, որ իր որդի Աֆրասիաբին հեռացրել էր տնից՝ եղբորն սպանելու համար, նրան կանչում է իր մոտ և հրամայում քնալ ու տիրել Իրանը: Իրանի ժողովուրդը դիմում է Չալի օգնությանը, որ, սակայն, ծնրության պատճառով հրաժարվում է անձամբ կռիվը զխաղաղուց. նա իր մոտ է կանչում Ռոստամին, նրան հանձնում Սամի զուրդը և հանձնաբերում կովի ելնել Քուրանցիների դեմ: Չալը բանակի պետն է անցնում և բերում կանգնեցնում է Աֆրասիաբի բանակի դեմաց, ապա խորհրդակցում է մողպետների հետ՝ գահը արժանավոր մեկին հանձնելու մասին: Ամենից հարմարը գտնում են Քել-Վորադին, որ բնակվում էր էլբրուսի ստորոտում: Չալի հանձնաբերությամբ Ռոստամը գնում ու բերում է նրան:

11. Ք ե յ-Վ ո ռ ա ղ.—Հիմնադրում է, այսպես կոչված, Քելանյան հարստությունը: Գահ բարձրանալով՝ զորքն առաջնորդում է կովի՝ Աֆրասիաբի դեմ: Կատաղի ճակատամարտում Կարանը սպանում է Շեմասասին, իսկ Ռոստամը հարձակվում է Աֆրասիաբի վրա, գոտուց բռնելով պոկում նրան ձիու մեջքից, կամենալով այդպես տանել նրան Քել-Վորադի մոտ, բայց գոտին կտրվում է և Աֆրասիաբը գետին է ընկնում. թիկնապահները անմիջապես փախցրնում են նրան: Զինվորները տեսնելով այդ, իրենք էլ փախուստի են դիմում: Աֆրասիաբը գնում է հոր՝ Փաշանգի մոտ և պատմելով նրան Ռոստամի, Քել-Վորադի, Չալի, Կարանի ու Քելվազի մասին, խորհուրդ է տալիս հորը հաշտություն կնքել: Փաշանգը համաձայնում է և սուրհանդակի միջոցով հաշտություն է խնդրում Քել-

Վորադից՝ Ֆերիզունի հիմնած սահմանները պահպանելու պայմանով: Քել-Վորադը համաձայնում է. պատերազմը դադարում է: Արբան Ռոստամին է հանձնում Իրանի հարավը, մեծագին պարզեներով վարձատրում է իր հերոսներին, իսկ ինքը իր գահը հաստատում է Իսթախրում և հարյուր տարի երկիրը կառավարում արգարությամբ:

12. Ք ե յ-Ք ա վ ու ս.—Թագավորում է 150 տարի:

Ա. Հաջորդելով հորը՝ հպարտանում է իր զորությամբ ու հարստությամբ և իրենից մեծ ոչ մի ուժ չի ճանաչում: Գեի զրդումով սրտում է կովել ընդդեմ Մազանդարանի, ուր բնակվում էին դեերը: Երկրի մեծամեծները Չալի միջոցով խնդրում են նրան շանել այդ բանը, բայց նա չի լսում նրանց: Մեծ զորքով նա մտնում է Մազանդարան և ավերում այն: Լուրը հասնում է Մազանդարանի թագավորին, որն օգնության է կանչում սպիտակ դեկն. վերջինս գալով, գիշերը քարի կարկուտ է թափում իրանցիների գլխին, ցրում ամբողջ զորքը և գերում Քավուսին ու բոլոր մեծամեծներին: Քավուսը Չալից օգնություն է խնդրում: Չալը կանչում է Ռոստամին իր մոտ և հանձնարարում շտապ օգնության հասնել: Գեպի Մազանդարան կար երկու ճանապարհ. մեկը՝ երկար և անվտանգ, մյուսը՝ կարճ և վտանգավոր: Ռոստամը բնտրում է վերջինը, նա հրաժեշտ է տալիս ծնողներին ու սլանում դեպի Մազանդարան: Մինչև Մազանդարան հասնելը Ռոստամը յոթ արկածի է հանդիպում.

ա) Երբ ինքը քնած էր, առյուծը հարձակվում է Ռախի վրա, որ արացիներով ջարդում է նրան ու ատամներով պատառոտում մարմինը:

բ) Անապատով ամբողջ օրը գնալով՝ ծարավից ուժասպառ է լինում. տեսնում է մի վայրի ոչխար, որ շուր խմելու էր գնում, հետևում է նրան ու աղբյուր գտնում:

գ) Գիշերը, Ռոստամի քնած ժամանակ, մի վիշապ է հայտնաբերում: Ռախի արթնացնում է Ռոստամին, որ կովի է բռնվում վիշապի հետ ու սպանում նրան:

դ) Ճանապարհը շարունակելով՝ մի աղբյուրի մոտ դադար է առնում. դեղեցկուհու կերպարանք առած կախարդը հայտնվում է նրան: Ռոստամը ասածուն շնորհակալություն է հայտնում, որի անունը լսելով՝ կախարդը վերստանում է իր իսկական կերպարանքը, և Ռոստամը սպանում է նրան:

ե) Առաջ անցնելով՝ Ռոստամը հասնում է մի կանաչազարդ տեղ ու քնում: Գաշտի պահակը տեսնելով, որ նա ձին արձակել է դաշտի մեջ, գոռում-գոչումով հարձակվում է նրա վրա և արթնաց-



նում: Ռոստամը բռնում է նրա երկու ականջներից և պոկում: Պահակը լալով փախչում է իր տեր Ավլադի մոտ և հայտնում եղելությունը: Ավլադը զորքով գալիս է Ռոստամի դեմ, բայց պարսվում է և գերի բնկնում: Ռոստամն ասում է. «Ցույց տուր ինձ Քավուսի և նրան դերոզ դեբրի տեղը և թեզ կաղատեմ»: Ավլադը ցույց է տալիս և պատմում իր իմացածները: Հասնելով Մազանդարանի սահմանին՝ Ռոստամը Ավլադին կապում է մի ծառից, իսկ ինքը շարունակում ճանապարհը:

դ) Ավլադի ցույց աված ճանապարհով գնալով՝ Ռոստամը հասնում է դեբրի խմբին: Նա սպանում է դեբրի գլխավորին ու ցրում նրանց զորքը, ապա վերադառնում է Ավլադի մոտ, արձակում նրան ծառից և նրա առաջնորդությամբ գնում ազատում է Քավուսին գերությունից. Քավուսը Ռոստամին խնդրում է, որ զնա ու սպանի սպիտակ դեբն:

է) Ավլադի առաջնորդությամբ Ռոստամն ուղևորվում է սպիտակ դեբ երկիրը: Ճանապարհին նա հանդիպում է դեբրի մի ահարկու բանակի և բոլորին կոտորում, ապա դիմում է դեպի սպիտակ դեբ որջը, ահեզ մենամարտում սպանում նաև նրան և Ավլադի հետ վերադառնում, խոստանալով նրան Մազանդարանի թագավորությունը՝ իր ծառայությունների փոխարին:

Քավուսն ու բոլոր մեծամեծները ուրախությամբ ու փառաբանությամբ դիմավորում են Ռոստամին, որը բոլորի աչքերի մեջ կաթեցնում է սպիտակ դեբ արյունից և վերադարձնում նրանց աչքերի լույսը, որ կորցրել էին սպիտակ դեբ թափած քարե կարկուտի ժամանակ: Յոթօրյա խրախճանքից հետո, հարձակվում են Մազանդարանի վրա, ավերում մի քանի քաղաքներ: Քավուսը, մտածելով, որ կատարվածից վախեցած Մազանդարանի թագավորը կխուսափի սպառնալիցից, նամակով պահանջում է, որ նա հպատակվի իրեն: Մազանդարանի թագավորը առաջարկը մերժում է սպանալիքով: Ռոստամի միջոցով ուղարկում է երկրորդ նամակը: Մազանդարանի թագավորը նրան նուշնպես սպանալիքներով է պատասխանում: Սկսվում է ահավոր կռիվ և ութ օրվա ահեզ ճակատամարտում հաղթում են իրանցիները: Ռոստամը մենամարտում է Մազանդարանի թագավորի հետ, որն զգալով իր պարտությունը՝ կախարհանքով ժայռի է փոխարկվում: Ռոստամը այդ ժայռը բերում է Քել-Քավուսի մոտ և սպանում ժայռը փոշի դարձնել, եթե իսկական կերպարանքը չընդունի: Վախեցած թագավորը վերստանում է իր կերպարանքը և գլխատվում Քավուսի հրամանով: Քավուսը Ռոստամի միջնորդությամբ Մազանդարանի թագավորությունը

հանձնում է Ավլադին, իսկ ինքն իր զորքով վերադառնում է Իրան և շարունակում կառավարել երկիրը արդարություններ ու փառքով:

Բ. Քավուսի կռիվը Բարբարիստանում և այլ երկրներում.— Այնուհետև Քավուսը տիրում է Բարբարիստանին և Համավարանին: Նա կնուխյան է առնում Համավարանի թագավորի աղջկան՝ Սուգարեին: Սուգարեի հայրը, իր կամքին հակառակ, աղջկան տալիս է նրան, մի շարաթից հետո Քավուսին իր մոտ հյուր է կանչում և մեծամեծների հետ նրան էլ, Սուգարեին էլ շղթայակապ գցում է ամրոցը: Աֆրասիարն իմանալով այդ, հարձակվում է Իրանի վրա: Ժողովուրդն օգնության է կանչում Ռոստամին, որ մեծ զորք ժողովելով նախ հարձակվում է Համավարանի վրա՝ Քավուսին ազատելու: Համավարանի թագավորը օգնության է կանչում Եգիպտոսի և Բարբարիստանի թագավորներին և երեքով միասին ելնում են Ռոստամի դեմ, բայց պարսվում են: Քավուսն ու իր մեծամեծները շղթաներից ազատվում են: Քավուսը, զորքի գլուխ անցնելով՝ հարձակվում է Աֆրասիարի վրա, փախուստի մատնում նրան և իր երկրում կարգ ու կանոն հաստատում: Գեները՝ կամենալով վրեժ լուծել Քավուսից, դրդում են նրան երկինք բարձրանալ: Նա արծիվ ձագերին սնելով ու մեծացնելով, նրանց թևերի վրա նստած բարձրանում է երկինք, բայց արծիվները հոգնում ու ցած են իջնում: Քավուսն ընկնում է մի անտառ. Ռոստամն ու Իրանի մեծամեծները լսելով այդ, գալիս ու տանում են նրան:

Ռոստամը խնջույք է սարքում և հրավիրում Իրանի քաղաքին: Մի շարաթ կեր ու խումով անցկացնելուց հետո, որոշում են որսի գնալ Թուրան. բոլոր քաղերն իրենց թիկնապահ զորքերով դիմում են դեպի Աֆրասիարի երկիրը և որսով ու քեֆով անցկացնում լսթ օր: Լուրջ հասնում է Աֆրասիարին, որը մեծ զորք ժողովելով՝ հարձակման է դիմում: Այդ արյունահեղ ճակատամարտում իրար դեմ են ելնում երկու երկրների անվանի քաղերը. Ռոստամը, Գիվը, Գողարզը, Գոստահմը, Բահրամը, Թուսը և շատ ուրիշ քաղեր՝ Իրանից, Աֆրասիարը, Փիրանը և ուրիշները՝ Թուրանից: Իրանի քաղերը կոտորում են Թուրանի շատ անվանի հերոսների և Աֆրասիարին փախուստի մատնում, ապա երկու շարաթ էլ որսորդությամբ անցկացնելուց հետո, վերադառնում իրենց երկիրը:

Գ. Ռոստամ ու Սոհրաբ.— Ռոստամը որսի է գնում, հոգնում է և ընում. այդ միջոցին անցնում են 7—8 թուրք որսորդներ և նկատելով նրա Ռախշ ձիուն, փախցնում են այն, նրանից ազնվացեղ ձիեր բազմացնելու համար, բայց քառասուն մատակից



միայն մեկն է ծնում Ռախշի նման բուռակ: Ռոստամը զարթնում է և ստիպված ոտքով դնում է մինչև Սամանգան, որտեղի շահը մեծ պատվով ընդունում է նրան և խոստանում ձին գտնել: Գիշերը Ռոստամի մոտ է գնում շահի դուստրը՝ լուսնադեմ Փահմինեն և հայտնում իր համակրանքն ու սերը Ջալյան Ռոստամին, ինչպես և իր ցանկությունը՝ նրանից զավակ ունենալու մասին: Ռոստամը հորից ուզում է Փահմինենին և ամուսնանում, բայց հետևյալ օրը ձին գտնվում է, և նա մեկնում է: Մեկնելիս իր աչքազկից հանում է եղնաքարը ու տալիս կնոջը, պատվիրելով, որ եթե յազդիկ ծնվի՝ ծամից կապի, իսկ եթե տղա՝ թևից, և նա կլինի քաջ ու արի նարիմանյան ցեղին հատուկ մի կտրիձ:

Ինն ամիս հետո ծնվում է արու զավակ. նրան անվանում են Սոհրաբ. շատ շուտով նա մեծանում և մի հսկա է դառնում: Մի օր նա պահանջում է մորից, որ հայտնի, թե ով է իր հայրը: Մայրը հայտնում է, միաժամանակ պատվիրելով, որ գաղանի պահի, որովհետև Քուրանի միահեծան շահ Աֆրասիաբը Ռոստամի դիտարկելով թշնամին է և կարող է որդուց վրեժ լուծել: Սոհրաբը զորք է հավաքում, ընտրում է մի ձի՝ Ռախշից սերած նժույզը, և պատրաստվում է մեկնելու: Աֆրասիաբը այդ լսելով՝ Հոմանին և Բարմանին մեծ նվերներով ուղարկում է Սոհրաբի մոտ և իր աջակցությունը խոստանում, նպատակ ունենալով որդուն պինդ հոր դեմ, նրան սպանել և հետո էլ Սոհրաբից ազատվել ու այսպիսով տիրել Իրանին:

Սոհրաբը իր գորքով հարձակվում է Ապիտակ բերդի վրա: Մի քանի մարտերում պարտություն մատնելով հակառակորդներին՝ տիրում է բերդին: Քեյ-Քավուսը Ռոստամին կանչում է՝ մարտի ելնելու, բայց Ռոստամն ուշանում է, որ և թագավորի ու նրա զօրություն պատճառ է դառնում: Մեր Գողարզի միջնորդությունը թագավորը հաշտվում է նրա հետ, և նա, զորքի գլխուն անցած՝ արշավանքի է ելնում Սոհրաբի դեմ: Սկսվում է ահեղ կռիվը: Հայր ու որդի, առանց իրար հանաչելու, մենամարտում են: Մենամարտը տևում է երեք օր: Առաջին օրն անցնում է առանց որևէ մեկին հաղթանակ բերելու, երկրորդ օրը Սոհրաբը Ռոստամին պարտ է ցած, բայց չի սպանում, երրորդ օրը Ռոստամը Սոհրաբին զարնում է գետին, անմիջապես սուրը հանում և հարազատ ու քաջարի որդու կուրծքը պատում:

Սոհրաբը հայտնում է հորը տեսնելու իր տենչը. Ռոստամն իմանում է, որ նա իր որդին է: Նա անմիջապես Գողարզին ուղարկում է Քեյ-Քավուսի մոտ և բալասան խնդրում Սոհրաբի համար, բայց նա մերժում է և Սոհրաբը մեռնում է:

Գ. Ս ի ա վ ու շ. — Քավուս շահի պալատականները անտառում որս անելիս գտնում են Խուբշահի գեղեցկուհուն, որի հայրը մեծելով նրան՝ վոնդել էր տանից: Խուբշահին տանում են շահի մոտ, շահը հավանում և ուղարկում է իր կանանոցը և նրանից ունենում է մի որդի, որի դաստիարակությունը հանձնում է փահլեվան Ռոստամին: Որդուն անվանեցին Միավուշ:

Հայրը մի քանի անգամ որդուն փորձում է՝ ուղարկելով կանանոց, և համոզվում է, որ նա շատ զուսպ և խելացի տղա է: Քավուս շահի տիկնանց տիկին Սուլաբեն, տեսնելով գեղեցկադեմ և խոհեմ Միավուշին, սիրում է նրան և առաջարկում իր հետ գաղտնի կապեր հաստատել: Միավուշը մերժում է Սուլաբեն տեսնելով, որ նա անզորվելի է, սկսում է մայրը պոկել և դեմքը հանկուտել, լաց ու կոծ բարձրացնել: Այդպիսով նա կարողանում է շահին հավասարանել, որ նրա որդին զոռով ուզում էր իրեն ձեռք դնել: Շահը լսելով երկուսին էլ, հավատում է որդու անմեղությունը: Սուլաբեն որոշում է վրեժխնդիր լինել Միավուշից և կանչելով մի կախարհ կնոջ, որ հղի էր, կաշառում է նրան ու պահանջում, որ կախարհանքով երեխան մեռած ծնի: Կախարհն այդպես էլ անում է: Սուլաբեն շահին հայտնում է, որ դա իր երեխան է և Միավուշն է սպանել: Լուց ու կոծ բարձրացնելով Սուլաբեն պահանջում է պատժել Միավուշին:

Աստղաբաշխները քննում են երեխային և ասում, որ թագավորական արյուն չունի. որոնում ու գտնում են կախարհին, բայց նրանից իրողությունն իմանալ չեն կարողանում: Մոգպետները վրձնում են նրանցից մեկին կրակի միջով անց կացնել, եթե արդար է, անվնաս դուրս կգա, իսկ եթե ոչ՝ պատիժը կկրի: Այդպես էլ անում են: Միավուշն իր ձիով անցնում է բոցերի միջով և անվնաս դուրս գալիս: Շահը հրամայում է սպանել Սուլաբեին, բայց բարի Միավուշի խնդրանքով Քեյ-Քավուսը ներում է նրան:

Այդ միջոցին Աֆրասիաբը արշավում է Իրանի վրա: Միավուշը՝ խարդախ Սուլաբեի զավերից ազատվելու համար, խնդրում է հորն իրեն ուղարկել Աֆրասիաբի բանակի դեմ: Հայրը համաձայնում է և Միավուշը իրանական զորքով Ռոստամի հետ ճամփա է ընկնում և մի քանի ձակատամարտերում հաղթանակ տանելով՝ սարսափի է մատնում թշնամուն:

Աֆրասիաբը մեծամեծ ընծաներ է ուղարկում նրան, իր գրաված իրանական հողերը հետ վերագրվում և հաշտություն առաջարկում: Միավուշը, խորհրդակցելով Ռոստամի հետ՝ հայտնում է իր համաձայնությունը և հորը տեղեկացնում այդ մասին: Քեյ-Քա-



վուր չի ընդունում այդ առաջարկը: Ռոստամը վերավորվում է թագավորից և իրեն ամոթապարտ համարելով Աֆրասիաբի առջև, հրաժարվում է կովին մասնակցելուց: Քեյ-Քավուսը որդուն հրամայում է զորքը հանձնել Քուսին և վերադառնալ պալատ: Վախենալով հոր պատժից ու չկամենալով դրժիլ հաշտության իր խոստումը, Միավուշը որոշում է փախչել օտար երկիր, բայց Աֆրասիաբը նրան հրավիրում է իր մոտ բնակվելու: Միավուշը համաձայնում է, մեծ շուքով նրան ընդունում են նա ամուսնունենում է Աֆրասիաբի դուստր Ֆարանգիսի և Փիրանի դուստր Զարիրայի հետ: Կատուցում է Միավուշգերդ քաղաքը և այնտեղ բնակություն հաստատում: Աֆրասիաբի եղբայր Գարիսվազը նախանձում է նրան և զանազան բանսարկություններով Աֆրասիաբին զրգում նրա դեմ: Աֆրասիաբը կովի է ելնում Միավուշի դեմ ու սպանում նրան: Նրա կնոջը՝ Ֆարանգիսին, սպանությունից փրկում է հայրը՝ Փիրանը, և տանում է իր մոտ: Որոշ ժամանակից հետո նրանից ծնվում է մի աղա, որին անվանում են Խոսրով:

Ե. ԽՈՍՐՈՎԸ ՄԵԿԵՆՈՒՄ ԻՐԱՆ.—Ամբողջ Իրանում տարածվում է Միավուշի սպանության լուրը, բոլորը ողբում են: Ռոստամը գալիս է Քեյ-Քավուսի մոտ, հանդիմանում նրան իր արածների համար, մտնում է կանանոցը, սպանում Սուրբաբին՝ բոլոր դժբախտությունների սկզբնապատճառին, ապա զորք ժողովելով՝ հարձակվում է Քուրանի վրա՝ Միավուշի վրեժը լուծելու Առաջապահ զորքը հանձնում է իր որդուն՝ Ֆարամուրզին, որ հասնելով Սեփինջաբի սահմանին, կովի է բռնվում կուսակալի հետ, սպանում նրան ու զորքը ցրում: Աֆրասիաբն, իմանալով այդ, 30 հազարանոց զորք է ժողովում և հանձնում իր որդի Սուրբահին, որ անմիջապես կովի է դիմում Ֆարամուրզի դեմ, բայց պարտվում և գերի է ընկնում: Ռոստամն իր զորքով հասնում է առաջապահ զորդին և տեսնելով գերուն, հրամայում է ղյխատել նրան: Լուրը հասնում է Աֆրասիաբին, որը մեծ զորք ժողովելով գալիս է որդու վրեժը լուծելու, սակայն պարտվում է և փախչում Չինաստան, ապա անցնում Չինական ծովից այն կողմ: Փիրանի միջոցով բերել է տալիս Խոսրովին (Միավուշի որդուն), որպեսզի իրանցիների ձեռքը չընկնի և ուղարկում Խոթան: Ռոստամը տիրում է Քուրանին: Յոթ տարի մնում է այնտեղ, ապա ամայացնելով երկիրը՝ վերադառնում է Իրան: Աֆրասիաբը՝ վերադառնալով Քուրան և իր երկիրը ամայացած տեսնելով՝ հարձակվում է Իրանի վրա, կոտորում ժողովրդին ու ավերում երկիրը:

Մի դիշիր Գոգարզը երազում տեսնում է, որ երկնքից հրեշ-

տակն իջնելով պատմում է իրեն Միավուշի որդի Խոսրովի մասին և ասում, որ իր որդի Գիվին ուղարկի նրան բերելու Հաջորդ օրն իսկ Գոգարզը կանչում է Գիվին, պատմում նրան ամեն ինչ և հանձնարարում գնալ ու բերել Խոսրովին: Գիվն անմիջապես ուղևորվում է, յոթ տարի Քուրանում ապարդյուն շրջելուց ու որոնելուց հետո մի անտառում, աղբյուրի մոտ հանդիպում է Խոսրովին, որին Խոթանից բերել էր տվել Աֆրասիաբը: Երկուսն էլ անմիջապես ճանաչում են իրար, ողջունում միմյանց ու բարեկամաբար խոսում, ապա գնում Միավուշգերդ՝ Խոսրովի մոր մոտ ու պատրաստվում Իրան մեկնելու: Ֆարանգիսի ցուցումներով Գիվն ու Խոսրովը գնում են արտ, ուր ձիերի երամակն էր դանվում, գտնում են Միավուշի Բեհզադ ձին, վերադառնում տուն և անմիջապես մեկնում դեպի Իրան: Քեյ նրանք ամեն կերպ ջանացել էին գաղտնի պահել իրենց մեկնումը, բայց և այնպես Փիրանն իմանում է այդ և, վախենալով Աֆրասիաբի բարկությունից, ինչպես և Խոսրովի ապագա հաղթանակից Քուրանի դեմ, անմիջապես ընտրում է 300 քաջ կովոզների, հանձնում Քուրազի և Նասթիհանի հրամանատարությանն ու հրամայում, որ անմիջապես գնան, սպանեն Գիվին և Ֆարանգիսին, իսկ Խոսրովին շղթայակապ իր մոտ բերեն: Նրանք հասնում են փախուստականներին այն ժամանակ, երբ նրանք կանգ էին առել հանգրտանալու: Խոսրովն ու մայրը քնած էին, իսկ Գիվը հսկում էր նրանց: Տեսնելով մոտեցող զորավարին, Գիվը մեծ մենակ ձի է հեծնում ու նրանց դեմ արշավում: Մի օր տեղը կովում նա կոտորում է բազմաթիվ քաջերի, իսկ մնացածներին, Քուրազի ու Նասթիհանի հետ, փախուստի մատնում:

Փիրանը, տեսնելով իր փախստական զորավարներին, զայրանում ու ծաղրում է նրանց, ապա վերցնելով հազար հոգի իր ընտիր քաջերից, հետապնդում է փախստականներին. մի դեպի մոտ հասնում է նրանց: Գիվը կովի է ելնում հարձակվողների դեմ, կոտորում է շատ քաջերի, իսկ Փիրանին կապում տանում է Խոսրովի մոտ: Փիրանը Խոսրովից ազատություն է խնդրում իբրև հատուցում իր կատարած լավությունների: Ֆարանգիսն ու Խոսրովը խնդրում են Գիվին՝ ազատել նրան, բայց Գիվն ասում է, որ ինքը կրկնել է թափել Փիրանի արյունը: Խոսրովը խորհուրդ է տալիս ականջը ծակել ու այդքանով բավարարվել. Գիվն այդպես էլ անում է, ապա խոստում է առնում Փիրանից, որ իր կապերն արձակել չի տա ոչ ոքի, բացի իր առաջին կնոջից, և կապում է ձիու մեջքին ու բաց թողնում:



Փիրանը հանդիպում է Աֆրասիաբին այն ժամանակ, երբ նա իմացել էր արդեն խոսքովի փախուստի մասին և զորք ժողոված պատրաստվում էր նրանց հետապնդելու։ Փիրանը Աֆրասիաբին պատմում է ամեն ինչ մանրամասնորեն, ապա շարունակում ձանապարհը։ Աֆրասիաբն իր մեծ զորքով արշավում է փախստականների հետևից, բայց նրանք արդեն անցել էին Իրանի սահմանը։ Աֆրասիաբն անհույս կատաղությամբ վերադառնում է՝ վախենալով գալիք դժբախտություններից։

Մանկով Իրան, Գիվն իսկույն մի սուրհանդակ է ուղարկում հոր՝ Գոգարգի մոտ՝ նրան հայտնելու իր և խոսքովի դաշտայան մասին։ Գոգարգը մեծ շուքով դիմավորում է նրանց ու ներկայացնում Քեյ-Քավուսին։ Գոգարգը պատրաստվում է գահը խոսքովին հանձնելու, բայց Նոգարի որդի Քուսը ընդդիմանում է և առաջարկում թագը հանձնել Քավուսի որդի Յարբուրգին։ Վեճի լուծումը հանձնվում է Քավուսին, որը, չկամենալով հարուցել ոչ մեկի թշնամությունը, պայման է դնում, որ երկուսից որը որ կարողանա զբավել Բահմանի ամրոցը, որտեղ դևեր են ապրում, նա էլ կարժանանա թագին։ Յարբուրգը գնում, բայց չի կարողանում աիրել։ Խոսքովը գնում, աիրում է և մի մեհյան կառուցելով՝ վերադառնում։ Բոլորն ուրախանում են։ Քավուսը հանդիսավոր կերպով թագն ու գահը հանձնում է նրան։

13. Քեյ-Նոսուսով.— Թագավորում է 60 տարի։

Ա. Առաջին պատերազմը Աֆրասիաբի դեմ.— Գահ բարձրանալով՝ Քեյ-խոսքովը անմիջապես հոգ է տանում երկրի բարեկարգման մասին։ Նա առաքինի, բարի, գիտուն և բաշ թագավոր էր. ուներ այն բոլոր առավելությունները, որ անհրաժեշտ էին մի լավ թագավորի համար։ Երկրի բոլոր մեծամեծները գալիս են նրան շնորհավորելու։ Գալիս են նաև Զալը, Ռոստամը և նրա որդին՝ իրենց զորքերով։ Խոսքովը մեծամեծ պարգևներ է տալիս նարիմանյան ցեղի բաշ փահյաններին, ապա զուրս գալիս մեծամեծների հետ շրջագալելու իր երկրում. նա ականատես է լինում այն բոլոր ավերումներին, որ պատճառել էր Աֆրասիաբը։ Քեյ-խոսքովը վերադառնում է պալատ, ուր Քեյ-Քավուսը պատմում է Իրանի նկատմամբ Աֆրասիաբի դժբաժ շարիքների մասին և երզում է պահանջում խոսքովից՝ երեք հաշտություն չկնքել նրա հետ, լուծել իր հոր՝ Սիավուշի, և ամբողջ Իրանի վրեժը։ Խոսքովը հանդիսավոր կերպով երդվում է և այդ երզումը զրի են առնում, մեծամեծները հաստատում են այն իրենց կնիքներով։ Այնուհետև Քեյ-խոսքովը կազմել է տալիս իր բոլոր մեծամեծների ցուցակները ըստ տոհմերի, որոն-

ցից ամենաականավորներն էին Քեյ-Քավուսի որդի Յարբուրգը, Նոգարի ցեղը՝ Քուսի զխավորությունը, Գոգարգի, Գոժգահմի, Փաշանգի տոհմերը։ Կանչում է բոլոր մեծամեծներին, յուրաքանչյուրին արժանիքի համապատասխան նվերներ տալիս, հայտնում ձեռնարկելիք պատերազմի մասին։ Ապա զորահանդես է կազմակերպում և ստուգում իր երկրի բոլոր զորքերը։ Իրար ետևից խոսքովի առջևով անցնում են՝ Յարբուրգն իր զորքով, 78 որդիներ ու թոռներ ունեցող Գոգարգը և Գիվ, Շայդուշ ու Ռոհամ որդիներն իրենց զորքերով, Գոստահմը՝ Գոժգահմի որդին, Աշրաշը՝ Կոբագի ցեղից, արքունական զորքերի կառավարիչ Յարհաղը և շատ ուրիշներ։ Վերջացնելով բոլոր նախապատրաստական արարողությունները՝ խոսքովը բոլոր մեծամեծների ներկայությամբ իր բանակի հրամանատար է նշանակում Քուսին՝ հանձնարարելով բանակը պատերազմի ասնել։

Քալաթում, Սափեդ լեռան վրա, իր ամրոցում ապրում էր Սիավուշի որդին՝ Յարուզը (ծնված Փիրանի դուստր Զարիբայից)։ Խոսքովը հրամայում է նրա սահմանը չմտնել և չկռվել նրա դեմ։ Բոլոր մեծամեծները իրենց հավատարմության հավաստիքը մատուցելով՝ զուրս են գալիս ու զորքերի զուլխն անցած դիմում մարտի, սակայն հակառակ նրա հրամանին, Քուսն անապատի դժվարությունից խուսափելու համար ընտրում է Քալաթի ճանապարհը, լուրջ հասնում է Յարուզին, որը մորից խորհուրդ է հարցնում. մայրն ասում է, թե իր եղբոր զորքն է, որ գալիս է Աֆրասիաբից Սիավուշի վրեժը լուծելու և խորհուրդ է տալիս միանալ ու կռվել Աֆրասիաբի դեմ։ Քուսը մերժում է Յարուզի առաջարկը և իր փեսային ուղարկում է նրա դեմ մենամարտելու. Յարուզը հաղթում է. գալիս է Քուսի որդի Զաբասպը և դարձյալ պարսվում է ու սպանվում։ Այդպես, հերթով գալիս են՝ Քուսը, Գիվը, Բիժանը և պարտվելով՝ վերադառնում։ Վերջապես, ամբողջ բանակը շարժվում է Յարուզի դեմ, որ երկար ժամանակ դիմադրելուց հետո վիրավորվում է և, փախչելով ամրոց, մեռնում։ Իր ստրկուհիները, աղախինն ու մայրը ինքնասպան են լինում։ Իրանի մեծամեծները տեղեկանալով այդ եղիսնական դեպքի մասին, խորապես վշտանում են և հանդիմանում Քուսին, որը նույնպես զղջում է իր արարքի համար։

Յարուզին հաղթելուց հետո իրանցիները շարժվում են առաջ. դիմադրելու է զուրս գալիս կուսակալ Փալաշանը, որին սպանում է Գիվի որդի Բիժանը։ Հաղթական բանակը դիմում է դեպի Գերովզերդ։ Ծանապարհին Բահրամը մենամարտում է կուսակալի հետախույզ Քարուզայի հետ և գերում ու սպանում նրան։ Մինչ այդ կր-



վի է պատրաստվում կուսակալ Քաժավը և զուրս զայիս իրանցիներ  
րի ղեմ: Ահեղ կովում Քիժանը խլում է նրա թաղը և փախուստի  
մատնում նրան:

Աֆրասիաքն իմանալով թուսի արշավանքի մասին, մեծ զորք  
է ժողովում և հանձնելով Փիրանին, ուղարկում դիմադրելու: Փիրա-  
նը հարձակվում է իրանցիների վրա դիշերով, երբ նրանք կերուխու-  
մից հարբած էին, և մեծ ջարդ է տալիս նրանց: Լուրը հասնում է  
Խոսրովին, որն անմիջապես իր մոտ է կանչում թուսին և բանտար-  
կում, իսկ բանակի հրամանատարությունը հանձնում է Չարիբուր-  
զին: Վերջինս պատգամավոր է ուղարկում Փիրանի մոտ և մի ամ-  
սով վինազադար պահանջում: Փիրանը համաձայնում է: Մի ամիս  
հետո պատերազմը վերսկսվում է, որ դարձյալ իրանցիների պար-  
տություն է վերջանում: Իրան հաջորդում է Բահրամի կռիվը Քա-  
ժավի հետ. վերջինս մեծ խմբով շրջապատում է Բահրամին, հետե-  
վից անակնկալ կերպով հարվածում ու ղետին տապալում: Առա-  
վոտյան լուրը հասնում է Բահրամի եղբայր Գիվին, որը իր որդու  
հետ գալով գտնում է վիրավոր եղբորը, ասպ գնում մենամարտում  
Քաժավի հետ ու գերի վերցնելով բերում է և Բահրամի առջև գլխա-  
տում: Բահրամն էլ մեռնում է:

Իրանի մեծերը խորհրդակցելով որոշում են վերադառնալ Խոս-  
րովի մոտ, նոր ուժեր հավաքել ու հետո հարձակվել:

**Բ. Փ ա մ ու ի պ ա մ ու թ յ ու լ ւ ր .**—Պարտված զորքի վե-  
րադարձը կրկնապատկում է Խոսրովի վիշտն ու վախությունը: Նա իր  
ամբողջ բարկությունը թափում է թուսի վրա, անարգում նրան իր  
այդ խայտառակ պարտության ու իր եղբոր մահվան պատճառը  
լինելու համար և կամենում է զրկել աստիճանից ու պատժել, բայց  
մեծամեծները Ռոստամի միջոցով խնդրում են, որ ների նրան և,  
բավականանա միայն թուրանի ղեմ ուղարկելով՝ իր հասցրած ա-  
նարգանքը սրբելու համար: Ներման ավելի մեծ առիթ է դառնում  
այն, որ նա էլ կորցրել էր իր որդուն ու փեսային: Խոսրովը համա-  
ձայնում է և կրկին զորք ժողովելով հանձնում թուսին, բայց միա-  
ժամանակ հանձնարարում Գողարզին, որ ուշիմությունը հսկի նրան  
ու հետ պահի անխոհեմ արարքներից:

Նրանց արշավանքի լուրն առաջին հերթին ստանում է Փիրա-  
նը, որ պատգամավորների միջոցով խնդրում է իրանցիներին կռի-  
վը չվերսկսել: Իրանցիները մերժում են: Փիրանը տեղեկացնում է  
Աֆրասիաքին, որն անմիջապես մեծ զորք է ուղարկում: Պատերազ-  
մքն սկսվում է թուսի և Արժանդի մենամարտով և ավարտվում Ար-  
ժանդի պարտությունից ու մահով: Այնուհետև իրար ղեմ են ելնում

երկու կողմի քաջերը. կռիվը տևում է երեք օր և ոչ մի կողմն էլ չի  
պարտվում: Փիրանը հրամայում է կախարդ Բազուրին բարձրանալ  
լեռան զագաթը, ձյուն թափել իրանցիների վրա: Սաստիկ սառնա-  
մանիցը և թուրանի քաջերի հարձակումը մեծ կորուստներ են պատ-  
ճառում իրանցիներին, հատկապես Գողարզի ընտանիքին: Գիվը՝  
նկատելով լեռան զագաթի կախարդ Բազուրին, գնում ու սպանում  
է նրան, բայց արգեն ուշ է լինում. իրանցիների կորուստն անդար-  
մանելի էր: Նրանք ստիպված են լինում գիշերով խույս տալ սաղ-  
ժաղաշտից և ամբարնալ Համավուն լեռան վրա: Փիրանը հետապն-  
դում է նրանց: Իրանցիները գիշերային անակնկալ հարձակվածք մեծ  
ջարդ են պատճառում թուրանցիներին, բայց և այնպես չեն կարո-  
ղանում պաշարումը վերացնել. ստիպված են լինում ամեն ինչ  
հայտնել Խոսրովին և օգնության կանչել Ռոստամին: Խոսրովն ան-  
միջապես հրամայում է զորք հավաքել և Չարիբուրզի գլխավորու-  
թյամբ օգնության հասնել թուսին: Գնում է նաև Ռոստամը:

Թուսը երազում տեսնում է, որ Ռոստամն օգնության է գալիս:  
Նվ հնտեյալ օրը, երբ սպասում էր Ռոստամի և իրանական զորքի  
գալստյանը, լուր է ստանում, որ թուրանցիք օգնություն են ստա-  
ցել Զինաստանից, Հնդկաստանից, Մազանդարանից և Սեղսարենե-  
րից (շնազուխ): Այդ զորքերը գլխավորում են՝ լինական թագավո-  
րը (Խաբանը), քաշան Քամուսը, սակլար Քոնդորը, Յիվարդ Քաթա-  
ցին, Կարշա Սեգասը, հնդիկ Շանգուր և այլք: Իրանցիները հուսա-  
հատվում են, բայց շուտով լուր են ստանում Չարիբուրզի գալստյան  
մասին: Վերջինս գալով հայանում է, որ մեծ զորքով գալիս է նաև  
Ռոստամը:

Հակառակորդը հարձակման է անցնում: Քաշան Քամուսը մե-  
նամարտում է Գիվի հետ և նեղում նրան, օգնության է հասնում թու-  
սը: Երկուսով կովում են Քամուսի ղեմ մինչև կրկն և առանց հաղ-  
թելու կամ հաղթվելու դադարեցնում են մենամարտը: Գալիս է Ռոս-  
տամը և առաջին օրը մենամարտելով Աշքաբուսի հետ, սպանում է  
նրան: Հաջորդ օրը Քամուսը մենամարտում է Ռոստամի աշակերտ  
Ալվայի հետ և սպանում նրան: Ռոստամը նրա վրեժը լուծելու է գա-  
լիս. մենամարտում է Քամուսի հետ և պարանով բռնում է նրան,  
կապկպում ու Իրանի մեծամեծների առջև տանելով՝ սպանում:

**Գ. Ռ ո ս տ ա մ ի և Զ ի ն ա ս տ ա ն ի Խ ա Ք ա ն ի կ ո ի-  
վ ը .**—Քամուսի վրեժը լուծելու է գալիս Զանգոշը, որ սպանվում է  
Ռոստամի կողմից: Խաբանը հանձնարարում է Հուսանին՝ գնալ և ի-  
մանալ, թե ով է այդ անպարտելի հերոսը: Հուսանը գնում և շողո-  
քորթ խոսքերով ղեմքում է Ռոստամին՝ խնդրելով ասել իր անունը:



Ռոստամը չի ասում և հայտնում է, որ ամբողջ Քուրանի զորքի մեջ միայն Փիրանին է ազնիվ համարում և նրա հետ է ուզում բանակցել: Հուժանք վերադառնում է և հայտնում իր այն ենթադրությունը, որ այդ քաջը Ռոստամն է: Փիրանը գնում է Ռոստամի մոտ, պատմում իր մատուցած ծառայությունները Միավուշին ու խոսքովին և խնդրում, որ վերջ տան կովին ու հաշտություն կնքեն: Ռոստամը հաշտության համար պահանջում է՝ իրեն հանձնել Քուրանի այն բոլոր մեծամեծներին, որոնք այս կամ այն կերպ մասնակից են եղել Միավուշի սպանությանը, հանձնել Միավուշի բոլոր գանձերը և միաժամանակ առաջարկում է Փիրանին թողնել Քուրանը և գալ Իրան ու դառնալ խոսքովի հպատակ: Փիրանը հրաժարվում է այդ կարգի հաշտությունից: Կռիվը վերսկսվում է, որի րնթացքում Ռոստամը իրար հուժեղ գերի է վերցնում Քուրանի ամենաքաջ կովողներին: Փիրանը հնչեցնում է նահանջի շեփորը: Ռոստամը շարունակում է արշավանքը. Սոգդիանիայում իր զորքով հարձակվում է մարգակեր Քաֆուրի ամրոցի վրա, սպանում Քաֆուրին և գրավում ամրոցը:

Իրանցիների հաղթանակի լուրը հասնում է Աֆրասիաբին: Նա սարսափում է, երբ լսում է, որ Ռոստամը հաղթել է Քամուսին, Աշքարուսին, Խաքանին և մանավանդ Քաֆուրին: Վերհիշում է իր կռիվը Ռոստամի դեմ, ապա պարտությունն ու փախուստը և մեծամեծներին հայտնում է իր հուսահատությունը, բայց նրանք համոզում են և խրախուսում կռիի ելնել Ռոստամի դեմ: Աֆրասիաբը կրկին զորք է ժողովում, Չինաստանից օգնության է կանչում հզոր Փուլաղվանդին և շարժվում իրանցիների դեմ: Փուլաղվանդը մեծ կորուստներ է պատճառում իրանցիներին. նա պարանով բռնում է Գիվին, Բիժանին, Քուսին և ուրիշների: Ռոստամը հարձակվում է նրա վրա. սկսվում է ահեղ մենամարտ, նախ զուրգերով, ապա սրերով, բայց ոչ մեկը չի հաղթում: Որոշում են ըմբռնմարտել, այն պայմանով, որ հրկու բանակները բավականաչափ հեռանան իրարից և ոչ ոք իրենց օգնության չգա: Երկու բանակի մեջ բացված սուպարեզում նրանք ըմբռնմարտում են: Ռոստամը Փուլաղվանդին բարձրացնում է ու խփում գետնին: Վերջինս ուշաթափվում է: Ռոստամը կարծելով, թե մեռել է, վերադառնում է իր բանակը: Փուլաղվանդը ուշքի գալով և իր շուրջը ոչ ոքի չգտնելով, ձի է նստում ու փախչում: Քուրանցիների վիճակն ավելի քան անհուսալի է դառնում: Փիրանի խորհրդով Աֆրասիաբը զորքից թաքուն փախչում է: Քուրանցիները կատարելապես ջախջախվում են ու փախուստի գլխում: Հաղթական իրանցիները մեծամեծ ավարներով

վերադառնում են Իրան և մեկ ամիս տոնում իրենց հաղթանակը: Ռոստամը մեկնում է Միստան:

Գ. Ռոստամի կռիվը Ա. Բ. վաճառի հետ. — Մի օր, երբ խոսքովը մեծամեծների հետ իր պարտեզում խնջույք էր սարքել, լուր է ստանում, որ ցիռի կերպարանքով մի դե հարձակվել է ձիերի երամակի վրա և կտորում է նրանց: Խոսքովը Գորգինի միջոցով կանչում է Ռոստամին և ուղարկում դեի դեմ: Ռոստամը գտնելով դեին, կամենում է պարանով կապել նրան, բայց դեը չքանում է: Երեք օր ապարդյուն որոնելուց հետո Ռոստամը հույսում ու քնում է: Գեը տեսնելով նրան քնած, գալիս բռնում, բարձրացնում է օդի մեջ ու հարցնում. ո՞ր նետեմ քեզ, լեռան դագա՞թը, թե՞ ձորի խորքը: Ռոստամն իմանալով, որ դեն իր ուղածի հակառակը պիտի անի, ասում է. լեռան դագաթը նետիր. դեը նետում է ծովը: Լողալով նա ափ է ելնում, որտեղ Ռախշին, որին դառնում է Աֆրասիաբի երամակների մեջ: Երբ ուզում է բռնել ձիանը՝ հսկիվները հարձակվում են նրա վրա. նա շատերին կտորում է: Այդ պահին Աֆրասիաբը ավազների հետ գալիս է այդ դաշտում խրախուսելու: Հովիվներից լսելով եղածը, հարձակվում է Ռոստամի վրա. բայց Ռոստամը մի մասին կտորում, խակ մյուսներին էլ փախուստի է մատնում. ապա դառնում է դեին ու սպանում նրան:

Ե. Բիժանի և Մաքիժայի պատմությունը. — Մի էրեկը Ֆիրգուսին վատ տրամադրության մեջ լինելով, կանչում է իր բարեկամին ու նրա հետ գինով ու նվազով ուրախանում: Բարեկամը բնելու միջոցին պատմում է հետևյալը.

Իրանի և Քուրանի սահմանում բնակվող արձանները գալիս են խոսքովի մոտ, հայտնում, որ իրենց անտառները լցված են վաբազներով, որոնք փշացնում են ցանքսերը, և խնդրում են խոսքովից օգնություն: Բիժանը առաջարկում է իրեն ուղարկել. խոսքովը համաձայնում է և Գորգինին հանձնարարում է ուղեկցել նրան իրեն առաջնորդ: Երկուսով գնում են: Հասնելով նշված տեղը՝ Բիժանն առաջարկում է Գորգինին կանգնել անտառի եզրին ու սպանել դուրս փախչող վարազներին: Գորգինը հրաժարվում է, ասելով, որ այդ զործը Բիժանին է հանձնարարված, իր պարտքն է առաջնորդել միայն: Բիժանը մենակ մտնում է անտառ, կտորում բոլոր վարազներին: Բիժանը մենակ մտնում է անտառ, կտորում բոլոր վարազներին ու հաղթանակով գալիս Գորգինի մոտ: Վերջինս նախանձում է և նրան կորուստի մատնելու նպատակով պատմում է, թե իրենց եղած տեղից ոչ հեռու մի դաշտում, այդ օրերին Աֆրասիաբի աղջիկը նստրուղի անն է կատարելու և խորհուրդ է տալիս գնալ ու հիանալ այդ տեսարանով: Երիտասարդ Բիժանը համա-



ձայնում է. տեղ հասնելով իմանում են, որ Աֆրասիաբի աղջիկը արդեն եկել է: Բիժանը գնում է ազելի մտա, իսկ Գորգինը սպասում է հեռվում: Աֆրասիաբի աղջիկը՝ Մանիժան, տեսնում է նրան ու հիացած նրա գեղեցկությունը, ուղարկում է գայակին նրա ով լինելն իմանալու: Դայակը Մանիժայի հրամանով Բիժանին հրավիրում է տիրուհու մաս: Երեք օր ու գիշեր Բիժանը մնում է Մանիժայի մոտ: Երբ Մանիժայի վերադառնալու ժամանակը հասնում է, նա թմրեցուցիչ փոշին գինով տալիս է Բիժանին և թմրած վիճակում նրան տանում է իր բանակը: Այստեղ արթնացնում է Բիժանին ու երկար ժամանակ դադանի կենակցում նրա հետ: Բայց լուրը հասնում է Աֆրասիաբին: Զայրացած արքան Փիրանի խորհրդով Բիժանին շղթայակապ պահում է փոսի մեջ և ծածկում է Արվան դեի բարով, իսկ Մանիժայից թագն ու հագուստները և ցնցոտիների մեջ ուղարկում հսկելու Բիժանին: Վերջինս, մի ամբողջ օր հսկելուց հետո, մի կերպ մի անցք է բաց անում և ողորմությամբ ձեռք բերած հացը տալիս է իր սիրածին:

Գորգինը գնում է Բիժանին որոնելու և միայն ձիուն է գտնում ու կռահում եղածը, զղջում է ու սուգի մեջ մտած վերադառնում Իրան: Գիվը նրան հարցնում է իր որդու մասին: Գորգինը պատասխանում է, թե իբր Բիժանը մի ցիռի ետևից ընկնելով հեռանում է ու այլևս չի վերադառնում: Գիվը կռահում է իրողությունը, բողբոջում է Քեյ-Խոսրովին, որը բանտարկում է Գորգինին և խոստանում գտնել Բիժանին:

Կախարդական բաժակի միջոցով Քեյ-Խոսրովն իմանում է Բիժանի տեղը, կանչում է Ռոստամին և հանձնարարում ազատել նրան: Ռոստամը վաճառականի կերպարանքով, մեծ ջարավանով և մի խումբ քաջերով մտնում է Թուրան: Մանիժան նրանց հայտնում է Բիժանի տեղը: Ռոստամը փոսի բարը դեն նետելով՝ ազատում է Բիժանին և Մանիժայի ու մի խումբ քաջերի հետ ուղարկում Թուրանի սահմանը, իսկ ինքը հարձակվում է Աֆրասիաբի պալատի վրա, ավերում ու փախուստի մատնում Աֆրասիաբին: Ռոստամը վերադառնում է Իրան, բայց Աֆրասիաբը հետապնդում է նրան: Ռոստամը սահմանազխի հասնում է իր քաջերին: Լուր ստանալով Աֆրասիաբի դաւստյան մասին, հարձակվում է նրա վրա, ջախջախում ու մեկնում Իրան: Բիժանը ամուսնանում է Մանիժայի հետ: Ռոստամի միջնորդությամբ Խոսրովը, Բիժանն ու ավագները ներում են Գորգինին:

2. Տ ա ս է ե ռ կ ու ը մ ր ի շ ն ե ռ ի մ ե ն ա մ ա ռ ա ր.— Իր պարտությունից զզվազած Աֆրասիաբը կրկին զորք է ժողովում,

բաժանում երկու մասի, մեկը՝ հանձնելով իր որդի Շիրվին՝ ուղարկում Խորեզմ, մյուսը՝ հանձնելով Փիրանին՝ ուղարկում Իրան:

Խոսրովն իմանալով այդ, իր հերթին զորք է ժողովում և բաժանելով երեք մասի, մեկը՝ հանձնում է Ռոստամին և ուղարկում Շիրվինի դեմ, երկրորդը հանձնում է Լոհրասպին և ուղարկում աշենների դեմ, երրորդը հանձնում է Գուգարգին և ուղարկում Փիրանի դեմ: Գուգարգը Թուրանի սահմանին հասնելով, բանակցում է Փիրանի հետ հաշտության համար, բայց մերժում ստանալով դատավորում է զորքերը: Ամենից առաջ մենամարտում են Բիժանն ու Փիրանի եղբայր Լուսմանը: Երիտասարդ Բիժանը հաղթում է թշնամուն ու զուխը տանում իր պապ Գուգարգի մոտ: Լուսմանի վրեժը լուծելու համար նասթիհանը գլխերով հարձակվում է իրանցիների վրա, բայց պարտվում է ու սպանվում նույն Բիժանի ձեռքով: Գուգարգը ենթադրելով, որ անհաջողությունից հուսահատված Փիրանն օգնության կկանչի Աֆրասիաբին, նամակով հայտնում է Խոսրովին զնայելի ընթացքը և պահանջում, որ նա ինքն անձամբ նոր զորքի ղուխ անցած գա և վարի պատերազմը: Խոսրովը հայտնում է Գուգարգին Ռոստամի և Լոհրասպի հաղթանակները, վստահեցնում, որ Աֆրասիաբը չի գա օգնության և խոստանում, որ ամենակարճ ժամանակում ինքը կհասնի օգնության: Մինչ այդ, Փիրանը հաշտություն է լսնդրում Գուգարգից: Վերջինս մերժում է: Փիրանն ստիպված է լինում օգնություն խնդրել Աֆրասիաբից, որը հայտնում է, որ շուտով մի մեծ բանակ կուղարկի նրան: Մինչև նոր սեժերի հասնելը երկու բանակների միջև սկսվում է ահեղ մարտ և թուրանցիները մեծ պարտություն են կրում: Տեսնելով այդ, Փիրանն առաջարկում է Գուգարգին, որ երկու կողմերից որոշ թվով ըմբիշներ ընտրեն, մենամարտի հանեն նրանց և այդպիսով վճեն կովի ելքը, որպեսզի հաղարավոր անմեղ գինվորներ չզոհվեն: Գուգարգը համաձայնում է և երկու կողմից ընտրվում են տասնմեկ գույզ ըմբիշներ: Մենամարտում Զարիրուրդը սպանում է Քալբագին, Գիվը գերում է Գորդին, Գորաղեն սպանում է Սիամաբին, Զարուհիլը՝ Զանգալին, Ռոհհամը՝ Բարմանին, Բիժանը՝ Փիրամի որդի Ռոյին, Հաշիրը՝ Սեփահրոմին, Զանգեն՝ Ավխասթին, Գորգինը՝ Անդերիմանին, Բարթեհը՝ Քահրոմին և Գուգարգը՝ Փիրանին:

Թուրանցիների զորքը մեծ սուգի մեջ է մտնում: Փիրանի երկու կենդանի եղբայրները՝ Լահհահն ու Ֆերիդվարդը, Փիրանի հրամանի համաձայն, զորքին հայտնում են, որ ով ուզում է վերադառնալ տուն, կարող է վերադառնալ, ով ուզում է հանձնվել թշնամուն, կարող է հանձնվել, իսկ իրենք փախչում են: Իրանցի-



ներն իմանում են այդ Գոսթիհնը, որ անմասն էր մնացել մենա-  
մարտից, թուլյալություն է խնդրում Գուգարգից և հետապնդում է  
նրանց։ Այդ իմանալով, Քիծանը հանդիմանում է իր պապին, որ  
մի մարզու ուղարկել է երկուսի դեմ և ինքն էլ հետևում է Գոսթիհ-  
նին։ Գոսթիհնը հասնում է փախստականներին, կոխում երկուսի  
դեմ, սպանում երկուսին էլ, բայց ինքն էլ ծանր վիրավորվում է և  
մի աղբյուրի մոտ ընկնում։ Գալիս է Քիծանը, գտնում նրան, գերի  
վերցված մի թուրքի օգնությամբ կապում ձիու վրա, երկու սպան-  
վածներին նույնպես դնում ձիերի վրա ու վերադառնում իրանցի-  
ների ճամբարը։ Մինչ այդ գալիս է Խոսրովը, իր ունեցած կախար-  
դական քարերով ու բժիշկների օգնությամբ առողջացնում է Գոս-  
թիհնին, պիտատել տալիս Գորոշին, որն անողորմաբար տանջել էր  
Սիավուշին, իսկ Փիրանին իր կատարած բարությունների համար  
պատվով թաղում և հուշարձան է կանգնեցնում գերեզմանի վրա։  
Թուրանի զորքն առաջնորդներից զրկված լինելով, Խոսրովի հովա-  
նավորությանն է դիմում և նրա հպատակությունն է ընդունում։

է. Ք ե յ- Խ ո ս ռ Վ ի մ ե ծ պ ա ա ե ռ ա զ մ ք Ա ֆ Ր ա-  
ս ի ա ր ի դ ե մ.—Այդ պատերազմից վերադառնալով, Խոսրովը  
պատրաստվում է նոր պատերազմի. վերախմբավորում է իր զոր-  
քերը և շարժվում Աֆրասիաբի դեմ։ Վերջինս լսելով այդ, անհա-  
մար զորք է հավաքում և իր չորս աղաների հետ զորքի զլուխն ան-  
ցած դիմում դեպի ուղամահակատ։ Մի քանի օր երկու բանակները  
կանգնում են դեմ առ դեմ և անզույ կերպով պատրաստվում հար-  
ձակման։

Աֆրասիաբի որդի Փաշանզը (Շիդե) ձանձրանալով հանգըս-  
տից, հոր համաձայնությամբ մենամարտի է ուղարկվում Քեյ-Խոս-  
րովի դեմ և մենամարտում էլ սպանվում է։ Զորքերն անցնում են  
հարձակման։ Աֆրասիաբի բանակը ջախջախվում է, իսկ ինքը՝  
փախչում։ Խոսրովը հետապնդում է նրան։ Աֆրասիաբն անցնում է  
Զարե լիճը և ապաստանում մի ամրոցում։ Խոսրովը գալիս է այդ-  
տեղ, բայց չի կարողանում գտնել նրան։ Տեղեկանալով Խոսրովի  
զալստյան մասին, Աֆրասիաբը դուրս է գալիս ամրոցից և անտա-  
ռում մի քարայրի մեջ թաքնվում։ Մի օր ճղնավոր ձուռը գտնում է  
նրան, կապկպում և բերում Խոսրովին հանձնելու։ Աֆրասիաբն ա-  
ղաչում է նրան արձակել իր կապանքը՝ խոստանալով չփախել։ Ըու-  
մը արձակում է, Աֆրասիաբն անմիջապես նետում է իրեն Զարե  
լիճը։ Խոսրովն իր ավագներով գալիս, շքապատում է լիճը, բայց  
Աֆրասիաբը դուրս չի գալիս։ Բերում են գերի ընկած Գարսիվագին,  
սկսում են շարշարել. նրա ողբագին հառաչանքներից աղղված Աֆ-

րասիաբը դուրս է գալիս շրից, անմիջապես բռնում են և Խոսրովը  
նրան զլխատում է։ Այնուհետև Քեյ-Խոսրովը վերադառնում է Ի-  
րան, կարգի գցում երկիրը, բուժում յուր իշխաններին և թագավո-  
րությունը հանձնում Լուհրասպին, որ սերում էր Լուշանգի թագավո-  
րական տոհմից։

Քեյ-Քաուսը մեռնում է, Քեյ-Խոսրովը ավարտված է համարում  
իր զերը. նա մտառանջության մեջ է. իր երակներով հոսում է և՛  
իրանական, և՛ թուրանական արքայական տոհմերի արյունը, և նա  
վախեննալով, որ հանկարծ թուրանական շարության ոգին իրեն հաղ-  
թահարի, խնդրում է ասածուն՝ իրեն հետացնել աշխարհից։ Մի օր,  
ավագների հետ լիռը բարձրանալիս, նա անհետանում է։ Նրան որո-  
նելու ժամանակ ձյան տակ թաղվում ու անհետանում են նաև Թու-  
սը, Քիծանը, Ծարհրուրը և Գիվը։

14. Լ ո հ Ր ա ս ալ.—Թագավորում է 120 տարի։ Թալխում կա-  
սուցում է կրակի տաճարը։ Ունեք երկու որդի՝ Գոշտասպ (Վրշ-  
տասպ) և Զարիբ։ Գոշտասպն առաջարկում է հորը զահե հանձնել  
իրեն. հայրը մերժում է. Գոշտասպը փախչում է Ռում (Քյուլան-  
դիա)։ Շրջում է անտերունչ ու թշվառ։ Մի դեհկան, ծագումով պար-  
սիկ, տեսնում է նրան ու վերցնում իր մոտ։ Կայսեր աղջիկը՝ Քե-  
թայունը, երազում տեսնելով նրան՝ սիրահարվում է և, իր հոր կամ-  
քին հակառակ, ամուսնանում է նրա հետ։

Հետագայում Գոշտասպն իր սխրագործություններով հռչակ-  
վում է ամբողջ Ռումում և կայսրը նրան դարձնում է իր օգնակա-  
նը։ Լուհրասպն իմանում է այդ և որդուն իր մոտ է կանչում։ Գոշ-  
տասպը գալիս ու տիրանում է հոր զահին, իսկ հայրը քաշվում է  
Թալի ու անձնատուր լինում կրոնին։

15. Գ ո շ տ ա ս ալ.—Նույնպես թագավորում է 120 տարի։ Այս  
պիսի հազար տողը պատկանում է Գաղիդիին, որ նկարագրում է  
զրադաշտական կրոնի ընդունումը։ Գոշտասպի մոտ է գալիս մար-  
գարե Զարդշտը (Զրադաշտ), նրան հանձնում Ավեստան և բացա-  
տում իր կրոնը։ Գոշտասպն ընդունում է այդ կրոնը և աշխատում  
է տարածել այն։ Մինչ այդ, Սիավուշի վրեժը լուծելու առիթով մղդ-  
ված պատերազմները վերջանում են և սկսվում է Իրանի պատե-  
րազմը Թուրանի դեմ զրադաշտական կրոնը տարածելու համար։  
Այս պատերազմների ժամանակ Ռոստամը ոչ մի դեր չի խաղում.  
նրա փոխարեն բոլոր կռիվների հերոսն է գտնում Գոշտասպի որ-  
դի Իսֆանդիարը, որ իր գերմարդկային ուժով հաղթում է բոլորին,  
անցնում է արկածներով լի յոթ հանդրվանները՝ պղնձե ամրոցը  
գնալու համար, ուր ապաստանել էր Թուրանի արքա Արշասպը։



Յուրաքանչյուր հանգրվանում Իսֆանդիարը մի սխրագործություն է կատարում՝ 1. սպանում է երկու եղջերավոր փղամարմին գալլերին, 2. սպանում է առյուծներին, 3. սպանում է վիշապին, 4. սպանում է կախարհուն, 5. սպանում է Սիմուրղ թռչունին, 6. անցնում է ձյունի և բուքի միջով, 7. անցնում է լճով:

Հասնելով պղնձյա ամրոցին, գրավում է այն և սպանում Արջասպին ու նրա զորավարներին: Այնուհետև Գոշտասպն Իսֆանդիարին ուղարկում է Ռոստամի դեմ կռվելու, որովհետև Ռոստամը Գոշտասպի գահ բարձրանալու օրից չի եկել իր արքունիք և չի ձանաչել նրա զերիշխանությունը: Գոշտասպը հրամայում է որդուն Ռոստամին շղթայակապ բերել իր մոտ: Բանակցությունների ժամանակ Ռոստամը համաձայնում է ներկայանալ Գոշտասպին իբրև նրա հպատակը, բայց առանց շղթաների: Իսֆանդիարը պնդում է, որ պետք է շղթայի նրան: Ռոստամը պատասխանում է. «չե՞ս չի եղել մի մարդ, որ ինձ կապել կարողանա, և չկան էլ այնպիսի կապանքներ, որոնք դիմանան իմ ուժին»:

Մեկամարտում են. Ռոստամը պարտվում և ծանր վիրավորված փախուստի է դիմում: Զալն օգնության է կանչում Սիմուրղին, որ բուժում է Ռոստամի վերքերը, ապա ցույց տալիս նրան մի մոշի թուփ, ասելով. «Կարի՛ր երկու ուլիղ ոստ և նետ սարքիր. Իսֆանդիարի կյանքը դրա մեջ է: Նետդ ուղղիր նրա աչքին, որովհետև նրա խոցելի տեղը միայն այդ է: Ռոստամն այդպես էլ անում է և Իսֆանդիարը սպանվում է, բայց ինքը՝ Ռոստամն էլ երկար չի ապրում: Զալը խորին ծերության մեջ մի ստրկուհուց ունենում է որդի, որին անվանում է Շաղաղ: Զալն ուղարկում է նրան Քարուլի թագավորի մոտ: Շաղաղը թագավորի հետ խորհրդակցելով՝ դաժ է լարում Ռոստամի դեմ: Համոզված լինելով, որ կռվում չեն կարող հաղթել, նրանք փոսեր են փորում և հատակին ամրացնում սրեր ու նիզակներ և փոսերը վարպետորեն ծածկում: Շաղաղը գնում է Ռոստամի մոտ, պատմում, որ իբր թե Քարուլի թագավորը կռվել է իր հետ և դուրս վոնդել Քարուլիստանից և խնդրում է Ռոստամի օգնությունը: Ռոստամն ու իր նորայր Զավարենը Շաղաղի հետ գնում են: Քարուլի թագավորը գալիս է նրանց մոտ, ներողություն խնդրում և հաշտվելով որպես թե խոռված Շաղաղի հետ, հրավիրում նրանց որսի Որսատեղումն էլ Ռոստամն ու Զավարեն ընկնում են փոսի մեջ: Ռոստամը մահացու վերքեր է ստանում, բայց և այնպես դուրս է գալիս փոսից, նետով խփում ծառերի հոտեում թաքնված Շաղաղին, նետը թափանցում է ծառի միջից և սպանում նրան: Ռոստամը, գոհ իր վերջը լուծած լինելու մտքից, մեռնում է:

16. Բ ա հ մ ա ն. — Թագավորում է 99 տարի: Իսֆանդիարի որդին էր. Գոշտասպը նրան է հանձնում գահը և մեռնում: Հոր վերջը լուծելու համար սպանում է Ռոստամի որդի Չարամուրդին ու բանտարկում է Զալին: Հետագայում բանտից արձակում է նրան, և նա մեռնում է մոտ 650 տարեկան հասակում:

Այսպես մեկը մյուսի հետեից ասպարեզից դուրս են գալիս դյուցազնական մասի անվանի հերոսները, որով և, ըստ էության, վերջանում է «Շահ-նամե»-ի դյուցազնական մասը: Այնուհետև սկսվում է դյուցազնական ու բուն պատմական մասերն իրար կապող պատմությունների շարանը, այն է Բահրամի աղջիկ՝ Թագունի լուծումի տիրապետության շրջանը, Գարաբի, Գարայի (Դարեհի), Իսբանդարի (Ալեքսանդր Մակեդոնացու), որ Ֆիրդուսու կողմից համարվում է վերջին «բեյանիզը», և վերջապես Աշքանիդների երկուհարյուրամյա տիրապետության պատմությունը: Այս սկսվում է Սասանյանների դարաշրջանի թագավորների պատմությունը, որոնց հաջորդականությունը ամենայն ճշտությամբ ներկայացված է «Շահ-նամե»-ում:

#### 9. Պատմական մաս

Առավել հետաքրքիր հատվածներից է Սասանյան հարստության հիմնադիր Արտաշիր Պապականի պատմությունը, որի մեջ տեղ են գտել բազմաթիվ ժողովրդական ավանդություններ՝ Արտաշիրի կյանքի ու գործերի մասին: Այնուհետև, համառոտակի պատմելով Արտաշիրին հաջորդած տասներկու թագավորների մասին՝ Ֆիրդուսին անցնում է այս մասի ամենավաղ կերպարներից մեկի՝ Բահրամ Գուրի պատմությանը: Բահրամը ներկայացվում է իբրև մի հերոս, որ կրում է իր մեջ և՛ Քեյ-խոսրովի, և՛ Ռոստամի շատ հատկանիշները: Մեծ վարպետությամբ է երգել Ֆիրդուսին նրա պաշարը՝ գահին տիրանալու համար, նրա և սաղարած աղջիկ Աղտոգի, առյուծին թամբող երիտասարդ կոշիկարի և այլ բազմաթիվ պատմությունները: Գովաբանելով նրա քաջությունն ու իմաստությունը, Ֆիրդուսին ներկայացնում է Բահրամին որպես արդար թագավոր, օժտելով առասպելական գծերով, առասպելական է նաև նրա մահը. պատվում է երկիրը և կլանում նրան: Ապա հաջորդում են դարձյալ թագավորները միմյանց: Ուշադրով է հատկապես, Մազգաբի ապստամբության պատմությունը՝ Պերդզի որդի Կորադի թագավորության շրջանում: Դրան հաջորդում է Անուշիրվան թագա-



վորի ու նրա վեզիրի՝ Բոզորդ-մեհերի պատմությունը, որի հետ ներհնուսոված են բազմաթիվ ուրիշ էպիզոդներ, որոնցից առավել հետաքրքիր են Քալիլայի ու Գեմնայի պատմությունը, շախմատի գյուտի պատմությունը և այլն: Որմիզդ թագավորին, Անուշիրվանի հաջորդին, նվիրված հատվածում ուշագրավ է Բահրամ Չուբինի ապստամբության պատմությունը, իսկ Խոսրով Փարվիզի հատվածում՝ Խոսրովի ու Շիրինի պատմությունը: Խոսրովին հաջորդող վեց թագավորների պատմությանը հաջորդում է Սասանյան հարստության վերջին թագավորի՝ Հազկերտի պատմությունը: Մեծ վարպետության մեջ է նկարագրում Ֆիրդուսին արաբական արշավանքը, պարսից դիմադրությունն ու պարտությունը, ըստ որում, անսրող կերպով նա ողբում է իրանական թագավորության անկումը և արաբների, շար ուժերի, հաղթանակը: Բացառիկ համակրանքով, սիրով ու խոր հուզականությամբ պատմում է նա Որմիզդի որդի, հզոր ու իմաստուն Ռոստամի պատերազմը արաբների դեմ, նրա պարտությունն ու սպանությունը: Նրա սպանությունից հետո Հազկերտը ապաստան է որոնում Խորասանում, բայց այստեղ էլ տեղական իշխանները չեն օգնում նրան, և նա սպանվում է այդ իշխաններից մեկի գործակալի ձեռքով: Սկսվում են ներքին խռովությունները, արաբական զորքերը հաղթական արշավով ձնշում են առանձին դիմադրություններն ու իրանը նվաճվում է, հպատակվում արաբական խալիֆային:

### 3. ԻՐԱՆԱԿԱՆ ԷՊՈՍԻ ՄԵՍԿՈՒՄԸ ՄԵՆՁԵՎ ՁԻՐԿՈՒՄԸ

Ֆիրդուսու «Շահ-նամեի» հիմքում ընկած են իրանական ժողովրդական ավանդություններն ու Սասանյան դարաշրջանում օրինականացված ժամանակագրությունը, որ ընդգրկում էր իրանական թագավորության պաշտոնական պատմությունը: Իրանական ժողովրդական ավանդությունները որոշ հատվածներ իրենց հնությամբ հասնում են մինչև ամենահնագույն ժամանակները, մինչև, այսպես կոչված, հնդ-իրանական միասնության դարաշրջանը: Ինչպես բնորոշում են արևելագետները, դրանով են բացատրվում այն դիցաբանական ընդհանրությունները, որոնք առկա են Ավեստայի և վեդաների մեջ, Այդ նախնական դիցաբանական ավանդությունները հետագայում, արդեն իրանական հողի վրա, ժամանակի ընթացքում մշակվել, հարստացել են նորանոր պատմություններով: Այդ պատմություններից մի քանիսը միջին պարսկական կամ պահլավ-

վական շրջանում, այսինքն՝ Սասանյանների դարաշրջանում արդեն գրական մշակման նյութ են դառնում. դրանցից հայտնի են, օրինակ, «Զարիրի հիշատակը» (Յադրարի Զարիրան), «Արտաշիր Պապականի գործերի գիրքը» («Քարնամակի Արտաշիրի Պապական») և այլն, որոնք պահլավական գրականության լավագույն նմուշներ են հանդիսանում:

Ժողովրդական ավանդությունների հիմքի վրա էլ նույն Սասանյանների շրջանում կազմվում է իրանական էպոսի առաջին օրինականացված ժողովածուն՝ Խոսրով Անուշիրվան թագավորի օրոք: Ժողովածուն կրում էր «եվաթայ նամակ» (նոր պարսկերեն՝ «եուդայ նամե») «թագավորների գիրք» վերնագիրը: Նույն գիրքը Սասանյան հարստության վերջին թագավոր Հազկերտ երրորդի հանձնարարությամբ լրացվել ու մշակվել է ոմն Գեհկան Գանիշվարի կողմից: Այսպիսով ստացվել է իրանական էպոսի պաշտոնական ժողովածուն, որ, իհարկե, ավելի պատմական-ժամանակագրական բնույթ է ունեցել, քան գեղարվեստական երկի:

Երբ արաբական արշավանքների հետևանքով պարսիկները կորցրին իրենց անկախությունը, դրա հետ նաև հրաժարվեցին իրենց հին գրադաշտական կրոնից, իսկ պահլավերենն էլ ժամանակի ընթացքում մահացավ, իր տեղը զիջելով գրականության մեջ արաբերենին, իսկ բանավոր հաղորդակցման մեջ՝ նոր պարսկերենին: Նոր իրադրությունների մեջ ու պատմական նոր հանդարմանքներում անխուսափելիորեն առաջացավ իրանական թագավորների պատմության «վերակենդանացման» անհրաժեշտությունը: Հատկապես Քահիրյանների ու Մաֆարյանների թագավորությունների դարաշրջանում, երբ այդ թագավորությունները ձգտում էին անկախություն ձեռք բերել և ազատվել արդեն թուլացած խալիֆայի լծից, հին իրանական թագավորների գիրքը, որի մեջ պատմվում էին իրանական տիրակալների փառապանծ հերոսությունները, բնականաբար մեծ դեր կարող էր խաղալ ազատասիրական ձգտումների բորբոքման ու հայրենասիրական ոգու արժարժման գործում: Այս տեսակետից էլ, ահա, պատահական չէ, որ իրանական էպոսի նկատմամբ խիստ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում թե՛ Քահիրյանները, թե՛ Մաֆարյանները և թե՛, մանավանդ, Սամանյանները: Որոշ տեսակետից իրանական այդ նոր տիրակալները և ֆեոդալական արիստոկրատիայի ձգտումները համընկնում էին ժողովրդական զանգվածների ձգտումների հետ, հատկապես VIII—X դարերում: Ժողովրդական լայն զանգվածները, արաբական խալիֆայի ծանր լծի տակ կքած ու տեղական իշխանները



րի կողմից կեղեքված, իրենց բողոքի ձայնն էին բարձրացնում. ծայր էին առնում խճորումները, ժողովրդական մասսաների ազատագրական շարժումներն ու ապստամբությունները: Ժողովրդական մասսաների այդ հայրենասիրական-ազատագրական ձգտումների վրա էր հենվում իրանական ֆեոդալական արիստոկրատիան: Այս պայմաններում էլ, բնականաբար, մեծանում է հետաքրքրությունը հին իրանական ավանդությունների նկատմամբ, ավանդությունների, որոց մեջ դրվերգվում էին Իրանի փառավոր անցյալը, նրա անկախությունը, նրա թագավորների ու զորավարների հերոսությունները: Այդ ավանդությունները զանազան էին գաղափարական մի հզոր զինք արաբական լծի դեմ մղվող պայքարում, և պատահական չէ, որ հենց այդ դարաշրջանում էլ իրանական էպոսի մշակումը մեծ թափ է ստանում: Պատմական աղբյուրներում հիշատակություններ կան այդ էպոսի զանազան մշակումների մասին: Այդ մշակումներից մի քանի աղբյուրներում հիշվում է ոմն Աբու-լ-Մուսայյադ Բալխիի արձակ ժողովածուն, որի մեջ ամփոփված էին իրանական թագավորների մասին եղած ավանդությունները: Այնուհետև հիշվում է ոմն Մասուդի Մարվազիի շափածո ստեղծագործության մասին, որից նույնիսկ առանձին երկտողեր պահպանված են պատմական աղբյուրներում: Վերջապես, սուսյզ աղբյուրներից հայտնի է, այսպես կոչված, Մանսուրյան «Նուրաջ-նամեի» կաղմելու և խմբագրելու պատմությունը: Աբու-Մանսուր իրն Աբդար-Բազաբը Թուսի և Նիշաբուրի, ապա և՛ ամբողջ Նորասանի տիրակալն էր, որ 962—963 թթ. սպանվեց, հավանաբար, Մամանյանների կողմից: Ֆիրդուսին իր «Շահ-նամե»-ում մի ընդարձակ հատվածում պատմում է, որ Աբու-Մանսուրը հանձնարարել է իր դասերին (վեղիբին) ի մի հավաքել քանավոր պատմություններ՝ պահպանական «նվաթաջ նամակի» պահպանված հատվածները և նոր պարսկերենով շարագրել պարսից թագավորների պատմության գիրքը: Դասերը՝ Աբու-Մանսուր Միմարին կազմում է մի հանձնաժողով, որի մեջ մտնում էին պահպաններն լավ իմացող ու ժողովրդական ավանդություններին քաջածանոթ չորս գիտուններ: Ֆիրդուսին հիշում է նաև դրանց անունները. Քաջ (Հերաթից), Եղզանդաս (Սիստանից), Մահուլի (Նիշաբուրից) և Շադան (Թուսից): Դրանց ո՛վ լինելը հայտնի չէ. բայց քանի որ ավանդությունը հաստատում է, թե պարսից արքաների պատմության հատվածները պահպանվում էին զեհկանների (մանր կալվածատերերի) մոտ, ուստի և կարելի է ենթադրել, թե դրանք զեհկաններ էին: Հանձնաժողովը ոչ միայն

նոր պարսկերենի էր թարգմանում պահպաններն հատվածները, այլև ավելացնում էր նորանոր նյութեր: Պատմվում է, որ հանձնաժողովի անդամները գանազան շրջաններից կանչում էին նշանավոր ծագում ունեցող մարդկանց և զրի առնում այն ամենը, ինչ որ նրանք պատմում էին Իրանի անցյալի մասին, առանձնապես՝ չորսաբանչլուրի տոհմի մասին պահպանված ավանդությունները: Այսպիսով, կազմվում է մի գիրք, որ ընդգրկում էր և՛ պարսից թագավորների տարեգրությունը, և՛ ժողովրդական վեպերը: Այդ գիրքը, որի խմբագրությունը ավարտվել է Հեջրի 347 թ. (959—960 թթ.), կոչել են «Նուրաջ-նամե», բառացիորեն թարգմանելով պահպանական «նվաթաջ նամակ» անվանումը:

Ի վերջո, ինչպես ասել ենք, Ֆիրդուսուց առաջ այդ գրքի բանաստեղծական մշակմանը ձեռնարկել էր Դադիդին, որ սակայն չկարողացավ ավարտել այն:

Այս բոլորից հետո էր, ահա, որ Ֆիրդուսին ձեռնարկեց իր «Շահ-նամե»-ի կերտմանը: Ինչպես հաստատվում է հենց իր իսկ հեղինակի վկայությամբ, նրա ուշագրության կենտրոնում են եղել «Նուրաջ նամե»-ն, ինչպես և պահպանական մի քանի գրքեր: Բայց դրանց հետ միասին նա մեծ շափերով օգտագործել է նաև բանավոր ավանդությունները, որոնք լսել է պանազան մարդկանցից: Այսպես, օրինակ, «Բիթան ու Մանիթի» վեպի նախերգանքում Ֆիրդուսին պատմում է, որ այդ գեղեցիկ ու հուղիչ պատմությունը լսել է իր մի ընկերոջից և ինքը վերապատմում է նույնությամբ՝ բանաստեղծական շափի վերածելով: Այսպիսի հատվածներ շատ կան «Շահ-նամեում», իսկ դա ցույց է տալիս, որ Ֆիրդուսին մեծ քաղցրեղևությամբ օգտագործել է թե՛ գրավոր և թե՛ բանավոր գրույցներն ու պատմությունները:

#### 4. «ՇԱՀ-ՆԱՄԵ» ԳԵՂԱԳԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ ՅԻՂՈՒՍՈՒՆ ԿՈՂՄԵՑ

«Շահ-նամե» բաղկացած է 60 000 բեյթից. մեզ հասած ձեռագրերը պարունակում են 40-ից մինչև 80 000 բեյթ. այդ տարբերությունը բացատրվում է նրանով, որ արտագրողները հաճախ դուրս են գցել այն հատվածները, որոնք իրենց դուր չեն եկել և կամ ավելացրել են ուրիշ բանաստեղծների կողմից հորինված հատվածներ: Ամբողջ «Շահ-նամե»-ն, ինչպես ասել ենք, բաժանվում է երեք մասի՝ 1. զիցաբանական, 2. դյուցազնական, 3. պատմական:

Իր բովանդակությամբ նա ընդգրկում է աշխարհի արարչություն-



նից մինչև արարական տիրապետության շրջանի պատմությունը Այսպիսի մի առասպելական պատմություն իրականի հետ գեղարվեստորեն հարակցելը ամենագովարին գործն էր Ֆիրզուսու համար։ Բայց հենց այս խնդիրը Ֆիրզուսին լուծում է կատարյալ հաջողությամբ։ Յուրաքանչյուր մասն իր կառուցվածքով դարձյալ երեք մասի է բաժանվում՝ հանգույց, զարգացման գագաթնակետ և լուծում։

Մի մասից մյուսին անցումը Ֆիրզուսու մոտ կատարվում է հմտորեն։ Նա կարողանում է առասպելականը—գիցարանականը ավարտելուց հետո էլ որոշ երևույթներ ներհյուսել հաջորդ՝ դյուցազնական մասի հետ, իսկ դյուցազնական մասն ավարտելով՝ նրա որոշ հատկանիշները շարունակել պատմական մասի մեջ։ Մի մասից մյուսին անցումը կատարվում է աննկատելի կերպով։

Այսպես, գիցարանական մասը վերջացնելուց հետո նա որոշ դեպքեր (օրինակ՝ Ահրիմանի ու նրա զործակալների արարքները) շարունակում և գործացնում է դյուցազնական մասում, կամ դյուցազնականից անցնում է պատմականին Գոշաասպի թագավորությանը, բայց զեռ նրա ժամանակ էլ շարունակվում են դյուցազնական դեպքերը։ Գրա շարունակությունն են կազմում Բոֆանդիարի երևան գալը, նրա սխրագործությունները, նրա և Ռոստամի մենամարտը։ Իզուր չէ, որ նա Ռոստամին չի մեղցնում Գիլի, Բիժանի, Խոսրովի և մյուս դյուցազունների հետ։

Ամբողջ «Շահ-նամեի» հիմքում Ֆիրզուսին դրել է շարի և բարու պայքարը, օգտագործելով գիցարանական մասը իրեն ներածություն և նախապատրաստություն՝ հետագա երկու մասերի համար։ Այդ առաջին մասն ընդհանուր գծերով հանգում է հետևյալին, բարի աստվածը՝ Որմիզը համոզված լինելով, որ ինքը միայնակ, առանց կողմնակի օգնության չի կարող հաղթել շարիքի աստծուն՝ Ահրիմանին, ստեղծում է մարդկանց, որոնք պետք է օժանդակեն նրան Ահրիմանի դեմ պայքարելու գործում։ Իր հերթին Ահրիմանն էլ, լավ հասկանալով մարդկանց զերը իր և Որմիզի պայքարի մեջ, ամեն կերպ աշխատում է ոչնչացնել մարդկային ցեղը։ Ֆիրզուսին՝ քաղելով իր դյուցազնավեպի նյութը տարբեր և հաճախ իրար հակառուկ աղբյուրներից, բոլորն ի մի է ձուլել, նրանց հիմքում դնելով ոչ թե մոսալմանական, այլ զրադաշտական դադափարարանությունը՝ շարի և բարու սկզբնավորության ու նրանց պայքարի մասին։ Այսպիսով էլ նրան հաջողվել է այդ ամբողջ մենժամավալ ու հակասական նյութը ամբողջացնել պարզ և բավականաչափ արամաբանական միասնության մեջ։

Հենց առաջին մասում, աշխարհի առաջին հերոսներից մեկը՝ Քալուսարս թագավորի օրդին՝ Սիամարը կոչի է ելնում սև դեի դեմ և զոհվում այդ կովում։

Այստեղից էլ արդեն սկսվում է երկու ուժերի անընդհատ բախումը։ Պետք է նկատել սակայն, որ եթե առաջին մասում շար ուժերը իրենք անձամբ դուրս են գալիս մարդկանց դեմ պայքարելու, ապա մյուս մասերում հետզհետե նրանք քողարկվում են, իրենց փոխարեն առաջ քաշելով թուրանցիներին։

Թուրանցիներն ամբողջ դյուցազնավեպում հանդես են գալիս իրեն շար աստվածության զորաբանակ, որ կոչված է աշխարհի երեսից ջնջելու մարդկությանը։ Հակառակ բանակում, բարի աստու կողմում, հանդես են գալիս իրանցիները, որոնց խնդիրն է օգնել Որմիզին, Ահրիմանի և նրա զործակալների դեմ կովելու գործում։ Այս պարզ կառուցվածքն է ահա, որ էլ ավելի ամրացնում է «Շահ-նամեի» իրեն մի ամբողջական դյուցազնավեպի կառուցվածքային միասնությունը։

«Շահ-նամեն» իրենից ներկայացնում է երեք մասերի մի հիանալի ներդաշնակություն, և չի կարելի նրանից հանել որևէ հատված, առանց վնասելու ամբողջությանը։

Երկրորդ մասում էլ սկզբնական շրջանի առաջին հերոսներն օժտված են դերմարդկային, նույնիսկ աստվածային հատկություններով։ Դրանք, սակայն, հետզհետե ավելի թուլանում են և վերջ ի վերջո լուծվում սովորական մարդկային հատկությունների մեջ։

Նույնպես և երրորդ մասում, Սասանյան հարստության առաջին իշխողներն օժտված են դյուցազնական շրջանի հերոսների հատկություններով, որոնք, սակայն, վերջ ի վերջո նվաղելով՝ հանգում են ոչնչի։

Ամբողջ դյուցազնավեպի կենտրոնական, հիմնական բաժինը երկրորդ մասն է։ Այդ մասն է ևղել Ֆիրզուսու ուշադրության կենտրոնում, ընտրելով իր զաղափարաբանության համար Իրանի պատմության դյուցազնական շրջանը, Ֆիրզուսին ոչ մի ջանք չի խնայել այդ շրջանի բոլոր առավելությունները վեր հանելու և իդեալականացնելու համար։ Այստեղ հեղինակը զրվատում է հատկապես իշխանների համախմբվածությունն իրենց թագավորի շուրջը, նրանց հնազանդությունը, գովերգում է նրանց անձնագոհությունը՝ հայրենիքի պաշտպանության համար, օգտագործելով այդ իրեն հանդիմանություն իր ժամանակի արաբական լծի տակ ընկած և իրար հետ անհաշտ պարսիկ ֆեոդալների դեմ։ Ֆիրզուսին հենց այդ մասում էլ պատկերում է մի շարք թագավորների կերպարներ, 59



որոնք կարող էին օրինակ ծառայել և, ըստ Ֆիրզուսու, պետք է ծառայելին Իրանի անկախութեան համար պայքարող և այդ անկախութունը պահպանող նոր թագավորների համար: Իբրև այդպիսի դրական, իդեալականացված կերպար, կարելի է հիշել Քեյ-Խոսրովին, որը դուրսագնական շրջանի թագավորների մեջ ամենապայծառ դեմքերից մեկն է: Նա Ֆիրզուսու համար օրինակելի թագավոր է ոչ միայն այն պատճառով, որ ապահովում է Իրանի անկախութունը, հալթում է թուրանցիներին և նրանց թագավոր Աֆրասիաբին ու բնդարձակում է իր տիրապետության սահմանները, այլև այն պատճառով, որ նա իր փառքի գազաթնակետին հասած պահին անգամ չի գոռոզանում, մնում է նախկին համեստ, արդարադատ, ուղորմած ու բարի թագավորը: Նրա բերանով Ֆիրզուսին պարզորոշ կերպով արտահայտել է իր ցանկությունները: Հրաժարվելով գահից՝ նա իր խորհուրդներն է տալիս Լեհրասպին՝ սասելով.

«Նայի՛ր, թե ի՞նչ է կատարվում աշխարհում, ոչ միայն բացարձակ, այլև զաղտնաբար. կա ժամանակ, երբ հարկավոր է դժվարությունը հավաքել գանձը և կա ժամանակ, երբ պետք է բաշխել: Հոգ տա՛ր,—ասում է Գուդարգին,—Իրանի սահմաններում եղած ամուր դիրքերի և կամուրջների մասին, որոնք քարուքանդ են եղել, և Իրանի ջրամբարների մասին, որոնք ավերվել են Աֆրասիաբի պատերազմների ժամանակ: Որոնի՛ր անմայր երեխաներին, անպատասան այրիներին ու ծերերին, որոնք կարիքի մեջ են, բայց թաքցնում են իրենց թշվառությունը: Բացի՛ր գանձերիդ դուրը նրանց համար, առատաձեռն եղի՛ր նրանց նկատմամբ և վախեցի՛ր շարբախտից: Ի վերջո, վերցրո՛ւ իմ գանձերի այն մասը, որ կոչվում է բեղավեք և ծախսի՛ր այն՝ ավերված քաղաքների վերաշինմանը... վերջապես, վերականուցի՛ր ջրհորները, որոնք երկար տարիներից ի վեր առանց ջրի են մնացել»:

Այսպիսով, դուրսագնավեպի այդ կենտրոնական մասում Ֆիրզուսին շարագրում է այն կանոնները, որոնք հատուկ պետք է լինեն ֆեոդալներին: Նրա խոսքերը իբրև պատվերներ պետք է ծառայեն իրանական ասպետների համար, նրանց վաքը ու բարքի, հնազանդութեան ու համախմբվածութեան համար:

Դուրսագնավեպի երրորդ՝ պատմական մասում, աստիճանաբար մտայնվում են պատկերները: Ֆիրզուսին խոր տառապանքով նկատում է ու նկարագրում ֆեոդալական կարգերի ներսում գոյացած ճեղքվածքները, երկպառակությունը, իշխանների ապստամբություններն ու անհնազանդությունը, մի բան, որ Իրանի թագավոր-

ությունն այնքան է թուլացնում, որ արաբների առաջին իսկ ճնշումից տապալվում է:

Պատմական մասը պարունակում է արդեն կանոնավոր ժամանակագրություն, և հենց այս էլ որոշ չափով դժվարացնում է հիշյալ մասի վիպական-գեղարվեստական մշակումը: Այստեղ Ֆիրզուսին հնարավորություն չունի նկարագրել այնպիսի հերոսներ, ինչպես դուրսագնական մասում, բայց չնայած դրան, այդ ժամանակագրական համեմատքար չոր նյութի մշակումը նա զուգակցել է ալլեալ վիպական հատվածներով, որոնք բարձրացնում են այդ մասի գեղարվեստական արժեքը: Այս մասի համար իբրև ամենահատկանշական կողմ մնում է պատկերների մուսլուկությունը և ընդհանուր ողբերգական ոգին: Ֆիրզուսին խոր վշտով է նկարագրում Սասանյան պետության թուլացումը, իշխանների անհնազանդությունը, ինչպես և երկպառակությունը: Հատկանշական է նաև այն, որ հենց այստեղ էլ աստիճանաբար ավելի շատ ենք հանդիպում լիրիկական շեղումների: Դրանք այն հատվածներն են, որոնց մեջ Ֆիրզուսին արտահայտում է իր զգացումները, իր ապրումները, իսկ երբեմն էլ՝ նկարագրում իր վիճակը: Անշուշտ այս հատվածները դուրսագնավեպի նյութի հետ շեն կապվում: Բերենք մի օրինակ, որ Ֆիրզուսին իր մասին ասում է հետևյալը.

Ամպը եկավ և լուսինը բալվեց խավարի մեջ,  
Ան ամպերից կարճ է քսվել (ձյուն), չեն եկում  
Դեռ. հովիտ ու դաշտ և ոչ էլ ագապի թև:  
Ինձ չի մնացել ո՛չ աղ, ոչ զարի, ոչ էլ փայտ:  
Չկա ոչինչ և չի լինի մինչև հաշտոդ հունձը:

Այսպիսի հատվածներ շատ կան հատկապես երրորդ մասում: Եթե նախորդ երկու մասերի այդ լիրիկական շեղումները պարունակում են ավելի շատ խորհուրդներ կամ հեղինակի կարծիքը այս կամ այն դեպքի կամ հերոսի մասին, ապա երրորդ մասում այդպիսի հատվածները մեծ մասամբ պարունակում են հեղինակի կյանքին, հոգեկան ապրումներին վերաբերող տողեր: Այս մասից հետաքրքիր է հիշել Խոսրով Փարվիզի գուսանի նկարագիրը: Երբ Խոսրով Փարվիզը մեռնում է, գուսանը կտրում է իր տավիղի բուրբ լաբերը, ապա և՛ իր սեփական մատները, ասելով, թե չի գտնվի այլևս մի մարդ, որ իր երգերն այնպես հաճույքով լսի և այնպես արժեքավորի, ինչպես Խոսրովը: Այս տողերը զրված են մեծ հուզականությամբ և ակամայից հիշեցնում են Ֆիրզուսուն: Ֆիրզուսին ինքն էլ



ակնարկում է, որ իր ստեղծագործությունը ըստ արժանվույն գնահատող մարդ գծվար թե լինի և իրեն մշտապես տանջող այս միտքը լիովին արտահայտել է այդ գուսանի պատկերը կերտելու ժամանակ:

Նվթագական իրանագետներից շատերը Ֆիրդուսուն համարում են պարսկական Հոմերոս, բայց նույն այդ իրանագետները միաժամանակ գանում են, որ Ֆիրդուսու ստեղծագործության մեթոդը և ամբողջ ստեղծագործությունը շատ գծերով տարբերվում են Հոմերոսի ստեղծագործական մեթոդից: Այդ տարբերությունն անշուշտ կա և դա միանգամայն հասկանալի և արդարացիորեն հանգամանք կդառնա, եթե հաշվի առնենք երկու հանճարների ժամանակաշրջանը և սոցիալական միջավայրը:

Ֆիրդուսին ապրում էր այն ժամանակ, երբ իրանական անկախ ու միասնական պետություն չկար: Պարսից ֆեոդալները Ֆիրդուսու ժամանակ Ղազնավյան թագավորության վասալներն էին: Ահա այս շրջանում է, որ Ֆիրդուսին հին ֆեոդալական կարգերի իղեալականացման միջոցով քարոզում էր պարսիկ ֆեոդալներին՝ համախմբվելու ու միացյալ ուժերով վերստին ձեռք բերել իրենց կործանված թագավորությունը: Այս բոլորի պատճառով էլ Ֆիրդուսու մոտ հիմնականը հին ֆեոդալական կարգերի իղեալականացումն է, այդ կարգերի գովերգումը: Սրանից էլ հետևում է այն, որ հաճախ այդ խնդրի կատարման համար հեղինակն ստիպված է լինում կերտել նույնիսկ առասպելական հերոսներ: Իրոք, Ֆիրդուսին ոչինչ չի խնայել իր սիրած հերոսներին նկարագրելու և գովերգելու համար: Նրա ամենասիրելի հերոսներից մեկն է Ռոստամը: Նա առասպելական ուժի տեր մի հսկա է, նրա ձին նույնպես արտակարգ մի նժույգ է: Անշուշտ, արդի մոտեցումով Ռոստամի կերպարը թերևս շատ կողմերով խոցելի է, բայց նրա բոլոր սխրագործությունները, նրա, որպես զեղարվեստական կերպարի բոլոր զծերը, նույնիսկ նրա շատակերությունը, արդարացիվում են, երբ հաշվի ենք առնում այն գործերի ղովարությունները, որոնք կատարում է նա: Ռոստամը կրավում է դեբրի, վիշապների դեմ, իսկ սովորական մարդը, բնականաբար, այդ բանն անել չէր կարող: Որպեսզի հնարավոր լիներ սպանել սպիտակ գեյն, հարկավոր էր Ռոստամի նման վիթխարի ուժի տեր լինել:

Պետք է շեշտել, որ ոչ միայն Ռոստամի, այլև մյուս բոլոր հերոսների կերտման մեջ Ֆիրդուսին լիովին հաշվի է առել այն խնդիրները, որ պետք է կատարեն նրանք, և յուրաքանչյուրին ստեղծել է իր կատարելիք գործերին համապատասխանող ուժով ու հատ-

կություններով: Այս գիծը Ֆիրդուսու «Շահ-նամեի» ամենաուժեղ կողմերից մեկն է: Նրա բոլոր հերոսներն էլ կուռ արամաբանությամբ ստեղծագործված կերպարներ են և իրենց բոլոր հատկություններով արդարացիվում են հոգեբանորեն: Այս է պատճառն ահա, որ ամենաառասպելական գործեր կատարող հերոսներն էլ ընթերցողին ներկայանում են իբրև լիարժեք մարդ: Որքան էլ առասպելական են Ռոստամի կատարած սխրագործությունները, այնուամենայնիվ ամեն գեղարվեստ մեջ զգում ենք առօրյա մարդուն: Կարելի է հիշել Ռոստամի ծայրահեղ զսպվածությունը, հնազանդությունը, բարությունը, անձնազոհությունը, խոհեմությունը և այլն: Այս բոլոր հատկություններն այնքան հոգեբանորեն են արտահայտված, որ ամեն պատեհ առիթին ընթերցողը արդեն նախապես դիտե, թե Ռոստամն այս դեպքի մասին ինչ կարծիք կարող է հայտնել:

Ֆիրդուսին, իբրև հոգեբան, իրեն էլ ավելի վարպետորեն է գրեստրել Քեյ-տոսրովի կերպարը կերտելիս: Քեյ-տոսրովը Ֆիրդուսու ամենասիրած հերոսներից մեկն է: Սրբ նա հաղթում է ամբողջ թուրանին, այն իրեն է հնազանդեցնում Չինաստանի հետ միասին և սպանում է Աֆրասիաբին, վերադառնում է իր ապարանքը և մի կարճ ժամանակ տանում այդ հաղթանակը, բայց հենց այդ խնջույքներով էլ վերջանում է նրա կյանքը: Նա հրաժարվում է գահից, մի քանի շաբաթ աղոթում է աստծուն, որպեսզի իրեն վերցնի աշխարհից և տանի իր մոտ: աստված լսում և կատարում է նրա խնդրերը: Խոսրովի հրաժարվելը կյանքից Ֆիրդուսին արդարացնում է հետևյալ պատճառով. բոլոր թագավորներն էլ, որոնք հաղթել են իրենց թշնամիներին, իրենց հզորությունից զոտոզացել են և վերջ ի վերջո դարձել բռնակալ ու հրաժարվել աստծուն ճանաչելուց, ինչպես Չամշիղը, որ աստծու փոխարեն իրեն երկրպագել հրամայեց, կամ Քեյ-Քաուսը, որ իր հզորությունից զոտոզացած, ուզեց երկինք բարձրանալ և իրեն ենթարկել նաև աստծու թագավորությունը:

Քեյ-տոսրովը, հետևաբար և Ֆիրդուսին արդեն այն համոզման են եկել, որ հզոր թագավորը վերջ ի վերջո պետք է գոռոզանա և հրաժարվի աստծու ճանաչումից: Խոսրովն այդպես էլ մտածում է և որպեսզի իր արդար գործերն ու արդար կյանքը շարատավորի անխուսափելի զոտոզությունամբ ու շարագործություններով, խնդրում է աստծուն, որ հեռացնի իրեն այս աշխարհից: Այս հատվածը Ֆիրդուսու «Շահ-նամեի» հոգեբանական վերլուծությունների մեջ լավագույններից մեկն է: Որքան էլ նա գովաբանում է Քեյ-տոսրովին, որքան էլ նրան պատկերում է իբրև արդար թագավորի, այնուամեն-



նայնիմ, պատմութիւնից գիտեմ, որ ի վերջո այդպէս մնալ չի կարող, և որպէսզի իր ամենասիրելի թագավորի պատկերի վրա որեւէ սովոր չընկնի, հետացնում է նրան աշխարհից:

Հոգեբանական այսպիսի հատվածներ «Շահ-նամեում» շատ կան և բոլորն էլ վկայում են, թե որքան տրամաբանորեն ու հոգեբանորեն արդարացված հերոսներ է կերտել Ֆիրդուսին: Նույնիսկ այն հանգամանքը, որ շատ հերոսներից մեկին նկարագրում է արտակարգ ուժով ու հատկութիւններով օժտված, զարծյալ իր գեղարվեստական արդարացումը գտնում է: Սա, ի դեպ, իր զուգահեռն է գտնում միջնադարյան Եվրոպայի նկարչութիւնի մեջ, որի բնորոշ գծերից մեկն էր սիրած հերոսին նկարել՝ օժտելով ամեն կարգի բարեմասնութիւններով և շքապատելով նրան մանրիկ կերպարներով: Այս կարգի նկարները թեև ռեալիզմի տեսակետից ըննադատութիւն շատ էլ չեն դիմանում, բայց նպատակադրման հաջող կատարումը հաշվի տոնելով, արդարացվում են: Բոլոր փոքրերի մեջ մեկը ավելի մեծ և օժտված արտաքին բարեմասնութիւններով, անշուշտ, շատ ավելի աչքի է ընկնում և արտահայտում է իր գերազանցութիւնը մյուսների նկատմամբ: Դրանով էլ հենց նկարիչը իրագործում էր իր նպատակադրումը:

Ֆիրդուսու մոտ էլ որոշ հերոսների շափազանցված, գերմարդկային կերպարանները նույնպիսի նպատակ են հետապնդում:

Եվրոպական գրականագետների կողմից բացասական դնահատականի է արժանացել «Շահ-նամեի» երրորդ մասը, որ գեղարվեստական տեսակետից թույլ են համարում: Դրա պատճառը նրանք համարում են այն, որ հեղինակն արգեն ծեր է եղել և չի կարողացել ստեղծագործել նախորդ մասերի հաջողութիւններ: Սրա հետ համաձայնելը զժվար թե հնարավոր լինի:

Դյուցազնական և պատմական մասերի նյութի մեջ այնպիսի մեծ տարբերություն կա, որ այսպէս թե այնպիս պատմական մասը պէտք է որոշ շափով նախորդից թույլ լիներ: Եթե դյուցազնական մասում Ֆիրդուսին ստեղծագործում էր ուղղակի կերպով սվանդական հերոսների պատմութիւնը, ապա պատմական մասում նա վիպական մշակման էր ենթարկում շոր և տաղտկալի ժամանակագրութիւնը: Ինքնին հասկանալի է, որ վերջին կարգի նյութը գեղարվեստորեն ավելի թույլ պետք է լինի, քան նախորդը: Բայց շնայած դրան, Ֆիրդուսին իրեն հատուկ վարպետութիւններ այդ տաղտկալի նյութն էլ այնպէս է ստեղծագործել ու հարստացրել վիպական հատվածներով, որ, այնուամենայնիմ, ամբողջութիւնով վերցրած այս

մասն էլ մնում է նույն բարձրութիւնի վրա, ինչ որ մյուս երկու մասերը: Այս մասից բավական է հիշել Բահրամ Գուրի կերպարը կամ Բահրամ Զուբինի պատմութիւնը: Իր տրագիկոմով վերջինիս վեպը հավասարվում է Շեքսպիրի «Մակբեթին»: Նյութը ինքն արգեն նույն կարգի է: Բահրամ Զուբինը անտառում հանդիպում է կախարգ կնոջ և նրանից իմանում է, որ պետք է դահին տիրանա ու ձգտում է դրան հասնել: Իմանալով հանդերձ, որ վերջ ի վերջո ինքը դատապարտված է հատուցման, նա ոչ մի միջոցի առջև կանգ չի առնում գահին հասնելու համար: Նա դիմում է և՛ խարդախութիւն, և՛ մատնութիւն, և՛ ամեն կարգի միջոցների, զուգարելով դրան իր քնական քաջութիւնն ու խիզախութիւնը, և վերջապէս հասնում է իր նպատակին, բայց ի վերջո գալիս է օրհասական ժամը, և նա ստանում է իր արժանի պատիժը:

Այս ամբողջ հատվածը գրված է խոր տրագիկոմով: Թե՛ այն տատանումները, որ Բահրամ Զուբինն ունենում է այս կամ այն արարքը կատարելուց առաջ և թե՛ այն բուռն ներքին մղումը, որ տանում է նրան դեպի ամեն կարգի շարագործութիւններ, ստեղծագործված են մեծ վարպետութիւնով: Այստեղ էլ Ֆիրդուսին մի ավելի անգամ ևս արտահայտել է իր աշխարհայացքը: Հեղինակի կարծիքով՝ թագավոր չի կարող լինել այն մարդը, որ թագավորական ժառանգում չունի, իսկ Բահրամ Զուբինը թագավորական տոհմից չէր և դատապարտված էր կարծանման:

Ինչպեքի և հերոսների նկարագրութիւնի ժամանակ Ֆիրդուսին ձեռնպահ է մնում իր անմիջական վերաբերմունքը ընթերցողին հաղորդելուց, և շնայած դրան, սկզբից մինչև վերջ ընթերցողը պարզորոշ կերպով պատկերացնում ու հասկանում է նրա աշխարհայացքը, որը խարսխվում է, մի կողմից, իր գարաշրջանի ֆեոդալական-արիստոկրատական սկզբունքի, իսկ մյուս կողմից՝ խորապէս ժողովրդական տենդենցների վրա:

Արիստոկրատական գաղափարախոսութիւնը կազմում է «Շահ-նամեի» հիմքը: Նույնիսկ բարու և շարի պայքարը, որ ամբողջ դյուցազնավեպի առանցքն է կազմում, վերջին հաշվով խարսխված է արիստոկրատական-լիդիտիմիստական սկզբունքների վրա: Ի՞նչպիսիք են թուրանցիները Ֆիրդուսու նկարագրութիւնով ու գնահատմամբ, շարի, Ահրիմանի գործակալները, որոնք ուղում են ոչնչացնել իրանցիներին, զրկել իրանական տիրակալներին նրանց օրինական, աստու կողմից շնորհված իրավունքներից: Իրանի տիրակալները, ընդհակառակն, գահի օրինական տիրակալներն են, նրանց է պատ-



կանում օրինական իշխանությունը, և դեմ դուրս գալ այդ իշխանություն, նշանակում է ասածու սահմանած կարգերի դեմ ելնել: Այս սկզբունքն է քարոզում Ֆիրդուսին ամբողջ ստեղծագործությունն մեջ սկզբից մինչև վերջ, այս սկզբունքն է արտահայտում նա նաև «Երգիծանքի» մեջ, որտեղ ամենատուր արտահայտություններով որակելով Մահմուդին, նրա վարմունքն, այնուամենայնիվ, պատճառաբանում է նրանով, որ նա թագավորական ծագում չունի, որ նա չի սերում իրանական թագավորական տոհմերից: Եվ դրան հակառակ, իր նկարագրած թագավորությունների պատմության մեջ, սկսած առաջին առասպելական թագավոր Քայումարսից մինչև Սասանյանների վերջին թագավոր Հազկերտ երրորդի մինչև ժառանգական կապ է ստեղծում:

Նա նույնիսկ Ալեքսանդր Մակեդոնացուն դարձնում է իրանական թագավորական տան օրինական ժառանգը, օգտագործելով այդ բանի համար Արևելքի ժողովուրդների վեպերը Ալեքսանդրի մասին: Ֆիրդուսին սրբություն սրբոց է համարում Ֆեռզալահան հիերարխիան և գովաբանում է այն: «Շահ-նամին» ոչ միայն առանձին պատմությունների, այլև խրատական-փիլիսոփայական հատվածների մեջ նա քարոզում է իր աստիճանին, ծաղմանն ու կոչմանը հարազատ մնալու և նրա սահմաններից շանցնելու սկզբունքը: Թագավորական ծագում ունեցողը միայն կարող է թագավոր լինել: Եզնվականը միայն կարող է հերոս լինել: Այս սկզբունքը՝ ֆեռզալահան արխատկրատական լեզվախոսից մի սկզբունքը, Ֆիրդուսին արտահայտել է ծայրահեղ հետևողականությամբ: Կարգում ես «Շահ-նամին», հատվածներ կան, որոնց մեջ հեղինակը անզուսպ գայրույթով է խոսում անարժան, գոռոզացած, իսկ երբեմն էլ թույլ, վախկոտ ու անճարակ թագավորի մասին, որին հակադրվում է Ռոստամն իր հերոսական, վեհ ու պայծառ կերպարով: Ժողովուրդը երես է դարձնում թագավորից, ապստամբում է նրա դեմ, դիմում է Ռոստամի օգնությունը, նրան է առաջարկում երկրի գահը: Իր բոլոր հատկություններով Ռոստամն արժանի է գահին, և թվում է, թե նա, ահա, կընդունի գահն, ու ժողովուրդը ցնծությամբ կդիմավորի այդ բայը: Բայց Ֆիրդուսին այդպիսի օրինականացություն չի թույլատրում. Ռոստամը վասալ է, նա հզոր է, գերմարդկային ուժ ունի, առաքինի է, բարի, արդարամիտ ու խոհեմ, բայց և այնպես հպատակ է: Եվ Ռոստամը չի ընդունում գահը, նա խրատում է թագավորին, հանդիմանում, նախատում, խոտվում ու հեռանում իր գավառը՝ Սիստան, մինչև որ ժողովրդի, կամ մեծամեծների խնդրանքով ու միջնորդությամբ Իրանի համար օրհասական պահին

կրկին ասպարեզ է գալիս և խոնարհ ու հնազանդ հպատակի նվիրվածությամբ ու մեծ հայրենասերի անձնուրացությամբ վերացնում երկրի վրա ծանրացած շարիքը:

Արխատկրատական այս մտայնությունը Ֆիրդուսին արտահայտել է նույնիսկ ամենափոքր, աննշան ղեկավարի նկարագրության մեջ: Հիշենք, օրինակ, Բահրամ Գուրի հատվածի մեջ մատչելիցը պատանի կոշիկալարի մասին: Պատանու տատը իր թոռանը հին գինի էր խմացրել. պատանին հարբած վիճակում դուրս է գալիս փողոց ու հանդիպում արքայական գազանանոցից փախած առյուծին: Արհամարհելով վտանգը, պատանին բռնում է գազանին ու ասնում դադանանոց: Արջունիքում իրարանցում է առաջանում. բոլորը գարմանում են հասարակ արհեստավորի քաջության վրա, և մի ամբողջ պատվիրակություն է գնում պատանու տատի մոտ՝ ստուգելու համար, թե արդյոք տղայի երակներում Իրանի հին ազնվական տոհմերից մեկի արյունը չի՞ հոսում: Ֆիրդուսին ինքն էլ գտնում է, որ այդպիսի մի սխրագործություն կարող է կատարել նա, որ սերում է Իրանի դյուցազունների տոհմից: Եվ սրովհետև այդ պատանի կոշիկալարն ազնվական տոհմից չէր սերում, ստուգելուց հետո գալիս են այն եզրակացություն, որ նրա քաջության պատճառը հին և անուշ գինին է եղել:

Վերջապես, այդ մտայնությունն արտահայտվել է, ինչպես ասացինք, Իրանի անցյալի իդեալականացմամբ, նախնիների արդարություն, քաջության ու հայրենիքին նվիրվածության մեջ, որ այնքան վառ գույներով գովերգում է Ֆիրդուսին:

Ժողովրդական մտայնությունն ամենից առաջ արտահայտվել է հենց դյուցազնավազի մշակման մեջ: Ըստ կառուցվածքի, «Շահ-նամին» Իրանի թագավորությունների պատմությունն է: Մասերի ու գլուխների բաժանումը համապատասխանում է իրար հաջորդող հարստությունների ու թագավորների ավանդական ժամանակագրությանը: Սա, այսպես ասած, դյուցազնավազի ձևավորման, արտաքին կազմալարի հիմքն է կազմում: Մինչդեռ, դրանից ոչ պակաս կարևոր են այն պատմությունները, գրույցներն ու վեպերը, որոնք ներհյուսված են այդ պաշտոնական ժամանակագրությանը, ներգրված այս կամ այն թագավորի պատմության մեջ:

Այդ ներհյուսված հատվածների առաջին բնորոշ հատկանիշն այն է, որ նրանք բոլորն էլ, գրեթե առանց բացառության, վերցված են ժողովրդի բանավոր գրույցներից ու ավանդություններից և համակված են խոր ժողովրդայնությամբ: Մյուս կողմից, այդ հատվածներից շատերում Ֆիրդուսին մեծ սիրով ու խանդավառությամբ



երգում է ժողովրդական հերոսներին: Այդպիսի հատվածներից կարելի է հիշել, օրինակ, Կավեի պատմությունը: Աշխատավոր ժողովրդի ծոցից դուրս եկած դարբինը, իմանալով, որ մեծամեծներն ստրկամտորեն ստորադրել են Զոհակի կազմած համախոսականի տակ, իլուծ է այն, ոտքերի տակ նետում ու տրորում, ապա ժողովրդի զուլան անցած, իր կաշվե գոգնոցը դրոշ դարձնում և պայքարի էլնում Զոհակի դեմ: Այս հատվածը Ֆիրզուսին գրել է վառ գույներով՝ ընդգծելով հատկապես ժողովրդի անպարտելի ուժը, աշխատավոր մասսաների ազնվությունը, նրանց հեղափոխական պայթույթն ու հայրենասիրությունը: Եվ պատահական չէ, որ այնուհետև, ամբողջ «Շահ-նամեխ» մեջ «կավյան դրոշ» (Դերաֆշի Կավյան) արտահայտությունը հեղինակը գործածում է որպես ազատության ու հայրենասիրության սիմվոլ: Ֆիրզուսին խորապես սիրում է ժողովրդի ծոցից դուրս եկած հերոսին, սիրում է ժողովրդին ու գովերգում նրան, մի բան, որ, իհարկե, հազիվ թե կարելի լիներ գտնել օրինականացված «ետուգայ-նամեխ» մեջ:

Ժողովրդական մտայնության ցայտուն արտահայտությունն է նաև Մազդարյան շարժման պատմությունը: Հակառակ իր դարաշրջանում իշխող վերաբերմունքին, Ֆիրզուսին որոշակիորեն դրական վերաբերմունք է արտահայտում Մազդաքի նկատմամբ: Հայտնի է, որ Մասանյան շրջանի «եվաթայ նամակի» մեջ խիստ բացառական ձևով է ներկայացված Մազդաքը: Հայտնական է, որ այդ դնահատականը նույնությամբ անցել է նաև նոր պարսկերեն բնագրին: Ֆիրզուսին, սակայն, Մազդաքին ներկայացրել է իրրե մի մարզու, որ մարտնչում է արդարության, ժողովրդի բարօրության համար, այսինքն ձիշտ այնպես, ինչպես Մազդաքը զնահատվում էր ժողովրդական գրույցների ու ավանդությունների մեջ:

Հատկանշական է նաև, որ բազմաթիվ թագավորների կերպարներից ամենասիրելիները Ֆիրզուսու համար հենց նրանք են, որոնց իդեալականացրել էր ժողովուրդն իր պատմությունների, առասպելների ու զրույցների մեջ: Կեղևված օտար ու հայրենի տիրակալների լծի տակ, տնտեսապես քայքայված արտաքին թշնամիների ներխուժումներից և հայրենի երկրի տիրակալների անընդհատ երկպառակություններից ու պատերազմներից, ժողովուրդն էլ իր ավանդությունների մեջ իդեալականացնում էր անցյալը, փառաբանում հին Իրանի այն «երանելի ժամանակները», երբ թագավորներն արդար էին, ժողովրդասեր, իսկ հպատակները՝ հնազանդ ու միասնական: Ժողովրդի այդ ավանդությունների մեջ առանձնապես սիրված հերոսներ էին Քեյ-խոսրովը, Խոսրով Անուշիրվանը, Քահրամ

Գուրը և այլն: Եվ Ֆիրզուսին էլ իր գյուցադնավեպի մեջ առանձին սիրով փառաբանում է հենց այդ հերոսներին: Բայց ոչ միայն այդքանը. նա այդ կերպարները կերտելիս ավելի շատ հետևում է հենց ժողովրդական ավանդությանը, քան պաշտոնական «ետուգայ-նամեխն»: Պատահական չէ, հետևաբար, որ այդ հերոսներին, առանձնապես Քեյ-խոսրովին նա ներկայացնում է որպես մի թագավորի, որ ոչ միայն զիսավորում է Թուրանի դեմ մղվող պատերազմն ու պարտության մատնում Աֆրասիաբին, այլև հող տանում երկրի բարեշինության, ժողովրդի բարեկեցության, արդարության պահպանման մասին: Իր հաջորդներին տված պատգամների մեջ Խոսրովը արտահայտում է հենց Ֆիրզուսու պատգամները: Իսկ այդ պատգամների մեջ արտահայտվել է Ֆիրզուսու խոր ժողովրդասիրությունը, նրա հոգատարությունը աշխատավոր մարզու նկատմամբ:

Ինչպես տեսնում ենք, իր ստեղծագործության մեջ Ֆիրզուսին միացնում է երկու հակադիր միտումներ՝ արխատկրատական-ֆեոդալականը և ժողովրդականը: Բայց ինչպե՞ս հնարավոր էր այդ երկու հակադիր բևեռները միասնացնել մեկ ստեղծագործության մեջ, մի մարզու աշխարհայացքի մեջ: Բնականաբար սրա համար անհրաժեշտ սոցիալ-պատմական հիմքեր կային, հիմքեր, որոնք հնարավոր էին գործնում այդ երկու միտումների միացումը:

Այդ հիմքերից առաջինը հայրենասիրությունն էր, որ, կարելի է ասել, «Շահ-նամեխ» ոգին է կաղձում: Ինչպես վերև ասել ենք, VIII—X դարերում, օտար զավթիչների դեմ մղվող պայքարում ժողովրդի ազատագրական-հայրենասիրական ձգտումների ու ֆեոդալական-արխատկրատական մտայնության միջև, հայտնի պատմական հանգամանքներում, որոշ միասնություն էր ստեղծվել: Ժիշտ է, ֆեոդալական վերնախավը այդ հայրենասիրական ձգտումների վրա իր նեղ ազգայնական կնիքն էր դնում և ժողովրդի ընդվզումներն աշխատում էր ծառայեցնել իր շահերին: Բայց ինչ էր լինի, հայրենասիրությունը այդ դարաշրջանի պատմական իրակասության պայմաններում հանդես էր գալիս իբրև համաժողովրդական իրողություն և հենց այդ համաժողովրդական բնույթ կրող հայրենասիրությունն է այն հիմքը, որի վրա խարսխվում են երկու հակադիր մտայնությունները Ֆիրզուսու ստեղծագործության մեջ: Իրա հետ միասին, պետք է նկատի ունենալ, որ Ֆիրզուսու հայրենասիրությանն ավելի հարազատ էր ժողովրդականը, այն, որ սերտ միասնություն մեջ էր իր մարդասիրության հետ: Ֆիրզուսին մեծ մարդասեր է: Մարդասիրությունն է նրա նշանաբանը, և դրանով է պայ-



մանավորվում այս կամ այն երևույթի գնահատումը: Թագավորները նրա համար թագավորներ են և փառքի ու պատվի արժանի են այն շահով, որ շահով ապահովում են երկրի բարգավաճումը, որ շահով կարողանում են արդարությունը կառավարել ժողովրդին: Եվ ընդհակառակն, այն տիրակալը, որ մարդասեր չէ, չի մտածում ժողովրդի բարօրության մասին, Ֆիրդուսին ոչ միայն անարժան է համարում գահին, այլև մարդ չի համարում. «Ով մարդկայնության ճանապարհից շեղվել է,—ասում է նա,—ղեկ-վիշապ համարի՛ր նրան, մարդ մի՛ համարի՛ր»:

Այս դիրքերից ելնելով էլ, ահա, նա գնահատում է երևույթների, այդ թվում նաև պատերազմները: «Շահ-նամեն» իր գերակշիռ մասով պատերազմների պատմություն է, և այս տեսակետից դիտելով կարելի կլիներ այն կոչել նաև պատերազմների գիրք: Բայց դրանով հանդերձ, բոլոր իր նկարագրած պատերազմները նա պատճառաբանում է ու գնահատում մարդասիրության ու հայրենասիրության դիրքերից ելնելով: Նրա համար իր նկարագրած ազգամահատը բոլորովին էլ քմբիշների սպորտային հանդիպումների ասպարեզ չէ, այլ արյուն ու ավերածություն, սով ու թշվառություն: «Շահ-նամենի» ամեն մի հատվածից, ամենաթեթև ուղեգրի անհատների նկարագրությունից խորապես ղգում ես ու համոզվում, որ հեղինակի ձգտումը պատերազմը չէ, որպես այդպիսին, այլ հաղթանակը, որ ապահովում է խաղաղությունը, շինարար աշխատանքը, երկրի բարգավաճումն ու ժողովրդի բարօրությունը: Նրա համար պատերազմը անխուսափելի միջոց է միայն խաղաղության հասնելու համար և բոլորովին էլ պատահական չէ, որ Իրանի մղած բոլոր պատերազմները, Կավեի ապստամբությունից սկսած մինչև Հաղկերտ Յ-րդի պատերազմը արաբների դեմ, պատճառաբանված են: Դրանք պատերազմներ են, որոնք մղվում են Ահրիմանի՝ շարիքի աստծու գործակալների դեմ, թուրանցիների պատճառած շարիքները կանխելու և վերացնելու համար, թշնամու շարագործությունները պատժելու, ճշմարիտ կրոնը՝ զրադաշտականությունը տարածելու համար, երկրի անկախությունը պահպանելու համար: Այլ կերպ ասած, Իրանի մղած պատերազմները, Ֆիրդուսու նկարագրությամբ, ժամանակակից տերմինով անվանելով. «արդարացի» պատերազմներ են: Այս տեսակետից խիստ բնորոշ է այն, որ յուրաքանչյուր պատերազմ Ֆիրդուսին հիմնավորապես պատճառաբանում է ու նախապատրաստում՝ հասցնելով անխուսափելի անհրաժեշտության: Սրա լավագույն արտահայտություններից մեկը Քեյ-Խոսրովի վարած պատերազմների նախապատրաստումն ու պատճառաբանումն

է: Քեյ-Քավուան իր հարյուրհիսունամյա թագավորության ընթացքում հաղթում է իր թշնամիներին, այդ թվում և՛ Աֆրասիաբին, որին թեև չի ոչնչացնում, բայց պարտության է մատնում: Աֆրասիաբն ստիպված է լինում հաշտություն խնդրել: Սրանով կարծես թի վերջանում են Իրանի ու Թուրանի անվերջ պատերազմները. կնքվել է հաշտությունը, և այլևս պատերազմի առիթ չկա: Այս բանը խորապես դիտակցում է Ֆիրդուսին: Բայց, մյուս կողմից, իր օգտագործած աղբյուրները թելադրում են հետագա պատերազմների պատմությունը, որ անխուսափելիորեն պետք է պատմեր և ինքը: Եվ հենց այստեղ էլ, ահա, Ֆիրդուսին ներշնչություն է Սիավուշի ողբերգական պատմությունը: Հալածված հայրական տնից, ապաստանելով Թուրանում, ընդունում է Աֆրասիաբի հպատակությունն ու հավատարմորեն ծառայում նրան, բայց շուտով ամբաստանվում է և Աֆրասիաբի անողոք կատաղության գոհը դառնում: Սա արդեն բավականաչափ ծանրակշիռ շարիք էր, որի համար վրեժի պիտի ելներ Իրանը՝ Սիավուշի հոր՝ Քեյ-Քավուաի գլխավորությամբ: Բայց Ֆիրդուսին այսքանը դեռ բավական չի համարում և նորանոր պատճառներ է մեջ բերում, որոնցից կարևորագույնը Սիավուշի որդի Խոսրովի Իրան բերվելու պատմությունն է: Կուր ստանալով Խոսրովի Իրան բերվելու պատմությունն է: Կուր ստանալով Խոսրովի փախուստյան մասին՝ նախ Փիրանը, ապա և՛ Աֆրասիաբը հետապնդում են նրան ու մեծ ավերածություններ պատճառում Իրանի սահմանները նահանջներում: Սա արդեն ներել չի կարելի: Եվ Քեյ-Քավուսը, պատմելով Քեյ-Խոսրովին Աֆրասիաբի պատճառած բոլոր շարիքները Իրանին, երդում է առնում Խոսրովից՝ երբեք չհաշտվել Աֆրասիաբի հետ, լուծել Սիավուշի և ամբողջ Իրանի վրեժը: Կան արդեն պատերազմի ծանրակշիռ պատճառները, և Խոսրովը պատերազմի է հիմում Աֆրասիաբի դեմ: Բայց հենց այստեղ էլ առավելագույն ցայտունությամբ արտահայտվում է Ֆիրդուսու վերաբերմունքը պատերազմի նկատմամբ:

Սկսվում են պատերազմները երկու երկրների միջև. իրար դեմ են կանգնում երկու ժողովուրդներ, արյունը հոսում է գետի պես: Ֆիրդուսին գովում է իրանցիներին, ցնծությամբ նկարագրում նրանց հաղթանակը, բայց և միևնույն ժամանակ խոր վիշտ է ապրում. չրի պես թափվում է մարդկային արյունը. տուժում է առաջին հերթին ժողովուրդը, որ մաս չունի մեծերի գործած հանցանքների մեջ: Եվ Ֆիրդուսին գանում է ելքն ու հաղաբավոր մարդկանց կյանքը փրկում: Կանգնած են իրար դեմ թշնամի բանակներն ու ահեղ մարտի են պատրաստվում. երկու կողմերն էլ ծանր կորուստներ պիտի կրեն, անկախ այն բանից, թե ո՞վ է հաղթելու: Եվ, ահա, Փի-



րանն առաջարկում է խուսափել արյունահեղությունից և կռվի էլքը որոշել երկու կողմերի ըմբիշ-դյուցազունների մենամարտով: Ընդունվում է առաջարկը, պարտվում են թուրանցիները, և հազարավոր մարդկանց փոխարեն զոհվում են միայն տասներեք հոգի: Մնում է միայն Աֆրասիաբը. խոսքովը նոր պատրաստություն է տեսնում, կռվի էլնում, պարտություն մատնում նրան ու սպանում, և տիրում է խաղաղությունը:

Ինչպիսի՞ խանդավառությամբ է նկարագրում Ֆիրդուսին խաղաղությունը, երկրում կարգ ու կանոնի, արգարության վերահաստատումը, ինչպե՞ս է դրվատում շինարար աշխատանքը: Ի վերջո հասել է երջանիկ ժամը, ոչնչացել են Ահրիմանի գործակալները, բարին հաղթանակել է. Իրանը երկար ժամանակ տոնախմբությունների մեջ է, տոնում է իր հաղթանակն ու խաղաղության հաստատումը: Անսահման ոգևորությամբ է նկարագրում Ֆիրդուսին Քեյ-խոսրովի գործերը պատերազմն ավարտվելուց հետո: Բայց ամեն ինչ կատարված է արդեն: Խոսքովն ու իր դյուցազունները կատարել են իրենց պատմական դերը և մեկը մյուսի հոտեից հեռանում են ասպարեզից: Ռոստամն է միայն, որ դեռ կենդանի է ու դեռ չի ավարտել իր դերը. նա դեռ անելիք ունի: Փոխվում են ժամանակները. պատմական նոր իրադրություններ են ստեղծվում և, դրանց համապատասխան, նոր խնդիրներ են ծագում: Գրանցից առավել նշանավորն է Զրադաշտի երևան գալու և զրադաշտական կրոնի տարածման պատմությունը:

Ինչպես ամեն մի նոր կրոն, այնպես էլ զրադաշտականությունը տարածվում է սրով ու հրով: Այդ սարքազան պատերազմիչ հերոսն է Իսֆանդիարը, որ իր հերոսություններով ու գերմարդկային ուժով չի դիջում նույնիսկ Ռոստամին: Նա պատվով կտտարում է իր հերոսական գործերը, դրանով էլ յուս էություն, ավարտվում է դյուցազնական գործերի մարդաբաշար պատմությունը: Այժմ արդեն սովորական մարդկանց պատմական կյանքն է նկարագրելու հեղինակը: Եվ բնական է, որ Իսֆանդիարը, դյուցազնական սերունդների այդ վերջին շառավիղն, այլևս անելիք չունի և ասպարեզից պետք է հեռանա: Բայց ո՞վ կարող է նրան հեռացնել ասպարեզից. պողպատյա, անխոցելի մարմնով, վիթխարի ուժով այդ հերոսը անպարտելի է. նրա հետ մի մարդ միայն կարող է շփվել՝ Ռոստամը: Եվ իզուր չէ, որ Ֆիրդուսին դեռ կենդանի է պահել նրան: Ըստ էության մի շատ շնչին պատճառով է կռվում նա Իսֆանդիարի հետ: Նա չի շնորհավորել Գոշտասպին և չի հայտնել իր հնազանդությունը, Գոշտասպը զայրացած է, և հրամայում է Իսֆանդիարին՝

ըն՝ զնալ ու շղթայակապ բերել Ռոստամին իր մոտ: Միշտ հնազանդ Ռոստամը չի ընդունում այդ պայմանը, մենամարտն սկսվում է, և միայն Սիմորգի օգնությամբ Ռոստամը կարողանում է հաղթել Իսֆանդիարին: Այժմ արդեն Ռոստամն էլ անելիք չունի. նա կատարել է իր միսիան, որի վերջին դրվագը Իսֆանդիարին ասպարեզից հեռացնելն էր: Ժամանակն է, որ ինքն էլ զուրս գա ասպարեզից: Եվ այն Ռոստամը, որ հաղթել էր բազմաթիվ հզոր փահլեվաններին, զորավարներին, կախարդական հնարքներով օժտված զեվերի, այն Ռոստամը, որ երկար զարերի ընթացքում իր Ռախշին հեծած սարսափ էր բերում թշնամիներին, սպանվում է զանաձ մարդկանց թակարդն ընկնելով: Խոր վիշտ է պատում Իրանին: Ֆիրդուսին ցնցող հուզականությամբ ինքն էլ ողբում է իր սիրած հերոսների կորուստը. խոր վշտով է բաժանվում նա իրեն այնքան հարազատ հերոսներից և այն երանելի ժամանակներից, երբ իշխողներն արդար էին, քաջ ու քարի, իսկ հպատակները՝ հնազանդ ու միասնական: Այս վիշտը զնալով խորտնում է և փոխվում իսկական ողբերգության, երբ «հերոսական Իրանը» խոնարհում է իր զուլեք նորելուկ խալիֆաթի առջև: Եվ մեծ հայրենասերն ու մեծ հումանիստը իր արվեստի ամբողջ ուժով անարգանքի սյունին է կամում և՛ արարական նվաճողներին, և՛ հայրենի իշխաններին, որոնք, իրար զեմ ելած, ներքին խռովություններով էլ ավելի թուլացնում ու քայքայում են երկիրը: Այսպիսով, նրա ամբողջ դյուցազնավեպը ստանում է Կաղափական ակտուալ բնույթ, հեռավոր անցյալի պատմություններին նվիրված պայծառ էջերով կապվում իր ժամանակի հետ և, ընկանորեն, մարմնացնում ու միասնացնում այն միտումները, որոնք պատմական ավյալ իրադրությունների մեջ համաժողովրդական բնույթ էին ստացել:

Ուշագրավ է Ֆիրդուսու վերաբերմունքը մարդու նկատմամբ. մարդը բնականից վեհ է ու ազնիվ. միայն շար սատծու՝ Ահրիմանի ներշնչումով մարդը կարող է վատ դառնալ ու շարին ծառայել: Այսպես է մտածում Ֆիրդուսին: Եվ այս սկզբունքով է մոտենում նա նույնիսկ թշնամիներին՝ թուրանցիներին: Դրա ամենացայտուն արտահայտություններից մեկն է, օրինակ, Փիրանի կերպարի բնութագրերը: Փիրանը Աֆրասիաբի հավատարիմ դյուցազունն է, ամենակարևոր մարտերի ղեկավարությունը նրան է հանձնարարում Աֆրասիաբը, և թե ինքն անձամբ չի մասնակցում: Փիրանը հպատակի հնազանդությամբ կատարում է նրա բոլոր հանձնարարությունները: Բայց, միևնույն ժամանակ, նա բարի, ազնիվ հատկություններով օժտված մարդ է. շատ է պատահում, որ նա իր հոգու խորքում



համաձայն չէ Աֆրասիայի հետ կամ պարզապես անարդար է համարում նրա արարքը: Եվ շատ հաճախ նա իր խղճի ձայնին անսասալով՝ օգնում է իրանցիներին: Ավելին. շատ ու շատ անդամներ նա է առաջինը հաշտություն առաջարկում՝ արյունահեղությունից խուսափելու համար, և դարձյալ նրա նախաձեռնություններն է, որ Իրանի ու Քուրանի զորքերի վճռական ճակատամարտը փոխարինվում է տասներկու ըմբիշների մենամարտով: Ֆիրզուսին մեծ համակրանքով է խոսում Փիրանի մասին, ընդգծելով հասկապես, որ, թեև թուրանցի, նա, այնուամենայնիվ, օժտված է մարդկային բարձր հատկություններով:

Ֆիրզուսու հումանիզմի մասին խոսելիս չի կարելի աչքաթող անել նրա վերաբերմունքը կնոջ նկատմամբ: Այստեղ էլ նա իր դարաշրջանի ամենաառաջավոր մտքերն է արտահայտում: «Շահ-նամեի» մեջ, իհարկե, ծավալային տեսակետից շատ շնչին մաս են կազմում այն հատվածները, որոնց մեջ Ֆիրզուսին նկարագրում է կանանց կերպարները, բայց այդ մասերում էլ հենց նա կարողանում է շատ բան ասել: Նրա համար կինն ամենից առաջ մարդ է իր զգացումներով, խոհերով ու գործերով. բժրոստանալով իր ժամանակի մահճակալի գոգմատիկայի դեմ, Ֆիրզուսին գտնում է, որ կինը ազատ պետք է լինի իր ընտրության մեջ, ազատ իր սիրո մեջ: Այս տեսակետից շատ ուշագրավ է Քիժանի ու Մանիժայի վեպը: Մանիժան ծնողներից թաքուն կապվում է Քիժանի հետ: Հենց այն հանգամանքը, որ աղջիկը ծնողներից թաքուն սիրային հարաբերությունների մեջ է մտնում սղամարդու հետ, արդեն մեծ հանցանք էր: Բայց այդ հանցանքը ավելի դեպքում կրկնապատվում է նրանով, որ Մանիժան կապվում է թշնամական երկրի դյուցազնի հետ: Եվ այնուամենայնիվ, Ֆիրզուսին ո՛չ թե դատապարտում է երկու սիրահարներին, այլ խոր համակրանքով նկարագրում նրանց սիրո պատմությունը և բարեբառտիկ վախճանի հանդեպնում: Այդպես է ներկայացնում նա նաև Ռոստամի ու Քահմինայի, Չալի և Ռուգարեի և ուրիշ պատմություններ: Բայց Ֆիրզուսին կնոջը ներկայացնում է ոչ միայն սիրունու գերում, կինը նրա համար լիարժեք մարդ է և ընդունակ է տղամարդուն հավասար գործեր կատարելու: Եվ հիրավի, նա ներկայացնում է կնոջը գահի վրա, որպես երկրի տիրակալ և ցույց տալիս, որ այդտեղ էլ կինը հետ չի մնում տղամարդուց: Հասկանալի է, որ կնոջ նկատմամբ այսպիսի վերաբերմունքն ուղղակի արտահայտությունն էր վաղ վերածնության դարաշրջանի գաղափարախոսության, որ այնքան բնորոշ է Ֆիրզուսու ամբողջ ստեղծագործությանը:

ժողովրդական միտումի հետ է կապվում նաև «Շահ-նամեի» լեզվի ու ոճի առանձնահատկությունների մեծագույն մասը: Իր ստեղծագործության համար Ֆիրզուսին օգտագործել է ղանազան գրավոր աղբյուրներ և այդ աղբյուրներն, անշուշտ, այս կամ այն չափով իրենց կնիքն են դրել Ֆիրզուսու լեզվի ու ոճի վրա: Այսպես, օրինակ, պատմական շրջանին նվիրված հատվածներում, ինչպես և Ալեքսանդրի հատվածում, հայտնապես աչքի է ընկնում արաբաբանությունների առատությունը, արաբական բառերի, արտահայտությունների, իսլամական բանաձևերի հաճախակի գործածությունը, որ հատուկ չէ նախորդ մասերին և բացարձակ է հեղինակի օգտագործած արաբերեն աղբյուրների ազդեցությանը: Բայց ամբողջ «Շահ-նամեի» համար բնորոշն աղբյուրների թողած այդ ազդեցությունները չեն, այլ իր իսկ, Ֆիրզուսու ոճի ու լեզվի առանձնահատկությունները:

Ընդհանուրը և բնորոշը Ֆիրզուսու լեզվի համար պարզությունն է, արաբաբանությունների սակավ գործածությունը, ժողովրդական արտահայտությունների, պատկերների, աֆորիզմների ու դարձվածքների առատությունը: Դյուցազնավեպի հսկայական ծավալը, իրար նման գրությունների, արկածների ու պատմությունների կրկնությունները, որոնք անխուսափելի էին հազարամյակների պատմությունն ընդգրկող ստեղծագործության համար, կարծես թե դժվարին կացության մեջ պետք է դնեին հեղինակին, թվում է, թե նա ստիպված պետք է լիներ կրկնել միևնույն պատկերներն ու արտահայտությունները: Բայց Ֆիրզուսին խոսքի մեծ վարպետ է, նա կարողանում է հմտորեն օգտագործել ժողովրդական բանահյուսության ու լեզվի գանձերը և արտաքուստ իրար շատ նման գրությունները, արկածները նկարագրել այնպիսի նուրբ ոճական երանգավորումներով, այնպիսի բնորոշ արտահայտությունների օգտագործումներով, որոնք առանձնակի բնույթ են տալիս դրանցից յուրաքանչյուրին և ներքին զանազանություն մտցնում նրանց մեջ: «Շահ-նամեի» լեզվի համար բնորոշ է ժողովրդական բանահյուսությունը և նրա ոճական ու լեզվական առանձնահատկությունները:

Ի վերջո, քանի որ «Շահ-նամեի», այնուամենայնիվ, իրանական թագավորների պատմությունն է, ավելորդ չէ մի քանի խոսք էլ ասել այն մասին, թե որչափով է նա արտացոլում Իրանի իսկական պատմությունը: Վերը մենք ասացինք, որ ամբողջ «Շահ-նամեի» բաժանվում է երեք մասի. այս բաժանումը, սակայն, հիմնված է



միայն դուրսագնալեպի բովանդակության տրամաբանական մասնատման վրա և Ֆիրզուսուն չի պատկանում, այլ՝ նրա ստեղծագործությունն ուսումնասիրողներին: Չեական տեսակետից Ֆիրզուսին իր ստեղծագործությունն այդպիսի մասերի չի բաժանել. նրա մոտ կառուցվածքային տեսակետից մասերն իրարից անջատված են ըստ թագավորությունների և, հետևաբար, ամբողջ «Շահ-նամեն» իրենից ներկայացնում է իրար հաջորդող հիտուն թագավորությունների պատմություն: Ամեն մի թագավորություն, ըստ կառուցվածքի, կարելի է համարել մի դիրք, որի մեջ ներհյուսված են բազմաթիվ դասառան-ներ (հեքիաթներ, գրույցներ, ավանդություններ)՝ տվյալ թագավորության պատմության ընդհանուր սյուժեի հետ այս կամ այն ձևով զուգակցված: Եվ շնայած դրան, արեւելագետների կողմից «Շահ-նամեն» բաժանումը երեք մասերի արդարանում է, իհարկե, ստեղծագործության բովանդակության վերլուծություններ:

Իբրև թագավորությունների պատմություն, «Շահ-նամեն» միայն իր պատմական մասով կարող է ստույգ համարվել. այս մասով նա, հիրավի, կապվում է Սասանյանների հարստության իրական պատմությանը, և պատմական ստուգությամբ հեղինակը նկարագրում է այդ հարստության թագավորներին ու նրանց գործերը: Նախորդ ամբողջ պատմությունը հիմնված է առասպելաբանության, ժողովրդական ավանդությունների ու միջին ու հին իրանական գրավոր աղբյուրներից նոր պարսկերեն «Նուրայ-նամեն» անցած տվյալների վրա: Այսպես, «Շահ-նամենում» Սասանյաններին նախորդում են Աշքանյանները. պատմականորեն դա համապատասխանում է պարսից Արշակունյան հարստության և Սելեկյանների ժամանակաշրջանին, այսինքն՝ Ալեքսանդրից հետո՝ մինչև Սասանյանները (332 թ. մ. թ. ա.—226 թ. մ. թ.): Այս ամբողջ ժամանակաշրջանի պատմությանը «Շահ-նամեն» մեջ նվիրված է ընդամենը 22 բնյթ: Իրան հակառակ, Ալեքսանդր Մակեդոնացուն, որ համարվում է նախորդ հարստության՝ Քելանյանների վերջին թագավորը, նվիրված է «Շահ-նամեն» ամենաընդարձակ հատվածներից մեկը: Ալեքսանդրի պատմությունը, որով ավարտվում է Քելանյանների թագավորությունը, դրեթե ոչինչ չունի իրական պատմությունից և ամբողջապես հիմնված է Արեւելքում տարածված առասպելախառն ավանդությունների վրա: «Շահ-նամենում» բոլորովին չի հիշվում Արեւմտյան հարստությունը: Աշքանյան-Արշակունիների նախորդներն են Քելանյանները, որոնք հաջորդել են Փիշդադյաններին, և որոնք ներկայացնում են դուրսագնական մասը: Ի վերջո,

առաջին հարստությունն են ներկայացնում Փիշդադյանները, որոնց առասպելախառն պատմությունը ներկայացնում է մարդկության առաջացումն ու նրա աստիճանական զարգացումը դեպի բազալկրթություն: Այսպիսով, ամբողջ դուրսագնալեպի մեծագույն մասը ուղղակիորեն չի կապվում պատմական տվյալների հետ: Բայց շնայած դրան, այդ մասում էլ, նույնիսկ զիցաբանական պատմությունների մեջ, անխուսափելիորեն աեղ են գաել որոշ պատմական գեպեր ու իրողություններ, որոնք իրենց հետքն են թողած եղել թե՛ ժողովրդական բանահյուսության և թե՛ հին պարսկական աղբյուրների մեջ:

Մի քանի խոսք էլ «Շահ-նամեն» բանաստեղծական շափի մասին: Ամբողջ դուրսագնալեպը գրված է բեյթերով, այսինքն՝ հանգավոր զուգատողերով: Բանաստեղծական տողերի շափն է մոքա-հաբերը: Մոթաբարեքի յուրաքանչյուր տողը բաղկացած է չորս եռավանկ հատածներից, վերջինը՝ փոխարինված մեկ կարճ ու մեկ երկար վանկով:

Հիմնական սիմետրիկ շեշտն բնկնում է յուրաքանչյուր հատվածի առաջին երկար վանկի վրա, որ է երկրորդ վանկը:

Այս շափը, որ Ֆիրզուսուց հետո և նրա «Շահ-նամեն» ազդեցությամբ վիպական ստեղծագործությունների ամենատարածված բանաստեղծական շափը դարձավ պարսկալեզու գրականության մեջ, Ֆիրզուսուց առաջ կիրառել էր միայն Գաղիդին՝ նույն «Շահ-նամեն» իր գրած հատվածի համար: Արաբական տաղաչափության մեջ մոթաբարեքը գոյություն չի ունեցել, պահլավական գրականության մեջ՝ նույնպես: Արեւելագետները ենթադրում են, որ դա եղել է պարսկական ժողովրդական երգերին հատուկ մի շափ, որ օգտագործել է Գաղիդին իր պեմի համար, իսկ Ֆիրզուսին էլ հետեւել է նրան, իհարկե, մշակելով ու կատարելության հասցնելով այն, որպես դուրսագնալեպի բանաստեղծական շափ:

##### 5. «ՅՈՒՍԵՅ ՈՒ ՉՈՒՅԵՆ»

«Շահ-նամեն» ավարտելուց հետո, հակառակ իր սպասածին, Ֆիրզուսու գրությունը է՛լ ավելի վատթարանում է. մի կողմից սուլթան Մահմուդի հետապնդումը, իսկ մյուս կողմից մահմեդական կրոնավորների մեղադրանքներն ստիպում են նրան թափառական կյանք վարել: Եթե սուլթան Մահմուդի արքունիքում Ֆիրզուսուն մեղադրում էին այն բանում, որ նա գովերգել է Իրանի թագավորներին և հենց դրանով էլ նոր թուրքական հարստության դեմ իր



բողոքի ձայնն է բարձրացրել, ապա մյուս կողմից՝ կրօնավորները մեղադրում էին նրան այն բանում, որ նա գովերգել է պարսիկներին հին կրօնը՝ զրադաշտականությունը: Այս մեղադրանքն այն աստիճանի է հասնում, որ Ֆիրդուսու մահվանից հետո էլ կրօնավորները հրաժարվում են քննադատելու գերեզմանոցում նրան թաղելուց:

Այս էր պատճառը, որ նա իր երկրորդ ստեղծագործությունը ձեռնարկելիս ընտրեց մի այնպիսի նյութ, որ կարող էր փոքր ի շատե արդարացնել իրեն:

«Յուսեֆ ու Զուլեյխայի» առաջաբանում նա հետևյալն է գրում.

«Միրտս կշտացավ քաջ Ֆերիզունից, ինձ ի՛նչ, որ գահը խից Զոհակից, սրտիցս հանեցի Քեյ-Կորադի թագավորությունը, Քեյ-Քավուսի գահն էլ քամին տարավ: Զգիտե՛մ, դժոխային տանջանքից բացի էլ ինչ կատանամ ես Քեյ-Խոսրովի ու Աֆրասիաբի կույից... Ինձնից խուսափեց բախտի սիրտը, իբրև թե ես բարի գործ չեմ կատարել: Չեմ ասի այլևս պատմություններ թագավորների մասին: Հագեցավ սիրտս արքայական շեմքերից: Էլ չեմ ասի ապարդյուն խոսքեր, չեմ խոսի այլևս իգուր: Չեմ պատմի այլևս ցնորամիտ պատմություններ, երես շրջում եմ սիրելի զբոյց, որովհետև այն պատմությունները մաքուր սուտ են. նրանցից երկու հարյուրը շարժեն մի հյուլե հող. դրանք նենգությունը ու մտացածին կերպով դուրս տված խոսքեր են»:

Այս առաջաբանը մի հրաժարական էր իր նախորդ ստեղծագործությունից: Նրա համար արդեն սուտ և ապարդյուն խոսքեր պետք է թվային «Շահ-նամեի» սողերը, որովհետև նա շարդարացրեց իր հույսերից և ոչ մեկը: Եվ, ահա, իր նոր ստեղծագործության համար նա ընտրեց Ղուրանի պատմություններից մեկը՝ Հովսեփ Գեղեցկի (Յուսեֆ) պատմությունը և ստեղծագործեց ճիշտ նույն ոգով, ինչպես գտնում ենք այն թե՛ Ղուրանում և թե՛ Աստվածաշնչում: Կարևոր տարբերությունը, որ կա Ֆիրդուսու ստեղծագործության և Ղուրանի պատմության միջև հետևյալն է. Ղուրանում Յուսեֆը մարդարն է, օժտված աստվածային ձրբերով, մինչդեռ Ֆիրդուսու մոտ Յուսեֆը լիովին մարդ է, օժտված մարդկային զգայականությամբ: Ֆիրդուսու ստեղծագործության մեջ տեսնում ենք մի մարդ, որ իր նկատմամբ կատարված շարունակություններից ու անարգանքից խորապես խոցված, պանդխտության մեջ իր կյանքի միջոցներն է հայթայթում և ողորմ է իր դառը կյանքը: Հատկապես, հուզական են այն տողերը, որոնք նկարագրում են Յուսեֆի ողբը իր մոր գերեզմանի վրա: Ապա նույնպես խորապես հուզում են ընթերցողին իր անտերունչ վիճակը ողբացող պատանի Յուսեֆի խոսքե-

րը: Պետք է ասել, որ Ֆիրդուսին այս տողերը գրել է իր տաղանդի ամբողջ թափով: Իրոք նրա և Յուսեֆի վիճակի մեջ մի պուզադիպություն կար. ինքը Ֆիրդուսին էլ հեռացել էր տնից, հալածված էր իր հայրենիքից և ստիպված էր այս կամ այն ֆեոդալի մոտ ապաստանել զաղանապես: Անշուշտ սա որոշ դեր է խաղացել Յուսեֆի ողբերգական վիճակը այդպիսի բարձր հուզականությամբ ստեղծագործելու մեջ: Ամբողջ պոեմը թեև վերնագրված է «Յուսեֆ ու Զուլեյխա» և ենթագրել է տալիս նրանց սերը, բայց ավելի շատ վերաբերում է Յուսեֆի վշտերի նկարագրմանը: Նույն այս թեման հետագայում պարսից գրականության մեջ մի քանի անգամ մշակման է ենթարկվել, բայց բոլոր այդ մշակումների մեջ հիմնական շեշտը դրված է եղել Յուսեֆի և Զուլեյխայի սիրո վրա, ըստ որում այդ սեպրը նրանց մոտ պատկերված է միաստիկական, վերացական կերպով: Բոլոր այդ ստեղծագործությունների մեջ մենք տեսնում ենք մի կնոջ միաստիկ սերը մարդարն գերմարդի նկատմամբ, մինչդեռ Ֆիրդուսու մոտ ճիշտ հակառակն է: Ֆիրդուսին գտել է Յուսեֆի մեջ իր բախտակցին և իր տաղանդի ամբողջ կարողությամբ նկարագրել է գժբախտ պատանու անօգնական վիճակը մի կողմից, անգուց հարազատների և անողորմ սարկավաճառների արարքը Յուսեֆի նկատմամբ՝ մյուս կողմից: Այս հանդամանքն է ահա, որ շնայած իր կրօնական բովանդակությանը, ստեղծագործությունը դարձրել է էպոսն աշխարհիկ կյանքին վերաբերող մի գեղեցիկ պոեմ:

Գիտնականները՝ ելնելով այն հանդամանքից, որ «Շահ-նամեն» շափազանց մեծ տարածում է գտել պարսիկների և Արևելքի հարևան ժողովուրդների մեջ, իսկ այս երկը աչքաթող է արված, եկել են այն հզորակացություն, թե այդ ստեղծագործությունը գեղարվեստապես շատ թույլ է և այդ բացատրել են Ֆիրդուսու ծերությանը և նրա տաղանդի վայրէջքով: Անշուշտ, դա պոեմի աչքաթող արված լինելու իրական պատճառը չի կարելի համարել:

Սուվետական արևելագետ Բերտելսը՝ հակադրվելով այդ տեսակետին, այն բացատրում է մի այլ պատճառով: Նա գտնում է, որ «Յուսեֆ ու Զուլեյխայի» աչքաթող արվելու պատճառն էլ այն է, որ նա ֆեոդալիզմին շեղ կարող ծառայել այնպես, ինչպես «Շահ-նամեն», մասնավորապես, և թե նկատի առնենք նրա առաջաբանի վերոհիշյալ հատվածի խոսքերը, ուր նա սուտ է համարում այն բոլորը, ինչ որ սրբազան էր պարսիկ ֆեոդալիզմի համար: «Շահ-նամեն» իրանական ֆեոդալիզմին ծառայում էր իբրև գաղափարական մի հզոր զենք, իսկ «Յուսեֆ ու Զուլեյխայի» մեջ Ֆիրդուսին հրաժարվում էր հենց դրանից: Բնական է, որ սա բացասական վերաբերմունքի տ-



ոքի պետք է դառնար: Իհարկե, Քերտեղսի այս տեսակետը տրամաբանական է և ընդունելի, բայց «Յուսեֆ ու Զուլեյխայի» նկատմամբ Լոյսն անտարբերություն պատճառներից մեկն էլ պետք է որոնել այն բանում, որ նա «Շահ-նամեի» նման ամբողջական կատարյալ ստեղծագործության համեմատությամբ աննշան մի բան էր: «Շահ-նամեն» այնքան բազմակողմանի է իր պարունակած նյութով և գեղարվեստական մշակմամբ այնքան կատարյալ, որ այսպես թե այնպես պետք է նահմացներ այս փոքրիկ ստեղծագործությունը, որ առավելագույն դեպքում «Շահ-նամեի» զբաղվածներից մեկը կարող էր լինել, մանավանդ որ «Շահ-նամեում» էլ այդ կարգի հատվածներ կան (օր. Գուշասպի փախուստը տնից, սիրահարությունը, տանջանքները և այլն): Այնպես որ այս նոր ստեղծագործությունը, չնայած իր գեղարվեստական բարձր արժեքին, մի նոր բան չէր ավելացնում «Շահ-նամեին» և այդ պատճառով էլ առանձին ուշադրության չի արժանացել:

Վերջին տասնամյակներում հատկապես իրանական դիտնականները կասկածի տակ են առնում «Յուսեֆ ու Զուլեյխայի» Ֆիրդուսուն պատկանելը, հենվելով այն բանի վրա, որ պոեմի մեջ ոչ մի տեղ չի հիշվում հեղինակի անունը, և միայն արտագրողներն են հետագայում պոեմի հեղինակությունը վերագրել Ֆիրդուսուն: Իրանական գրականագետների այս անթիվ բերած փաստարկները, հատկապես բազմաթիվ ձեռագրերից քաղած այն տվյալները, որոնք վերաբերում են պոեմի ստեղծագործման հետ կապված որոշ մանրամասնությունների, ուշադրով են իհարկե, բայց չեն կարող հարցը լուծելու բավարար հիմք հանդիսանալ: Այդ բոլոր հիմնավորումների ու բուն իսկ կասկածանքի պատճառը այն տարածված կարծիքն է, որ իբր «Յուսեֆ ու Զուլեյխան» բանաստեղծական մշակման տեսակետից թույլ է և, հետևաբար, չի կարող «Շահ-նամեի» հանձնարող հեղինակի ստեղծագործությունը լինել: Այդ տարածված կարծիքը, սակայն, չի արդարանում. սովետական իրանագետները, հատկապես Քերտեղսը, խորապես վերլուծելով «Յուսեֆ ու Զուլեյխա» պոեմը, ցույց են տվել, որ նա իր գեղարվեստական արժեքով բոլորովին էլ չի զիջում «Շահ-նամեին»: Համենայն դեպս, «Յուսեֆ ու Զուլեյխայի» հեղինակության հարցը արևելագիտության մեջ վիճելի հարցերից մեկն է և դեռևս վերջնական խոսքը ասված չէ, թեև ավելի հավանական է այն, որ նա Ֆիրդուսու գրչին է պատկանում:

Իր կյանքի կեսից ավելին նվիրելով պարսից թագավորների պատմության գեղարվեստական մշակմանը՝ Ֆիրդուսին հաջորդներին իբրև ժառանգություն է թողել արվեստի մի հույակապ կոթող, որ համաշխարհային գրականության ոսկե ֆոնդի ամենաթանկագին գանձերից մեկն է դարձել:

«Շահ-նամեն», ինչպես ճիշտ կերպով անվանել են արևելագետները, իրանական կյանքի գեղարվեստական հանրագիտարանն է: Իր հարուստ բովանդակությամբ, իր առաջավոր գաղափարներով ու գեղարվեստական մշակման կատարելությամբ նա անզուգական մի ստեղծագործություն է, որ դարերի ընթացքում եղել է սերունդների ամենասիրելի զրքերից մեկը: Իր բազմաթիվ պատմություններից նա նյութ է մատակարարել հետագայի շատ ու շատ ստեղծագործությունների, իր անշնչելի ազդեցությունը թողել ոչ միայն պարսկա-թաղիկական, այլև ամբողջ Արևելքի գրականության շատ ու շատ էպիկական ստեղծագործությունների վրա: Բայց ոչ միայն այդքան: Թե՛ իր դարաշրջանում և թե՛ հետագայում Ֆիրդուսու «Շահ-նամեն» ողջնշման աղբյուր է հանդիսացել առաջադիմական, ազատագրական շարժումների համար: Պատահական չէ, այս տեսակետից, որ XIX—XX դարերում, ազգային-ազատագրական շարժումների ժամանակ, հեղափոխական արամադրություններով համակված զանգվածները «Շահ-նամեի» մեջ գտան իրենց հերոսին՝ դարբին Կավին, այն հերոսին, որ թե՛ սոցիալական ծագումով և թե՛ բանակալության դեմ կռվի ելած իր ազատատենչ ոգով այնքան հարազատ էր ազատության ձգտող զանգվածներին:

«Շահ-նամեն» ամբողջ առաջավոր մարդկության հարազատ ու սիրելի գործերից մեկն է: Դեռ շատ ու շատ ուսումնասիրություններ են հարկավոր, որպեսզի վեր հանվեն այդ հույակապ ստեղծագործության բոլոր արժանիքները:



### ՖԱԽՐ ԱՂ-ԴԻՆ ԳՈՐԳԱՆԻ

Իր հուշակապ ստեղծագործությունը Ֆիրդուսին պարսկա-թա-  
շիկական գրականության մեջ հիմնադրեց մի նոր ժանր՝ դյուցազ-  
ներիությունը: Եվ հենց իրենից անմիջապես հետո հանդես եկան  
բազմաթիվ բանաստեղծներ, որոնք, նրան հետևելով, դյուցազների-  
ություններ գրեցին: Այդ դյուցազներիությունները, որոնք երբեք էլ  
չհասան իրենց նախատիպարի՝ «Շահ-նամե»-ի կատարելությունը և  
մեծ մասամբ ժամանակի ընթացքում մոռացման մասնվեցին, ի-  
րենց բովանդակությամբ երկու կարգի կարելի է բաժանել: Առա-  
ջին կարգին պատկանում են այն դյուցազներիությունները, որոնց  
թեման անմիջականորեն, ուղղակի կերպով կապվում է «Շահ-նա-  
մե»-ի հետ, մտնում է նրա մեջ, բայց «Շահ-նամե»-ում մեջ է բեր-  
ված ոչ ամբողջությամբ և չի պարզացված իրեն մի ամբողջական  
պատմություն: Երկրորդ կարգին են պատկանում այն դյուցազների-  
ությունները, որոնց նյութը թեև հետագայում կերպով կապվում է  
«Շահ-նամե»-ի հետ, բայց նրանում քոչորովին անդ չի գտել դյու-  
ցազներիության հիմնական նյութի հետ անմիջական կապ շունե-  
նալու պատճառով: Բայց դրանով չի սահմանափակվում «Շահ-  
նամեի» դերը պարսկա-թաշիկական պոեզիայի պատմության մեջ:  
Այդ հուշակապ ստեղծագործությունը, բացի դյուցազներիական  
պատմություններից, իր մեջ բնորոշում է նաև սիրային-վիպական  
հատվածներ, ինչպես, օրինակ՝ Բիթանի ու Մանիթայի, Զայի և Ռու-  
զարիի վեպերը: Այդ էպիկոսներն էլ, ահա, հիմք ծառայեցին մի  
այլ ժանրի հիմնադրմանը: Մկսեցին մշակել դարձյալ էպոսը, բայց  
արդեն ոչ միայն այն էպոսը, որի նյութն էր կազմում Իրանի դյու-  
ցազունների հերոսությունների պատմությունը, այլև այն, որ նկա-  
րազրում էր իրանական ասպետների կենցաղը, նրանց անձնական-  
ընտանեկան կյանքը, նրանց սիրային արկածները: Այդ սիրային-  
կենցաղային վիպերգի հիմնադիրը հանդիսացավ Ֆիրդուսու հա-

չորդներից մեկը՝ Ֆախր աղ-Դին Ասադ Գորգանին իր «Վիս ու Ռա-  
մին» վիպերգով:

Ֆախր աղ-Դին Ասադ Գորգանիի՝ կենսագրությունից շատ քիչ  
բան է հայտնի: Հայտնի է, որ սելջուկյան արշավանքներից հետո,  
սելջուկ սուլթան Քուչուկ-բեկի (1040—1063) տիրապետության օ-  
րոք, Գորգանին պալատական պաշտոնյա էր սուլթանի արքունի-  
քում, հենց այդտեղ եղած ժամանակն էլ Սպահանի կուսակալ Ա-  
միդ աղ-Դին Աբու-լ-Ֆաթհին ժանտթանալով նրա բանաստեղծա-  
կան ձիրքին, խոսում է նրա հետ պահլավական «Վիս ու Ռամին»  
վեպի մասին, ապա հանձնարարում՝ թարգմանել վեպը նոր պարս-  
կերեն լեզվով, որովհետև, ինչպես պատմում է Գորգանին իր վեպի  
նախերգանքում, այդ ղեկեցիկ ու հուզիչ վեպի լեզուն խրթին էր,  
չի դժվարահասկանալի բառերով: Ահա և Աբու-լ-Ֆաթհի խոսքերը-

Այս վեպից լավ ծանոթ չի ինձ այլ մի երկ,  
Այն խնդության մի պարտեզ է, համակ երգ,  
Սակայն լեզուն պահլավերեն է հնավանդ այդ վեպի  
Ոչ ամեն մարդ, որ կարդում է, նրա խմաստն էլ գիտի.  
Ամեն մարդ չէ, որ դյուրությամբ, լավ է կարդում այն  
լեզուն,  
Եվ թե կարդա, դեռ նշան չէ, որ միտն էլ է հասկանում:

Գորգանին ընդունում է կուսակալի հանձնարարությունը և ոչ  
միայն թարգմանում է պահլավական վեպը, որ արձակով էր գրե-  
ված, այլև մշակում է այն ու դարձնում շախմատ մի վիպերգ: Թե  
ո՞ր թվերին է կատարել այդ մշակումը և ո՞րքան ժամանակ է նվի-  
րել դրան ստույգ կերպով որոշել առայժմ հնարավոր չէ. արևելա-  
գետները սովորաբար ընդունում են, որ այդ կատարված պետք է  
լինի 1042—1052 թվականների ընթացքում. սակայն, նկատի ունե-  
նալով որոշ հանգամանքներ, այդ ժամանակամիջոցը կարելի է ա-  
վելի կրճատել. 1042 թ. շուտ Գորգանին այդ վեպի մշակմանը  
ձեռնարկած լինել չէր կարող, բանի որ այդ բանը նա կատարել է  
Քուչուկ-բեկի արքունիքում եղած ժամանակ, իսկ Քուչուկ-բեկը տի-  
րել է Գորգանին 1042 թ.: Ենթադրել, թե սելջուկյան նվաճումից  
անմիջապես հետո ձեռնարկեց վեպի մշակմանը, դարձյալ հավա-

<sup>1</sup> Գորգանի (Գորգանցի) մականունն, անշուշտ, դեռ չի հաստատում, որ նա  
ծագումով Գորգանցի է. սակայն, այդ առնվազն ցույց է տալիս, որ իր կյանքն  
այնտեղ է անցկացրել:



նական շէ, քանի որ Գորգանի գրավումից հետո Քողրու-բէկը դեռ շարունակում է յուր արշավանքները: Ամենից հավանական է այն, որ վիպերգի մշակումը կատարել է ուղղակի 1048 թվականին, Քողրու-բէկի կողմից Բյուզանդիան պարտութեան մատնելուց անմիջապես հետո: Ուստի և վեպի մշակման ժամանակամիջոցը 1042—1052-ից պետք է տեղափոխել ուղղակի 1048 կամ ամենաշատը՝ 1046—1049 թվականները: Չեռնարկելով պահլավական բնագրի թարգմանութեանն ու մշակմանը, Գորգանին, անշուշտ, չէր կարող ստրկարար հեռել բնագրին. նա, այսպես թէ այնպես, պետք է հարմարեցնէր այն իր ժամանակի ոգուն և, ինչպես կանսնենք, այդպես էլ արել է. սակայն, որպեսզի հնարավոր լինի պարզ կերպով ցույց տալ այդ և, առհասարակ, վեր հանել նրա արժանիքները, նախ և առաջ համառոտ կերպով շարադրում ենք վիպերգի բովանդակութիւնը:

\* \* \*

Հզոր և ամենակալ էր Մերվի Մորեղ արքան. ամբողջ աշխարհը ենթակա էր նրան. նրա անընկճելի զորութեան առջև խոնարհվել էին աշխարհի բոլոր թագավորները, որոնց թվում նույնիսկ Չինաստանի խաբանն ու Հռոմի կայսրը: Սակայն նրա թագավորական զորութիւնը նվաճել էր ոչ միայն երկիրը, երկնային լուսատուներն էլ, անգամ, նրա զործակալներն էին հանդիսանում: Երջանիկ էր նա իր փառքով ու հզորութեամբ. և, ահա, իր այդ փառքի ու երջանկութեան գագաթնակետին, մի օր, դարնանք, նա մեծ խնջույք է սաբորում, որին ներկա են լինում աշխարհի բոլոր մեծամեծները.

Հավաքվել են ողջ մարզերի մեծամեծները համայն,  
Տրոդոները գալառների՝ Արաբազան, Ռեյ, Գորգան,  
Խորասանի, Քունիստանի, Սպահանի, Շիրազի,  
Դեհիստանի կուսակալներն ողջ եկել են միասին:  
Արդիբիլից և՛ Բահրամը, և՛ Ռահհամն են ներկա,  
Ե՛վ Վշտասպը գեյլեմեցի, և՛ Շահփուրը Գիլից՝ կան:  
Յալ Քաշմիրցիին և Ագիմն են այնտեղ եկել իրար հետ,  
Խիզախ Վիրան և մեռ հերոսը՝ Ռամիսը քաջ սպայեա:  
Արքայեղբայր Զարդն էր այնտեղ, խորհրդապահն  
արժանի,

Եվ վեպիը բազավարի՝ երկրորդ տերը երկրի:  
Իսկ նրանց մեջ, անա, արժան՝ վսեմաշուք, քաշարի,  
Ինչպես լուսինը երկնում՝ շարջն իր՝ բույլեր սաազերի:

Այնտեղ են նաև աշխարհի գեղեցկուհիները, որոնց թագն ու պսակն է կազմում Մահաբադի Բանու Շահրուն: Եվ, ահա, Մորեղ արքան, տեսնելով չքնադագեղ Շահրունին, հմայվում է նրա աննկարագրելի գեղեցկութեամբ ու խնդրում նրա ձեռքը, բայց Շահրուն պատասխանում է, թէ այդ անկարելի է, քանի որ ինքը վաղուց արգեն ամուսնացել է քաջ Կարանի (Կարենի) հետ, որից և ունի մի քանի ասպետ որդիներ:

Նրան ասաց. «Ո՛վ տիրակալըդ աշխարհի, եզուրագուր մեծ  
արքա:

Ինչի՞ համար են, ինձ ասա, հառաչանքներդ այդքան:  
Չի վիճակված ինձ բարձրագուհ բազավարիդ լինել կին,  
եվ արժանի չեմ լինելու քեզ տենչալի ամուսին:  
Անվայել է երկրորդ անգամ ամուսնանալ ինձ քեզ հետ,  
Երբ որդիներ ունեմ արդեն, ամեն մեկը՝ մի ասպետ:

Շահրունի խոսքերը համոզում են Մորեղին, որ այդ ամուսնութիւնն անկարելի է: Արքան այս անգամ խնդրում է Շահրունից նրա աղջկա ձեռքը. մինչդեռ Շահրուն պատասխանում է, որ ինքը աղջիկ չունի.

Երբեք ինձնից դեռ չի ծնվել աղջիկ զավակ իմ կյանքում,  
Իսկ թե լինի, նրան քեզ կին ապալա պայման եմ կնքում:

Մորեղը դրանով էլ գոհանում է, և նրանք անմիջապես երգում ու պայմանագրութեամբ վավերացնում են այդ խոստումը: Բայց դեռ չծնված աղջկա այդօրինակ պսակադրութիւնը ծերացող թագավորի հետ հարուցում է երկնային մոլորակների դաշտույթը, և ի հատուցումն Մորեղի այդ հանցավոր արարքի, բախտը հետագայում, ահա թէ ինչպես է պատժում նրան:

Հիրավի, տարիներ հետո Շահրուն մի աղջիկ է ունենում, որին անվանում են Վիտ: Աղջիկն իր գեղեցկութեամբ չէր դիջում մորը. նա օժտված էր կանացի գեղեցկութեան զգլխիչ հրապույրներով: Բայց հենց այդ գեղեցկութիւնն էլ պատճառ է դառնում Շահրունի երբմնազանցութեան: Գանելով, որ ծեր Մորեղն անարժան է յուր հրաշագեղ աղջկան, նա իր որդի Վիրոյի հետ է ամուսնացնում Վիտին: Սակայն այդ ևս բարեհաջող ավարտման չի հասնում: Մորեղը լուր է ստանում յուր զոքանչի ուխտադրութեան մասին և ուղարկում է իր եղբայր Զարդին՝ հարսնացու Վիտին Մերվ բերելու: Զար-



դր ակզ է հասնում հենց հարսանիքի օրը, ընդհանուրի խնդրության պահին, և պահանջում է, որ իրեն հանձնեն եղբոր օրինական հարսնացուին, բայց հարսնացուն վճարար հրաժարվում է Մորեղի կինը զատնալու առաջարկից, որ նշանակում էր՝ մերժել երիտասարդ եղբորն ու ամուսնուն՝ ծերունի Մորեղի հետ ամուսնանալու համար: Զարգը վերադառնում է դատարկածնու: Ուխտադրժույթունից ու մերժման անպատվությունից զայրացած Մորեղը բազմաթիվ գործով կռվի է էլնում Վիսի հոր՝ Կարանի դեմ: Պատերազմում սկզբից պարտվելով, նա դիմում է ուղղակի Շահրուի մոտ. հիշեցնելով նրան իրենց պայմանի ու երգման մասին, նա ամեն տեսակ թանկագին նվերների շնորհիվ կարողանում է իր կողմը գրավել Շահրուին: Շահրուն այժմ արգեն աշխատում է համոզել իր աղջկան՝ ամուսնանալ Մորեղի հետ: Եվ, ահա, մայրը՝ հակառակ իր աղջկա կամքին, Մորեղի նվիրած մեծահարուստ գանձերից զայնջակըզված, բացում է յուր պալատի դարպասները՝ ծերունի փեսացուի առջև, որ և անմիջապես Մերվ է տանում իր հարսնացուին:

Բայց Մորեղի հաջողությունը նրա երջանկության աղբյուրը չգարձավ. ճանապարհին այնպես պատահեց, որ քամին բարձրացրեց Վիսի պատգարակի վարագույրը, և արքայազն Ռամինը՝ Մորեղի կրտսեր եղբայրը, տեսավ չքնաղ հարսնացուին. նրա հմայիչ գեղեցկությունն իրկույնեթ խոցեց երիտասարդ արքայեղբոր սիրտը. միանգամից իսկ սերը բռնկվեց նրա մեջ և տիրեց ամբողջ էությունը...

Մերվ հասնելով, գրկված իր սիրելի եղբորից ու ամուսնուց, հետո յուր մորից, իր սրտին օտար մարդկանցով շրջապատված ու Մորեղի պալատում փակված Վիսն իրեն զգաց կատարյալ մենություն մեջ: Նա անձնատուր եղավ իր վշտին ու հուսահատությունը Միակ հարազատը, որ ուներ նա այդ օտար աշխարհում, իր դայակըն էր: Դայակը խուժխտանցի չափազանց խորամանկ, ամեն կարգի խարդախությունների վարժված, հմայության արվեստին ծանոթ մի կին էր: Տեսնելով իր տիրուհու սրտամաշ հուսահատությունը, նա սկսում է միխթարել նրան և այդ բանի համար ամենապայծառ գույններով նկարագրում է Վիսին իր ներկա վիճակի անհամեմատ առավելությունները՝ նախկինի նկատմամբ: Նա ոչ մի չանք չի խնայում ապացուցելու համար, որ Մորեղի հետ կենակցելը Վիսի առջև բաց է անում ուղղակի կատարյալ երջանկության դռները, բուրբուկին անիմատ է Վիսի հուսահատությունը. զրկվելով Վիրոյից, նա դարձել է հոյր թագավոր Մորեղի կինը. պետք է վայելել իրեն բաժին ընկած անսպառ վայելքները և մոռանալ անցյալը: Սակայն բո-

լոր այդ խորհուրդներն ապարդյուն են անցնում: Անձնատուր եղած իր ծայրահեղ հուսահատությունը, Վիսը խնդրում է դայակին, որ պետքի նա որևէ միջոցով կարողանա արգելել Մորեղին իր՝ նորահարսի հետ կենակցել, մինչ որ ինքը փոքր ի շատե մոռանա յուր վիշտը: Դայակը պատաստկամությամբ հանձն է առնում այդ և կախարդական թախամանի օգնությամբ զրկում է Մորեղին առնական կարողությունից:

Ռամինն էլ, իր հերթին, Վիսին տեսնելու պահից իսկ, կորցրած իր հոգու անդորրը, անձնատուր է լինում բուռն սիրո տվալատանքներին: Երկար ժամանակ նա լուռ կերպով, ինքն իրեն կրում է այդ տառապանքները, մինչև որ, վերջապես, մի օր հանդիպելով Վիսի դայակին, երկար թախանձանքներից հետո կարողանում է նրան իր կողմը դրավել: Այդ օրից ի վեր դայակը զանում է Ռամինի գործակալը, նրա կավատը: Նա սկսում է անընդհատ խոսել Վիսի մոտ Ռամինի անձնուրաց ու բուռն սիրո մասին, զովել նրա գեղեցկությունն ու երիտասարդությունը: Վիսն այդ բոլորը լսում է անտարբերությամբ. նա անդրդվելի է մնում հմուտ խարդախուհու բոլոր դայակիցի խոսքերի հանդեպ, մերժում է անսալ նրա գարշելի խորհուրդներին և, նույնիսկ, արգելում է նրան իր մոտ Ռամինի մասին խոսել: Մինչդեռ՝ կնոջ հոգին սնունդ է պահանջում: Աստիճանաբար մոռանալով իր սիրելի Վիրոյին, Վիսը քիչ առ քիչ ավելի համբերատարությամբ է լսում միջնորդ-դայակի խոսքերը և, մի անգամ, խնձույթի ժամանակ, տեսնելով երիտասարդ Ռամինին՝ զգում է իր մեջ կատարվող ինչ-որ օտարաբան փոփոխություն: Սակավ առ նակավ նրա էությունը տիրում է երիտասարդ արքայեղբոր սերը. նա սկզբից աշխատում է մաքառել դրա դեմ. մինչդեռ դայակի աղերսներն ու սպառնալիքները գործում են նորահարսի ջանքերին հակառակ: Վերջապես աստիճանաբար հզորացած և արդեն իսկ իրեն ամբողջապես համակած սերը դայակի անվերջ միջամտության հետ միասին՝ լուցնում են յուր մեջ պարտքի ու հավատարմության ձայնը: Այլևս ամեն ինչ որոշված է. ոչ եղբայր Վիրոյի սերը, ոչ ամուսնու հանդեպ ունեցած պարտքի պիտակցումն ի վիճակի չեն դիմադրել անզուսպ սիրո մղումին. «կիրքը կուրացրեց նրա բանականության աշքերը» և այդ կրքի մղումով էլ, ահա, նա ձգտում է արդեն Ռամինի տեսակցությունը:

Հասավ և այդ պահը: Մորեղը որսորդության էր գնացել Միրիական աշխարհը և, ահա, նրա բացակայության ժամանակ Վիսն իր մոտ է ընդունում յուր տենչալի Ռամինին: Այդ առաջին հանդիպումից սկսած երկու սիրահարները, առանց այլևս որևէ բան հաշ-



վի անձեւու, կատարելապէս անձնատուր են լինում սիրո և կրքի մուտքքին: Այդպէս անց են կացնում նրանք երկու ամիս:

Երկու ամալա վայելքներէից հետո Ռամինը նամակ է ստանում իր եղբայր, Վիսի ամուսին Մորեզից, որը հրավիրում էր Ռամինին իր մոտ՝ Միգիա, յուր հետ որսորդութեամբ ու խրախճանքներով ժամանակ անցկացնելու. դարունը եկել է և իր հրաշալիքներով շքեղ աշխարհը. միգիական ամբողջ երկիրը կանաչ է հագել: Լեռների գաղաթներէի ձյունն ու սառույցը շքացել են: Նույն նամակով էլ Մորեզը Ռամինին հանձնարարում է Միգիա տանել նաև Վիսին: Երկու սիրահարներն ընդունում են Մորեզի հրավիրը և գնում նրա մոտ:

Շուրջ մի ամիս Ռամինն այնտեղ եղբոր հետ անց է կացնում ժամանակը որսորդութեան ու խրախճանքների մեջ, ապա որոշում է թողնել Միգիան և որսորդութունը շարունակելու համար գնալ Մուկան գավառը<sup>1</sup>:

Անշուշտ Ռամինի գնալու առթիւ կաղճակերպում է մեծ խընչույթ. գրեթէ ամբողջ գիշերը Մորեզն անց էր կացրել այդ խնչույթում: Լուսաբացին, երբ նա արդեն վերադարձել էր իր ննջարանը, ուր քնած էր Վիսը, ներս է մտնում դայակը և, կարծելով, թէ Մորեզը քնած է, սկսում է հանդիմանել Վիսին այն պատճառով, որ նա հանգիստ քնած է այն պահին, երբ Ռամինը պատրաստվում է հեռավոր ճանապարհորդութեան դիմել: Հայտնելով, որ Ռամինը պատրաստվում է ճամբարից դուրս գալ, նա հրավիրում է Վիսին հրաժեշտ տալու իբրև թէ երկարատե ու վտանգներով լի օտարութեան դիմող Ռամինին: Մորեզը լսում է բոլորը և ծայրահեղ ցասման մեջ սկսում է նախատել երկու հանցագործներին: Վիսը, հակառակ Մորեզի սպասածին, մաղաչափ անգամ չի ընկրկում. նա իր եղբոր ու նախկին փեսացու Վիրոյի ներկայութեամբ խոստովանում է Ռամինի նկատմամբ ունեցած սերը: Վիրոն խոհեմաբար խրատում ու հորդորում է քրոջը՝ հրաժարվել Ռամինից և վերադառնալ իր օրինական ամուսնուն: Գործն առայժմ այդպէս էլ վերջանում է. հակառակ Մորեզի ցասմանը, դեռևս բանը չի հասնում լուրջ միջոցառումների և գրեթէ ոչինչ չի փոխվում: Ամեն ինչ շարունակվում է ըստ նախկինի: Սակայն, բնականաբար, այդ դրութունը երկար

<sup>1</sup> Վիպերդում ամալում է, թէ Ռամինը գնում է Հայաստանի Մուկան գավառը, որից պետք է ենթադրել, թէ դա Մուկ գավառն է վերաբերում: Արևելագետներից շատերը, սակայն, ավելի հավանական են համարում Մուղանը, մանավանդ որ վրացական արևակ թարգմանութեան մեջ նշվում է, որ այդ գավառը ծովափին է գտնվում:

տեղ չէր կարող: Ստեղծված էր մի անբնական վիճակ երեք ղլխավոր հերոսների համար. դա է՛լ ավելի անբնական ու անստանելի էր մանավանդ Մորեզի համար, որի հանգիստը կորել էր կենցեց մերժված լինելու և հարազատ եղբորից իսկ դավաճանված ու անպատվված լինելու գիտակցութեամբ: Եվ, ահա, մի անգամ, Մորեզը, Քուհիստանից յուր աթոռանիստ Մերվ վերադառնալով, նստում է յուր պալատի տանիքի տաղավարում Վիսի հետ:

### Արծաթակուրծի Վիսը և նա տաղավարում միասին նստել էին մի օր՝ նման Սողոմոն ու Բելիսին:

Այդտեղից Մորեզը ցույց տալով Մերվի գեղեցկութուններն ու հրաշալիքները, գովելով հարազատ բաղաբն ու նրա բազմաթիւ սքանչելիքները, միաժամանակ, առիթը հարմար գտնելով՝ բացատրում է Վիսին, թէ ինչպիսի երջանիկ բախտի է արժանացրել ինքը Վիսին, դարձնելով նրան իր հրաշալի երկրի թագուհին: Բայց, հակառակ նրա սպասածին, Վիսը բացարձակապէս հայտարարում է, որ ինքը բոլորովին էլ երջանիկ չի համարում իրեն, սիրո մուտքքից մղված նա պարզապէս ասում է, թէ ինքը Մորեզի հետ երբեք բախտավոր չի գտն իրեն, որովհետեւ իր սիրտն ու հոգին միայն և միայն Ռամինին են պատկանում: Զայրույթը նորից տիրում է Մորեզին և նա, իր մոլեգնութեան մեջ նզովելով իր անշնորհակալ, երախտամոռ կնոջը, վերադարձնում է նրան Միգիա, իր մօր մոտ: Ռամինը նույնպէս Մերվում չէ. նա խոստացել էր Մորեզին հրաժարվել Վիսից և մնացել էր Քուհիստանում:

Վերադառնալով հայրենի երկիրը, հարազատների մոտ, իր մօր օստանում՝ Մահաբադում, Վիսն անց է կացնում իր ժամանակը լքման ու հուսահատութեան մեջ:

### Օր ու գիշեր նստում էր նա պառչալմբում դոյակի՝ նստասանի նախապաշին ուղղած հայացքն անձկազին:

Օրեր են անցնում այդ տանջալից բաժանման մեջ, մինչև որ վերջապէս նորից հանդիպում է իր սիրածին: Ռամինը, հակառակ իր խոստմանը, չի կարողանում դիմադրել Վիսի նկատմամբ ունեցած մոլեգին սիրո մղումին և, փոխանակ Վիսից հեռու, Քուհիստանում որսորդութեամբ պարապելու, դիմում է գնալի Միգիա, ուր տենչանքով սպասում էր նրան իր շքնաղ սիրուհին: Բաժանված սիրահարները կրկին հանդիպում են իրար. Ռամինը խանդավառու-



թյան ու բերկրանքի մեջ անց է կացնում իր ժամանակը՝ երբեմն որսորդության մեջ, երբեմն սիրեցյալ Վիսի գրկում՝ քաղցր զգվանքներին անձնատուր: Բայց այդ ևս երկար չի տևում: Մորեղն իմանում է այդ, վերավորված ինքնասիրովթյունն ու մոլեգին խանգրկատարելիության են հասցնում նրա ցատուժը, և նա այս անգամ արդեն որոշում է վրեժ լուծել իր եղբորից: Այնուամենայնիվ այդ որոշումն այդպես էլ մնում է՝ մոր միջնորդության շնորհիվ: Վերջինս համոզում է հարազատ որդուն՝ Մորեղին, որ իր դեմ մեղանշողը ոչ թե Ռամինը, այլ Վիսի եղբայր ու երբեմնի փեսացու Վիրոն է, և զբանով իսկ որդու գայրույթն ու թշնամանքն ուղղում է անմեղ Վիրոյի դեմ: Դյուրահավատ Մորեղը, իսկապես արդարացնելով եղբորը, Վիրոյի դեմ գրգռված՝ արշավանքի է ելնում, բայց այստեղ էլ համոզվելով, որ Վիրոն իրոք բուրբուխ էլ հանցավոր չէ այդ գործում, կրկին թշնամանում է իր եղբոր նկատմամբ և արշավանքըն ուղղում նրա դեմ: Համենայն դեպս, այս անգամ էլ ամեն ինչ վերջանում է խաղաղության մասին հաշտության մասին: Ներկելով եղբորն ու կնոջը, Մորեղը նրանց հետ վերադառնում է Մերվ, և մի որոշ ժամանակ երեքն էլ ապրում են հաշտ ու խաղաղ կերպով: Մահայն, շնայած արտաբուստ թվացող անգործին, Մորեղի մեջ կրկին զարթնում են կասկածն ու խանդը. այդ խանդին, ահա, բավարարություն տալու, իր կասկածները փարատելու և իր հոգու անդորրը վերականգնելու համար նա պահանջում է, որ Վիսը բուրմերի ու վճագների ներկայությամբ խարույկի մոտ, սրբագործ կրակի առջև երգվի և գրանով իսկ հաստատի իր ու Ռամինի անմեղությունը:

Բայց երգում տուր դու անպայման խարույկի մոտ, իմ առջև,

Ու Ռամինին՝ իմ եղբոր՝ չես սիրել ու ճանաչել:  
Եվ եթե էո անմեղությունն այդ երգումով հաստատես,  
Այն ժամանակ աշխարհը ողջ փառք ու պատիվ կտա էեզ:

Ի տրիտուր դրան, Մորեղն իր կողմից խոստանում է, որ այդ երգումից հետո երբեք Վիսին չի հիշեցնի այլևս անցյալի անախորժ դեպքերը: Վիսը համաձայնում է դրան:

Ան չունեմ ես բուրբուխի. իմ սրբությանը եմ հպարտ,  
Եվ երգումով կապացուցեմ, որ անմեղ եմ, տառապարտ:  
Անտառ է հողիս, ուսաի չի վախեցնում պատիժն ինձ,—  
Քանի որ չեմ կերել սխտոր, հոտ էլ չի գա իմ բերնից:

Բայց հենց հաջորդ օրը, երբ Մորեղն արդեն վառել էր տվել խարույկը, երկնահաս բոցերը երկչուղով են պատում Վիսին. ենթադրելով, թե այդ խարույկը պատրաստվել է իրեն ու Ռամինին այդքան համար, նա համոզում է Ռամինին իր հետ փախուստի դիմել: Առանց ժամանակ կորցնելու նրանք փախչում են Մերվից ու ապաստանում են Ռալ քաղաքում, Շահրուի որդի Բիհրուզի մոտ:

Անոջ ու եղբոր միասին փախչելու լուրը ծանր է ազդում դժբախտ Մորեղի վրա: Իր տխրությանն անձնատուր եղած, նա ճանապարհորդում է երկար ժամանակ ու որոնում կնոջը, բայց ոչ մի տեղ չգտնելով նրան, ունայնաձենն ու վշտաբեկ վերադառնում է: Մինչ այդ նրա մայրը տեղեկություն էր ստացել Ռամինի ու Վիսի հաշտ փախուստի մասին և դիտեր նրանց տեղը: Տեսնելով որդու՝ Մորեղի տառապանքները, նա հայտնում է, որ եթե Մորեղը խոստանա հրաժարվել Ռամինից վրեժ լուծելու մտադրությունից, ինքը կօժանդակի նրան՝ կնոջը վերստին ձեռք բերելու գործում: Թուլակամ Մորեղն ուրախությամբ խոստանում է հաշտվել Ռամինի հետ ու ներել նրան, և կարճ ժամանակից հետո երկու փախստականները գտնվում են արդեն Մերվում: Ինչ խոսք, որ նրանց սիրային հարաբերությունները դրանից բուրբուխ էլ չեն տուժում: Այստեղ էլ նրանք շարունակում են իրենց տեսակցություններն ու բավարարություն տալիս տարափալից սիրո մղումին: Դեռ ավելին. այս անգամ նրանց հանդիսությունն այն աստիճան ծայրահեղության է հասնում, որ մի գիշեր Վիսը հրամայում է դայակին գրավել իր տեղն ամուսնական մահճում՝ հարբած Մորեղի հետ, իսկ ինքնը գնում է Ռամինի մոտ: Մորեղը զարթնում է և Վիսի փոխարեն իր մահճում տեսնելով մի օտար կին, որին ինքը չէր ճանաչում մթության պատճառով, մեծ աղմուկ է բարձրացնում. այդ միջոցին հայտնվում է Վիսը և խորամանկությամբ կարողանում է ամեն ինչ կարգի գցել: Դուրս ուղարկելով դայակին, որ մինչև այդ ոչ մի ծպտուն չէր հանել՝ ձայնից շանաչվելու համար, նա սկսում է հանդիմանել ամուսնուն իրեն անտեղի վերավորելու առթիվ. նա համոզում է Մորեղին, որ նա պարզապես շփոթվել է և այդ շփոթության պատճառը երկկողան շափազանց շատ խմած գինու ազդեցության արդյունքն է: Դարձյալ դյուրահավատ ամուսինը համոզվում և հանդարտվում է, և ամեն ինչ բարեհաջող կերպով հարթվում է:

Այդ դրությունը շարունակվում է մի առ ժամանակ, մինչև որ Մորեղն արշավանքի է ելնում Հոռմի կայսեր դեմ: Նախքան այդ, նա կարգավորում է իր ընտանեկան գործերը. կնոջը նա փակում է մի անձեռնմխելի ամրոցում և, նրա խնամակալ ու հսկիչ նշանակելով



Զարդին, հրամայում, որ իր բացակայութեան ժամանակ ոչ ոքի ներս չթողնի: Հիշեցնելով Զարդին աչն անասելի անպատվութիւնները, որ ինքը կրել է իր կրտսեր եղբորից ու Վիսից և, այնուամենայնիւ, համբերութեամբ տարել գրանք ու ներել նրանց՝ իր ունեցած անասանան սիրո շնորհիւ, նա հայտնում է միաժամանակ, որ նորանոր փորձութիւններ իր անպատվութիւնների շինթարկվելու համար իր հետ տանում է նաև Ռամինին: Բայց, ավաղ, այդ միջոցառումն էլ չուր նպատակին չի հանդում. հասնելով Գորգան, Ռամինը հիվանդանում է և, եղբորից թուլտվութիւն ստանալով, վերադառնում է Մերվ: Ապա, այգտեղ շփոնելով Վիսին, դիմում է դեպի Աշքուփթի դիվան ամրոցը, ուր փակված էր իր սիրուհին: Հասնելով ամրոցին՝ նա իր անունը վրան գրված մի նետ է արձակում դեպի ամրոցի ներսը և այդպիսով հայտնում Վիսին իր դալատյան մասին: Երկու կանանց՝ Վիսի ու դալակի օգնութեամբ նա զաղտնաբար մտնում է ամրոցը և, շուրջ ինն ամիս մնալով այնտեղ, ճաշակում սիրո վաշխներն իր շքանդ սիրեցյալի հետ: Մինչ այդ, Մերվ է վերադառնում Մորեղն իր հաղթական արշավանքից և, լուր ստանալով կատարվածի մասին, հապճեպով դիմում դեպի ամրոցը: Մինչ նրա ամրոց մտնելը Ռամինին հաջողվում է փախչել. բայց մտնելով Վիսի սենյակը, Մորեղը գտնում է փախած եղբոր հետքը. երկու կանանց օժանդակութեամբ պարանով ցած իջնելով, Ռամինը կախված էր թուղն պարանը, որ և առանց այլևայլի ապացուցում էր ամեն ինչ: Մուկեղն առբան նախ և առաջ իր բարկութիւնը թափում է Զարդի վրա, որն այդքան թույլ ու անդադու էր գտնվել Ռամինի առջև. ապա նա անգթաբար ծեծում է և՛ Վիսին, և՛ դալակին, որոնք, շնայած բոլոր միջոցառումներին ու արգելքներին, հնարավորութիւն էին ստեղծել Ռամինին ներս բերելու և այնտեղ պահելու: Այնուհետև նա վերադառնում է Մերվ. բայց այստեղ էլ նրա թույլ բնավորութիւնը կարճ ժամանակից հետո տեղի է տալիս, շուտով նրա մեջ դարձնում է սիրո ու գոյման զգացմունքը և, այդ զգացմունքին անսալով, կրկին իր մոտ է բերում Վիսին ու ներում Ռամինին: Մի առ ժամանակ Մերվում մնալուց հետո նա պատրաստվում է Քարու մեկնելու: Չվստահելով այլևս ոչ ոքի, նա այս անգամ ամրոցի բանալին հանձնում է միջնորդ դալակին, հրամայելով նրան ոչ մի դեպքում ներս չթողնել Ռամինին: Դալակը, իրոք, հավատարմութեամբ է կատարում իր պաշտոնը և, երբ Ռամինը շրջում էր Մորեղի պարտեզներում ու մուտք փնտրում՝ Վիսի մոտ գնալու, իսկ Վիսը թախանձագին խնդրում էր ներս թողնել նրան, դալակն անզիջող ու անդրդվելի է մնում մինչև վերջը: Հուսահատ-

ված Վիսն ստիպված է լինում ինքը՝ չուր բողի օգնութեամբ, ցած իջնել ու գտնել պարտեզում՝ երկար թափառումներից հետո քնած Ռամինին: Բայց խանդից մուկեղնած Մորեղը շուտով վերադառնում է. որոնելով ու շփոնելով Ռամինին պարտեզում, նա վճռում է սպանել Վիսին, որ և միայն Զարդի միջամտութեամբ ու հովանավորութեամբ է փրկութիւն գտնում ամուսնու շարադուշակ ցատումից: Գարձալ ամեն ինչ հաշտութեամբ է վերջանում: Այդ հաշտութիւնն էլ, սակայն, երկար չի շարունակվում:

Ամառային մի գեղեցիկ երեկո Մորեղը մեծ խնջույք էր սարքել. որին ներկա էին, ի միջի այլոց, նաև Շահրուն ու Վիրուն: Խրախճանքի ժամանակ արքայական գուսանը երգում է մի երգ, որի մեջ այլարանորեն նկարագրում է Վիսի ու Ռամինի սիրային արկածները. շնայած այլաբանութեանը, այնուամենայնիւ, երգը բավականաչափ պարզ կերպով ցույց էր տալիս երկու սիրահարների արարքներն ու Մորեղի աննախանձելի վիճակը: Երգը ցնցող ազդեցութիւն է ունենում Մորեղի վրա, և նա պահանջում է Ռամինից ու Վիսից վերջնականապես հրաժարվել միմյանցից: Ընդհարումն այնպիսի սրութեան է հասնում, որ Ռամինի՝ Մերվում մնալն անկարելի է դառնում: Յուր բարեկամ, խրատամիտ Քիզդուի խորհրդով նա որոշում է բռնորդին հեռանալ Մերվից և թուլտվութիւն է խնդրում Մորեղից այդ բանի համար: Մորեղը նրան նշանակում է Ռալ, Գորգան ու Քուհատան մարզերի կուսակալ և որոշ պաշտոնական հանձնարարութիւններ տալով, արձակում նրան: Վիսն էլ իր հերթին խոստանում է ամուսնուն՝ մոռանալ Ռամինին:

Ժամանակով իր նշանակված վայրը՝ Ռամինն արդարութեամբ ու հմտութեամբ սկսում է կառվարել իրեն հանձնված մարզերը և լիակատար կարգ ու կանոն է հաստատում այնտեղ. բայց ո՛չ պետական գործերով զբաղվելը, ո՛չ էլ որսորդութիւնը, խրախճանքներն ու խաղերը չեն կարողանում հանել նրա սրտից Վիսի սերը, մինչև որ, վերջապես, դիպվածը միայն մոռացման է մատնում լքված սիրուհուն: Երջազայնով իր կառավարմանը հանձնված մարզերում, Ռամինը կանգ է առնում Գուրաբեում, և այստեղ, ա՛հա, իշխանների հետ որսորդութեան դուրս գալով, ճանապարհին հանդիպում է շքանդազեղ Գուլին: Աղջկա արտակարգ գեղեցկութիւնն այնպես է հրապուրում Ռամինին, որ նա՝ միանգամից մոռանալով Վիսին՝ անմիջապես խնդրում է Գուլի ձեռքը: Գուլը, որ լավ գիտեր Վիսի ու Ռամինի սիրո պատմութիւնը, սկզբից չի հավատում երիտասարդ արքայազնին. բայց, վերջ ի վերջո, ոչ շատ տատանումներից հետո տեղի է տալիս և համաձայնում, խոստում անելով







րի տաճարը՝ աղոթքների ու հայեցումների մեջ անց է կացնում իր արկածալից կյանքի վերջին օրերը:

Ինչպես տեսնում ենք, վիպերգի բովանդակությունը բավականին հետաքրքրական է ու հուզիչ. ի տարբերություն մինչև այդ եղած դյուցազններգական ժանրին, այս վիպերգին նյութ են մատակարարում ոչ թե Իրանի դյուցազունների մարտական սխրագործությունները, այլ նույն դյուցազունների կենցաղը, ընտանեկան կյանքըն ու սիրային արկածները: Սրանով էլ, ահա, պարսկական գրականություն մեջ դյուցազններգական ժանրի կողքին հիմնադրվում է կենցաղային ուսմանտիկ ժանրը, որ, մեր կարծիքով, հեղինակի մեծածագույն վաստակը կարելի է համարել: Սակայն, հիմնադրելով վիպերգի նոր ժանր, հեղինակը պետք է լուծեր դրա հետ կապված մի քանի հարցեր, որոնք լուրջ նշանակություն ունենին այդ կարգի Լպտսի մշակման գործում: Այդ խնդիրներից առաջին հերթին պետք է նշել վիպերգի բանաստեղծական շափր: Ինչպես հայտնի է, Ֆիրդուսու «Շահ-նամեն» գրված է մորաբարեր կոչված շափով, որը և հենց նույն «Շահ-նամենի» ազդեցությամբ էլ դարձավ հետագայի դյուցազններգությունների ընտիր շափը. մշակելով կենցաղային-սիրային վեպը, Գորգանին անշուշտ շէր կարող դրել այդ՝ իր վեպի համար ոչ սաղական, շափով: Եվ նա, լիովին գիտակցելով այդ, իր վիպերգի համար ընտրում է մի այլ, իհարկե, դարձյալ արարական, այսպես կոչված հեզել եռոտնյա-տանմեկվանեկանի շափը (յուրաքանչյուր ոտքը համապատասխանում է մեկ մեֆախուն-ի):

Այդ շափը, հակադրվելով դյուցազններգությունների մորաբարերին, այդպես էլ տարածվեց իրրև սիրային վիպերգի շափ ու մինչև այսօր էլ գործածական է, թեև, իհարկե, ոչ միակը:

Երկրորդ, և իր ժամանակի համար կարևոր նշանակություն ունեցող, խնդիրն էր վիպերգի կրոնական ոգին: Պահպանական բնագիրը, բնականաբար, գրված էր դրազաշտական ոգով. մինչդեռ Գորգանիի օրոք, տանմեկերորդ դարում, մահմեդական ղոզմատիզմի թագավորության դարաշրջանում, ինչ խոսք, որ հեղինակը շէր կարող առանց երկյուղի ձեռնակել ոչ մահմեդական մի թեմայի մշակմանը, մանավանդ որ նրա աչքի առջև էր հազիվ մի տառնահինգամյակ առաջ ապրած Ֆիրդուսու կրած հալածանքները: Այդ պատճառով էլ, ահա, այսպես թե այնպես, յուր ստեղծագործությունը պետք է որոշ շափով հաշտեցնեի մահմեդականության հետ: Այդ բանը նա կատարեց նախ վիպերգի՝ մահմեդական ոգով գրված նա-

խերգանքով, ապա հենց վիպերգի մեջ երբեմն մահմեդական հայտնի անունների հիշատակությամբ:

Այս խնդիրները, ինչպես տեսնում ենք, հեղինակը կարողացել է համեմատաբար հեշտությամբ ու հաջողությամբ լուծել. այժմ մեզ հետաքրքրում է այն հարցը, թե ինչպե՞ս է նա մշակել վիպերգը, ինչպե՞ս է կերտել իր գեղարվեստական կերպարները և որքանով կարողացել է հորազատ մնալ պահպանական վեպի ոգուն և կամ որչափով կարողացել է այն համապատասխանեցնել յուր դարաշրջանին: Այդ բանի համար, նախապես հիշենք, որ պահպանվերեն բնագիրը մինչև այսօր էլ գտնված չէ. ուստի և առայժմ հնարավոր չէ համեմատություններ կատարել ու դրանով ցույց տալ վիպերգի հարազատության աստիճանն՝ իր սկզբնաղբյուրին: Միակ որը է հնի, բուն իրանական-ասասնյան մշակույթի ու կրոնի արատահայտությունը՝ և որը՝ մահմեդականի, իսկ այդ մեղ հնարավորություն կտա իմանալ, թե ինչն է պահել հեղինակին իր վիպերգի մեջ բնագրից (և ոչ այն, ինչ որ չի պահել)՝ մի կողմից, և թե որ շափով նա վիպերգը հարմարեցրել է յուր ժամանակաշրջանին՝ մյուս կողմից:

\* \* \*

Առաջինը և, մեր կարծիքով, ամենակարևորը, որ հեղինակը հարազատորեն պահպանել է իր վիպերգում, իրանական կենցաղը, այն էլ հիմնականում՝ Սասանյան դարաշրջանի ֆեոդալական կենցաղն է: Ինչպես «Շահ-նամեում», այնպես էլ «Վիս ու Ռամինում» հերոսները հին Իրանի իշխողներն են, իսկ նրանց միջավայրը՝ հին իրանական պալատական միջավայրը: Սակայն Ֆիրդուսու մոտ այդ միջավայրը տրված է դարավոր պատերազմների ընթացքում իրանական դյուցազունների խաղացած դերի և նրանց սխրագործական հերոսների նկարագրությամբ: «Շահ-նամեում» իրանական հերոսների անձնական-ընտանեկան կյանքին շատ քիչ տեղ է հատկացված, իսկ այդ քիչն էլ լուսաբանված է այնքանով, որքանով նա կապվում է Իրանի և Թուրանի հարատև պատերազմների հետ՝ ուղղակի կամ անուղղակի կերպով: Այսպես, օրինակ՝ Զալի ու Ռուզաբեի սիրո պատմությունը կապվում է դյուցազնավեպի հիմնական նյութի հետ և նկարագրված է այն շափով, որ շափով նա առիթ է դառնում թշնամական Քարույի և Իրանի հաշտության՝ մի կողմից, և հող է պատրաստում Ռոստամ Զալի ողբերգական վախճանի համար՝ մյուս կողմից: Սիավուշի հուզիչ պատմությունը, որ ամբողջ



դյուցազնավիպի ամենալավ ու հուզական հատվածներից մեկն է, նրանով է կապվում ստեղծագործության հիմնական բովանդակության հետ և այն շարժում է մեզ բերված, որքանով նա բորբոքում է իրանի և Քուրանի հնամենի թշնամությունը՝ վրեժի կոչելով իրանցիներին և նոր հունի մեջ զնելով իրանի ու Քուրանի պատերազմը: Այդ պատճառով էլ, ահա, «Շահ-նամեի» հերոսներին կարելի է տեսնել ու ճանաչել ուղղամարտում. նրանք անվերջ դրազված են պատերազմով: Միայն հաղթական վերադարձից հետո նրանք տոնախորթությամբ նշանավորում են իրենց հաղթանակը: Մի պատերազմից միեւն մյուսը ձգվող ժամանակամիջոցում այլևս մենք նրանց զրկված չենք հանդիպում:

Իրան հակառակ, Գորգանիի մոտ հիմնականը, վիպերգի էությունը հենց իրանյան իշխանների անձնական կյանքն է, նրանց բնականական ինտրիգները, վարքաբարքը, կենցաղը: «Վիս ու Ռամինում» ոչ թե հաղթանակի տոնախմբություններն են ընդհատում հարատև պատերազմը, այլ պատերազմը՝ վիպերգի հերոսների ամենօրյա խրախճանքները, որսորդությունն ու խաղերը: Գնա ավելին. այստեղ պատերազմը բուրբուլիս էլ այն նշանակությունը շունի, նա մի անցողիկ, թերևս պատահական երևույթ է, որ մի պահ խախտում է հերոսների անդորրը և վերջնապես պես մոռացվում է խրախճանքներում, լուծվում զինու հարբեցնող բույրի մեջ: Ոչ միայն պատերազմները, այլև նրանց հետևանքներն էլ Գորգանիի մոտ աչքից անտեսելի չեն. ճակատամարտը, սպանություններն այստեղ հետագա թշնամության ու վրեժխնդրության առիթ չեն դառնում: Այսպես, օրինակ, Վիրոյի հայրը՝ Կարանն սպանվում է այն հարձակման ժամանակ, որին ձեռնարկել էր Մորեղը՝ Վիսին տիրանալու համար: Հենց նույն կովում Վիրոն իր հոր վրեժը լուծելու է կոչում գորբին և կատաղի հարձակմամբ փախուստի է մատնում Մորեղին: Բայց Մորեղն, այնուամենայնիվ, Վիսին տիրանում է, ու դրանով էլ վերջանում է պատերազմը: Այնուհետև Վիրոն արդեն Մորեղի բարեկամն է, նրա ընկերակիցը՝ խնջույքների ու որսորդությունների մեջ և, նույնիսկ, կողմնակիցը՝ Վիսի ու Ռամինի ապօրինի հարաբերություններին վերջ տալու գործում:

Սթե պատերազմներին այս վիպերգում ընչին տեղ է տված, սպա, գրա փոխարեն, հերոսների առօրյա կյանքին նվիրված են վիպերգի ընդարձակ և, ըստ իս, ամենաարժեքավոր հատվածները: Ահա, նրանք, իրանյան ասպետները, որսորդության մեջ. ամիսներ են անց կացնում որսաշատ վայրերում՝ զբաղվելով երբեմն որսորդությամբ, երբեմն՝ իրենց առատ որսով սարքած խրախճանքներով,

նրբեմն՝ խաղերով ու զինավարժությամբ: Ահա և Ռամինը, որ մերթ Վիսի գրկում սիրո գգվանքների երանությունն է վայելում, «մերթ՝ որսկան հովազներով վայրի ցուլեր ու եղնիկներ որսում, մերթ՝ շահեններով սալամբներ ու կաբալներ բռնում» և մերթ՝ վերջապես՝ անցկացնում իր ժամանակը զինարթությամբ, տավիղ նվագելով և ղեղելով իր զգացումներն ու հույզերը յուր հորինած երգերով: Չի կարելի ասել, իհարկե, թե պարսից դյուցազնուների այսօրինակ կենցաղը «Շահ-նամեում» բոլորովին անտեսված է. ոչ, այնտեղ էլ դյուցազնուները խրախճանքներում վայելում են կյանքի բարիքներն ու որսորդությամբ զվարճանում. բայց, ինչպես ասացինք, այնտեղ այդ խնջույքները հաղթանակի տոնախմբություններ են հանդիսանում և կամ՝ պատերազմների նախաբանը, մինչդեռ «Վիս ու Ռամինում» կյանքի հաճույքների վայելումը հերոսների առօրյա գործն է, նրանց կյանքի էությունը: Այս տեսակետից էլ, ահա, «Վիս ու Ռամինը» «Շահ-նամեի» լրացումն է կաղմում, իսկ երկուսը միասին՝ «Շահ-նամեն» և «Վիս ու Ռամինը» հանդիսանում են հին իրանի ֆեոդալական կյանքի ամբողջական պատկերը, նրա հանրագիտարանը, ըստ որում, նրանցից առաջինը մեզ ծանոթացնում է «հին ժամանակների պարսկական կյանքի բացառապես աբստրակտ կողմի հետ» (Շտակելբերգ), իրանյան պետության արտաքին հարաբերություններին, այդ հարաբերությունների ընթացքում իրանյան հերոսների կատարած բաշտություններին ու հերոսների մտրական-դյուցազնական հատկություններին, իսկ երկրորդը՝ պարսկական կյանքի ներքին կողմին, հերոսների կենցաղին և այդ կենցաղը բնորոշող նրանց հատկություններին ու արկածներին:

\* \* \*

«Վիս ու Ռամինի» յուրահատուկ արժանիքներից մեկն է նաև կանացի կերպարների պատկերումը: «Շահ-նամեում» կանայք կամ բուրբուլիս հանգես չեն զալիս և կամ, եթե հանդես են գալիս, համենայն զեպս, դարձյալ սղամարդկանց համեմատությամբ նրանց հոգեբանության, բնավորության ու զգացումների վերլուծությունը շարժական աղոտ է արվում: Մինչդեռ «Վիս ու Ռամինի» լավագույն արժանիքներից մեկը հենց կանացի հոգեբանության վերլուծությունն ու կանացի սրտի քնքույշ ղեղումներին նվիրված ուշադրությունն է: Կնոջ ներաշխարհին նվիրված հատվածներն այս վիպերգի ամենագեղեցիկ ու հուզիչ դրվագներն են: Վիսի տանջանքը, նրա խոր վիշտը յուր հարազատ Վիրոյից բաժանվելու և ձերուհի Մորեղի կինը դառնալու առթիվ, ապա՝ Ռամինի սիրո մատին իմանալը,



Նրան տեսնելուց և սիրելուց հետո՝ ինքն իր նոր զգացումների դեմ մաքատելը և, վերջապես, Ռամինին անձնատուր լինելն ու այնուհետև ամեն խոչընդոտ արհամարհելով՝ մոլեզնորեն իր բուռն զգացումների բավարարմանը ձգտելը, մեր առջև բաց են անում կանացի հոգու ծալքերը: Վիսը, չնայած իր սիրո, ըստ էության, հանցավոր լինելուն, այնուամենայնիվ մեզ ներկայանում է իբրև մի մաքուր, տենչալի էակ. նրա անսահման, աներեր սերը, նրա նվիրվածությունն իր սիրած երիտասարդին ու մինչև վերջ էլ նրան հավատարիմ մնալը, ըստ ամենայնի, համակրանք են հարուցում ընթերցողի մեջ: Դժբախտաբար այդ զգացումներին բավարարություն տալու, յուր փափագը հազեցնելու համար նրա գործադրած միջոցները նույնքան համակրելի և ազնիվ չեն, որքան իր սերը: Այն սուտ խոստումները, որոնցով նա շարունակ խաբում է Մորեդին, այն կեղծ երգումները, որոնցով նա ժխտում է իր և Ռամինի միջև եղած հարաբերությունները, այսպես թե այնպես, նսեմացնում են նրա կերպարի վեհությունը: Այդ դեռ բավական չէ. նա խոստովանում է Մորեդին յուր սերը, հայտնում, որ իր սիրալը միայն Ռամինին է պատկանում, բայց հետո, հենց իր և Ռամինի հարաբերությունների բուռն շրջանում խոստանում է խզել բոլոր կապերը սիրած երիտասարդի հետ, մի բան, որ, բնականաբար, չի կատարում: Այս խաբերայությունները, որոնք միամիտ Մորեդին շատ անգամ են համոզում ու մեղմացնում, Վիսի ազնիվ զգացումների, նրա անբիծ կույրան վրա սուվեր են ձգում: Բայց այս, մեր կարծիքով, ոչ միայն բացասաբար չի անդրադառնում երկի արժանիքների վրա, այլև, ընդհակառակն, ցույց է տալիս հեղինակի որոշ շփով սեպիտական մոտեցումը կանացի հոգեբանության: Վիսը հեղինակի սիրած հերոսն է, այդ ճիշտ է. բայց նա, սիրելով իր հերոսուհուն, չի իդեալականացրել նրան, չի դարձրել երկնային մի էակ, ամեն արատներից ու թերություններից զուրկ մի հրեշտակ: Որքան էլ նա գովաբանում է իր հերոսուհուն, որքան էլ համակրանքով է նկարագրում նրան, այնուամենայնիվ ներկայացնում է նրան իբրև հոգեզեն, աշխարհիկ կին, որ իր առավելությունների հետ միասին ունի նաև թերություններ: Այս, կրկնում ենք, խոսում է հոգուտ հեղինակի: Վիսի զգացումների ազնվության ու հավատարմության մասին խոսելիս չպետք է մոռանալ, իհարկե, նաև իր եղբայր ու փեսացու Վիրոյի նկատմամբ ունեցած սերը: Նա սիրում էր Վիրոյին և՛ իբրև եղբոր, և՛ իբրև ամուսնու: Նա, թեև դեռ ամուսնական առաջատար չմտած, իրեն Վերոյին էր համարում և նրա հետ էլ կապում էր իր ողջ զգացումներն ու հույսերը, բայց, հակառակ դրան, կարճ ժամանակ

նրանից անշատված լինելով, նա սիրում է ուրիշին՝ դավաճանելով, միաժամանակ թե՛ ամուսնուն՝ Մորեդին և թե՛ առաջին սիրածին՝ Վիրոյին: Մորեդին դավաճանելը բացատրվում է նրանով, որ ինքը չի սիրում նրան, որ նա բռնություն է տիրել իրեն և հենց դրանով էլ ավելի բորբոքել առանց այդ էլ նրա նկատմամբ ունեցած հակակրանքը: Ինչ վերաբերում է Վիրոյին մոտացություն մատնելուն, ապա այստեղ պետք է նկատի ունենալ երկու հանգամանք. նախ այն, որ իր եղբոր հետ դեռ ամուսնական առաջատար չմտած Վիսն իր փեսացուին առավելապես քույրական սիրով էր սիրում, իսկ այդ բոլորովին էլ չէր խանգարում նրան սիրել Ռամինին, մանավանդ որ օտարության մեջ լինելով, նա ծայրահեղորեն կարիք էր դրում մի հարազատ ու սիրող սրտի. Վիրոն, այնուամենայնիվ, մշտապես սիրելի է մնում նրան իբրև եղբայր: Երկրորդը, մեր կարծիքով, հեղինակի վերաբերմունքն է քույր ու եղբոր ամուսնական կապերի նկատմամբ. ինչպես կտեսնենք, դա համարվում է զրադաշտականների մոտ ընդունված երևույթ, բայց Գորգանին, տասնմեկերորդ դարի հեղինակը, Քոլորդ-բեկի պալատական պաշտոնյան, որքան էլ անկողմնակալ կերպով կամենար վերամշակել վեպը, չէր կարող, բնականաբար, անտարբեր կերպով նայել այդ փաստին, և, մեր կարծիքով, հենց այդ է պատճառը, որ նա այդպես հեշտությունը հանում է Վիսի սրտից իր եղբայր-ամուսնու սերը: Այդ, վերջին հաշվով, մահմեդական զաղափարաբանության արտահայտություն է:

Կանացի հերոսների մեջ, սակայն, ամենից ավելի հաջողվածը դայակի կերպարն է: Գորգանիի վիպերգի դայակ-կավատը իրավամբ կարող է համարվել պարսից հարեմների հարազատ, բոլոր ժամանակների և բոլոր սիրային արկածների մասնակից միջնորդ կնոջ դասական տիպարը: Գորգանին վարպետորեն է կերտել նրա կերպարը և կարողացել է թափանցել նրա հոգու խորքերը, մի բան, որ դժբախտաբար չենք կարող ասել վիպերգի բոլոր հերոսների մասին: Դայակը խուժարտանցի ճարպիկ, խորամանկ ու ամեն խորդախությունների ընդունակ մի կին է. նա ծանոթ է նաև հմայության արվեստին: Լինելով աշխարհիկ կին, նա միանգամայն գործնական կերպով է դիտում երևույթները և յուրովի գնահատում նրանք ըստ էության: Վիսի համար ծանր է բաժանված լինել իր հարազատներից, հետո՛ իր հայրենիքից, մինչդեռ դայակի համար բոլորովին էլ այդպես չէ. նա միանգամայն գործնականորեն է գնահատում այդ և բացատրում Վիսին, որ, չնայած հարազատներից զրկվելուն, Մորեդի կինը լինելը նրա առջև շափազանց մեծ հնարավորություններ



է բացում՝ կյանքը երջանիկ կերպով անցկացնելու համար: Ի՞նչ փուլից, որ նա ծեր է, և Վիսը նրան չի սիրում: Կարելի է օգտվել նրա անսպառ հարստությունից, վայելել նրա անսահման բարեքնեքը և հաճոյանալ որևէ երիտասարդի հետ, ինչպես անում են մյուս կանայք: Եվ հենց այդ բանի համար էլ հմուտ խարդախուհին գործադրում է յուր բոլոր ջանքերն ու միջոցները, մինչև որ, վերջապես, հաջողվում է Վիսի ու Ռամինի միջև սիրային կապեր հաստատել: Նրա միսիան արգեն հասել է իր նպատակին, և այնուհետև նա ամեն կերպ օժանդակում է այդ կապերի ամրապնդմանն ու հարատև լինելուն: Նրա հանդուրժումն այն աստիճանին է հասնում, որ նա համարձակվում է փոխարինել Վիսին ամուսնական մահճում, իր տիրուհու և Ռամինի տեսակցությունն ապահովելու համար: Այս բոլորը հիանալի կերպով են նկարագրված՝ վիպերգում և լիովին պատկերում են մեր առջև պարսկական հարեմի բոլոր գործարքների միջնորդի՝ այդ հավիտենական կնոջ էությունը: Իզուր չէ, որ Վիսը, իր և Ռամինի փախուստի մասին հայանելով դայակին, նրա խորհուրդն ու օժանդակությունը խնդրելով, ասում է. «Գու գիտես ամեն խորամանկություն, դու կախարհուհի ես, ասա՛, փախուստի ի՞նչ հնարավորություն կա»: Իրոք, դայակն ամեն կարգի խորամանկություններ գիտի և ամեն ինչի ընդունակ է: Բավական է նրան վստահել մի գործ, բավական է, որ նա ստանձնի որևէ հանձնարարություն, և նա ամեն միջոց կգործադրի այդ կատարելու համար: Նրա մոտ ոչինչ է գործի էությունը, դրա վատ կամ լավ լինելը. նրան բավական է հենց այն, որ իրեն դործ են հանձնարարում և վարձատրում դրա համար: Եվ բոլորովին էլ չի սխալվում Մորեղը, երբ, հեռանալով Մերվից, ամբողջի և Վիսի հսկողությունը այդ նույն դայակին է հանձնարարում: Մինչև այդ Վիսի ու Ռամինի տեսակցությունները հաջողեցնելու համար ամեն միջոցի դիմող կինը այժմ նրանց տեսակցության միակ արգելուղն է, և, քնորոշ է, որ նա իր այդ ժամանակավոր պաշտոնն էլ սրբությունը է կատարում՝ մինչև վերջ անողոք ու անդրովելի մնալով Վիսի թախանձանքների հանդեպ: Բայց, ահա, վերադառնում է Մորեղը. դայակն իր պարտականությունը կատարել է ճշտորեն և այժմ արդեն ազատ է. ուստի և՛ կրկին Վիսի ու Ռամինի կավատն է, նրանց օգնողը և խորհրդատուն:

\* \* \*

Ինչ վերաբերում է տղամարդկանց, ապա նրանց կերպարների հաջողված լինելու մասին էլ, ցավոք սրտի, նույնը շենք կարող ա-

սել: Ամենից առաջ, մենք աչքի առաջ ունենք երկու ղխավոր հերոսներին՝ Մորեղին ու Ռամինին: Առաջինը, թվում է, թե պետք է արժանանա ընթերցողի անվերապահ կարեկցությանն ու հարգանքին. բայց բոլորովին էլ այդպես չէ. Մորեղի հարսնախոսությունը Վիսի մոր՝ Շարուի հետ, դու շնված աղջկա մասին տաճությունը է ընդունվում ոչ միայն երկնային մուրաբաների կողմից, այլև ընթերցողի և հենց իր իսկ՝ հեղինակի կողմից: Հեղինակն ինքն էլ շնայած Մորեղի նկատմամբ ունեցած համակրանքին, անտարբեր աչքով չի նայում այդ երևույթին: Այդ ենք եզրակացնում մենք, գոնե, այն տողերից, որոնց մեջ հայտնում է, թե այդ նշանադրություններ երկնային մուրաբաների զայրույթը հարուցեց հզոր Մորեղի դեմ: Եվ, ահա, հենց այդ զայրույթն էլ պատճառեց աշխարհակալ արքային հետազայի բոլոր դժբախտությունները: Նույնիսկ այն դեպքում, երբ Մորեղն արդեն իրավամբ պահանջում է իր օրինական հարսերը Մորեղն արդեն իրավամբ պահանջում է Մորեղից իր երդման կատարումը, նացուին, երբ նա պահանջում է Մորեղից իր երդման կատարումը, դարձյալ մեր համակրանքը նրա կողմը չէ, եթե նկատի ենք ունենում նրա ծեր հասակը և մտածում, թե դեռահաս օրիորդը պետք է ամուսնանա «չոր ծառի» հետ, ինչպես արտահայտվում է հենց ինքը՝ Վիսը: Մակայն Մորեղի նկատմամբ համակրանք չի զարթնում մեր մեջ նաև հետագայում, երբ նա այնքան համբերատար կերպով լուծում է եղբոր ու կնոջ անիրավությունների հանդեպ: Նրա թույլ բնավորությունը, իր դիրքին ոչ պատշաճ ներողամտությունը, դուրախավատությունն ու թուլակամությունը մեր մեջ ավելի կարեկցություն, խղճահարություն, իսկ երբեմն էլ ուղղակի արհամարհանք են առաջացնում, քան թե համակրանք: Ժիշտ է, այդ բանում պետք է աչքի առջև ունենալ իր եղբոր՝ Ռամինի, և կնոջ՝ Վիսի, նկատմամբ ունեցած անսահման սերը՝ մի կողմից, և մոր ու Զարդի միջամտությունը՝ մյուս կողմից, դրանք, անշուշտ, որոշ դեր խաղում են նրա ցատումը մեղմացնելու և վրեժխնդրության վճռական քայլից հետ պահելու համար: Բայց, ինչ էլ որ լինի, դարձյալ արդարացված չենք կարող համարել հզոր աշխարհակալի ծայրահեղ ներողամտությունը, անվճռականությունն ու թուլակամությունը:

Մորեղից ավելի հաջողված պետք է համարել Ռամինի կերպարը: Ժիշտ է, նրա նկատմամբ ունեցած մեր համակրանքն էլ որոշ շափով սուժում է այն պատճառով, որ նա սիրո մուրցքի մեջ ոտնատակ է տալիս ամեն սրբություն (հարազատ եղբոր պատիվը) և խտրություն չի դնում միջոցների մեջ՝ իր նպատակին հասնելու համար, դիմելով, նույնիսկ, ամեն կարգի կեղծիքների և, անգամ, եղբայրասպանության: Բայց այդ մեր առջև արդարացումն է



պանում, երբ նկատի ենք առնում Ռամինի բնավորության ու հոգեբանության առանձնահատկությունները: Նա իրանյան երիտասարդ արքայազնի տիպարն է, որ մարմնացնում է իր մեջ անհոգությունը, իրախճասիրությունն ու կենսասիրությունը. նա յուր ամբողջ էությունը անձնատուր է եղել կյանքի վայելքներին՝ կեր ու խումի, խաղերի, որսորդության ու սիրային արկածների. հենց այդպես էլ բնորոշում է նա իրեն.

Մերք հովազով որսում եմ ես վայրի ցուլեր, եղնիկներ,  
Եվ մերք բռնում իմ շանենով սալամբներ ու կախվեներ:  
Հալածելով՝ եղնիկներին լեռներից ցած եմ բերում  
Եվ արձակում հովազներին՝ նրանց վրա դաշտերում:  
Կամ փորձում եմ ես իրար հետ փասիանին ու շանեհին,  
Կամ արձակում եմ շներին ցուլերի դեմ վայրենի:

Կյանքի հաճույքներին անձնատուր եղած երիտասարդ արքայազնը, որի համար «գանձարանում բացի փանդիոթից, երգերից, քնարից ու տավիղից» ոչինչ չկա, բնականաբար ավելի պետք է գերազասեր յուր ձգտումներն ու ցանկությունները, քան որևէ արենակցական կամ քարեկամական զգացմունք. և այդպես էլ է՝ իսկ այդ, մեր կարծիքով, ավելի համոզիչ է դարձնում նրա կերպարը, քան եթե, այդպիսի հոգեբանություն ունենալով, նա հակառակ կերպով վարվեր: Վերջապես, այդ ավելի լավ ապացուցվում է առաջին իսկ գեղեցկուհու հետ կապվելու և Վիսին մոռանալու փաստով: Գոլին տեսնելուն պես նրան սիրելն ու Վիսից հրաժարվելը Ռամինի անհաստատ բնավորության, հարափոփոխ զգացումների, իր արարքները լըրջմըտությունը չկշռադատելու, կյանքին, առհասարակ, թեթև մոտեցում ունենալու լավագույն արտահայտությունն է: Նրա բնավորության հատկանշական կողմն է անհաստատությունը, փոփոխամըտությունը, բայց հենց դրանով էլ նա դառնում է ավելի իրական, իսկապես աշխարհիկ, կյանքի վայելքներից առառավելն օգտվող արքայազն. «Գորգանիի չիղեալականացված և կատարելապես երկրային հերոսներն իրենց սիրային տվայտանքների մեջ ոչ միայն ընդունակ չեն տարիներով տառապել՝ հեռու իրենց սիրածից... այլ... և, ինչպես Ռամինը, չեն կարող անցկացնել սիրածից հեռու նույնիսկ մի կարճ ժամանակ՝ չղավաճանելով ու շտոռանալով նրան՝ հանուն կյանքի ուղիում առաջին հանգիպած գեղեցկուհու<sup>1</sup>: Այս

անհաստատությունն, ինչ խոսք, որ մեր առջև զրկում է երիտասարդ սիրահարին իր վեհությունից. ընթերցողը կկամենար հանձնին Ռամինի տեսնել մի հաստատամիտ, անզավաճան կերպով սիրող, հանուն իր սիրո ամեն տանջանք ու տառապանք կրող մի ասպետի, բայց այդ շատ ավելի իրեալականացրած մի հերոս կլիներ, քան այն, համեմատաբար, ավելի իրական արքայազնը, որ ներկայացված է վիպերգում՝ իր թերություններով ու խոտելի կողմերով հանդերձ:

Մյուս հերոսներից կարելի է նշել Վիրոյին՝ Վիսի եղբորն ու փեսացուին. իհարկե, Վիրոն Մոքեդի ու Ռամինի նման կարևոր դեմքերից չէ. բայց մենք նրա մասին հատկապես ուզում ենք խոսել հետևյալ առիթով. վիպերգի սկզբի մասերից դատելով՝ Վիրոն պետք է որ, ըստ մեր համոզման, թշնամի դառնար Մոքեդին երկու պատճառով. նախ՝ նա Մոքեդից վրեժ պետք է լուծեր իր հոր՝ Կարանի ապանության, և ապա՝ հարսնացուին իրենից խլելու համար: Մենք կսպասեինք, որ սկսված պատերազմը ոչ թե այդպես շուտ, լիակատար հաշտությամբ վերջանար, այլ շարունակվեր նոր կատաղություններ: Բայց հակառակ մեր սպասածի, Վիրոն ոչ միայն դադարեցնում է պատերազմն ու հաշտվում Մոքեդի հետ, այլև՝ իմանալով Ռամինի ու Վիսի սիրային կապերի մասին, իր քրոջը հորդորում է հրաժարվել Ռամինից ու դառնալ յուր օրինական ամուսնու Մոքեդի գիրկը: Մեզ թվում է, թե այս պետք է բացատրել մի քանի հանգամանքներով: Նախ՝ ինչպես ասացինք, Վիրոյի և Վիսի սերն ավելի շուտ բույր ու եղբոր, քան թե ամուսնական սեր էր. երկրորդ՝ հեղինակի ոչ բարյացակամ վերաբերմունքն է բույր ու եղբոր ամուսնության նկատմամբ: Եվ, վերջապես, երրորդ, և ըստ իս ավելի կարևորը՝ հեղինակի ժխտական վերաբերմունքն է պատերազմի նկատմամբ, նրա մարդասիրությունը, նրա խաղաղասիրությունը: Այս բանի համար պետք է նկատի ունենալ, որ տասնմեկերորդ դարի հեղինակն արդեն իսկ շատ էր տեսել պատերազմներ՝ իրենց ավերիչ հետևանքներով հանդերձ. հաստատապես կարելի է ասել, որ նա հոգնել էր արդեն երկարամյա պատերազմական անախորժություններից և ձգտում էր խաղաղ կյանքի, մի բան, որ այս ժամանակի իրանական հասարակության ցանկությունն էլ էր. թերևս հենց այդ էլ մեկն է եղել առիթներից, որ նա ընտրել է կենցաղային վեպի և ոչ դրուցազնական մի պատմության մշակումը: Իսկ եթե այդ այդպես է, ապա զարմանալի չէ և այն, որ նա հեշտությամբ մի կողմ է թողնում վրիժառությունն ու թշնամանքը և Մոքեդին ու Վիրոյին նստեցնում մի սեղանի շուրջ՝ խնջույքների մեջ:

<sup>1</sup> И. Орбели, Предисловие к „Висрахиани“, М.—Л., 1938, стр. 1V.



Եթե Ֆիրզուսու մոտ մի անձի (օրինակ՝ Միավուշի) սպանութիւնը արշունհանդ ու երկարատե պատերազմների առիթ է դառնում, այդ պատերազմները նոր հունի մեջ դնելով, եթե «Շահ-նամեի» հեղինակը մինչև վերջն էլ անհաշտ թշնամութեան մեջ է պահում իրանցիներին ու թուրանցիներին, ապա դրա համար ամենից առաջ պետք է նկատի ունենալ նրա միանգամայն հստակ ու հետևողականորեն արտահայտված զաղափարախոսութիւնը: Ֆիրզուսին իր «Շահ-նամեով» ուզում էր համախմբել պարսկական ֆեոդալներին, արծարծել նրանց մեջ ազգային անկախութեան ոգին ու ոտքի հանել նրանց օտար տիրակալների դեմ՝ հանուն ազգային, անկախ պետութեան, հանուն Իրանի փառավոր անցյալի վերականգնման: «Շահ-նամեում» ռազմի շեփորների, փողերի ու թմբուկների խորխոր, սրուտընդոստ լեզուն է բարբառում, մինչդեռ Գորգանիի վիպերգում խաղաղ կյանքով հաճույացող, նրբակյաց արքայազնի տալիզն է քնքշորեն գեղգեղում: «Վիս ու Ռամինի» մեջ ոչ թե ռազմաշունչ ոգին, այլ հովվերգական շունչն է գերիշխում: Կյանքում անընդհատ պատերազմներից ու ավերումներից հողնած ու ձանձրացած հեղինակն, անշուշտ, իր երկում շատ էլ մեծ հաճույքով չէ, որ պետք է նկատագրեր պատերազմները, սուտի և, զարմանալի չէ, որ նա Վիրոչի մեջ չի զարգացնում ու բորբոքում վրիժառութեան զգացումը, չի կոչում նրան գնն ի ձեռին վրեժի դիմելու, թեև դրա համար նա կրկնակի առիթ ուներ, այլ հաշտեցնում է թշնամու հետ:

Վիպերգի հերոսներից, սակայն, մեզ համար ամենից ավելի համակրելին է Մորեզի եղբայրը՝ Չարդը. նա վիպերգի մեջ գրեթե երկրորդական տեղ է բռնում և առանձնապես չի զբաղում հեղինակի ուշադրութիւնը. բայց, դրա փոխարեն, նա իր երկրորդական գերի մեջ էլ աչքի է ընկնում իր միանգամայն համակրելի հատկութիւններով: Այն նվիրվածութիւնը, որ ցուցաբերում է նա իր եղբոր նկատմամբ, այն անձնագոհ հավատարմութիւնը, անձնական խիզախութիւնը, ազնվութիւնն ու բարութիւնը, որոնք նրա բնավորութեան բարեմասնութիւններն են կազմում, ընթերցողի մեջ անվերապահ համակրանք ու սեր են առաջացնում նրա նկատմամբ: Այսպես, օրինակ, որքան բարձրանում է նա ընթերցողի աչքում, երբ անձնատուր չլինելով դավադիր Ռամինին, զոհվում է հանուն իր ավագ եղբորը. բայց, ինչպես ասացինք, վիպերգում նա իբրև հերոս՝ ետին տեղն է զբաղում և իբրև այդպիսին էլ յորպես գեղարվեստական կերպար յուր բոլոր կողմերով չի պատկերված:

Վիպերգի հերոսների հոգեբանութեանն ու բնավորութեանը ծանոթանալուց հետո, մեզ այժմ հետաքրքիր է քննել այն հարցը, թե վիպերգի վերջը, հանգույցի լուծումը որքանով է պայմանավորված հերոսների բնավորութեամբ, նրանց գործունեութեամբ ու դեպքերի բնական զարգացմամբ: Ինչ խոսք, որ Ռամինի հանկարծական վճիռը՝ Մորեզին ասպարեկից վերացնելու մասին, մեզ համար անսպասելի է. չենք ուզում ասել, իհարկե, թե այդ նրա բնավորութեան հետ անհամատեղելի է. ընդհակառակն, սիրո մոլուցքին կուրորեն անձնատուր եղած, իր տենչանքին բավարարութիւն տալու համար ոչ մի միջոցի դեմ կանգ չառնող արքայազնին թերևս այդ ևս մի անկարելի և անթույլատրելի բան չէր թվա, բայց այդ, ըստ իս, ավելի հավանական էր սպասել այն ժամանակ, երբ դեռ Մորեզն ամեն կերպ խանգարում էր նրան, և կամ այն ժամանակ, երբ գուսանի երգը լսելուց հետո զայրացած Մորեզը կատաղաբար հարձակվում է նրա վրա: Մինչդեռ այն ժամանակ, երբ Ռամինն իր սիրածի հետ փախչելուց հետո կրկին հաշտվել էր եղբոր հետ, երբ նա մի անգամ միայն հեռանալով Վիսից, զբաղվել էր Գուլով ու հետո՝ նորից վերադարձել Վիսի մոտ, այն ժամանակ վերջապես, երբ կատարելապես հաշտվել էր Մորեզի հետ ճակատագրական խնջույքից հետո, այդպիսի մի վճռական միջոցի դիմելը նրա կողմից՝ անհավանական է թվում: Սակայն ավելի անսպասելին Մորեզի մահն է. ամեն ինչ լուծվում է ու վերջանում վտարղի մի հարվածով, և բարոյակն անմեղ եղբոր՝ Չարդի արշունք թափող փառք ու պատվով գահ է բարձրանում: Ինքնին հասկանալի է, որ այսպիսի վախճանը, վիպերգի հանգույցի լուծումը մի դիպվածով՝ չի համապատասխանում դեպքերի զարգացմանը: Ցավոք սրտի պահլավական բնագրի չլինելու պատճառով հնարավոր չէ պարզել՝ արդյոք բնագրում էլ Վիս ու Ռամինի սիրո մասին պատմութիւնը, նրանց արկածները այդպե՛ս են վերջանում, թե՞ դա հեղինակի սեփական մտահղացմամբ տրված լուծումն է. այս մասին առայժմ որևէ բան ասել դժվար է, իհարկե, բայց կարելի չէ՞ ենթադրել, արդյոք, որ այստեղ էլ հեղինակը խուսափել է ավելորդ արշունհեղութիւնից, որ երկու եղբայրների միջև տեղի ունենալիք ճակատամարտի ողբալի արդյունքը պետք է լիներ...: Այսպես թե այնպես, այդ վախճանը չի բխում վիպերգի մեջ նկարագրված դեպքերի բնականոն ընթացքից և այդ ազդում է, անշուշտ, նրա գեղարվեստական արժեքի վրա. բայց պետք է նկատի ունենալ նաև, որ նրա հեղինակը տասնմեկերորդ դարում է ստեղծագործել և, գրելով իր տեսակի մեջ







Թեև, ինչպես տեսանք, վիպերգի թե՛ բովանդակությունը, թե՛ նրա մեջ արտահայտված պաշտամունքները և թե՛ կենցաղը պատկանում են հին Իրանին, այնուամենայնիվ, Գորգանին, մշակելով այդ վեպը, չէր կարող այս կամ այն շարժվել չհարմարեցնել իր ժամանակին: Այդ երևում է առաջին հերթին վիպերգի որոշ շարժված համեզական երանգավորումից. հիշտ է, վիպերգի մեջ գերիշխում է զրադաշտական ոգին, բայց դրա հետ միասին մենք տեսնում ենք նաև մահմեդականության որոշ տարրեր: Իրրև օրինակ կարելի է հիշել նախ և առաջ վիպերգի նախերգանքը, որ հեղինակի սեփական, ինքնուրույն ստեղծագործությունն է և որ կատարելապես մահմեդական ոգով է գրված, ապա մուսուլմանական դիցաբանություն մի քանի հայտնի հերոսներին հիշելը, ինչպես, օրինակ՝ Սուլեյման (Սողոմոն), Քելթիս, Իրլիս, Իսա (Հիսուս) և այլն: Ինչ խոսք, որ սրանք պահպանված բնագրում լինել չէին կարող, և, հետևաբար, հեղինակի նորմուծումներն են:

Սակայն, իր ժամանակի ոգին և զաղափարաբանությունը հեղինակն ամենից ավելի ցայտուն կերպով արտահայտել է վիպերգի հերոսների կերպարները կերտելու մեջ: Եթե Ֆիրդուսու մոտ պարսկական անցյալի հերոսները ներկայանում են իրրև իղեալներ, եթե Ֆիրդուսին ներկայացնում է իր սիրած հերոսներին իրրև փառավոր անցյալի փառապանծ ներկայացուցիչներ, որոնց նմանվել պետք է փառապետ իր ժամանակի չորաքանչուր պարսիկ ազնվական, ապա Գորգանիի վիպերգում անցյալի այդ ներկայացուցիչները բուրբուրովին էլ իղեալականացված չեն: Այստեղ նրանք իրենց արքայական վեհափառ բարձունքներից իշնում են սովորական մարդու, հասարակ մահկանացուի աստիճանին՝ իրենց կենցաղով և բնավորության շար ու բարի հակումներով: Ֆիրդուսին զեռ հավատում էր, որ կարելի է հնի իղեալականացումով իրանյան ազնվականության մեջ այդ հինը վերականգնելու ձգտում առաջացնել և այդպիսով իսկ բոբոբել պայքարը հանուն Իրանի ազգային անկախ թագավորության, մինչդեռ Գորգանին իր ապրած անվերջ պատերազմների շրջանում, երբ իրար ետևից կործանվում էին արքայական տոհմերը և նրանց փոխարեն նորերը հայտնվում, երբ սելջուկները վերջնականապես տիրել էին ամբողջ Իրանին՝ Արևելքի մյուս երկրների հետ միասին, և զբանով իսկ հօգս ցնդեցրել Ֆիրդուսու երազը, երբ վերջապես, այդ բուրբին գուզընթաց երկրում, հատկապես քաղաքներում պատմական ասպարեզ էր ելնում առևտրական-արհեստավորական դասը, ոչ մի հիմք չունեն արդեն այդպիսի հույսեր սնուցելու իր մեջ. ասենք, նա ինքն էլ արդեն տեսնում էր, որ բախտի

այդ երջանիկ սաներն առանձնապես արժանի էլ չեն իղեալականացման և իրենց վարք ու բարքով չեն էլ տարբերվում սովորական մարդուց: Նա դիտում էր այդ մարդկանց, այդ վսեմաշուր հերոսներին նոր բեմ ելնող դասի աչքերով և տեսնում նրանց մեջ հազար ու մի մարդկային արատներ: Այս տեսակետից շարժանց տեղին է նկատում ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, թե «Գորգանին նայում էր կյանքին ու քաղաքի վրա, ամբողջի դեպի վեր խոյացող աշտարակին քաղաքային հրապարակից, որի մարդիկ՝ ողջունելով ասպետական փառահեղ նծույզների վրա հեծած անցորդներին՝ հիմք չունենին իրենց պատկերացումների մեջ նրանց իղեալականացնելու համար և հիմք չունենին հույս զնել նրանց թիրությունների ու արատների վերացման վրա՝ իղեալականացրած կերպարներ ստեղծելու միջոցով...»<sup>1</sup>: Այդ քաղաքային մարդկանց՝ հոգեբանության արտացոլություններն են, ահա, թե՛ նրա խաղաղասիրությունը, թե՛ իր հերոսներին երկնային էակներ շղարձնելը և թե՛ հումանիզմը:

\* \* \*

Այս բուրբից հետո մեզ մնում է խոսել պահպանված էպոսի ծագման և պարսից նոր գրականության վրա Գորգանիի վիպերգի ունեցած ազդեցության մասին:

Ինչպես ասացինք, Գորգանիի ձեռքի տակ եղած վեպը պատկանում է պահպանված շրջանին, սակայն էպոսի ծագումը շատ ավելի վաղ շրջանին է վերաբերում: Նրա մեջ պահպանված հին-իրանական ոգին ապացույցն է այն բանի, որ նա ստեղծագործվել է ոչ սասանյան և ոչ էլ պարթևական շրջանում, այլ նրանից էլ առաջ: Մառը Իշթարին նվիրած իր ուսումնասիրության մեջ ակնարկում է այն կապի մասին, որ կարելի է գտնել Իշթար—սիրո աստվածուհու և Վիս—սիրահարի միջև: Թե ո՞ր շարժված Մառի այդ ակնարկը հիմնավոր է (նա միայն ակնարկում է առանց փաստարկման), առայժմ դժվար է կոահել: Բայց ինչ էլ որ լինի, կասկածից դուրս է, որ Վիս ու Ռամինի սիրավեպի ստեղծագործությունը վերաբերում է նախապատմական շրջանին. այդ իսկ պատճառով էլ, ահա, մեզ բուրբովին անհիմն է թվում Շտակելերբերգի այն ենթադրությունը, որ, իբր թե, «Վիս ու Ռամին» վեպն Իրան է թափանցել դրսից. «չնայած «Վիս ու Ռամինում»—գոնե ներկա ձևի մեջ—իշխող պարսկական ոգուն,—ասում է նա,—այնուամենայնիվ կարելի է հնարավոր համարել, որ մեր պատմվածքը Պարսկաստան է

<sup>1</sup> H. Orbeli, Անդ.



Քափանցել գրսից, հատկապես՝ Հնդկաստանից: Իհարկե, հնդկական տեղանունների (օր. Մելուն) կամ բույսերի (օր. նիլուֆար-նու-նուֆար) հիշատակությունները շեն հաստատում աչգպիսի ենթա-դրությունը: Բայց քանի որ, մի կողմից՝ «Վիս ու Ռամինի» մասին մեր վեպի էությունը ոչ մի ընդհանուր բան չունի հին-իրանական վիպական պատմվածքների հետ և նրա գլխավոր գործող անձինք հին իրանցիների ոչ պատմվածքներին, ոչ էլ դիցաբանությունն են մասնակից, իսկ մյուս կողմից՝ պատմվածքը ընդհանուր գծերով համընկնում է Տրիստան և Իզուլդի բովանդակությանը, — մենք, չնայած այս վիպերգի ընդհանուր կառուցվածքի լիակատար իրանականացմանը, հակամետ ենք ենթադրելու, որ, ինչպես պարսկական, այնպես էլ արևմտյան պատմվածքի ընդհանուր աղբյուրը գտնվել է Հնդկաստանում: Թվում է մեզ, որ այդպես մեկնաբանել տվյալ էպոսի ծագումը, հիշա չէ: «Վիս ու Ռամինը», յուր ծագման հնու-թյունից և յուր սղուց դատելով՝ ավելի հիշա կլինեք համարել ոչ իբրև փոխառություն, ոչ իբրև ներմուծություն Հնդկաստանից, այլ ուղղակի ընդհանուր հնդ-իրանական մի ստեղծագործություն: Այս մասին, իհարկե, առայժմ որևէ հաստատուն տվյալ չունենք. բայց այն հանգամանքը, որ նա կապվում է Իշթարի հետ, և, ինչպես Մաուն է նշում, իր ծագմամբ անդադրորեն կապվում է հենց Գորգանի հետ, ապա ավելի հավանական է այդ ենթադրությունը:

Ինչ վերաբերում է այդ վեպի հետագա տարածմանը, ապա նախ և առաջ պետք է նշել նրա ու կելտական Տրիստան և Իզուլդի միջև եղած կապը: Դեռևս Հերման էթեն յուր «Essays und Studien» գրքում այն կարծիքն է հայտնել, որ Գորգանի վիպերգը զուգահեռն է կազմում կելտական Տրիստան և Իզուլդի պատմության, որը մշակել է Գոտֆրիդ Շտրասբուրգցին XII—XIII դարերում<sup>1</sup>: Այնուհետև Ռուզուֆ Ֆինկերն<sup>2</sup> ուսումնասիրելով Տրիստան ու Իզուլդի կապը Վիս ու Ռամինի պատմության հետ, հանգում է այն եզրակացության, որ այդ նմանությունները պատահական լինել չեն կարող և, որ Նախա-Տրիստանը (Ur-Tristan) հանդում է կա՛մ տասնմեկերորդ դարի պարսկական վիպերգին և կա՛մ նրանից ավելի հին աղբյուրների: Այդպես է եզրակացնում նաև նրա ուսումնասիրությունը գրախոսող Ստրիդդուսկին<sup>3</sup>: Վերջուպես ն. Յա. Մառ<sup>4</sup> էլ ավելի հաստատում

է նրանց կապը՝ հանդեցնելով երկուսն էլ Իշթարին: Սակայն Գորգանի վիպերգի հետ անմիջականորեն կապվում է վրացական «Վիսրամինի» վեպը: Դա ուղղակի պարսկական վիպերգի արձակ մշակումն է, որ կատարվել է տասներկուերորդ դարում: Նույն պարսկական «Վիս ու Ռամինից» և ոչ թե վրացական թարգմանու-թյունից, ըստ Մառի, օգտվել է նաև Ռուսթավելին:

Վերջուպես, ի՞նչ ազդեցություն է ունեցել Գորգանի վիպերգը պարսից գրականության վրա: Իր ժամանակին այդ վիպերգը բավականաչափ տարածվել ու մեծ հռչակ է ստացել, որ հատկապես ցույց են տալիս բառարաններում իբրև վկայություններ նրանից բերված բազմաթիվ բաղվածները: Սակայն, որքան մեզ հայտնի է, հետագայում գրեթե մոռացման է տրվել և որևէ հետք չի թողել պարսկական պոեզիայի մեջ: Շտակելբեբը հիշում է Սաադիի «Գոլիստանից» մի երկառոց, որ բառացիորեն նույնն է Գորգանի վիպերգի հետևյալ տողերի հետ.

Գերբը թեկուզ հարյուր տարի կրակ վառի սրբազան,  
Վերջ ի վերջո կայրի գարծյալ այդ սուրբ կրակը նրան:  
Սաադիի մոտ՝

Գերբը թեկուզ կրակ վառի հարյուր տարի,  
Թե մի վայրկյան էլ մեջն ընկնի՝ իբե՛ն կայրի:

Սակայն, ըստ իս, այդ պետք է գիտել ոչ իբրև Գորգանի վիպերգի անմիջական ազդեցությունը Սաադիի վրա: Սաադին այդ երկառոցը հիշում է առակի մեջ, իսկ այդ բանից ավելի հավանական է ենթադրել, որ Գորգանի վիպերգի հիշյալ երկառոցն անցել է ժողովրդին, դարձել առօրյա գործածական առած, և իբրև այդպիսին էլ Սաադին հիշում է այն իր հեքիաթի մեջ պատմած առակում<sup>5</sup>: Իսկ

<sup>1</sup> Այդ առակը, որ բերված է «Գոլիստանի» առաջին գրքի 15-րդ հեքիաթում, հետևյալն է. «Գորդուկին հարցրին. «Ես այժմ ընկերակցության ծառայությունը ընդ ինչպե՞ս հարողվեց»: Պատասխանեց, թե «Նրա որսի մեացորդն եմ ուսում և նրա հարձակման ապահովության մեջ՝ թշնամիների շարիքից (տղատ) կյանք վարում»: Հարձակման ապահովության ստվերի մեջ ես գտնվում և նրա նաացին. «այժմ, երբ նրա հովանավորություն ստվերի մեջ ես գտնվում, որ շնորհների շնորհակալությունը խոստովանում, ինչո՞ւ ավելի չես մոտենում, որ պետք իր մտերիմների շրջանի մեջ առնի և անկեղծ ծառայեցից մեկը համարի քեզ»: Սաաց. «Ես նուսամենայնիվ նրա հարձակումից ապահով չեմ»:

Գերբը թեկուզ կրակ վառի հարյուր տարի,  
Թե մի վայրկյան էլ մեջն ընկնի՝ իբե՛ն կայրի:

<sup>1</sup> Hermann Ethel, Essays und Studien, Berlin, 1872, էջ 295—301.  
<sup>2</sup> Rudolf Zenker, Die Tristansage und des persische Epos von Wis und Ramia, «Komanische Forschungen», Bd. 29, էջ 321—360.  
<sup>3</sup> Byzantische Zeitschrift, Bd. 19, էջ 658.  
<sup>4</sup> Marr, Иштар, «Яфетический сборник», т. 5, էջ 178—180.



ինչո՞վ բացատրել այդ երևույթը. ի՞նչն է եղել պատճառը, որ իր ժամանակին տարածված «Վիս ու Ռամին» վիպերգը հետագայում գրեթե բոլորովին մոռացության է արվել: Այդ բանի համար մենք առայժմ կարող ենք թվել երեք պատճառ:

Առաջինը և ամենակարևորը վիպերգի գրագաղտական ոգին է. հետագա շրջանի խիստ մահճեղական ողով տոգորված գրականության համար, ինչ խոսք, որ այդ վիպերգը միանգամայն խորթ և օտար պետք է լիներ, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ հետագա շրջանի գրականությունը զարգանում է կրոնափոխոսության մի նոր գավանանքի, սուֆիզմի ողով: Երկրորդ պատճառը՝ վիպերգի անպաճույճ լեզուն, պարզ, հասարակ ու բնական ոճն է: Հայտնի է, որ հետագա շրջանում պարսից գրականության մեջ իսկական բանաստեղծություն համարվում են հենց այնպիսի ստեղծագործությունները, որոնք փայլում են պերճաբանությամբ, զարդարուն լեզվով, վերամբարձ ու խրթին պատկերներով, արտակարգ ու ալլաբանական-ստեղծվածային համեմատություններով: Իսկ այդ էլ, ահա, պատճառ է դարձել, որ այդպիսի «առաջնակարգ» հատկություններից զուրկ «Վիս ու Ռամինը» մոռացման արվի: Չէ՞ որ, դրան հակառակ, մեզ համար «Վիս ու Ռամինի» արժանիքներից մեկը հենց նրա հասարակ ու պարզ կառուցվածքն է. իսկ այդ հատկությունը, ինչպես հայտնի է, շատ ու շատ բանաստեղծությունների, որոնց թվում նաև Ռուզբեի նշանավոր «Քալիլա ու Դիմնա» վիպերգի՝ կորստյան պատճառ է դարձել:

Վերջապես, իբրև «Վիս ու Ռամինի» անուշադրության մատերվելու պատճառ կամ, ավելի ճիշտ՝ գործոն, մենք կարող ենք հիշել նաև հանճարեղ Շիրվանցու՝ Իլյաս Բին Յուսուֆ Նիզամի Գյանջեվիի (XII դար) ոտմանտիկ սիրային ստեղծագործությունները: Գորգանին մեզ համար նշանավոր է նրանով, որ պարսից գրականության մեջ հիմնադրեց մի նոր ժանր՝ կենցաղային-սիրային ոտմանտիկ վիպերգի ժանրը: Նա առաջինն էր, որ մշակեց ոչ դիցաբանական, այլ կենցաղային էպոսը. բայց այդ նույն կարգի էպոսի մշակումը, նույն սիրային-ոտմանտիկ վիպերգի ժանրը կատարելության հասցրեց Նիզամին: Եթե Գորգանին մշակեց «Վիս ու Ռամինը», պահպանելով նրա գրագաղտական ոգին, որոշ տուրք տալով

միայն յուր ժամանակի դադափարաբանությանն ու հոգեբանությամբ, ապա Նիզամին, Շիրվանի այդ մեծ բանաստեղծը, մշակեց գարձյալ իրանական էպոսը, բայց նա մշակեց այն նոր ոգով և արտահայտեց նոր դասի՝ քաղաքի առևտրական արհեստավորական փավերի մտայնությունը յուր գեղարվեստական ստեղծագործությունների մեջ, ստեղծագործություններ, որոնք իրենց կատարելությունը ոչ միայն ստվեր ձգեցին Գորգանիի վիպերգի վրա, ոչ միայն հետագա շրջանի պարսից ու ադրբեջանական գրականության համար ազդեցության ու նմանությունների տեսպառ աղբյուր հանդիսացան, այլև համաշխարհային գրականության լավագույն ստեղծագործությունների շարքը մտան:

<sup>1</sup> Бертельс, *Անդ. էջ 29-ում*, խոսելով «Քալիլա ու Դիմնայի» մասին ասում է. «Отличительной ее чертой, повидимому, была поразительная для персидской поэзии простота и естественность, и эта то простота и послужила, вероятно, причиной гибели поэмы, не удовлетворявшей требованиям вкуса позднейших эстетов».



## ՆԱՍԵՐ ԽՈՍՐՈՎ

Պարսկա-թաղիկական գրականության պատմության մեջ յուրահատուկ տեղ է զբաղում բանաստեղծ, փիլիսոփա, կրոնական գործիչ Աբու-Մոհին-Նասեր իբն-Խոսրով իբն-Հարիսը:

Մնվել է Նասեր Խոսրովը 1003 կամ 1004 թվականին, Ամու-Գարիայի լեռնային հոսանքի շրջանում գանձող Քուրեղիան (Քուրեղիան) քաղաքում, որ այն ժամանակ մտնում էր Խորասանի նահանգի մեջ: Նրա կյանքի առաջին կեսի մասին տեղեկություններ չկան: XIII—XVIII դարերի թաղքերաների մեջ կան համառոտ և ընդարձակ կենսագրություններ, որոնք իբրև թե Նասեր Խոսրովն է գրել, սակայն այդ «ինքնակենսագրություններն» այնքան հեքիաթային բնույթ են կրում, որ առանձին արժեք ներկայացնել չեն կարող: Մի ժամանակ, եվրոպական արևելագետները ոչ մի կերպ չկարողանալով համատեղել թաղքերաներում եղած այդ «ինքնակենսագրությունները» հեղինակի սեփական ստեղծագործություններում եղած տվյալների հետ, ստիպված էին ենթադրել, թե Նասեր ճանապարհորդն ու Նասեր բանաստեղծը տարբեր անձնավորություններ են եղել: Բայց այդ ենթադրությունը հերքվեց: Արևելագետներն, ամենից առաջ, ապացուցեցին, որ թաղքերաներում եղած կենսագրությունները Նասեր Խոսրովի ինքնակենսագրությունը չեն, այլ հետագա դարերի թաղքերաների հեղինակների կողմից հորինված առասպելներ, ուստի և զրանք ոչ մի արժեք չեն կարող ներկայացնել նրա կյանքն ու գործունեությունն ուսումնասիրելու համար: Այսպիսով, քանի որ բացավում էր «ինքնակենսագրության» արժանահավատությունների՝ Նասեր ճանապարհորդի և Նասեր բանաստեղծի գոյության մասին ենթադրություններ անելը: Վերջապես, իր ստեղծագործությունների մեջ եղած շատ սակավ տեղեկությունները համեմատելով ուղեգրությունների մեջ եղածների հետ, ակնհայտ դարձավ, որ ճանապարհորդն ու բանաստեղծը նույն անձն են: Ուստի

և՛ նրա կյանքի ու գործունեության մասին վստահելի տեղեկություններ կարելի է քաղել հենց իր իսկ ստեղծագործություններից, առանձնապես «Սաֆար-նամեից» (Ուղեգրություն), որի մեջ նա հանդամանորեն նկարագրում է իր յոթնամյա ճանապարհորդությունը: Նրա բանաստեղծությունների մեջ իր կյանքի վաղ շրջանին վերաբերող շատ քիչ տեղեկություններ կան. դրանցից կարևոր է հատկապես այն, որ նա Բալխի շրջակայքում ունեցել է ոչ մեծ կալվածքներ, որոնցից բավականաչափ եկամուտ է ստացել, ապահով կյանք վարելու ու բազմակողմանի կրթություն ստանալու համար: Ակնարկներ կան նաև այն մասին, որ երիտասարդ տարիներին Խոսրասանի տիրակալների արքունիքում է եղել: Դրանով էլ սպառվում են նրա երիտասարդական տարիներին վերաբերող տեղեկությունները, և մինչև 1045 թվականն ընկած ժամանակաշրջանի մասին վստահելի տվյալներ այլևս չկան: 1035 թվականին Չաղրի-բեկ Վատահեիլի տվյալներ այլևս չկան: 1035 թվականին Չաղրի-բեկ և Քուղուր-բեկ եղբայրները Ղազնավյան սուլթան Մահմուդի ժառանգորդներից խլեցին Խորասանը: 1036 թվականին Չաղրի-բեկը գրավեց նաև Մերվ քաղաքը և այնտեղ հաստատեց իր իշխանությունը: Այդ ժամանակից էլ, ահա, Նասեր Խոսրովն սկսում է աշխատել Չաղրի-բեկի արքունիքում՝ հարկային տեսչի պաշտոնով: Այդ պաշտոնում աշխատելով՝ նա շատ անգամ ականատես է լինում մարդկային խղճի դեմ արարքների. նա անձամբ վկա էր այն տրամադրի հարստահարությանն ու կեղեքմանը, որին ենթարկվում էր աշխատավոր ժողովուրդը, հատկապես գյուղացիությունը: Շատ ծանր էին ազդում նրա վրա այդ բոլորը. բայց դա դեռ բուրբ չէր: Նրա մեջ շատ ծանր զգացումներ ու ապրումներ էին առաջացնում նաև պալատականների կեղծավորություններն ու շողորթությունները, միմյանց դեմ նյութած դավերն ու խարդավանքները և տիրաների կամայականությունները: Վերջապես, նրան հուզում էին նաև կալի կամայականությունները: Վերջապես, նրան հուզում էին նաև կրոնական հարցերը, որոնցով նա միշտ էլ հետաքրքրվում էր: Իր հոգու ընդլղումները նա խեղդում էր, սակայն, գինու մեջ. հարբեցություններ նա աշխատում էր մոռանալ իր հոգու տառապանքներն ու լուեցնել իր խղճի ձայնը:

Այդպես նա անց է կացնում իր կյանքը մինչև 41 տարեկան հասակը: Բայց, ահա, 1045 թվականին պաշտոնական գործով նա գնում է Զուզան (Մերվից հարավ-արևմուտք) և այնտեղ էլ իր կյանքի մեջ վճռական բեկում կատարող մի երազ է տեսնում: «Մի գիշեր,—գրում է նա իր «Սաֆար-նամեում»,—երազում տեսա, որ մեկն ինձ ասում է.—Դեռ երկա՞ր ժամանակ դու պիտի խմես այդ գինին, որ մարդուն բանականությունից զրկում է: Ավելի լավ կլի-



ներ, որ դու խելքի գաչիր: Ես պատասխանեցի.— Իմաստունները չեն կարողացել գտնել մի ուրիշ բան, որ վաներ աշխարհային հոգսերը: Չայնն ասաց.— Անզգայությունն ու անհուշությունը հանգիստ չեն նշանակում: Իմաստուն չի կարելի կոչել նրան, ով մարդուն անզգայության ճանապարհն է ցույց տալիս: Ընդհակառակն, պետք է որոնել մի բան, որը կարողանար մեծացնել բանականության ու խելքի ուժը:— Իսկ որտեղի՞ց գտնեմ այդ,— հարցրի ես:— Որոնողը գտնում է,— պատասխանեց նա ու ցույց տվեց Արլայի՝ կողմը: Նա այլևս ոչինչ չասաց: Ջարթնելով՝ ես վերհիշեցի այդ բոլորը: Երազը խիստ տպավորություն էր թողել ինձ վրա, և ես ինքս ինձ ասացի.— Ես գարթնեցի երեկվա քնից, անհրաժեշտ է սթափվել նաև իմ բառասնամյա քնից: Ես մտածեցի, որ ոչ մի բանի չեմ հասնի, մինչև չփոխեմ իմ գործելակերպն ու սովորությունները: Եվ այսպես, վճիռն ընդունված էր արդեն: Ավարտելով իր գործերը՝ նա վերագառնում է Մերվ, Մեքքա գնալու պատճառարանությամբ ազատվում պաշտոնից և 1046 թվականի մարտի 6-ին սկսում իր յոթ տարի տևած ճանապարհորդությունը: Մերվից նա ուղևորվեց դիպի նիշափուր, ուր և հասավ 1046 թվականի ապրիլի 22-ին, ապա՝ Ղազվինի ու Գեյլամի վրայով անցնում Քեհրան, իսկ այնտեղից էլ՝ Քավրիզ: Այստեղ նա ծանոթացավ Թուվիչիդների վերջին ժառանգորդների պալատական բանաստեղծ Կաթրան Քարբիզի հետ (մեռել է 1080 թվականին): Վերջինս, օգտվելով առիթից՝ Նասեր խոսրովին խնդրեց բացատրել արևելյան Իրանի բանաստեղծների ստեղծագործություններից իր համար անհասկանալի հատվածները: Նա առանձնապես նշեց Գադիդին, որի ստեղծագործությունների մեջ բարբառային տարրեր շատ կան: Նասեր խոսրովն, իհարկե, բացատրեց նրան այդ հատվածները, բայց իր և Զեքեյուզ զրույցներից եկավ այն եզրակացություն, որ բանաստեղծն ընդհանրապես պարսկերեն լեզուն լավ չգիտի և աչքի ընկնող բանաստեղծական տաղանդ չէ:

Քավրիզից Նասեր խոսրովը վանով, Քիթլիսով ու Գիարբեքիբով գնաց հյուսիսային Սիրիա: Այնտեղ Մաառ փոքրիկ քաղաքում նա ծանոթացավ հռչակավոր փիլիսոփա, բանաստեղծ և բանասեր, կույր Աբու-լ-Ալա ալ-Մաաբիի հետ: Երկու ամիս մնալով այդ քաղաքում՝ Նասեր խոսրովը կարողացավ մոտից ծանոթանալ այդ հռչակավոր ժերունու հետ: Աբու-լ-Ալան Նասեր խոսրովի մեջ հար-

<sup>1</sup> Մեքքայի տաճարը, որի կողմը ուղղում են իրենց դեմքը մուսուլմանները՝ աղոթելու ժամանակ,

գանք առաջացրեց իր խոր, ընդարձակ գիտությունը և զարմանք առաջացրեց իր խիստ ճգնախնայությամբ: Այդ ավելի զարմանալի էր այն պատճառով, որ Աբու-լ-Ալան մեծ հարստության տեր էր: Իր ուղեգրությունների մեջ Նասեր խոսրովը մանրամասն տեղեկություններ է տալիս Աբու-լ-Ալայի մասին: Գրանցից կարևորները հետևյալներն են.

Մաաբին իր քաղաքի ամենաառաջնակարգ մարդկանցից մեկն էր թե՛ հարստությամբ և թե՛ հասարակական դիրքով: Թեև ամենաշուքալու կյանք վարելու համար ուներ լիակատար հնարավորություն, բայց նա ծայրահեղ շահավոր կյանք էր վարում, հագնում էր մի կոպիտ կապա, ուտում էր միայն հաց և այլն էլ այն շահով, որ սովամահ չլինի: Իր հարստությունը, սակայն, օգտագործում էր ամեն մի կարիքավորի օգնելու համար: Նա հաշտի էր նաև իրեն ուսուցչապետ և մշտապես շրջապատված էր երկու հարյուրից ոչ սլակաս ունկնդիրներով, որոնք հավաքվում էին ամեն տեղից, լսելու նրա դասախոսությունները, իսկ նա դասախոսություններ էր կարդում առհասարակ զբաղանություն և մասնավորապես բանաստեղծական արվեստի մասին, որին նա տիրապետում էր կատարելապես:

Նասեր խոսրովն (ինչպես ինքը հիշատակում է) ևս թիչ օգուտ չի քաղել նրա գիտությունից: Աբու-լ-Ալայի հետ Նասերի հանդիպումը և ստացած տպավորությունները նրա կյանքում հետագայում փոքր գեր շնորհացին: Հատկապես այն ժամանակ, երբ նա սկսում է աշխատել իբրև քարոզիչ, իր մտքում միշտ հիշում էր Աբու-լ-Ալային և աշխատում նմանվել նրան:

Մաաբից Նասեր խոսրովը գնաց առափնյա Սիրիա, ապա՝ Պաղեստին և վերջապես 1047 թ. գարնանը ժամանեց Մեքքա: Մեքքայում նա առաջին անգամն էր լինում (գրանից հետո շորս անգամ դարձյալ գնաց ուխտի): Մեքքան XI դարում ենթակա էր Ֆաթիմիդների իշխանությանը: Նասերը Մեքքայից ուղևորվեց Եգիպտոս, ուր և մնաց ավելի քան երկու տարի:

Եգիպտոսում մնալը նրա կյանքի հետագա շրջանի համար վրձնական գեր խաղաց. կարելի է ասել, որ Եգիպտոսը փոխեց նրա կյանքի ուղին: XI դարում Եգիպտոսում թագավորում էր Ֆաթիմիդդների ութերորդ խալիֆ Մուսթենսիբը (1036—1094): Նրանից առջ Ֆաթիմիդների վեցերորդ խալիֆ Հաբիմի օրոք (996—1021) Եգիպտոսում ծայր էին առել անկարգություններ: Խալիֆ Հաբիմը, որ ձգտում էր աստվածային պատվի արժանանալ և իրեն աստված հռչակել, փաստորեն հոգեկան հիվանդ էր և կրոնական էքստազի







տեղից եկալ Պարսից ծոցի արարական ասիր, մնաց Բասրայում մի-  
առժամանակ և ապա՝ Հարավային Իրանով վերադարձալ Խորասան:  
Իհարկե, նա առաջին հերթին գնաց Մերվ, բայց այնտեղ երկար  
չմնաց, այլ իր կրոնական առաքելութունը կատարելու համար  
ընտրեց Բալխը, որ մոտիկ լինելով Պամիրի լեռնաշղթային՝ հնա-  
րավորութուն էր տալիս հեշտութեամբ տարածել շիա իսմայիլական  
աղանդը Պամիրի լեռնցիների մեջ:

Այդ գործում նա, անշուշտ, շատ դիմադրութունների հան-  
դիպեց. նրա դեմ էին ելնում ու հալածում նրան ոչ միայն հակառակ  
աղանդի հետևորդները, այլև շիաներից նրանք, որոնք ընդունում  
էին ոչ թե յոթ, այլ տասներկու մարդարե: Գրանց թվին էր պատ-  
կանում նաև բանաստեղծ Քիսային, որ իր բանաստեղծութուննե-  
րով աշխատում էր խոչընդոտել Նասերի գործունեութեանը: Բայց  
Նասերի համար ավելի զգալի էր իշխանութեան կողմից իր դեմ հա-  
րուցվող հալածանքը և այդ էր պատճառը, որ մոտավորապես 1060  
թվականին նա ստիպված եղավ ապաստան գտնել Պամիրի լեռնաշ-  
խարհում՝ անմատչելի Բաղախշան շրջանի Յոմղան վայրում (այժմ՝  
Կշաղ Եմղոն): Այդտեղ նա շրջապատված էր իր հավատարիմ 46-  
անորդներով, որոնք և նրա մահվանից հետո շարունակեցին զավա-  
նել նույն աղանդը, ի պատիվ նրա այդ աղանդը կոչելով նասերիյե:

Բաղախշանում նա ապրել է մոտավորապես քսան տարի. թե  
ոչ թվականին է մեռել, հաստատապես հայտնի չէ: XVII դարի  
թուրք պատմադիր Հաշի Խալֆը գրում է, որ նա մեռել է 1088-ին:  
Եվրոպական արևելագետներից հեռին այդ թվականն ընդունել են  
իբրև ճշմարտութուն, բայց Բրաունը, հենվելով այն բանի վրա, որ  
նույն հեղինակը մի ուրիշ տեղ էլ ուրիշ թվական է նշում Նասերի  
մահվան համար, անվստահելի է համարում այդ տեղեկութունը և  
ասում, որ Նասերը մեռած պետք է լինի 1074-ին, առանց սակայն  
որևէ լուրջ փաստով հիմնավորելու այդ:

Կրիմսկին հենվելով Նասեր Խոսրովի մի ստեղծագործութեան  
վրա, գտնում է, որ 1074 թվականը նրա մահվան համար շատ վաղ  
է: Նասեր Խոսրովը իր մի ստեղծագործութեան մեջ ասում է, թե  
72 տարի է արդեն, որ ուսումնասիրում է երեք հիմնական կրոն-  
ները: Կրիմսկին, հիմք ընդունելով այդ բառերը, հաշվում է այս-  
պես՝ 72 լուսնային տարին հավասար է մոտավորապես 70 արև-  
գահնային տարվա, հետևաբար 70 տարի նա զբաղվել է այդ կրոն-  
ներով: Մնվել է 1004 թ.: Եթե ենթադրենք, որ նա զբաղիտու-  
թունն սկսել է նույնիսկ հինգ տարեկանից, այն է՝ 1009 թվակա-  
նից, ապա այդ ստեղծագործութունը պետք է գրած լիներ 1079-ից

ոչ շուտ, հետևաբար 79-ից շուտ էլ մեռած լինել չէր կարող:

Ստեղծագործությունները.— Նասեր Խոսրովի ստեղ-  
ծագործություններից մեղ հասել են՝ «Սաֆար-նամե» (Ուղեգրու-  
թուն), «Ռոշանայի-նամե» (Լուսավորութեան գիրք), «Մեհադաթ-  
նամե» (Երջանկութեան գիրք), «Վեջհե-գին» (Կերպար հավաստ) և  
«Քնարական դիվան»:

1. Ռոշանայի-նամե.— Չափածո ստեղծագործություն է,  
այսպես կոչված մասնավի ժանրով: Ինչպես հեղինակն է հիշատա-  
կում, նա գրել է դեռևս Եգիպտոսում եղած ժամանակ, 1049 թ.:  
Հետագայում՝ 1061 թ. ոչ շուտ, վերամշակել է նույն ստեղծագոր-  
ծությունը և այդ վերամշակվածն է, որ հասել է մեզ:

Դա կրոնա-փիլիսոփայական, բարոյախոսական մի տոն է,  
բաղկացած 579 հանգվոր զուգատողերից (բևյթներից): Ամբողջ  
պոեմը բաժանված է երեք մասի՝ ներածութուն, բուն փիլիսոփա-  
յական-բարոյախոսական մաս և եզրափակում կամ վերջաբան:

Երեք մասերի մեջ անչորպես չկա. մեկը մյուսի արամբարանա-  
կան շարունակությունն է կազմում: Ներածութունը, որ սկսվում է  
փոքրիկ իֆթիթայով (բացում, մուտք) զովարանում է ամենից շատ  
մարդու լուսությունը: Խելացի մարդը պետք է լուս լինի: Մարդու լու-  
սուն է թե՛ հրջանկութունների և թե՛ դժբախտութունների բանա-  
լին: Լեզուն իր մեջ պահում է մարդու թե՛ օգուտները և թե՛ վնաս-  
ները: Չպետք է խոսել այն մասին, ինչ որ չգիտեն և իմացածն էլ  
անտեղի չպետք է ասել: Մարդ պետք է կարողանա իր իմացածից  
բացի ուրիշ իմացածիցն էլ օգուտ բաղել, այսինքն՝ պետք է լսել  
ուրիշների բարի խրատները: Եթե մարդ խոսում է, ապա միայն բա-  
րի բաների մասին պետք է խոսի. խոսակցութունը միշտ պետք է  
օգտակար լինի: Պետք է կարողանալ ընտրութուն կատարել մարդ-  
կանց մեջ՝ ո՛վ է բարի և ո՛վ՝ չար, ո՛րն է բարեկամը և ո՛րն է թշ-  
նամին: Եթե մարդ տեսնում է, որ իր հետ խոսողը չարախոսի մեկն  
է, ապա պետք է հեռու վանի նրան իրենից և ոչ մի հարաբերութուն  
չունենա նրա հետ:

Նասեր Խոսրովի լուսության այս տեսութունը անշուշտ չի հան-  
դում դարվիշների բուժ անտարբերության, որոնք հավասարապես  
անտարբեր են թե՛ բարեկամին և թե՛ թշնամուն: Նասեր Խոսրովը  
նրանց այդ հատկութունը խստորեն քննադատում է: Մարդ պետք  
է կարողանա ընտրել իր բարեկամին և նրա հետ բարի լինելով՝ չա-  
րերին սոսի պիտի լինի:











էլ սակայն, թեև սկզբից պատրաստի մեծ հարստութեան տեր են դառնում, բայց և այնպես դարձյալ իրենց կյանքում ապահով դրութեան մեջ չեն լինում: Նրանք ստանալով այդ հարստութեանը անմիջապես վատնում են և ապա իրենք էլ հասնում աղքատութեան: Եվ շատա՞նի այն մարդկանց թվին է պատկանում, որոնք պետք է նետվեն դժոխքի կրակի մեջ. մի՞թե նրանք կարող են արժանանալ պարտիան: Ամեն մի կարգին մարդու աշքում վաշխառուն արհամարհված է, շունն անգամ վաշխառուից պատվավոր է: Մի՞թե՞, քո կարծիքով, աստուծու հովանուց կարող է ունենալ այն մարդը, որ մի պատահաբար համար պատրաստ է յուր հոգին սպանել: Ո՞վ է ընդունակ կործանել աղքատի տունը, որպեսզի ինքը հարստութեան և փառքի անկեղծութեան մեջ ապրի... Մինչդեռ որքա՞ն հաճախ է պատահում, որ ազահը կուտակում է հարստությունը և ինքը մեռնում, իսկ ժառանգորդը վատնում է հարստությունը որևէ պոռնիկուհու հետ: Նա շահի հետևից ընկած արքայական դրութեան է հասնում, իսկ իր որդիները դառնում են մուրցիկաններ... Եթե սովից մեռնելու լինես անգամ, նրա հացը շուտես, որովհետև այդ հացը կործանված աղքատների արջունով է շաղախված: Այդ մարդը խայտառակում է և՛ երկիրը, և՛ երկինքը: Նա գայրացնում է և՛ մարդկանց, և՛ աստուծուն: Եվ եթե նա հարյուր տարի էլ տառապի դժոխքում, ոչ մի գործություն ներում չի բերի նրան»:

Պակաս պարսավանքի չի հնթարկում նաև թագավորներին ու իշխաններին: Նա պարզապես ասում է, որ մեծամեծների տեսքն անգամ իր համար անտանելի է, նրանք իրենց մեծություն մեջ այնքան են զոռոզանում, որ արհամարհում են ոչ միայն մարդկանց, այլև աստուծուն: Նրանք ամբոխին դիտում են իբրև ինչ որ անարժեք արարածների մի հավաքածու: Նրանք չեն հետևում արդարութեանը և չեն հոգում այն մասին, որ իրենց հպատակների համար իրենք պարտավոր են բարեկեցիկ վիճակ ստեղծել: Դեռ ավելին, մեծամեծներն իրենք շատ հաճախ առաջնակարգ շարագործներ են: Թերևս ոչ ոք այնքան չի մեղանչում աստուծու դեմ, որքան թագավորներն ու իշխանները: Նրանք, որ կոչված են աստուծու արարածների խնամակալը լինելու, ավելի հաճախ կոռուպտում են այդ արարածներին և ոտնահարում նրանց իրավունքներն ու պատիվը: Նրանք սովոր են, որ իրենց ստորագրյալները միշտ գովեն իրենց, շողորթթեն և համակերպվեն իրենց բոլոր հրամաններին ու կարծիքներին. և եթե մեկը համարձակվի հիշեցնել նրանց իրենց անիրավությունները, վկայակոչելով աստուծուն, ապա նրանք պատրաստ են պիտատել ոչ միայն այդ հիշեցնողին, այլ նույնիսկ աստուծուն, եթե այդ հաջողվի իրենց:

«Ինչպե՞ս անսխորժ է մեծամեծների տեսքը, նրանց տեսնելիս մարդ... ընկնում է գայլի ճանկը, նրանք բոլորն էլ ներշնչված են իրենցով ավելի քան ինքնահաճախ փարավոնը... Երբ թագավորն իր պաշտում ընդունելություն է սարքում, նա իր առջև տեսնում է ինչ որ սատանաների հավաք, ոմանք չոկվում են ինչպես ջախջախված զուլաներով իժեք, ոմանք էլ՝ ինչպես պոչատ կարիճներ: Երբ մարդ արդարություն չի տալիս խնդրողներին, հպատակների սիրտը վախից ու տագնապից շփոթվում է, իսկ երբ նա թույլ է տալիս նրանց ներկայանալ իրեն խնդրեցով, ինչ է տեսնում իր առջև. կորուսյալների մի խումբ, որ ցնցողաբար սեղմում է բռունցքները: Մոզեսի խոսքերին նրանք դժկամությամբ են ուշադրություն նվիրում, իսկ ցույցից աստվածներ են հորինում իրենց համար: Նրանք Հիսուսին ենթարկում են խայտառակ խաշիլություն, բայց փողով ցնում են նրա էջի արհամարհված պայտը»:

Քննադատելով վաշխառուներին, ընչաքաղցերին, իշխաններին ու թագավորներին, հեղինակը իբրև հակադրություն նկարագրում է արհեստավորներին և հողագործներին: Արհեստավորներն անշուշտ նրա համար լավ մարդիկ են հենց այն պատճառով, որ չեն կոռուպտում ուրիշներին և իրենց հույսը դնում են իրենց արհեստի վրա. բայց հեղինակի համար իդեալական մարդը շինականն է: Նասեր խոսքովի մոտ հողագործն է Ադամի իսկական հետնորդը: Նրա ամենից առաջին արժանիքն այն է, որ նա իր քրտիքով սնուցում է ոչ միայն իրեն, այլև ուրիշներին, նույնիսկ աստուծու ստեղծած կենդանիներին ու թռչուններին: Հողագործի աշխատանքի շնորհիվ է, որ հողը բերք է տալիս, նրա աշխատանքի շնորհիվ է, որ մի տեղ պարտեզ ենք տեսնում, մի այլ տեղ ցանք: «Արհեստավորից բարձր է խելացի երկրագործը, որ ընտանեցնում է վայրի կենդանիներին ու թռչուններին: Իհարկի արհեստավորի բոլոր արտադրանքներն ու թռչուններին մահացնում է միայն հողագործը: Երկիրը օգտակար են, բայց բեզ ապահովում է միայն հողագործից... Ադամի հետնորդների համար կարո՞ղ է լինել ավելի լավ աշխատանք, քան այն, որ հիշեցնում է նրանց իրենց նախահորը: Սերմնացանը սնուցողն է ամեն տեսակ, նույնիսկ ամենաշնչին արարածի, լինի նա մարդ, թե անասուն: Հողագործը, եթե նա այնպիսին է, ինչպիսին պետք է լինի, շուտով զերպագանցում է անգամ երկնային հրեշտակներին: Եթե հողագործը չի ձգտում հացի արհեստական թանկացում առաջ բերելու, ոչ ոք չի կարող հավասարվել նրան անվտանգությամբ: Եթե մարդիկ պարտավոր են աշխատել, ապա բոլորը պետք է ձևկատի քրդիկ պարտավոր են աշխատել, ապա բոլորը պետք է ձևկատի քրդիկ պարտավոր են աշխատել, ապա բոլորը պետք է ձևկատի քրդիկ պարտավոր են աշխատել, ապա բոլորը պետք է ձևկատի քրդիկ պարտավոր են աշխատել, ապա բոլորը պետք է ձևկատի քրդիկ պարտավոր են աշխատել, ապա բոլորը պետք է ձևկատի քրդիկ պարտավոր են աշխատել... Այս աշխարհում տիրելով ուտելիք ցանեն արարածների համար... Այս աշխարհում



սերմնացանները խելացիորեն հատիկ են ցանում, իսկ այն աշխարհում ապրելու են եղեմական պարտեղի վարդերի մեջ»:

Գովելով հողագործի կյանքն ու դրամուսները, նա այնուամենայնիվ լավագույնը համարում է այն, որ այդ դեպքում էլ մարդ հրաժարվի իր բոլոր ցանկություններից: Ամենից մեծ դանձր նա համարում է այն, երբ մարդ ձեռք է բերում իր ցանկություններից լիովին հրաժարվելու ուժ: Նա դտնում է, որ եթե մարդ կարողանա դասել իր բոլոր ցանկությունները, նույնիսկ ուտեստի և հագուստի պակաս զգալու դեպքում, ապա դա ավելի նախանձեղի է, քան հարուստ կյանքը:

Նասեր Խոսրովի այդ կարգի ստեղծագործություններից հայտնի են նաև ուրիշները, որոնցից սակայն ոչ մեկը հրատարակված չէ: Այսպես, օրինակ, նա ունի «Ձաղ ալ-մուաաֆերին» (Առձեռն տեղեկատու ճանապարհորդների համար): Դրա մեջ հեղինակը շարադրում է իսմայիլականների գրեթե բոլոր անհրաժեշտ աստվածաբանական կանոններն ու գրույթները, իբրև դեկավար ձեռնարկ, այսպես կոչված, աստվածային ուղու ճանապարհորդների համար:

Հայտնի են նրա նաև ուրիշ ստեղծագործությունները միայն ձեռագրացուցակներից: Օրինակ, «Քերպե Զամե ալ-հեմմաթեյն» (Նրկու իմաստությունների ժողովածու), որ թեև միայն վերնագրով է հայտնի արևելագետներին, բայց բոլորն էլ ենթադրում են հենց վերնագրից, որ նրա նյութը պետք է լինի իսմայիլականների դավանանքը և նրա ներքին փոխաբերական իմաստը: Իսմայիլականներն ընդունում են, որ կրոնական բոլոր ծեսերն ու հարաբերություններն ունեն իրենց ներքին-այլարանական իմաստը, որ նրանք կոչում են բաթինի (ներքնային):

Սակայն նրա չհրատարակված գործերից թե՛ արևելագետների և թե՛ Պամիրի շեյխուհարհում ճանապարհորդողների ուշադրությունը ավելի շատ գրավել է նրա «Վաջհե դին» (Կերպար հավատո) ստեղծագործությունը: Սրա մասին հիշատակված է 1092 թ. գրված մի գրքի մեջ, որի վերնագիրն է «Կրոնների նկարագրություն» (Քեյան ալ-Աղյան): Գրքի հեղինակը խոսում է նաև Նասեր Խոսրովի մասին և, համարելով նրան անհավատ ու հերետիկոս՝ ասում է, որ նա է գրել «Վաջհե դին» ստեղծագործությունը, բայց քանի որ այդ գիրքը գոնե մինչև 900-ական թվականները չէր գտնվել, ուստի և արևելագետները համարում էին կամ կորած և կամ բոլորովին չգրված. բայց այդպես չէր: 1902 թ., ուսու ճանապարհորդ գրաֆ Բորբինսկին լինում է Բուխարայի լեռնային շրջաններում, այդ թվում Բազախչանում, ուր կրոնական քարոզչությամբ է ըզ-

բաղվել Նասեր Խոսրովը: Մանթեանալով այդտեղ Նասերի հետևորդների հետ, որոնք իրենց ազանգը կոչում են նասերիչե, նա արժանանում է նրանց վստահությանը և շատ բան իմանում նրանց սովորություններից: Կարևորը մեզ համար նրա ստեղծություններից այն է, որ այդ ազանգի հետևորդները սուրբ գիրք են համարում մեր հեղինակի «Կերպար հավատո»-ն: Ամեն հինգշաբթի երեկո ազանգի հետևորդներից ավելի ծերերը հավաքվում են, կարգում այդ գիրքը, հետո մեկնաբանում նրա տարբեր բաժինները, երաժշտական գործիքների նվագակցությամբ երգում նրանից տարբեր հատվածներ, ընթրում և ամբողջ գիշերը անցկացնում միասին: Նրանք այդ գիրքը կոչում են նաև «Քալամե փիր» (Մերուսու-առաջնորդի խոսքեր): Նրանց ասելով այս գրքի իսկական հեղինակն է Մեծ Շահ Նիզարը (սա Մուսթենսիրի որդին էր. Մուսթենսիրն ուներ երկու ժառանգ, որոնցից Նիզարը ճանաչվեց Պարսկաստանի իսմայիլականների առաջնորդ): Այդ գիրքը կազմել է հենց ինքը Նիզարը, իսկ Խոսրովը թարգմանել է արաբերենի: Իհարկե այդ ճիշտ չէ. հավանական է, որ ստեղծագործության մեջ արտահայտված զավանարանական մտքերը թելադրված են Նիզարի կողմից, բայց ստեղծագործությունն իբրև այդպիսին պատկանում է Նասեր Խոսրովին: Այդ կարելի է ապացուցել այն փաստով, որ ամբողջ ստեղծագործության մեջ շատ են հանդիպում իր իսկ կենսագրությանը վերաբերող տողեր, որ թարգմանության մեջ անշուշտ շվետք է լինեին:

Բորբինսկին ծանոթացել է այդ գրքի բովանդակությանը, նրան նույնիսկ ցույց են տվել նաև մի ուրիշ գիրք, որ նույն ստեղծագործության հանրամատչելի համառոտությունն է: Շատ հաճախ ծերերը, փոխանակ կարդալու այդ մեծ ստեղծագործությունը, կարդում էին փոքրը, որովհետև նա էլ հիմնականում պարունակում էր այն ամենը, ինչ որ կար մեծի մեջ: Այդ փոքր ձեռնարկը ևս Նասեր Խոսրովը ինքն էր կազմել իր մեծ ստեղծագործության ողով: Հեղինակն ասում է, որ ինքը 72 տարի գրադվել է Մովսեսի Հնգամատչանի, Սողոմոնի իմաստություն, Դավթի սաղմոսների և Մուհամեդի Ղուրանի ուսումնասիրությամբ և դասել է, որ այդ բոլորն էլ միևնույն բանն են ասում, հարկավոր է միայն թափանցել նրանց ներքին բովանդակության մեջ, որպեսզի այդ նույնությունը հասկանալի լինի: Ինքը՝ հեղինակը հասկացել է այդ նույնությունը և իր ստեղծագործության մեջ ավելի այն ամենը, ինչ որ կարելի էր գտնել նրանց մեջ: Բորբինսկին իր ճանապարհորդությունից վերադառնալով՝ մի հոգված է գրել, որի մեջ էլ պատմում է այս ամբողջը, բայց գիր-



բը չի կարողացել ձեռք բերել և եղած տեղեկություններն այդ զրքի մասին այդքանով սպառնում են:

Մինչև այժմ մեր թված ստեղծագործությունները բոլորն էլ մի կարգի են պատկանում: Բոլորն էլ դրված են իսմախիական աղանդի մասսայականացման նպատակով, ուստի և բոլորն էլ շոշափում են այդ դավանանքի այս կամ այն կողմը, դավանանքի փիլիսոփայական մեկնաբանությունը, բարոյախոսությունը, գործնական ցուցմունքներ, խրատներ և այլն, բոլորն էլ վերջ ի վերջո հանգում են այդ իսկ դավանանքին: Բայց բացի այդ դավանաբանական ստեղծագործություններից, մեզ հասել է նաև Նասեր խոսքովի քնարական բանաստեղծությունների գիվանքը: Լիրիկական բանաստեղծությունների մեջ շատ անգամ Նասեր խոսքովը հիշում է, որ ինքն արգեն 50—60 տարեկան է. նա ուղղակի ասում է, թե ինքն արգեն թուլացող ծերունի է: Այս մեզ համար կարևոր է այն պատճառով, որ այդ նշանակում է, թե նա իր քնարական բանաստեղծությունները գրել է այն ժամանակ, երբ շիա-խոյամական էր: Մյուս կողմից, այդ նշանակում է նաև, որ այս շրջանում նրա գրած նույնիսկ սիրային բանաստեղծությունները պետք է, որ հանգեին իր իսկ դավանած կրոնա-միստիկական համոզմունքներին և զգացումներին: Ճիշտ է, Գիվանի մեջ կան նաև հատվածներ, որոնք դրված են ավելի վաղ շրջանում, երբ նա դեռ շիա չէր դարձել, բայց դրանք շափազանց քիչ են: Իրեն իր երիտասարդությունն արգեն վաղուց ապրած մարդ, 50-ամյա բանաստեղծը չպետք է երգեր այն տարփական սերը, որ համախ կարելի է գտնել երիտասարդ բանաստեղծի մոտ: Նրա կրոնական հայացքներն անգամ թույլ չէին տալիս այդպիսի սեր երգելու: Ընդհակառակը, նրա բոլոր սիրային գեղումները կապված են աստծու հետ, որ, ինչպես հայտնի է, բոլոր սուֆիների մոտ էլ հանգես է գալիս իբրև միակ սիրահարը: Նրա քնարական բանաստեղծությունների մեջ հետաքրքիր է այն երևույթը, որ հավասարապես խոսում է բոլոր կրոնների մասին և ոչ մեկի նկատմամբ էլ թշնամանք չի արտահայտում: Ընդհակառակը, նա գտնում է, որ բոլոր կրոններն էլ, վերջ ի վերջո, իրենց ներքին իմաստով հանգում են նույն բանին: Ահա այս ներքին իմաստի ըմբռնումն է քարոզում իր բանաստեղծությունների մեջ: Նա գտնում է, որ ով չի հասկացել այդ ներքին ալլաբանական իմաստը, կրոնի ճշմարիտ հետևորդ չէ: Նա հարցնում է իր բարեկամներից մեկին. դու զնացել ես Մեքքա, արգյո՞ք արգելք գրեցիր քո այն վատ գործերի վրա, որոնք բաժանում են քեզ զթմաիրտ աստծուց: Բարեկամը պատասխանում է. — ո՛չ: Նա շարունակում է հարցնել. — Իսկ այն ժամանակ, երբ դու

կանգնեցիր Արաֆադ լեռան վրա, դարձա՞ր արդյոք դիտուն, աստծուն ձանաչող և հրաժարվեցի՞ր ինքդ քեզանից ու թափանցեցի՞ր արդյոք աստվածային դիտության մեջ: Պատասխանում է դարձյալ. — ո՛չ: Մի քանի այսպիսի հարց ու պատասխանից հետո, հեղինակը եզրակացնում է. ուրեմն դու ուխտագնացություն չես կատարել, այլ պարզապես տեսել ես Մեքքան ու վերադարձել: Այս տողերը պարզ ցույց են տալիս, որ Նասեր խոսքովի համար բավական չէ այս կամ այն արարողությունը կամ Մեքքա զնալն ու վերադառնալը. կարևորն այն է, որ մարդ թափանցել կարողանա աստվածային բացարձակ ճշմարտության խորքը:

Դիվանում շատ կարելի է հանդիպել իր կենսագրությունը առընչվող տողերի. դրանցից կարևոր են խորասանին և Բադախշանին վերաբերողները: Ինչպես հայտնի է, խորասանում նա հալածվել է և խորասանի նկատմամբ միշտ խիստ է արտահայտվել. խորասանում բոլորը գաղաններ են իր նկատմամբ և կամ խորասանը հայտնի չորհեղզն է, իսկ ինքը՝ նույն տապանը: Բադախշանի նրկատմամբ արտահայտվում է ճիշտ հակառակը. ինքը շրջապատված է հավատարիմ հետևորդներով և նրանց մեջ ինքն իրեն համարում է արքա:

Նասեր խոսքովի քնարական բանաստեղծությունների արժեքի մասին արևելագետները տարբեր կարծիք են հայտնում:

Էդվարդ Բրաունը, որ հատկապես ուսումնասիրել է նրա Դիվանը, գտնում է, որ արվեստի տեսակետից քնարական բանաստեղծություններն ավելի կատարյալ են, քան նախորդ պոեմները:

Իտալացի արևելագետ Իտալո Պիցցին ճիշտ հակառակն է գրանում: Նա ամբողջ Դիվանին ծանոթ չէ, ծանոթացել է միայն մի քանի հատվածների, որոնք տպված են «Սաֆար-նամեի» առաջաբանում: Ահա այդ հատվածներից նա եզրակացնում է, որ պոեմները գեղարվեստապես ավելի բարձր են, քան քնարական բանաստեղծությունները: Իհարկե այդ ճիշտ չէ: Պիցցին ծանոթ է միայն մի քանի հատվածների, որոնք լավագույններից չեն, և Կրիմսկին շատ տեղին կշտամբում է, որ եթե Իտալո Պիցցին ծանոթ լիներ ամբողջ Դիվանին, այդպիսի եզրակացություն չէր հանգի, մանավանդ որ ինքը՝ Պիցցին էլ այդ հատվածներից մեկը համարում է արտակարգ արժեք ներկայացնող բանաստեղծություն: Նրա խոսքերով, Նասեր խոսքովն այդ բանաստեղծության մեջ կուսճել է Դարվինի աստիճանական զարգացման միտքը: Այդ հատվածը հետևյալն է.







կողմն է, որով թարմ, այժմեական են դառնում նրանք: Նասեր Խոսրովը պարսկա-թաշկական գրականության ամենապայծառ ղեկավարից մեկն է, որի գրկան ժառանգության բազմակողմանի ուսումնասիրությունը սովետական արևելագիտության կարևորագույն խնդիրներից մեկն է:

## ՕՄԱՐ ԽԱՅՅԱՄ

Բանաստեղծ և փիլիսոփա Օմար Խայյամը մեկն է Արևելքի այն երգիչներից, որոնք համաշխարհային փառքի են արժանացել: Նրա ազդեցությունն այնքան մեծ է եղել Եվրոպայում, որ առաջ է բերել, այսպես կոչված, «Օմարյան ուղղությունը»: Ամերիկայում ստեղծված են «Խայյամյան ակումբներ», որոնք զբաղվում են Խայյամի քառյակների ու նրանց մեջ արտահայտված փիլիսոփայության ուսումնասիրությամբ: Դրան հակառակ, իր հայրենիքում Խայյամը մինչև վերջին տասնամյակները հարկ եղածից շատ ավելի նվազ պնդաստման ու ճանաչման է արժանացել: Դրա պատճառն, անշուշտ, մահմեդական ուղղափառ կրոնավորների բացասական վերաբերմունքն է եղել, կրոնավորներ, որոնք Խայյամին անհավատ են հաշակել: Թերևս այդ բացասական վերաբերմունքն է եղել պատճառը, որ Խայյամի կենսագրությունը պաշտոնական տարեգրությունների մեջ տեղ չի գտել ու մոռացման է մատնվել:

Խայյամի ծննդյան թվականը հայտնի չէ, բայց ելնելով այն տեղեկությունից, որ նա վախճանվել է 1123 թվականին 83 տարեկան հասակում, արևելագետները, որոշ վերապահությամբ, նրա ծննդյան տարին համարում են 1040 թվականը: Մենդավայրն է արևելյան հորասանի Նիշափուր քաղաքը կամ նրա մերձակա գյուղերից մեկը: Հայրը, կամ դուստր և պապը, եղել է վրանագործ, որից և Օմարը վերցրել է իր բանաստեղծական մականունը:

Թե ինչպես է անցել Խայյամի կյանքը, հայտնի չէ: Բայց եթե պաշտոնական տարեգրությունները կենսագրական տեղեկություններ չեն պահպանել նրա մասին, ապա, զբա փոխարեն, ժողովուրդն ստեղծել է իր գեղեցիկ ավանդությունն ու դարերի խորքից հասցրել մինչև մեր օրերը: Ավանդությունը պատմում է, որ մոտավորապես 1042 թվականին Խայյամն իր ծննդավայրից եկել է Նիշափուր քաղաք՝ այնտեղի նշանավոր մադրասիում սովորելու: Այդտեղ և Խայյամը մտերմանում է երկու դասընկերների՝ Աբուլ Ղասեմի և



Հասան Սարբաճի հետ: Մի օր, երբ երեք ընկերները զրուցում ու երտազում էին ապագայի մասին, հայրամյն ասում է. «Եթե դպրոցն ավարտելուց հետո մեզինից մեկն ու մեկին բախար ժպտա, և նա նշանավոր մարդ գտնա ու մյուս երկուսին իր շնորհներով օգնի, շատ դարձանալի բան կլինի»: Մյուս երկուսը խանդավառված պատասխանում են, թե դա հենց այդպես էլ պետք է լինի: Եվ երեք ընկերներն անմիջապես երգվում են մինչև վերջ հավատարիմ լինել միմյանց և միշտ օգնել իրար: Այդ ուխտը նրանց ոգևորում է և երեք դասընկերներն էլ ավելի ջանասիրությամբ են սկսում սովորել:

Երեք ընկերներից հայրամյն ավելի շատ տարված էր կրօնափիլիսոփայական խորհրդածություններով: Արդույ Հասանն ավելի գործունյա էր ու փառատենչ: Նա ձգտում էր պալատական պաշտոնի: Հասան Սարբաճը, թեև նվազ ընդունակությունների տեր, բայց խիստ փառամուլ էր ու ձգտում էր պետական բարձր դիրքի:

Դպրոցն ավարտելով՝ երեք ընկերներից յուրաքանչյուրն իր բախտի ետևից է գնում: Արդույ Հասանը երկրի կառավարման մասին գրած իր աշխատությամբ կարճ ժամանակից հետո նշանավոր անձնավորություն է դառնում սելջուկյան հարստության երկրորդ տերակալ Ալի Արսլանի մոտ: Վերջինս նրան արքունիք է հրավիրում ու անձնական քարտուղար նշանակում, բայց աստիճանաբար բարձրացնելով նրա պաշտոնը՝ վեզիրի աստիճանին հասցնում ու նեղամ ալ-Մուք պատվավոր տիտղոսը շնորհում:

Շուտով նրա երկու ընկերները՝ հայրամյն ու Սարբաճը լսում են այդ մասին ու մի օր երկուսով դիմում նրան: Նեղամ ալ-Մուքը, հավատարիմ իր երգմանը, հարցնում է, թե ինչ կկամենային նրանք, և նրանց ցանկության համաձայն, հայրամյն հանձնում իր հայրենական գյուղը, իսկ Սարբաճին՝ արքունի պաշտոն տալիս:

հայրամյն, նյութական որոշ ապահովություն ստանալով, նվիրվում է իր սիրած զրադմունքին՝ աստղաբաշխությունն ու բանաստեղծություններ: Այս ավանդությունն առաջին անգամ հիշված է XIV դարի սկզբներին գրված տարեգրությունների մի ժողովածուի մեջ, ապա՝ ավելի ընդարձակ՝ նեղամ ալ-Մուքին վերադրվող «Խրատներ» գրքում: Հետագայում, ընդունվելով որպես հայրամյն իրական կենսագրությունը՝ շարունակ գրի է առնվել:

Այդ ավանդությունն, իհարկե, չի կարելի հավաստի համարել: Նրա մեջ ժամանակագրական այնպիսի անճշտություններ կան, որ միանգամայն անհավանական են դարձնում այդ ամբողջ պատմությունը: Գրանցից ամենակարևորն այն է, որ հայրամյն չէր

կարող Հասան Սարբաճի և, մանավանդ, նեղամ ալ-Մուքի դասընկերը լինել: Նեղամ ալ-Մուքն արդեն պալատական պաշտոնյա էր հայրամյնի պատանեկության տարիներին: Երկրորդ կարևոր փաստն այն է, որ նեղամ ալ-Մուքին վերագրվող «Խրատները» նրա գրչին չեն պատկանում, այլ գրվել են XIV դարի վերջերում, XV դարի սկզբում, ուրիշ հեղինակի կողմից և, հետևաբար, նրա մեջ բերված ավանդությունը ժամանակակցի վկայություն չէ: Իրականությունն այն է, որ հայրամյն, ավարտելով նիշափուրի դպրոցը, զբաղվել է բանաստեղծությամբ ու փիլիսոփայությամբ, արժանացել նեղամ ալ-Մուքի հովանավորությունն ու նրա շնորհով 70-ական թվականներին ընդունվել Մերվ քաղաքի արքունական աստղագիտարանը՝ որպես աստղագետ: Նրա այդ շրջանի գործունեության մեջ ամենակարևորն այն է, որ մոտավորապես 1079 թվականին, իր պաշտոնակիցների օժանդակությամբ, հիմնեց նոր, Ջալալյան կոշված տոմարը, որով վերականգնվում էր հին պարսկական տոմարը՝ որոշ փոփոխություններով. այդ տոմարի հիմքն է կազմում արևալին տարին: հայրամյն գրել է նաև մաթեմատիկական և աստղագիտական գրքեր, որոնք օգտագործվել են նաև միջնադարյան Եվրոպայում:

Թեև իր հայրենիքում հայրամյն հոշակվել է առավելապես որպես աստղագետ, բայց համաշխարհային փառք է նվաճել իր քառյակներով: Եվ, շնայած դրան, մինչև այժմ էլ հայրամյնի ստեղծագործությունները վերաբերող շատ կարևոր հարցեր սպառնիչ պատասխան չեն ստացել: Գրանցից հիմնական հարցը, որ դեռևս լուծված համարել չի կարելի, այն է, որ մինչև այժմ էլ վերջնականապես հաստատված չէ, թե հայրամյնի սեփական քառյակները որոնք են: Տարբեր հրատարակությունների մեջ և տարբեր ուսումնասիրողների մոտ հայրամյն վերագրվող քառյակների թիվը տատանվում է 200—1000-ի միջև: Որ այդ քառյակների մի մասը իրոք հայրամյնը չէ, հաստատվում է ինչպես որոշ քառյակների բանաստեղծական կողմի թույլությամբ, այնպես էլ նրանց մեջ արտահայտված այն դադափարներով, որոնք տրամաբանորեն հակադիր են հայրամյնի աշխարհայացքին: Նույնիսկ շատ այնպիսի քառյակներ էլ, որոնք աշխարհայացքին համապատասխանում են հայրամյնի աշխարհայացքին, ինչպես ուսումնասիրողների կողմից պարզված է, գրվել են ուրիշների կողմից ու վերագրվել են նրան: Այստեղից էլ, ահա, բխում է հայրամյնի քառյակների թվի անորոշությունը, և, որ շատ կարևոր է, այդ քառյակների մեջ արտահայտված մտայնությունն ու տրամադրությունների հակասությունը: Այդ պատճառով



էլ խայճամի ստեղծագործութիւնը զնահատելիս պետք է հիմնվել այն քառյակների վրա, որոնց մեջ արտահայտված է հիմնական, բոլոր քառյակների մեջ զերիշխող մտայնութիւնը: Իսկ խայճամի քառյակների մեջ հիմնականը մատերիալիզմն է: Նրա բոլոր դրույթների ու տրամադրութիւնների հիմնական է մատերիալիստական աշխարհայացքը: Խայճամը դիտում է աշխարհն իբրև օբյեկտիվորեն, իրենից դուրս և իրենից անկախ գոյութիւն ունեցող ռեալ իրականութիւն: Նյութական աշխարհը եղել է, կա ու կլինի իրենից հետո, այսպես է ասում աշխարհի մասին հետեւյալ քառյակում.

Իմ աշխարհ գալուց և ոչ մի օգուտ էլ չունեցավ նա.  
Դեմս էլ, նա ոչ կգեղեցկանա, ոչ կնոխանա.  
Եվ գույգ ականչա մեկից շտեց, թե մարդս ինչո՞ւ  
Աշխարհ պիտի գա և գալուց ինչո՞ւ պիտի հեռանա!...

Դիտելով աշխարհն իբրև իրենից անկախ, օբյեկտիվորեն գոյութիւն ունեցող իրողութիւն, խայճամը կարողացել է ըմբռնել օբյեկտիվ աշխարհի անընդհատ փոփոխութիւնը, որ նրա մտա արտահայտվում է որպէս իրերի ու առարկաների մի անվերջ պտույտ, որպէս նյութի փոփոխութեան անընդհատ շրջապտույտ.

Այս կուժն ինձ պես վշտոտ սիրահար է եղած,  
Յարի վառսին զերի մի անհար է եղած,  
Այն կանթը, որ տեսնում ես կոր նրա վզին,  
Մի թե է, որ յարի բոլոր փար է եղած...

Այս շրջապտույտը խայճամի մտա այնքան ցայտուն կերպով է արտահայտվել և այնքան բազմազան օրինակներով, որ կարելի է ասել, թե նրա քառյակների հիմնական մտքի վեճերից մեկը մատերիալի փոփոխութիւնների արտահայտումն է: Նա մարդու մարմնի հողն է տեսնում ո՛չ միայն կավե սափորի, այլև կակաշի, մանուշակի, կենդանիների ոտքի տակ ընկած փշի մեջ: Այս տեսակետը շատերին առիթ է տվել կարծելու, թե խայճամն այդ բոլոր քառյակների մեջ պանթեիզմ է քարոզում: Սակայն դա միանգամայն սխալ է: Խայճամի այդ կարգի քառյակներում նրա մատերիալիզմն է արտահայտված, այն սկզբունքը, որ նյութը, մատերիան չի կորչում,

<sup>1</sup> Բոլոր քառյակները մեջ ենք բերում Ա. Աթայանի թարգմանութեանից (Օժար խայճամ, Քառյակներ, Երևան, 1959):

չի ոչնչանում, որքան էլ փոփոխվի նրա վիճակը, որքան էլ նորանոր ձևերով դրսևորվի այն: Մատերիալիզմի դիրքերից ելնելով՝ խայճամը ոչ միայն պանթեիզմ չի քարոզում, այլև հանգում է աթեիզմին: Բազմաթիվ են այն քառյակները, որոնց մեջ նա քննադատում է կրոնավորներին, և՛ կրոնը, և՛ աստուծուն, նրա աստվածամերժութիւնը պարզապէս հանգում է աստծու ծաղրին.

Գինուս սափորը կուտեցիր, տեր աստված,  
Քեֆիս դուռն իմ դեմ փակեցիր, տեր աստված,  
Ես եմ խմում, դո՞ւ ես անում գժուրչում...  
Հողը՝ բերնիս, թե՞ հարբեցիր, տեր աստված:

Խայճամի մասին պատմվող ավանդութիւններից մեկն ասում է, թե այս քառյակը գրելուց հետո աստված պատժել է նրան ու մի Երեսը սեացրել: Հայելու մեջ այդ բանը տեսնելով՝ իբրև ապաշխարանք գրել է մի քառյակ, որի մեջ, իրականում, դարձյալ կծու ծաղրի է ենթարկում աստուծուն.

Այս աշխարհում ո՞վ չի մեղանշում, ասա՛,  
Չմեղանշողն ի՞նչպէս է շնչում, ասա՛,  
Ես վատ անեմ, դու էլ վատով ինձ պատժես,  
Տարբերությունն ի՞նչ է մեր միջումն, ասա՛:

Աստուծուն ուղղված նրա ծաղրն այնտեղ է հասնում, որ նա կըշտամբում է աստծուն իր արածների, հատկապէս մարդուն մահանացու ստեղծելու համար: Նա պարզապէս գտնում է, որ եթե աստված է ստեղծել մարդուն, և նա էլ մեռցնում է, ապա դա կամ նրա համար է, որ ստեղծածը վատ է, կամ էլ պարզապէս անխմատ արարչութիւն է.

Աւարիչը թե աշխարհն ստեղծեց նպատակով,  
Ինչի՞ համար է մեկ էլ փոփոխում ամենն ամեն օր,  
Թե որ ամեն ինչ լավ է դուրս եկել, ինչո՞ւ է շնչում,  
Իսկ եթե լավ չէ, բացի իրանից, ո՞վ է մեղավոր...

Այս բոլորը պարզ կերպով ցույց են տալիս, որ խայճամը ոչ միայն պանթեիստ չի եղել, այլև առհասարակ թերահավատ է եղել աստծու գոյութեան նկատմամբ: Ինչ վերաբերում է կրոնավորների նկատմամբ ունեցած վերաբերմունքին, ապա այստեղ խայճամի



ծաղրն ու քննադատութիւնը է՛լ ավելի սուր են: Նա կրօնավորներին քննադատում է ստի, կեղծիքի համար, ցույց տալիս, որ նրանք թաքուն անում են այն ամենը, ինչ որ հրապարակով արգելում են ուրիշներին.

Քե չես խմում, մի՛ էլ ծաղրիր խմողներին,  
Գաղար տուր այդ քո սուտ ու փաւա խրատներին,  
Գլուխ տարա՛ր հուզորելով, որ շամեմ,  
Քո բյուրավոր մեղքերի մառ ի՞նչ է գինին...

Մի ուրիշ քառյակում իրեն մեղադրող խոջային նա կշտամբում է այն բանի համար, որ նա լավ չի տեսնում, արդարադատ չէ և ասում է. «Մենք ուղիղ ենք գնում, բայց դու միշտ ծուռ ես տեսնում, դնա, աշքերդ բուժիր և հետո մեզ դատիր: Նույնպիսի խստութեամբ նա քննադատում է իսլամական օրենսդրոտին, որը մեղադրում է գինի խմողներին, իսկ ինքը մարդկանց արշունն է ծծում.

Ով օրենսգետ, քո սրտից մերն է ազնիվ բարախում,  
Այսօր խմած, մենք քեզից շատ խելք ունենմ մեր գլխում,  
Գու մարդկային արշունն ես խմում, իսկ մենք խաղաղի,  
Խղում դատիր, մեզանից ո՞վ, ո՞վ է շատ արեախում...

Ինչպես տեսնում ենք, մատերիալիզմի դիրքերից ելնելով՝ Խաչյա՛մը հանգում է ամբիզմին, քննադատում կրօնն ու կրօնավորներին, մերկացնելով վերջիններիս կեղծ բարեպաշտութիւնը: Սակայն Խաչյամի մատերիալիզմը, կյանքի ճանաչողութիւնը, հասարակական շարիրքը նկատելը նրան հանգեցնում են ոչ թե կյանքը փոխելու ձգտումին, այլ հասեանալիս և նույնիսկ՝ նիհիլիզմի եզրնական է, եթե հաշվի առնենք այն դարաշրջանի տնտեսական ու բաղադրական կացութիւնը, որում ապրել ու ստեղծագործել է Խաչյամը: X—XIII դարերը Իրանի պատմութեան ամենաբուռն խռովութիւններով բնորոշվող մի շրջան էր: Միմյանց ետեից հանգես եկող թագավորական հարստութիւններն ու նրանց արագ կործանումը՝ մի կողմից, և թուրքերի, սելջուկների, ապա և մոնղոլների արշավանքները մյուս կողմից, քայքայում էին Իրանը: Իսկ Խաչյամըն ապրել է սելջուկների տիրապետութեան առաջին շրջանում: Երկրի քայքայումը, սելջուկների բռնութիւնները, հասարակական կյանքում առանց այդ էլ գոյութիւն ունեցող շարիրքները դեպի հոսեանալիս էին մղում Խաչյամին, որ ուրիշ էլք գտնել չէր կարո-

ղանում: Անգոր գտնելով իրեն հասարակական շարիրքների դեմ, անգոր՝ մահվան դեմ, իր աչքով տեսնելով, թե ինչպես երեկվա իշխանավորն այսօր մութացիկ է դարձել, նա քարոզում է վայրկյանից օգտվելու դավանանքը, ժխտում ամեն ինչ, բացի ներկա վայրկյանի վայելքից.

Գաշտի հովի պես, նման պիլի,  
Այս օրն էլ անցավ իմ ու քո կյանքի...  
Ինձ քա՛ չեմ քաշի երկու օրվա հոգս,  
Մեկ՝ անցած օրվա, մեկ էլ՝ գալիքի...

Ընդունելով, որ կյանքը և տիեզերքը եղել են իրենից առաջ ու հետո էլ պիտի լինեն, նա դարձյալ ափսոսում է, որ իր կյանքը կարճ պիտի լինի, և գտնում է, որ հենց այդ պատճառով էլ ուրիշ անելիք չի մնում, քան կյանքի վայելքներից օգտվելը:

Քանի իմ կամքով չէր այս աշխարհ գալն առաջին անգամ,  
Եվ արդար բան չէ իմ այս անմարագ երթալն էլ անկամ,  
Վեր կաց ու գամիդ ամբարտու կարգին, ով կայտառ սաղի,  
Պիտի աշխարհի ցավն այդ գինու մեջ սուգան, լվանամ:

Բայց գինին ու վայելքներն էլ չեն օգնում: Վայրկենական մոռացումը չի կարող ափսփել մարգու ցավերը, չի կարող փոխել դառն իրականութիւնը: Եվ, ահա, Խաչյամը հանգում է արամարանական եզրակացութեան՝ ամեն ինչի ժխտմանը, ամեն ինչի բացառմանը: Ոչ մի բան մնալուն չէ, ոչ մի բան արժեք չունի, ամեն ինչ ոչինչ է՝ ունայնութիւն ունայնութեանց.

Աշխարհ տեսար, ինչ էլ տեսար, ոչինչ է,  
Ինչ ասացիր, ինչ խմացար՝ ոչինչ է,  
Մայրից քե ծայր աշխարհ անցար, ոչինչ է,  
Քե սողալով տանն էլ կացար, ոչինչ է:

Տեսնելով իրական կյանքի անընդհատ փոփոխութիւնները, գտնելով, որ կյանքն ինքնին մի անվերջ շրջապտույտ է, որ հանգեցնում է նյութի մի վիճակից մյուսի փոխանցմանը, Խաչյամը միաժամանակ տեսնում է, որ այդ շրջապտույտի մեջ մարդու կամքըն ու ցանկութիւնը ոչ մի արժեք չունեն: Բայց օբյեկտիվ իրականութեան մեջ տեղի ունեցող անընդհատ շարժումը նա չի կարո-



դանում գիտել որպես երևույթների փոխադարձ պայմանավորվածության ու կապի օրինաչափ հետևանք, այլ հանդում է ֆատալիզմին: Իսկ ֆատալիզմին կարելի էր հանգել երկու ճանապարհով. նախ՝ կրոնական գիրքերից ելնելով և անվերապահորեն ընդունելով, որ ոչ մի բան չի կարող փոխվել, մի մազ անգամ չի կարող պակասել առանց ասածու կամքի: Մահձեղական շխտարհում այսպիսի ֆատալիզմի շերտնուանդ քարոզիչներն էին սյուննիզմի հետևորդները: Բայց, իհարկե, խոսքումն կապել սյուննիզմի հետ, իսկ այդ նշանակում է՝ դարձնել շերտնուանդ դուրանական, չի կարելի: Բավական է հիշել միայն մի քառյակ, իմանալու համար նրա վերաբերմունքը մզկիթի ու կրոնական արարողությունների նկատմամբ.

Թեև կարիքն է ինձ բերել մզկիթը,  
Աղոթքը չէ, սակայն, գալուս առիթը,  
Այստեղ մի օր մի սեջջադե գողացա,  
Մաշվեց, նար տանելն ընկավ իմ միտը:

Սյուննիզմի տեսանկյունից այս «պիղծ» վերաբերմունքը մզկիթի նկատմամբ բավականաչափ ցայտուն արտահայտություն է թե՛ այդ ուղղության և թե՛, առհասարակ, կրոնի նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքի: Սյուննիզմի որևէ հետևորդից մզկիթի նկատմամբ այդպիսի անպատվաբեր գիտավորություն՝ սեջջադե գողանալու մտադրություն սպասել՝ անթույլատրելի էր: Ուստի և խոսքումն ֆատալիզմը պետք է գիտել բոլորովին այլ տեսանկյունով: Փրիխտիայություն պատմությունից հայտնի է, որ շատ փիլիսոփաներ, մեխանիկոսներ ըմբռնելով իրերի ու երևույթների կապն ու փոխադարձ պայմանավորվածությունը, հանգել են ֆատալիզմին: Խոսքումն էլ ճիշտ այդպես, շխտողանալով ըմբռնել իրերի ու երևույթների ներքին կապն ու պայմանավորվածությունը, մեխանիստոսներն է գիտում կյանքում կատարվող անխուսափելի ու անդիմադրելի փոփոխություններն ու հանգում ֆատալիզմին: Եվ որովհետև այդ ֆատալիզմը նրան թեկադրում է, թե մարդը ոչնչով չի կարող փոխել իր վիճակը, ապա գտնում է, որ նախապես արդեն, ի վերուստ, սահմանված են բոլոր ուրախություններն ու վշտերը, որ մեզ բաժին պիտի ընկնեն, աղոթքներով ու անձրեի պես առատ արցունքներով չի կարելի փոխել այն, ինչ որ նախասահմանված է, ուստի և՛ ոչնչի մասին

հոգալու հարկ չկա, ամեն ինչ կկատարվի այնպես, ինչպես որ պետք է կատարվի:

Առաջուց է գրված՝ ինչ պիտի լինի,  
Գրիչն էլ լավին ու վատին փայլք չունի,  
Քո վիճակն ինչ պիտի լինի՝ որոշ է,  
Էլ գուր եոգ ու ջանք ի՞նչ պիտի շինի...

Այդ է պատճառը, որ նա, վերջին հաշվով, մահվան հետ էլ հեռուստիայում է հաշտվում, թեև ցավով: Իսկ այս էլ, իր հերթին, կրկին նրան մղում է դեպի վայելքները, դեպի կեր ու խումբը և սիրածի գրկում ինքնամոռացում գտնելուն: Կյանքը վայելելու այդ տենչը հանդերձյալ կյանքի ու գծոխքի սարսափներն էլ չեն կարողանում դապել:

Ասում են թե դժոխք կերթա ամեն հարբան,  
Ասեն, բայց ես չեմ ընդունում այդպիսի բան,  
Եթե սիրողն ու խմողը դժոխք գնան,  
Դեռալար լեղ կտեսնես վաղն ափիս նման:

Եվ քանի որ բոլորը կշտամբում էին նրան, համոզելով, թե խմելն ու սիրելը մեղք է, և աստված այդ մեղքի համար նրան դժոխքում այրել կտա, ապա նա հանգիստ կերպով՝ փրիխտիայորեն պատասխանում է.

Աստված երբ որ վարդի պես մեզ բալուխ կյանք բերավ,  
Կրեւե, որ մեք գործերը լինելու են վատ, թե լավ,  
Ուտեմն, առանց նրա կամքի ոչ մի հանցանք չենք գործում,  
Գեճեճում վերջն այրվելը էլ որտեղի՞ց դուրս էլավ...

Բայց միայն այդքանը չէ. որ կյանքը տեցողիկ է, որ ոչ ոք իր վաղվա վիճակը չի կարող իմանալ, այս քաջ հայտնի է բանաստեղծին, և դրա համար էլ նա քարոզում է վայելել ներկա պահը, վերջը՝ նեղ կյանքից հնարավորը, իսկ նրան վախեցնում են դժոխքով: Բայց ո՞վ է ասում, թե դժոխքը իսկապես գոյություն ունի: Խոսքումն, որ վաղվա օրվա հավատը չունի, քնականաբար դժոխքի հավատից էլ դուրիկ է, նա կատարում է հանդերձյալ կյանքին, «ապառիկ դրախտին» ու բացականչում.



Ոչ ոք հանդերձյալ կյանք չի տեսել, սի՛րա,  
Ոչ ոք այն կյանքից մեզ չի հասել, սի՛րա...  
Մեր հույսը դրել ենք մի բանի վրա,  
Որի ձայնն անգամ մարդ չի լսել, սի՛րա...

Այսպես, սրեմն, ելնելով մատերիալիզմից, հայրամբ, շնորհա-  
դանալով, այնուամենայնիվ, ըմբռնել կյանքի օրինաչափություն-  
ները, հանգում է ֆատալիզմին ու նիհիլիզմին, իսկ այստեղից էլ՝  
կյանքի վայելքներից հախուռն կերպով օգտվելու և ամեն ինչից  
հրաժարվելու քարոզին: Սրանք են, ահա, նրա աշխարհայացքի  
հիմնական կետերը, նրա քառյակների մեջ արտահայտված գլխա-  
վոր արամադրությունները: Այդ ամբողջ փիլիսոփայությունը, սա-  
կայն, իբրև տեսական փերլուստություն չի արտահայտվել նրա քառ-  
յակների մեջ, ընդհակառակն, նրա բոլոր հույսերումն են ու խոհերը  
արտահայտված են խոր հուղականությամբ ու գեղարվեստական  
խոսքի մեծ վարպետության ուժով:

Խայրամբ քառյակի անգերագանցելի վարպետ է, նա արտա-  
կարգ հմտությամբ ամենասովորական երևույթների մեջ կարողա-  
նում է գտնել հուղականը, կարողանում է ամենասովորական իրերի  
մեջ տեսնել կյանքի շարժումը և արտահայտել դրանք գեղարվես-  
տական արտակարգ կատարելության մեջ:

Քառյակն, իբրև բանաստեղծական ժանր, պահանջում է մի-  
այն շորս տողի մեջ արտահայտել մի ամբողջական, ավարտված  
բովանդակություն, ավարտված միայն: Եվ խայրամբի քառյակներից  
յուրաքանչյուրն, իրոք, փիլիսոփայական խոր բովանդակություն է  
արտահայտում իր գեղարվեստական ձևի կատարելության մեջ:  
Սրանով է բացատրվում, ահա, խայրամբի քառյակների հմայքը,  
խայրամբի ազդեցությունը համաշխարհային գրականության վրա,  
նրա ստեղծագործության անմահությունը:

## ՆԻՉԱՄԻ ԳՅԱՆՁԵՎԻ

Նիգամին մեկն է անցյալի այն նշանավոր մտածողներից, ու-  
րոնք իրենց ստեղծագործություններով նշանակալից ափանդ են  
թողել համաշխարհային գրականության գանձարանում: Լինելով  
մեծ տաղանդի տեր և կրելով իր ժամանակի առաջավոր գաղա-  
փարները՝ Նիգամին իր ստեղծագործություններով ժողովրդական  
լայն զանգվածների սիրելին է դարձել ոչ միայն իր հայրենիքում՝  
Ադրբեջանում, այլև արևելյան շատ երկրներում (Ուղբեկստան,  
Քաջիկստան, Իրան, Հնդկաստան և այլն): Նրա երկերի հերոսները,  
հասկապես Լեյլին ու Մեջնունը, որպես դժբախտ սիրահարների  
կերպարներ, հանրաժանոթ են արևելյան բոլոր ժողովուրդներին և  
ամբողջ Արևելքում դարեր շարունակ համեմատությունների ու բու-  
նաստեղծական պատկերների աղբյուր են հանդիսացել:

Նիգամին ապրած ժամանակաշրջանի՝ տասներկուերորդ դարի  
Ադրբեջանը բնորոշվում է տնտեսական ու մշակութային բուռն վե-  
րելքով: Առանձնապես աչքի է ընկնում խոշոր ֆեոդալական քա-  
ղաքների զարգացումը, որոնք մեծ գեր են խաղում երկրի տըն-  
տեսական ու մշակութային կյանքում: Բուրժուական արևելագի-  
տությունն այդ էպոխայի մշակույթի զարգացումը Անդրկովկասի  
ժողովուրդների մոտ կապում է սելջուկների տիրապետության հետ:  
Առանց նկատի առնելու Արևելքի ժողովուրդների, առանձնապես  
Անդրկովկասի ժողովուրդների սոցիալ-տնտեսական զարգացումը,  
առանց հաշվի առնելու այդ ժողովուրդների կյանքում կատարված  
ներքին տեղաշարժերը, այդ արևելագետները XI—XII դարերի  
Արևելքի տնտեսական ու մշակութային-քաղաքական վերելքը վե-  
րադրում են սելջուկներին: Մինչդեռ սելջուկները ի վիճակի չէին  
զարգացնելու իրենց զրաված երկրների ո՛չ տնտեսությունը և ո՛չ էլ  
մշակույթը հենց այն պարզ պատճառով, որ նրանք տնտեսական  
ու մշակութային զարգացմամբ շատ ու շատ ցածր էին կանգնած  
իրենց նվաճած ժողովուրդներից: Նախապես պետք է շեշտել, որ սել-



շուկները՝ տիրելով Անդրկովկասին, աշխուսամենայնիվ, չկարողացան իրենց ենթարկել երկրի տնտեսական կյանքն՝ ամբողջությամբ վերցրած, և, դրա շնորհիվ էլ, չկարողացան փոխել երկրի տնտեսական կերպարը: Այս իր հերթին արդյունք էր այն բանի, որ՝ ա) սելջուկյան լայնատարած տիրապետություններում անմիջապես ծայր առան կենտրոնախույս ձգտումներ, և շուտով երևան եկան կիսանկախ կամ բոլորովին անկախ իշխանություններ. բ) Ադրբեջանի մի զգալի մասը՝ Շիրվանը, ամբողջ սելջուկյան շրջանում միայն մի կարճատև ժամանակ, այն է՝ սելջուկյան սուլթան Մելիք-Շահի (1072—1092) օրոք ենթարկվեց սելջուկներին, և շիրվանաշահերը հարկատու եղան նրանց: Հենց այս հանգամանքներն էլ կարևոր դեր խաղացին Ադրբեջանի տնտեսական ու մշակութային զարգացման ասպարեկում: Տասներկուերորդ դարը հանդիսանում է Շիրվանի անցյալի պատմության ամենափայլուն շրջաններից մեկը: Վարչական ու տնտեսական անկախությունը դարձ է տալիս Շիրվանի հետագա հզորացմանը, իսկ այդ շափազանց մեծ նշանակություն է ունենում ամբողջ Ադրբեջանի համար: Նույն տասներկուերորդ դարում (1136 թ.) սելջուկյան կործանվող պետության ընդարձակ տիրապետությունների մեջ բարձրացող անկախ իշխանությունների թվում կազմվում է նաև Ատրպատականի ավարեկությունը, որի մեջ մտնում է և Գյանջան: Մինչև 1152 թվականը ավարեկ իլդիզբը ենթակա էր սելջուկյան գերագույն իշխանությանը, բայց սուլթան Մասուդի մահվանից հետո յուր ավարեկությունը դարձրեց անկախ ու ինքնուրույն իշխանություն: Ահա հենց այս երկու իշխանություններն էլ հանդես են գալիս իբրև երկու հիմնական ֆեոդալական կենտրոններ, որոնց շուրջը համախմբվում են երկրի ամբողջ ֆեոդալական ուժերը: Վերջապես, Ադրբեջանի կյանքում շափազանց նշանակալից դեր է խաղում Վրաստանի հետ կնքած դաշինքը շիրվանաշահերի կողմից: Երկու հարևան ժողովուրդները ոչ միայն միացյալ ուժերով կռվում են թշնամիների դեմ, այլև տնտեսական սերտ հարաբերություններով մեծապես նպաստում երկու երկրների տնտեսական ու մշակութային զարգացմանը:

Չափազանց կարևոր դեր է խաղացել Ադրբեջանի զարգացման գործում մի ուրիշ հանգամանք ևս: Տասը-տասներկուերորդ դարերը նշանավոր են Ադրբեջանի պատմության մեջ էթնիկական կազմի զգալի փոփոխություններով: Այդ դարերի ընթացքում Ադրբեջանի տերիտորիայում բնակություն են հաստատում օգուզների, զալաղների, թուրքմենների և այլ թրքալեզու ցեղեր, որոնք բնիկանրության շնորհիվ հեշտությամբ ձուլվում են մինչև այդ Ադրբեջանում

եղած թրքալեզու ուրիշ ցեղերի հետ: Այս հանգամանքը մեծ դեր է խաղում ադրբեջանական ժողովրդի վերջնական կազմավորման պրոցեսում: Նախ՝ հենց տեղի և եկվոր թրքալեզու ցեղերի ունեցած գերակշռության շնորհիվ շուտով ադրբեջաններենը դառնում է Ազրբեջանի բնիկանրության էթնիկական լեզուն: Ինչպես արդեն ձիշտ կերպով նշել են սովետական արևելագետները, տասներկուերորդ դարում ոչ միայն ուժեղանում է ադրբեջանական ցեղերի միավորումը, այլև առավել հին ու բազմաթիվ ցեղային լեզուներին փոխարինում է կազմավորվող ադրբեջանական միասնական էթնիկական լեզուն՝ ամբողջ Ադրբեջանի տարածքում: Այդ, մյուս կողմից, նըպաստեց նաև տեղական այլ ցեղերի ձուլմանը՝ ադրբեջանական ժողովրդին: Այս էթնիկական վերակազմավորումն էլ, ահա, իր հերթին մեծապես ազդեց Ադրբեջանի սոցիալ-տնտեսական զարգացման վրա:

Առաջ եկած խոշոր ֆեոդալական քաղաքներն աստիճանաբար է՛լ ավելի մեծ կշիռ են ստանում երկրի կյանքում, իսկ այդ քաղաքներում կենտրոնացող բազմազգի արհեստավարական ու առևտրական տարրերը ուժգին թափով զարգացնում են արհեստագործությունն ու առևտուրը: Այդ է վկայում այն փաստը, որ հենց այդ ժամանակաշրջանում առանձնապես զարգանում են Գյանջային զուգընթաց այնպիսի քաղաքներ, ինչպիսիք են՝ Նախիջևանը, Բայլաքանը, Շամախին, Գերբեկը: Թեև այդ բոլոր քաղաքներն էլ ուղղակի կախման մեջ էին ֆեոդալ-տիրակալից, բայց և այնպես վաճառականական և արհեստավորական խավերն օգտվում էին ինքնավարության որոշ եղանակներով:

Այս էպոխայում առհասարակ ուժեղանում է դասակարգային պայքարը ֆեոդալականության դեմ: Ուշագրավ են առանձնապես արհեստավորների գաղտնի ընկերությունները: Դրանք մի տեսակ ինքնապաշտպանության կազմակերպություններ էին, որոնց նպատակն էր պաշտպանել արհեստավորների շահերը և հնարավորին չափ արգելք հանդիսանալ վերնախավի կողմից ծայրահեղ շափերի հասցված կեղերմանը: Այդ բոլոր քաղաքների մեջ թե՛ տնտեսական և թե՛ մշակութային ասպարեկում առաջնակարգ տեղը գրաստաններն ու առևտուրը. այս բանում անհրաժեշտ է նշել Վրաստանի դերը, որ սերտ հարաբերությունների մեջ լինելով Գյանջայի հետ, անշուշտ, նպաստավոր դեր է խաղացել արհեստների ու առևտրի և բնիկանրապես քաղաքային կյանքի զարգացման գործում:

Քաղաքների զարգացմանը զուգընթաց XII—XIII դարերում



առանձնապես մեծ թափով է զարգանում նաև մշակույթը: Քաղաքներում կենտրոնացած բազմազգի արհեստավորական-առևտրական խավերը մեծապես զարկ են տալիս քաղաքային մշակույթի վերելքին: Հենց այդ իսկ արհեստավորների ձևերով կերտվում են արվեստի այնպիսի հուշարձաններ, որոնք այդ զարաշրջանի պարծանքն են կազմում. դրանց զարգացումն իր հետ բերում է նաև գիտության որոշ ճյուղերի՝ մաթեմատիկայի, բժշկության և այլն, ըզզալի առաջընթաց:

Անշուշտ, ինչպես ճարտարապետական կառուցումների ու մետաղյա իրերի պատրաստման բարձր արվեստի հանդես գալը, այնպես էլ առհասարակ մշակույթի ու գիտության զարգացումն այդ էպոխայում, մի ժողովրդի նվաճում չի կարելի համարել: Դա պայմանավորված էր ամբողջ Անդրկովկասի տնտեսական ու մշակութային վերելքով, իսկ Ադրբեջանն այդ էպոխայում, ինչպես գիտենք, Անդրկովկասում նշանակալից դեր էր խաղում, մանավանդ արհեստագործության ու առևտրի ասպարեզում: Վերջապես, արհեստների ու մշակույթի զարգացմանը զուգընթաց ձոխապես զարգանում է նաև Ադրբեջանի գրականությունը, և հենց նույն էպոխայում է, որ հանդես են գալիս այնպիսի խոշոր բանաստեղծներ, ինչպիսիք են՝ Աֆգալ ադ-Գին Խաբանին (մեռել է մոտ 1197 թ.), Աբու-ն-Նիզամ Յեկեբին (մոտ 1108—1146), Մուջրի Բալլահանին (մեռել է 1193 թ.) և, վերջապես, Նիզամին: Քեև այդ ժամանակաշրջանի ադրբեջանական գրականությունը դեռևս սպառիչ խորությամբ ու բազմակողմանիությամբ ուսումնասիրված չէ, և այդ բանն առայժմ դժվարանում է աղբյուրների սակավության պատճառով, այնուամենայնիվ եղած ուսումնասիրություններն էլ լիովին հիմք են տալիս հաստատելու, որ XII դարը ադրբեջանական գրականության անցյալի պատմության մեջ հանդիսանում է ծաղկման շրջաններից մեկը, մի շրջան, որ պսակվեց Նիզամիի անմահ քառյուղագործություններով:

\* \* \*

Իլլաս իբն-Յուսուֆ Նիզամին ծնվել է 1141 թվականին, Գանձակ (Գյանջա) քաղաքում, որի ավերակները գտնվում են այժմյան Կիրովաբադից մի քանի կիլոմետր հեռավորության վրա՝ Գյանջաչափի ափին: Նիզամին՝ բանաստեղծի մականունն է (թախալուս), իսկ Գյանջեի՝ ցույց է տալիս նրա ծննդավայրը: Ի զեպ, եվրոպական արևելագետներից ոմանք, հենվելով Նիզամիի վերջին ստեղծագործության՝ «Իսբանդար-նամեի» մեջ եղած մի տեղի վրա, ու-

րում հիշվում է Ղում քաղաքի անունը, կամեցել են Նիզամիի ծննդավայրը համարել Ղումը (Իրանում): Մական ինչպես հենց եվրոպացի արևելագետներից ոմանք են ցույց տվել, այդ տեղը հեղինակին չի պակասում: Այդ բանը վերջնականապես ապացուցել է սովետական արևելագիտությունը՝ բազմաթիվ ձեռագրերի համեմատությամբ:

Նիզամիի կյանքի մասին եղած տեղեկությունները չափազանց աղքատիկ են ու կցկտուր: Եղած տվյալներն էլ, որանք ըստ մեծի մասին բանաստեղծի երկերից են բաղված, առավելապես վերաբերում են նրա ստեղծագործությունների տարեգրությանն ու նրբերում են նրա ստեղծագործությունների տարեգրությանն ու նրբերանց հետ կապված որոշ հանգամանքների: Ուստի և՛ կարելի է ասել, թե նրա կենսագրությունը, այն ձևով, ինչպես մինչև այժմ կատարված ուսումնասիրություններով ներկայացվում է, իր իսկ ստեղծագործությունների պատմությունն է, թեև, իհարկե, տակավին ոչ ամբողջական պատմությունը:

Քե ինչպիսի ընտանիքում է ծնվել Նիզամին՝ հայտնի չէ. համենայն զեպս ընդունված է, որ նա իր ծագմամբ կապված չի եղել ֆեոդալական վերնախավի հետ. ավելի հավանական է համարվում այն, որ նրա հայրը պատկանել է արհեստավորական խավին: Ինչ էլ որ լինի, անկասկած է, որ ծնողները բավարար միջոցներ ունեցել են, որը և հնարավորություն է տվել այն ժամանակվա համար անհրաժեշտ կրթություն տալ զավակներին: Նիզամիի եղբայրը՝ Կիվամ Մութարրիզին՝ նույնպես եղել է բանաստեղծ, բայց նա ընտրել է իր համար մի բոլորովին այլ ուղի, քան Նիզամին. դառնալով պալատական բանաստեղծ՝ նա գրել է մեծ մասամբ զանազան ժանրի ստեղծագործություններից: Նրա ստեղծագործություններից շատերից քիչ են հասել մեզ, և դրանք էլ բավականաչափ ուսումնասիրված չեն: Այնուամենայնիվ, վստահորեն կարելի է ասել, որ նա առանձնապես մեծ հոշակի չի արժանացել, և ժամանակի բանաստեղծները սովերի տակ են թողել նրան:

Եղած տվյալները հնարավորություն չեն տալիս պարզելու, թե Նիզամին ե՞րբ է զրկվել ծնողներից: Հայտնի է, որ հայրը ավելի շուտ է մահացել. այդ հաստատվում է հենց բանաստեղծի այն խոսքերով, թե մանուկ հասակից իր կրթության հոգսը մոր վրա է ընկնացել: Մոր հոգատարության շնորհիվ նա ստացել է բազմակողմանի և իր ժամանակի դիտության մակարդակին համապատասխան կրթություն: Նա լիովին տիրապետել է այն ժամանակվա մահմեդական Արևելքի երկու գրական լեզուներին՝ արաբերենին







է այն տեսակեալը, որ նիզամին ուղղակի համոզմունքով չի ձգտել պալատական բանաստեղծի վիճակին. նա չի հաշտվել այն մտքի հետ, թե մի կտոր հացի համար պետք է ենթարկվել բռնակալի ամեն մի քմահաճույթին: Նա գտնում է, որ ավելի լավ է քավարար-վել համեստ ապրուստով, քան թե դիմել բռնակալների ռաբինհա-նությանը՝ և դառնալ նրանց ստրուկը: Նա այն համոզմունքին է, որ չի կարելի հլուսթյամբ կրել բռնութիւնը.

Ինչո՞ւ հանձնում ես հարվածի պարանոցդ հուլարեն,  
Ինչո՞ւ տանում ես լուս ու մունջ՝ բանուրջուր անօրեն,  
Եզի՞ր դու փուշ, պահի՞ր մեջքիդ սլաֆները սրասալը....

Քացի այդ, նա չի հավանում նաև պալատական բանաստեղծ-ների ստեղծագործութիւնը: Յուր զժգոհութիւնը թե՛ պալատական բանաստեղծների վիճակից և՛ թե նրանց շինծու, անարվեստ ու, մանավանդ, միայն առատ պարզների համար գրված փքուն ներ-բողների նկատմամբ, նա հիանալի կերպով արտահայտու է հե-տևյալ սողերում.

Քանի՞ դեռ կա մի կտար հաց և մի կում ջուր,  
Շերեփի պես ամեն անոթ մի՛ մացնիր ձեռքդ իզուր:

Ապա՝

Նրա համար միայն հեշտ է բաւերը դասավորել.  
Ով բավարարվում է դատարկ բանաստեղծութիւններով.  
Իսկ նա, ով քանկազին քար է պոկում ժալոխից,  
Նա միայն ճիգով է գտնում իրեն հարկավոր խօսքը:

Վերջապես, կա նաև մի երկրորդ ենթադրութիւն՝ պալատական կյանքից նրա խուսափելու պատճառների մասին: Աղբյուրների մեջ ազոտ տեղեկութիւններ կան, որ նիզամին կապեր է ունեցել ար-հեստավորական «Ախի» կազմակերպութիւնի հետ: Դա աշխատանքային կոմունայի նման մի կազմակերպութիւն էր, որի անդամ-ները միացնում էին իրենց վաստակը մի ընդհանուր գանձարանի մեջ, խիստ բացասական դիրք ունեին իշխանավորների նկատմամբ և պարտավոր էին ապրել իրենց սեփական աշխատանքով: Ախիների հայացքների մեջ կային որոշ ընդհանուր գծեր սուֆիական-պան-թերիստական կրոնափրկիտութիւնի հետ. բայց, միևնույն ժա-մանակ, շատ կարևոր հարցերում նրանք որոշակիորեն հակադրու-վում էին սուֆիզմին: Դրանցից առանձնապես կարևոր է հիշել նը-

րանց վերաբերմունքը բռնութիւնի նկատմամբ: Ինչպես հայտնի է, սուֆիներն ընդհանրապես չեզոք դիրք ունեին բռնութիւնների նը-կատմամբ, նրանք անտարբերութիւն էին քարսուրմ հավասարապես և՛ շարի, և՛ բարու կատմամբ, և իրենց այդ անտարբերութիւնը հիմնավորում էին իրենց այն սկզբունքով, թե և՛ շարիքը, և՛ բարիքը կատարվում են իբրև թե աստվածային բացարձակ էութիւնի թելա-գրութիւնը: Այսպիսով, սուֆիները ոչ միայն հաշտվում էին գոյու-թիւն ունեցող բռնութիւնների հետ, այլև ուղղակի արդարացնում էին նրանց գոյութիւնը: Մինչդեռ ախիները ճիշտ հակառակ դիրք էին բռնում. նրանք ընդունում էին աշխատավորների իրավունքնե-րի պաշտպանութիւնը մինչև խիստ վեցի միջոցով: Արաք պատմիչ Իրն-Քատուտան՝ նկարագրելով ախիների կյանքն ու վարքը, ասում է, թե նրանք տարածված են բոլոր այն երկրներում, որտեղ թուրքա-կան ժողովուրդներ են ապրում. ամբողջ աշխարհում, ըստ Իրն-Քատուտայի խոսքերի, չէր կարելի գտնել ճանապարհորդների և խեղճերի նկատմամբ ավելի հոգատար մարդիկ, քան ախիներն էին: Նրանք պատրաստ էին անմիջապես թոցնել կեղեքիչի պոխը և զեն-քով պաշտպանել խեղճերին: Բռնութիւնի դեմ այսպիսի ակտիվ գոր-ծունեութիւնը ախիների բնորոշ հատկութիւններից մեկն էր: Թե նիզամին իրոք պատկանել է ախիների կազմակերպութիւնը, առ-այժմ եղած սակավ ու ազոտ ակնարկները հնարավորութիւն չեն տալիս հաստատելու, բայց, եթե նա անձնապես չի էլ պատկանել այդ կազմակերպութիւնը, ապա՝ նրանց հայացքներից շատ բան է յուրացրել և արտահայտել իր ստեղծագործութիւնների մեջ: Այդ բանը մենք կտեսնենք շարադրանքիս հետագա գլուխներում:

Ինչ էլ որ լինի, այդ պատճառներից որն էլ ընդունելու լինենք.— անշուշտ ավելի ճիշտ կլինեն երկուսն էլ միասին ընդունելու.— փաս-տը մնում է այն, որ նիզամին մինչև կյանքի վերջն էլ հետու է մնա-ցել պալատներից և ընտրել է իր աշխատանքով, թեև կարտութիւն ու զրկանքների գնով, հաց վաստակելու ու ստեղծագործելու ուղին՝ հավատարիմ մնալով իր այն արտահայտութիւնը, թե՛

Աշխատանքի համար եմ մեմ աշխարհ եկել,  
Եվ ոչ-դատարկ շատախոսութիւն:

Յուր տոաչին պոեմը նիզամին ավարտել էր շուրջ 1176 թվակա-նին: Պոեմը կրում է «Փաղտնիքների գանձարան» (Մախզան ալ-աս-

Ս. Արևելագրաններից ոմանց կարծիքով առաջին պոեմն ավարտվել է 1173—74 թվականներին:



բար) վերնագիրը: Գա, ըստ կառուցվածքի, խորհուրդների ու խրատ-  
ների մի գիրք է, բաղկացած քսանհինգ գլուխներից, որոնք կոչվում  
են «զրույցներ»: Իրանցից յուրաքանչյուրը մի պատվիրան է երկրի  
կառավարման մասին: Իբրև իր խրատական մտքերի ապացույց կամ  
հիմնավորում, Նիզամին յուրաքանչյուր խրատի կամ պատվիրանի  
հետ պատմում է որևէ առակ, պատմվածք՝ մեծ մասամբ նյութ քա-  
ղելով անցյալից, և գրանով իսկ էլ ավելի համոզիչ դարձնում իր  
արտահայտած գաղափարները:

Համաձայն Արևելքում ընդունված գրական ավանդներին՝ Նի-  
զամին իր ստեղծագործությունն ուղարկում է ժամանակի տիրա-  
կալներից մեկին, այն է՝ էրզինջանի (Երզնկայի) մելիք Բանու-Ման-  
զուշակ Ֆախր աղ-Գին Բահրամշահին: Ինչպես պատմում է սելջուկ-  
յան պատմիչներից մեկը, մելիքը շատ է հավանում պոեմը և «զբս-  
տահելի մարգուս միջոցով մեծամեծ գանձեր է ուղարկում բանաս-  
տեղծին: Մակայն մի կողմից ոչ մի հիշատակություն չի հիշել՝ այդ-  
պիսի գանձ ստանալու մասին, մյուս կողմից Նիզամիի ակնարկ-  
ները, թե իր ստեղծագործությունները թեև միշտ գովասանքի են  
արժանացել, բայց ըստ արժանավուն շեն վարձատրվել, արևելա-  
գետներին այն հավանական կարծիքին են բերել, որ եթե նույնիսկ  
մելիքն իրոք ուղարկել է պարգևներ, ապա, «վաստահելի մարզը» տեղ  
չի հասցրել:

Իր առաջին պոեմի համար Նիզամին վարձատրվեց մի ուրիշի՝  
Գերբենդի տիրակալի կողմից. վերջինս իբրև պարզև նրան ուղար-  
կեց իր ստրկահիններից մեկին՝ ղեղեցկուհի Աֆակին: Բանաստեղծն  
ընդունեց այդ նվերը, բայց պահեց իր մոտ այլևս ոչ իբրև ստրկու-  
հի, այլ որպես իր օրինավոր կինը: Թե երբ է տեղի ունեցել այդ ա-  
մուսնությունը, առայժմ ստույգ կերպով որոշված չէ: Համենայն  
դեպս այդ պետք է տեղի ունեցած լինի 1174 թ. կամ ավելի շուտ,  
քանի որ 1174 թ. ծնվել է Նիզամիի միակ որդին՝ Մուհամեդը:  
Սակայն ամուսնական երջանիկ կյանքը Նիզամին վայելեց ոչ երկար  
ժամանակ: Հավանաբար 1180 թ., եթե ոչ ավելի շուտ, երբ նա  
աշխատում էր իր երկրորդ պոեմի՝ «Խոսրով ու Շիրինի» վրա, մա-  
հաջավ նրա սիրեցյալ կինը: Խորք վիշտը ցնցեց պոետի ամբողջ  
կոթորակը, և նա յուր անսահման սերն իր կնոջ նկատմամբ տեղա-  
փոխեց յուր ստեղծագործության հերոսուհուն՝ Շիրինին: Պետք է  
ասել, որ Նիզամին ընտանեկան կյանքում ընդհանրապես դժբախտ  
է եղել: Իր առաջին կնոջը կորցնելուց հետո նա ամուսնացել է  
երկրորդ, ապա և՛ երրորդ անգամ և միշտ էլ կարճ ժամանակից հե-  
տո կորցրել է կնոջը: Նա ինքը յուր վերջին ստեղծագործության մեջ

սուր կերպով նկատում է, թե իր ստեղծագործությունների ավար-  
տումը զուգարկյալ է յուր կնոջ մահվան:

Տարօրինակ է իմ բախար բառեր հյուսելու մեջ...

...Երբ ես պատրաստում էի Շիրին-հալվան,

Դասարկվեց իմ տունը նրանից, ով ֆաղցրավենի էր  
պատրաստում:

Երբ Լեյլի-գանձի շուրջը պարխայ էի կանգնեցնում,

Մի ալլ զոհար ես պահ ավի այնտեղ:

Այժմ էլ, երբ հարսանիքը՝ վերջին է հանգում,

Մի ալլ հարս ես հանձնեցի Ռիզվանին<sup>2</sup>:

Զրկվելով կնոջից՝ Նիզամին իր ամբողջ սերն ու գուրգուրանքը  
կենտրոնացրեց որդու՝ Մուհամեդի վրա, որին և շուտով իր ընկերն  
ու խորհրդակիցը դարձրեց:

Ավարտելով «Խոսրով ու Շիրինը» 1180 թ., բանաստեղծն  
այն ուղարկում է Գանձակում իշխող Աթաբեկ Ջահան Փահլևանին,  
որ հրամայում է հատուցել Նիզամիին արժանի պարգևով: Բայց,  
ինչպես ցույց են տալիս փաստերը, այդ կարգադրությունը պաշ-  
տոնյաների կողմից ի կատար չի ածվել: Միայն էմիրի մահվանից  
հետո՝ 1186 թ., նրա եղբայր ու հաջորդ Կըլբը-Արսլանը հիշել  
է բանաստեղծին և հատկացրել նրան մի կիսավեր գյուղ, որ ավե-  
լի շատ ծախս է պահանջել տիրոջից, բան եկամտաբերել: Ուշա-  
դրավ է, որ այդ առթիվ ինքը՝ Նիզամին էլ գառն հեղձանքով նկա-  
տում է, թե շահը գիտե, որ բանաստեղծը սակավապետ է և ոչ  
խստապահանջ, ուստի և վարձատրել է նրան «իր պահանջմունք-  
ների համապատասխան»: Տիրություն արե՞լ է Նիզամին այդ գյու-  
ների համապատասխան, թե ոչ, և ո՞ր շափով նա եկա-  
ղին, որ կոչվում էր Համդունիան, թե ոչ, և ո՞ր շափով նա եկա-  
մուտ է բերել բանաստեղծին, հայտնի չէ: Այնուամենայնիվ, իր  
իսկ Նիզամիի հետագա ստեղծագործություններում արտահայտ-  
ված տրտունջը հաստատում է, որ գրանից հետո էլ նրա տնտեսա-  
կան դրությունը չի բարելավվել:

«Խոսրով ու Շիրին» պոեմն ավելի մեծ ընդունելություն գտավ  
Նիզամիի համբավը հույակվեց ամբողջ երկրում: Եվ, ահա, 1188  
թ. Շամսու շիրվանշահ Աբուսաթանը հաստակ սուրհանդակի  
միջոցով պատվիրում է բանաստեղծին գրել իր համար մի նոր պո-

<sup>1</sup> Խոսրը «Բարանդար-նամեի» մասին է:

<sup>2</sup> Գրախոսի պահանջներ:



եմ և առաջարկում է նաև թեման, որ է արարական ավանդությունը կնչի ու Մեչնունի դժբախտ սիրո մասին: Բանաստեղծը, որ նախապես չէր ախորժում այդ թեմայից, իր որդու հորգորանքներով հանձն է առնում պատվերը և ոչ ավելի քան չորս ամսում ավարտում յուր նոր ստեղծագործությունը, որ շուտով շտեմնված հռչակի է արժանանում ամբողջ մահճեղական Արևելքում: Պոեմն աներևակայելի ժողովրդականություն ստացավ ամբողջ առաջավոր Արևելքում և դարձավ հետագայի շատ ու շատ բանաստեղծների աղղեցություն ու նմանության առաջնակարգ աղբյուրներից մեկը:

1196 թ. Նիզամին նոր պատվեր է ստանում Մարաղայի տիրակալ Քորփա-Արսլանից. վերջինս դիմում է բանաստեղծին, որ պեսզի մի նոր ստեղծագործությամբ անմահացնի նաև իր անունը: Նիզամին այս անգամ էլ դիմեց պարսկական ժամանակագրությանը և իբրև թեմա ընտրեց Սասանյան Բահրամ Գուր արքայի պատմությունը: Նույն թվականի հուլիսին իսկ նա ավարտեց իր նոր պոեմը, որ կրում էր «Յոթ գեղեցկուհիներ» (կամ՝ Յոթ պատկեր)<sup>1</sup> վերնագիրը:

Նիզամին կյանքի հետագա տարիների մասին այլևս տեղեկություններ չունենք: «Յոթ գեղեցկուհիներից» հետո նա գրել է իր վերջին պոեմը՝ «Իսրանդար-նամեն» (Գիրք Ալեքսանդրի մասին), բայց թե երբ է ավարտել այն, հայտնի չէ: Բանաստեղծն ասում է, որ այդ ստեղծագործության վրա աշխատելու ժամանակ լրացել է որդու 17 տարին, որ համընկնում է 1191-ին, բայց դա կարող էր աշխատանքի սկիզբը լինել և ամենայն հավանականությամբ, այդպես էլ է: Իսկ այդ նշանակում է, թե Նիզամին «Իսրանդար-նամեն» վրա աշխատել սկսել է շատ ավելի վաղ, քան «Յոթ գեղեցկուհիների» վրա:

Իր կյանքի վերջին տարիներում Նիզամին շատ ավելի ծանր օրեր է ապրել, իր առանց այն էլ ոչ բարենպաստ տնտեսական կացությունն էլ ավելի ծանրացել է երկրաշարժի շնորհիվ, որի նկարագրությունը տալիս է նա իր վերջին ստեղծագործության մեջ: Իր կրած զրկանքների մասին բանաստեղծն առանձնապես շատ է դանգատվում վերջին պոեմում:

Ճշտված չէ նաև Նիզամին մահվան թիվը: Առայժմ հավանական են համարում այն, որ նա մեռել է 1203 թ.: Նիզամին

<sup>1</sup> Բնագրում վերնագրված է «Հաֆթ փեյթար», պարսկերեն վնչխո բառը նշանակում է և՛ պատկեր, և՛ գեղեցկուհի: Երկու իմաստն էլ համապատասխանում են պոեմի բովանդակությանը. հավանական է, որ հենց այդ էլ նկատի ունենալով հեղինակն ընտրել է այդ երկիմաստ բառը:

հայրենակիցները, սրոնք, ի դեմս նրա, տեսնում էին իրենց իմաստուն խորհրդատուին, օգնականին ու պաշտպանին, թաղել են նրան մեծ շուքով: Նրա գերեզմանի վրա կանգնեցրել են արձան, որ կանգուն է եղել մինչև XIX դարի սկիզբները: Ժողովրդի հիշողության մեջ Նիզամին մնացել է իբրև ժողովրդի շահերի արգար պաշտպան, իբրև սուրբ, և ժողովուրդը նրա շիրիմը դարձրած է եղել ուխտատեղի: Աղբյուրներից և ժողովուրդի այժմ նոր, հակառակահայաց հուշարձան է կանգնեցրել բանաստեղծի հայրենիքի քաղաքում՝ Գյանջայում (այժմ Կիրովաբադ):

Նիզամին հիշյալ հինգ պոեմները կազմում են մի ժողովածու, որ կրում է «Խամսե» (հնգյակ) ընդհանուր վերնագիրը: Բացի դրանից, հեղինակն իբրև ժառանգություն է թողել նաև քնարական բանաստեղծությունների մի ժողովածու (Դիվան), որ, սակայն, ամբողջությամբ չի հասել մեզ: Թեև Նիզամին քնարական բանաստեղծությունները ևս, ինչպես կտեսնենք ստորև, փղարվեստորեն բարձրարժեք ստեղծագործություններ են, սակայն նա իր բանաստեղծական փառքը նվաճել է հիշյալ հինգ պոեմներով: Այդ պոեմները Նիզամին ինքը չի միացրել մի ժողովածուի մեջ. արևելագետները պարզել են, որ այդ կատարված է մոտավորապես տասներեքերորդ դարում՝ անհայտ խմբագիր-արտագրողի կողմից. վերջինիս է պատկանում նաև «Խամսե» խորագիրը: Համենայն դեպս, հինգ պոեմների միացումը մի ժողովածուի մեջ խամսե վերնագրով՝ Արևելքի մահճեղական ժողովուրդների գրականության սրբազործված ավանդներից մեկը դարձավ Նիզամին այդ ժողովածուի շնորհիվ: Ճիշտ է, հետագայում որոշ բանաստեղծներ դարձյալ այդ ձևին հետևելով՝ մի ժողովածուի մեջ միացրել են ոչ թե հինգ, այլ յոթ պոեմներ (յոթնյակ), սակայն այդ առանձնապես հաջողություն չի ունեցել, և մինչև XVIII դարն էլ գերազանցապես տարածված է եղել հնգյակը:

Նիզամին «Խամսեի» մեջ պարունակվող այդ հինգ պոեմների միջև թե՛ սյուժեի և թե՛ կառուցվածքի ու տաղաչափության տեսակետից որևէ ընդհանուր բան չկա: Ընդհակառակն, նրանք իրարից շփազանց տարբեր են և՛ թեմատիկայով, և՛ կառուցվածքով, ինչպես կտեսնենք ստորև:

«Քաղաքի փենեկի գանձաբան».— Ինչպես ասել ենք, Նիզամին առաջին ստեղծագործությունը կրում է գիզակտիկական



ընույթ. նա շունի մի ընդհանուր թեմա, այլ բաղկացած է բանահինգ զրույցներից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է նիզամիի հայացքները՝ կյանքի այս կամ այն երևույթի մասին և նրա խնդրատները այդ առթիվ: Ստեղծագործությունն սկսվում է ներածական գլուխներով՝ «Այս գիրքը կազմելու և նրա արժանիքների մասին», «Խոսքի առավելությունների մասին», «Երիմում ասածուն» և այլն: Ուշագրավ է, որ նույնիսկ ասածուն դիմելիս ու նրան նկարագրելիս էլ նիզամին արտահայտում է յուր քաղաքական հայացքները. ասածուն նա չի ներկայացնում իբրև վերացական, ինչ-որ մի բացարձակ էություն, այլ դնում է նրա մեջ մարդկային հատկանիշներ՝ և, որ առանձնապես կարևոր է, ներկայացնում է նրան իբրև աշխատավորների պաշտպան: Հենց այդտեղից էլ ներկայացվում է ասածուն բնականներից ու կեղծներից, ասելով. «Օգնի՛ր ինձ, չէ՞» որ մենք պուրկ ենք արդար դատավորից. եթե դու մեզ վանես, էլ ո՞ւմ դիմենք մենք... Կրճատի՛ր (նրանց) վարձը, որովհետև նրանք շատ են պահանջում, դո՛ւ վերցրու (նրանց) բաժինը, որովհետև նրանք կողոպտիչներ են»:

Այս ներածական գլուխներին հաջորդում են բուն զրույցները, որոնք զանազան բովանդակություն ունեն: Ամեն մի զրույցի ըսկըբում, որպես մուտք, նիզամին շարադրում է իր սկզբունքները տվյալ զրույցի առանցքը կազմող երևույթի մասին, դրանով, կարծես, տեսականորեն նախապատրաստելով ընթերցողին, ապա պատմում է որևէ առակ կամ պատմվածք՝ այդ տեսական շարադրանքի ոգուն համապատասխան: Փրքի այսպիսի կառուցվածքը առիթ է տվել եվրոպական արևելագետներին այս ստեղծագործությունը համարելու գեղարվեստորեն թույլ գործ: Իրականում դա մի մեծարժեք ստեղծագործություն է և արժանի ավելի մեծ ուշադրության, քան այն, որին արժանացել է մինչև այժմ: Իհարկե, հենց այն հանգամանքը, որ նա շունի մի ընդհանուր թեմա, հայտնի չափով դժվարացրել է բանաստեղծի գործը. դրան ավելացել է նաև այն, որ նա իրեն նպատակ չի դրել այդ առաջին գրքում հյուսել սիրային ոտմանիտակական մի պատմություն կամ մի դյուցազնավեպ:

Նա այդ ստեղծագործությանը կամեցել է գեղարվեստորեն արտահայտել իր փիլիսոփայական, բարոյագիտական հայացքները: Իսկ այդ նշանակում է, որ ստեղծագործության ամբողջությունն ու միասնականությունը հիմնված է ոչ թե թեմայի, այլ այդ փիլիսոփայական-բարոյագիտական հայացքների ամբողջ սիստեմի վրա: Հենց այս հանգամանքն էլ երկրորդ, ավելի լուրջ դժվարու-

թյունն էր հանգիստնում. հեշտ չէ բանաստեղծական խոսքով, շափածո ստեղծագործությանը շարադրել մի ամբողջ փիլիսոփայություն: Իսկ նիզամին շափականց վարպետորեն կարողացել է կատարել այդ Բացի դրանից, որոշ արևելագետներ փորձում են դարձյալ նսեմացնել այդ երկի արժեքը նաև բովանդակության տեսակետից: Նրանք աշխատում են ցույց տալ, որ «Գաղտնիքների գանձարանը» միսթիկական ընույթ կրող երկ է, որ նրա մեջ արտահայտված փիլիսոփայությունը սուֆիական կրոնափիլիսոփայությունն է: Բայց այս մոտեցումը միանգամայն սխալ է և ցայտուն կերպով ցույց է տալիս այդ արևելագետների մի հայտնի միտումը: Այդ արևելագետները շատ բանաստեղծների են հռչակել իբրև սուֆի-բանաստեղծներ, կամենալով սքողել, մթաղել նրանց ստեղծագործություններում արտահայտված առաջավոր դադափարները, կամենալով նրանց սոցիալական բողոքը «մեկնաբանել» իբրև սուֆիական՝ «հրաժարումն աշխարհիկ կյանքից»: Այդպես են վարվել նրանք Օմար Խայյամի քառյակների հետ, այդպես վարվել են հայտնի դեմոկրատ, բանաստեղծ, քարոզիչ Նասիր Խոսրովի ստեղծագործությունների հետ, այդպես են վարվել նաև նիզամիի այս պոեմի հետ: Համարել այդ ստեղծագործությունը գեղարվեստորեն թույլ, իսկ բովանդակությանը էլ միսթիկական և դրանով իսկ արժեքավրկել այն, թույլ չտալ, որ նրանում արտահայտված սոցիալական բողոքը հասնի մասսաներին, քողարկել այդ բողոքը և մեկնաբանել այն սուֆիզմի հատուկ այլաբանություններով— ահա նրանց միտումը: Մինչդեռ սովետական արևելագիտությունը էիջտ կերպով հասկանում է նիզամուն, վեր հանում այդ բանաստեղծագործության մեջ արտահայտված սոցիալական բողոքը և դրանով իսկ մերկացնում բուրժուական արևելագիտության այդ հակադիտական, վնասակար տենդենցը:

Ար նիզամիի այդ ստեղծագործության մեջ հիմնականը հենց սոցիալական բողոքն է, բողոքը՝ կեղեքումների, բռնությունների ու շահագործման դեմ, կարելի է ցույց տալ մի քանի զրույցների հակիրճ բովանդակությունը շարադրելով:

Այսպես, «Նուշիրվանի և իր վեղիբի մասին» պատմվածքում հեղինակը պատմում է, թե մի անգամ Սասանյան Խոսրով Անուշիրվան թագավորը որսորդության ժամանակ հեռացել էր թիկնապահ խմբից: Նրան հետևում էր միայն իր վեղիբը: Իրենց ճանապարհին արքան ու վեղիբը հասնում են մի ավերված գյուղի: Շուրջն ամեն ինչ դատարկ էր, ամենուրեք բարձրանում էին կործանված աների փլատակները. ըկա ո՛չ կյանք, ո՛չ մարդ: Միայն մի կիսավեր պա-



տի վրա նստած էին երկու բուս, որոնք ինչ-որ բանի մասին ոգև-  
 վորութիւնով խոսում էին: Բուսերի բարձր ճիւղը, որ ըսվում էր այդ  
 ամերակների միջից, սարսուռ ազդեց արքայի վրա և միաժամանակ  
 շարժեց նրա հետաքրքրութիւնը: «Ինչի՞ մասին են խոսում նը-  
 րանք»,— հարցրեց արքան վեցիրին: Պարզվեց, որ նրանցից մեկն  
 էր աղչկան կնութիւնն է, տալիս մյուսին և իբրև հատուցում նրա-  
 նից պահանջում է այդ ավերված գյուղն ու շրջակայքի մի բանի  
 այդպիսի գյուղեր: Մյուսը պատասխանում է, թե ինքը հաճուցքով  
 կարող է տալ այդ ամերակները և ավելացնել դրան հարյուր հա-  
 գարավոր այդպիսի ավերակներ, որովհետև բանի դեռ կենդանի է  
 ետսքով Անուշիրվանը, ժողովուրդը կմնա թշուառութեան մեջ և շատ  
 ու շատ գյուղեր դեռ կավերվեն: Այդ խոսքերը խորապես ներգոր-  
 ծում են Անուշիրվանի վրա, նա այնուհետև վերջ է տալիս բռնու-  
 թիւններին և կառավարում է երկիրն արդարութեամբ ու բարու-  
 թեամբ:

Գրեթե նույնպիսի բովանդակութիւն ունի նաև «Սուլթան Սան-  
 չարի և պառավի մասին» պատմվածքը, բայց սրա մեջ բողոքը  
 բռնութիւնների ու կեղեքումների դեմ արտահայտված է ավելի  
 սուր կերպով: Երգամին պատմում է, որ մի պառավ կին զալիս է  
 սելջուկյան սուլթան Սանչարի մոտ և նրան բողոքում իրեն հասց-  
 րած տանջանքների ու նեղութիւնների մասին: Ամբողջ պատմված-  
 քը, բացառութեամբ մի բանի երկտողից, պարունակում է սուլթա-  
 նի ու նրա պաշտոնեւորների անիրավութիւնների, կեղեքումների ու  
 բռնութիւնների թվարկումը, որ առանց վախենալու սուլթանի առ-  
 ջն կատարում է պառավը:

Ես,—ասում է պառավը սուլթանին,— քո մեջ չեմ  
 տեսնում արդարադատւոյան պսակը,  
 ես չեմ տեսնում կեղեքման վերջը,  
 Քաղաքը պետք է ժողովրդին ապավեն լինի,  
 Իսկ դու գողի պես կեղեքում ես ժողովրդին:

Դու ստրուկ ես, բեկուց և աբաշական զգեստ ես հագել,  
 Ի՞նչ քաղաք ես դու, որ վնաս ես հասցնում ժողովրդին:  
 ...Դու բեկ տակնուվրա ես աբել աշխարհը,  
 Բայց ի՞նչ ներսուրջամբ ես աչի ընկել դու...

Չայրացած պառավը հիշում է սուլթանի բոլոր շարադրածու-

թիւնները և խորհուրդ է տալիս նրան հրաժարվել բռնութիւններից  
 ու կառավարել երկիրը արդարութեամբ: Բայց՝

Խորասանի տիրակալ Սանչարը շանայ  
 Այդ իմաստուն խոսիւրին և կօրցեց երկիրը:  
 Եվ այժմ երկրի վրա արդարուրյուն շկա,  
 Ռեանիւր այն միայն Սիմոնի՜ բեկ վրա  
 Եվ ամառն է մոռացված կապույտ երկնի տակ,  
 Եվ պառավը՝ որպես ծախ՝ այս հողագնդի վրա:  
 Վե՛ր կաց, Նիգամի, և լացի՛ր ամառից,  
 Արյուն լացի՛ր նրանց վրա, ում համար արյունը չար է:

Այսպես է եզրափակում հեղինակը այդ պատմվածքը:  
 «Ինչպիսի թագավորի և արդար ճգնավորի մասին» պատմված-  
 քի մեջ հետևյալն է պատմում: Հաջջաջ անունով մի թագավոր կար,  
 որ բռնութեամբ նեղում էր ժողովրդին ու կեղեքում անսանձ: Մի օր  
 զալիս է նրա մոտ մի մարդ, որն իմանում էր ամեն դաղտնիք, և  
 հայտնում, թե այսինչ ճգնավորը թագավորին բռնակալ է անվանել:  
 Թագավորն անմիջապէս հրամայում է կանչել ճգնավորին: Գահի-  
 նը պատրաստութիւն է տեսնում նրան զլիսատելու: Գալիս է ճգնա-  
 վորը: Թագավորը նրան հարցնում է, թե ձի՞շա է արդյոք, որ նա  
 իրեն բռնակալ է անվանել:

Լսել եմ, որ դու ինձ դե ես ասել,  
 Հաստատել ես, որ անմեղենօին սպանել եմ,—ասում է  
 թագավորը:

Դու գիտես, որ իմ քաղաքուրյունը նման է Աղոմունի  
 քաղաքուրյանը,  
 Ինչ՞ու՞ր արեմն ինձ դե-բռնակալ ես կառում:

Մերուկն առանց երկչուղ կրելու հաստատում է, որ իբրք ինքը  
 կոչել է նրան բռնակալ, և այդ՝ այդպես է.

...Ես չեմ բեկ,  
 Ես ավելին եմ ասել, քան այդ խոսիւրը:  
 Դու ամառ շունես փոքրեի ու մեծերի առջև,  
 Դու կօղպատում ես գյուղերը, կեղեքում քաղաքները:  
 Ես նա եմ, որ հաշվել է քո շարիքները,

1 Մասնակցական թուղթ:



Չարի ու բարու մեջ եռ հայելին եմ եղել:  
Դու երա (հայելու) մեջ անդրադարձել ես այնպես,  
ինչպես կառ.

Ջարդել այդ հայելին, մեծ պատիվ չէ:  
Ես արդար եմ, հասկացի՛ր իմ խոսքերի նշանությունը,  
Իսկ թե կախել ես ուզում, ես պատրաստ եմ մահվան:

Բռնակալ թագավորը հասկանում է ձգնաձորի խոսքերի ճշմարտությունը և հրամայում է մեծամեծ պատիվների արժանացնել նրան՝ պիսասելու փոխարեն, իսկ ինքը այնուհետև կառավարում է երկիրը արդարությունով:

Կարելի է դարձյալ պատմվածքներ մեջ բերել, որոնց մեջ նիզամին սուր կերպով քննադատում է տիրող անարդարությունները, բայց մենք բավականանում ենք այսքանով:

Եթե մի կողմից հեղինակը քննադատում է բռնակալներին, մերկացնում նրանց բռնություններն ու անարդարությունները, ապա, մյուս կողմից, նա հակադրում է դրանց իրենց աշխատանքով ապրող մարդկանց: Այսպես, օրինակ, «Նրկրագործի և Սուլեյմանի մասին» պատմվածքում նա պատմում է, թե մի օր Սուլեյմանը (Սողոմոնը) դաշտում տեսնում է մի ձերուճի հողագործի, որ իր տնից մի բուռ ցորեն հավաքած ցանում է հողում: Սողոմոնը թռչունի բերանով հարցնում է նրան, թե ինչո՞ւ է ցորենը ցանում այնպիսի հողում, որտեղ չուր չկա: Մերունին պատասխանում է, թե ինքը հողից ու ջրից օգնություն չի խնդրում, իր չուրը՝ իբր քրտինքն է: «Ես չեմ մտածում թագավորության և իշխանության մասին, — ասում է նա, — քանի կենդանի եմ, բավական է ինձ այս ցանքը»:

Նույնպիսի բովանդակություն ունի նաև «Մեր աղյուսագործի մասին» պատմվածքը. մեկը հանդիմանում է աղյուսագործին այն բանի համար, որ նա անարգ աշխատանքով է ղրազվում, ամբողջ օրը գործ ունի միայն ցեխի հետ: Աղյուսագործը պատասխանում է, թե ինքը հպարտ է, որ իր աշխատանքով է ապրում. «Ես նրա համար եմ աշխատանքին մեկնում ձեռքերս, որպեսզի ձեռքս քեզ չկարկանեմ» ողորմության համար:

Վերը հիշված պատմվածքները բավական են արդեն համոզվելու համար, թե «Գաղտնիքների գանձարանը» մի միսթիկ-սուֆիական երկ չէ, նրա մեջ հեղինակը շատ որոշակի և գործնական նպատակ է դրել. ցույց տալով տիրակալների բռնություններն ու անիրավությունները և հակադրելով դրանց արդարությունն ու բարությունը՝ խրատել հենց իր իսկ ժամանակի տիրակալներին: Այս

նպատակին հետամուտ լինելով էլ՝ նա անողոր կերպով մերկացնում է հասարակական կյանքի շարիքները, անխնա ձաղկում անցյալի և իր ժամանակի թագավորներին՝ անսանձ կամայականությունների ու կեղեքման համար: Այս է, ահա, «Գաղտնիքների գանձարանի» արժանիքը, որ չեն ուզում տեսնել բուրժուական կոթնակները և ոչ միայն չեն ուզում տեսնել, այլև աշխատում են քողարկել:

Այսպիսով «Գաղտնիքների գանձարանը» մի մեծարժեք գեղարվեստական երկ է, որի հիմնական արժանիքը հենց այն քննադատական ոգին է, որով հեղինակը դիտում ու պատկերում է իրապատական ոգին է, որով հեղինակը դիտում ու պատկերում է իրականությունը: Նրա գեղարվեստական արժանիքին մեծապես նպաստում են լեզվի հարստությունն ու պատկերների ճոխությունը: Անշուշտ, եթե այդ ստեղծագործության լեզուն համեմատենք, օրինակ, «Խոսքով ու Շիրինի» լեզվի հետ, ապա՝ կեկատենք որոշ բարդություն, խրթին բառերի գործածություն և համեմատությունների որոշ վերացականություն: Բայց այդ արդյունք է հենց ստեղծագործության բնույթի: Ինչ խոսք, որ փիլիսոփայական գատողությունները, խոհերն ու գաղափարները չափածո խոսքի ենթարկելն այնքան էլ հեշտ բան չէ: Հենց միայն փիլիսոփայական բաղձաթիվ տերմինները բավական են, որ երկի լեզուն գեղարվեստական պարզ դրական լեզվից վերածվի բարդ, դժվար հասկանալի բառերով ու պատկերներով ծանրաբեռնված լեզվի: Բայց դա տվյալ զեպրում չի կարելի դիտել իբրև բացասական երևույթ. դա բխում է հենց լի կարելի դիտել իբրև բացասական երևույթ. դա բխում է հենց երկի ոգուց և, հետևաբար, տվյալ գեպրում նպաստավոր հանգամանք է, որովհետև պայմանավորված է երկի բովանդակությամբ:

«ՆԱՍՐԵԱՎ ԱՆՇԻՐԻՆ».— Այս պոեմն, ինչպես ասել ենք, սիրային-ուռմանտիկական վիպերգ է. նրա նյութը քաղված է Իրանի պատմությունից: Իբրև աղբյուր նիզամին անշուշտ առաջին հերթին օգտագործել է պարսից թագավորների ժամանակագրությունը, բայց մեծ շահով նյութ է քաղել նաև ժողովրդական ավանդություններից, հակապես «Կասրի Շիրին ու Բիսուֆուն»-ից (Շիրինի և Բիսուֆունի պատմությունը): Վիպերգի համառոտ բովանդակությունը հետևյալն է:

Աստանյան Նորմուզ (Որմիզ) արքան ունենում է մի տղա՝ Խոսրովին, որ պատմության մեջ հայտնի է Խոսրով Փարվիզ անունով: Հայրը անսահմանորեն սիրում է որդուն և, չինայելով նրան ոչինչ, միաժամանակ ամեն ջանք գործադրում է որդուն արդարություն ու բարության ոգով դաստիարակելու համար: Նա նույնիսկ



խտորեն պատժում է որդուն՝ դյուղացիների նկատմամբ թույլ տված անիրավության համար:

Երեսուսարդ արքայազնի շքախմբի մեջ էր մեծարվեստ նկարիչ Շահփուրը, որ մի աշխարհ տեսած մարդ էր և շատ հետաքրքիր պատմություններ էր պատմում իր տիրոջը: Մի անգամ էլ նա պատմում է, թե Վասպիական ծովափի լեռնաստանում կա մի թագուհի, որի անունն է Շամիրա, բայց հպատակները կոչում են նրան Միհին-բանու (Մեծ տիկին): Նրա մոտ է լինում իր ազգականուհի Շիրինը, որի նման ղեղեցկուհի աշխարհում չկա: Երեսուսարդ արքայազնի սրտում այդ պատմությունը խոր արմատներ է ձգում, և նա թախծում է Շիրինի մասին: Ի վերջո, նա հանձնարարում է Շահփուրին՝ գնալ Հայաստան, գտնել Շիրինին և բերել նրան: Այդ դժվար գործը կատարելու համար Շահփուրը հույսը դրնում է իր արվեստի վրա և դիմում է դեպի Հայաստան: Նա նկարում է Խոսրովի պատկերը յուր արվեստի ամբողջ վարպետությամբ: Հայաստանում իմանալով, թե որտեղ է գտնվում Շիրինը այդ պահին, գնում է նրա գրաստանը և նետում է Խոսրովի պատկերը Շիրինի առջև: Նկարը ցանկալի ազդեցություն է ունենում օրիորդի վրա: Գրանից բաշխելով Շահփուրը թույլտվություն է խնդրում օրիորդից՝ նրա մոտ գնալու: Գնալով նրա մոտ՝ նա պատմում է Խոսրովի սիրո ու տառապանքների մասին: Շիրինի մեջ նույնպես բորբոքվում է սերը և, առանց այլևս ժամանակ կորցնելու, իր արագավազ Շարդիգ ձին նստած՝ սլանում է դեպի Իրան:

Այդ միջոցին, Խոսրովի թշնամիները կարողացել էին նրա հորը այն աստիճան դրզով որդու դեմ, որ արքայազնն ստիպված էր փախուստի գիմել՝ հոր զայրույթից ազատվելու համար: Նա էլ դիմում է դեպի Հայաստան: Ճանապարհին նա հանդիպում է մի աղբյուրի, հենց այն ժամանակ, երբ շողից տանջված Շիրինը՝ ճանապարհորդի շփասելով՝ լողանում էր նրա մեջ: Խոսրովը չի ճանաչում իր սիրածին, որի գեմբը ծածկված էր արձակած մազերով: Շիրինը նույնպես չի ճանաչում Խոսրովին, բայց հմայվում է նրա ղեղեցկությունով, թեև նա դատապարտում է իրեն ու դարձանում, թե ինչպես միաժամանակ ինքը կարող է սիրել երկու տղամարդու: Այդպես էլ նրանք առանց իրար ճանաչելու, հեռանում են միմյանցից:

Հասնելով Մաղալին՝ Խոսրովի հայրենի բաղաքը, Շիրինը տեղեկանում է, որ Խոսրովն այստեղ չէ, բայց բանի որ Խոսրովը մեկնելուց առաջ հրամայել էր իր սարկուհիներին պահել Շիրինին իրենց մոտ, Շիրինը համաձայնում է դրան և մնում այնտեղ:

Խոսրովը հասնում է Հայաստան և լավ բնորոնելություն է գրանում Շիրինի անհետացումից վշտացած Միհին-բանուի մոտ: Վերջինս առաջարկում է Խոսրովին ձմեռն անցկացնել իր մոտ՝ Բերդա մայրաքաղաքում:

Հայրենիքից հեռու՝ սարկուհիների բնկերակցությամբ Շիրինը երկար ժամանակ չի կարողանում ապրել: շուտով նա ձանձրույթ է զգում: Գրան ավելանում է նաև այն, որ Մաղալինի կլիման նույնպես վնասակար է ազդում նրա առողջության վրա: Նա պահանջում է կառուցել իր համար մի ամբողջ լեռնային շրջանում: Նրան խանդոդ սարկուհիները կաշառում են ճարտարապետին և ամբողջ կառուցել տալիս մարդկային բնակությունից հեռու մի կիրճում:

Շահփուրի միջոցով իմանալով Շիրինի տեղը՝ Խոսրովն ուղարկում է Շահփուրին նրան Բերդա բերելու: Բայց հենց այդ միջոցին հայրենի երկրի ղեկավարն ստիպում են նրան վերադառնալ Մաղալին: Նա լուր է ստանում, որ հայրը մահացել է, ու շտապում է գահը ժառանգելու, և երբ Շիրինը գալիս է Բերդա, նա այլևս այնտեղ չէր: Իրանում Խոսրովի գործերը բարդանում են: Ֆեոդալները, որոնք մինչև այդ էլ չէին սիրում նրան, Բահրամ Զուրինի ղեկավարությամբ ապստամբում են: Խոսրովն ստիպված է լինում փախչել հայրենի երկրից և ապաստան գտնել Բերդալում: Վերջապես երկու սիրահարներին հաջողվում է հանդիպել իրար: Մակայն դրանով գրեթե ոչինչ չի փոխվում: Միհին-բանուն խոհեմաբար հսկում է Շիրինին և խրատում է անձնատուր չլինել Խոսրովին, մինչև որ վերջինս օրինական կերպով շամուսնանա Շիրինի հետ: Շիրինը հեռանում է նրա խորհուրդներին և Խոսրովի թախանձանքներին պատասխանում այն հանդիմանությամբ, որ զահաղուրկ արքայազնին վաչկի չէ վաչկերեններին անձնատուր լինել: Ինքը Խոսրովի կինը կլինի այն ժամանակ միայն, երբ նա կտիրանա հոր գահին: Վերավերված ու զայրացած Խոսրովը վճռում է գործի դիմել, բայց շունենալով իր սեփական գործը՝ նա դիմում է բյուզանդական կայսեր օգնությանը: Խոսրովն ստանում է այդ օգնությունը՝ ամուսնանալով նրա աղջկա՝ Մարիամի հետ և բյուզանդական գործով Իրան մտնելով՝ տիրանում է գահին: Այդ հաղթանակը, սակայն, շատ էլ չի հրջանակացնում նրան: Նա չի կարողանում մոռանալ Շիրինին, բայց և իրեն կախման մեջ է դրում Մարիամից, որին այնքան էլ չէր սիրում: Շիրինը նույնպես ամուսնանում է նրա սիրով, բայց աշխատում է ցույց չտալ այդ: Շուտով մեռնում է նաև Միհին-բանուն: Շիրինը ժառանգում է գահը և, այլևս միանգամայն



ապատ զգալով իրեն՝ երկրի կառավարումը հանձնում է մի վեպի-  
րի, իսկ ինքը վերադառնում իր համար կառուցված ամրոցը:

Խոսքովն իմանում է այդ և թույլտվություն է խնդրում Մա-  
րիամից՝ Երրինին բերել իր մոտ. սակայն Մարիամը վճարաբար  
արգելում է, սպառնալով, որ այդ դեպքում ինքը կկախվի Խոս-  
քովը Շահփուրի միջոցով խնդրում է Երրինին, որ զաղտնաբար իր  
ամրոցը գա: Բայց Երրինն էլ բարկությամբ մերժում է, ասելով,  
թե ինքը Խոսքովի ամրոցը կմտնի միայն որպես նրա օրինական  
կիներ:

Երրինն էլ աստիճանաբար սկսում է նեղվել ամրոցում: Ա-  
ռանձնապես նրան նեղում էր կաթից զուրկ լինելը: Հոտերը գրտ-  
նրվում էին հեռավոր արտափայլերում, իսկ նա չէր կամենում  
նեղություն սալ իր ծառաներին: Շահփուրի խորհրդով նա կանչում  
է քարտաշ Ֆարհադին, որպեսզի նա լեռները ճեղքելով ասու բացի  
մինչև արտափայլերը՝ կաթի համար: Գալիս է Ֆարհադը, Երրինը  
խոսում է նրա հետ վարագույրի հետևից՝ առանց դեմքը ցույց տա-  
լու: Սակայն նրա քաղցր ձայնը հմայում է Ֆարհադին, և վերջինս  
խոստանում է բացել ասուն մեկ ամսվա ընթացքում: Իրոք նա  
կարողանում է կատարել իր խոստումը՝ շնայած անասելի դժվա-  
րություններին: Առանց մտածելու այլևս այն պարզեցների մասին,  
որոնցով Երրինը կամենում էր վարձատրել նրա հերոսական աշ-  
խատանքը՝ Ֆարհադը չուր անհուն սերը մարդկանցից ծածկելու  
համար գեպի մեկնություն է դիմում: Այնուամենայնիվ, շուտով նրա  
սիրտ պատմությունը տարածվում է մարդկանց մեջ և հասնում է  
նաև Խոսքովին: Խանդով լցված արքան կանչում է Ֆարհադին և  
հրամայում շմտածել Երրինի մասին. սակայն երկար վեճի ընթաց-  
քում նա, համոզվելով, որ չի կարող այդ բանն ստիպել Ֆարհադին  
ո՛չ հրամայելով, ո՛չ էլ ոսկու օգնությամբ՝ դիմում է մի այլ միջո-  
ցի: Նա պահանջում է Ֆարհադից, որպեսզի լեռների միջով ճա-  
նապարհ բացի մինչև Երրինի ամրոցը՝ խոստանալով, որ հիմն Ֆար-  
հադն այդ բանը կատարի, ինքը կհրամարվի Երրինից: Հուշով  
օգետված Ֆարհադը գործի է անցնում. անհուն սերը բազմապատ-  
կում է նրա ուժերը, և նա գերբնական ուժեր գործադրելով ճեղքում  
է լեռները: Համոզվելով, որ իր կողմից անիրագործելի համար-  
ված հանձնարարությունը կարող է ի կատար ածել, Խոսքովը դի-  
մում է նենգություն: Ֆարհադի մոտ է ուղարկում իր սուրհանգա-  
կին և հայտնում, որ, իբր թե, Երրինը մեռել է: Անահնկալ բոթը  
լսելով՝ Ֆարհադն իրեն լեռից ցած է նետում: Երրինը թաղում է  
նրան:

Այդ միջոցին մեռնում է նաև Խոսքովի կինը՝ Մարիամը: Բոլոր  
խաչընդոտները վերանում են. Խոսքովը կարող է, վերջապես, ա-  
մուսանալ Երրինի հետ: Բայց նա, լսելով Սպահանի գեղեցկուհի  
Շաքարի մասին, բերում է նրան իր մոտ, դրանով իսկ է՛լ ավելի  
բարդացնելով իր վիճակը: Մի անգամ, որսորդության ժամանակ,  
նա վերջապես համարձակվում է գնալ Երրինի ամրոցը: Երրինը  
նրան ներս չի ընդունում և խոսում է նրա հետ ամրոցի պարսպից:  
Բայց հենց որ մերժված Խոսքովը վերադառնում է, այլևս չկարո-  
ղանալով դիմադրել սիրտ մղումին, ինքն էլ հետևում է նրան:

Գաղանաբար նա մտնում է Խոսքովի վրանը և նրա երգիչ-  
ներին մեկի միջոցով հաղորդում է իր ապրումները բնքուշ գաղել-  
ներով, Խոսքովը համոզվում է, վերջապես, որ միայն օրինական  
ամուսնություն կարող է տիրել Երրինին և այդպես էլ կատա-  
րում է:

Երրինի ազդեցությամբ Խոսքովն ավելի լրջորեն է զբաղվում  
երկրի կառավարման գործով: Սակայն այդ ամուսնական երջան-  
կությունը նա երկար ժամանակ չի վայելում: Մարիամից ունեցած  
նրա որդին՝ Երրուհն, հրապուրվելով Երրինի գեղեցկությամբ, գր-  
դրում է աղնվականներին իր հոր գեմ, նրանց օգնությամբ խլում  
հոտարակամ կերպով զնդան մտնելով, և զբանով իսկ թեթևացնում  
Խոսքովի վիճակը: Բայց Երրուհն չի հանգստանում և զիշերով մի  
մարդասպանի ձեռքով սպանում է հորը: Նա կամենում է տիրանալ  
Երրինին. վերջինս խոստանում է կատարել նրա. բոլոր ցանկու-  
թյունները միայն այն պայմանով, որ նախապես նա հրկիզի պա-  
լատը և ոչնչացնի այն ամենը, ինչ կարող է հիշեցնել Խոսքովին.  
Իսկ Խոսքովին էլ թաղի մեծ շուքով: Այդպես էլ արվում է. Խոսքովի  
գիակը զրվում է դամբարանի մեջ. մտնելով դամբարան և փակե-  
լով դուռը՝ Երրինն ինքնասպանություն է կատարում:

Բովանդակության այս համառոտ շարադրանքից իսկ պարզ  
երևում է, որ նիդամիի այս երկի առանցքը սիրտ պրորկման է: Մեծ  
բանաստեղծը լիակատար վարպետությամբ հյուսել է իր վիպեր-  
գը, հետապնդելով մի նպատակ՝ ցուցադրել իր երկու գլխավոր հե-  
րոսներին՝ Խոսքովի ու Երրինի կերպարներն ամրոջությունով: Իսկ  
գրա համար նա ամենից առաջ դիմել է նրանց հոգեբանության վեր-  
լուծությանը՝ երևան հանելով այդ բնավորությունների հակասա-  
սական կողմերը, զրանց զարգացումը չուր ամրոջ բարդ ընթաց-  
քով: Իսկ հերոսների հոգեբանության այս վերլուծությունն, ինչպես  
գիտենք, վերածնության էպոխայի զրականության բնորոշ գծերից







Թահարող ու զորնդ: Անշուշտ այստեղ պարզորոշ կերպով զրսևորվում է նրա վերաբերմունքը քաղաքի արհեստավորական դասի նրկատմամբ, որին նա հակադրում է սոհմիկ աղնվականությունը, — իսկ ինչպես հետադայում կտեսնենք, այդ անժխտելի է, — և որքան էլ Ֆարհադին օժտեր գերմարդկային ուժով, այնուամենայնիվ իրականությունը մոռանալ չէր կարող: Եվ Ֆարհադին զոհելով ու հաղթանակը խորովին տալով՝ նա, կարծես, կամենում է ցույց տալ, որ, համենայնդեպս, յուր ժամանակին հաղթողը գեռես Ֆետդալական արիստոկրատիան է: Բնորոշ է սակայն, որ Նիզամին խորովի հաղթանակը համարում է խարդախության արդյունք. աղնիվ ճանապարհով խորովը հաղթել չի կարողանում: Այնիվ կոյի մեջ Ֆարհադն անպարտելի է:

Քե այդ նյութը մշակելիս որ շափով Նիզամին հարադատ է մնացել իր աղբյուրներին և որ շափով կաշկանդված է զգացել իրեն զրանցով՝ դժվար է ասել: Բայց և այնպես, կերպարների այս բնութագիրն իսկ ցույց է տալիս, որ նա չի կաշկանդվել եղած տվանդություններով, այլ միանգամայն ինքնուրույն մոտեցում է ցուցաբերել յուրաքանչյուր հերոսի նկատմամբ: Ինչ վերաբերում է ստեղծագործության լեզվին, պատկերավորությանն ու շափական արվեստին, ապա այս կողմից ևս նա անթերի է: Այս երկի լեզուն համեմատաբար շատ ավելի պարզ է, աղատ վերացական ու խորթին համեմատություններից, բայց և՛ զեղեցիկ ու հարուստ: Զափական արվեստի կողմից ևս այս ստեղծագործությունը որոշ առավելություն ունի «Գաղտնիքների գանձարանի» համեմատությանը: Այնտեղ շափական արվեստը հեղինակի ուշադրության առարկան է, որոշ դեպքերում այդ բանն այնքան ծայրահեղության է հասնում, որ տեխնիկական կողմը առաջնություն է ստանում բովանդակության նկատմամբ: Իր առաջին ստեղծագործության մեջ հեղինակը կարծես ձգտել է ցույց տալ յուր անգերազանցելի հմտությունը շափական արվեստի մեջ՝ մոռանալով երբեմն շափի զգացումը: Մինչդեռ երկրորդ ստեղծագործության մեջ այդպես չէ. շնայած տեխնիկական կողմի ամբողջ կատարելության, այստեղ բովանդակությունը երբեք չի զիջում ձևին:

Այսպիսով, «Խորով ու Շիրինը» մի գեեցիկ ստեղծագործություն է, Արևելքի ժողովուրդների զրականության լավագույն կոթողներից մեկը: Կու՛ն իր կառուցվածքով, խոր՝ հոգեբանական վերլուծություններով, անհուն՝ իր հուզականությամբ, այդ վիպերգը մի թանկագին ավանդ է գրականության գանձարանում, բանաստեղծական կատարյալ վարպետության մի հուշարձան:

«Լեյլի և Մեջնուն.— Նիզամիի այս ստեղծագործության մեջ նույնպես հիմնականը սիրո պրոբլեմն է. բայց այստեղ հեղինակը գիտում է սերը մի այլ տեսանկյունով, ցույց տալիս նրան հաջող ընթացքի կործանելի հետևանքները:

Պոեմն սկսվում է դարձյալ ներածական գլուխներով, որոնցից տոանձնապես ուշագրավ է այն գլուխը, որի մեջ հիշում է իր հարազատներին՝ հորն ու մորը, և այն գլուխը, որի մեջ զործնական խրատներ է տալիս իր որդուն: Բուն նյութը շարադրվում է այսպես: Խրատներ է աղղված երկար տարիների աղոթքներից ու աղաչանքներից հետո՝ Քենի-Ամիր ցեղի գլխավորն ունենում է մի արու զավակ, որին կոչում է Քեյսու: Երբ նա տասը տարեկան է դառնում, հայրն ուղարկում է նրան դպրոց, ուր սովորում էին տղաներն ու աղջիկները միասին: Այստեղ նա հանդիպում է Լեյլին. պատանիներն ամեն օր հանդիպելով իրար՝ մտերմանում են և, վերջապես, սիրում միմյանց: Նրանք սկզբում աշխատում են թաքցնել իրենց սերը, բայց հակառակ դրան, շուտով դա բոլորին հայտնի է դառնում, քստ որում, Քեյսուի կրքոտ ու մոլեգին սերն առիթ է տալիս նրան Մեջնուն (զիվահար) մականունով կոչելու:

Մտղներն, իմանալով այդ, նրանց հանում են դպրոցից: Սակայն Մեջնունը տանջվում է սիրուց ու կարոտից. նա ամբողջ օրը թագրատում է Լեյլիի տան շրջակայքում՝ նեղի լիռներում: Միակ որդուն անսահմանորեն սիրող նրա հայրը փորձում է հանել նրան որդուն անսահմանության է գնում Լեյլիի հոր մոտ, այդ վիճակից. նա հարսնախոսության է գնում Լեյլիի հոր մոտ, բայց վերջինս մերժում է, ասելով՝ թե բոլորը Մեջնունին խելագար են համարում, ուստի և՛ իր աղջկան կնություն չի տա մի խելագարի: Այս մերժումը էլ ավելի խորն է խոցում Մեջնունին: Զրկված հաջողության ամեն հույսից՝ նա կրկին դիմում է զեպի լեռները: Նրա հողեկան վիճակն արգեն լուրջ կերպով մտահոգում է ծնողներին: Հայրը տանում է նրան Մեքքա՝ աստծու օգնությամբ նրան փրկելու: Սակայն այդ հույսը ևս չի արդարանում: Այստեղ, տաճարի դռան առջև հայրը նրան հորդորում է երկար խրատներով ու խնդրում, որ նա աղոթի աստծուն, ասելով՝ «ազատի՛ր ինձ սիրո տանջանքից»: Բայց հենց որ Մեջնունը լսում է «սեր» բառը, կրկին բորբոքվում է նրա մոլեգին դգացմունքը, և նա բացականչում է. «Թող նա (սերը) մնա՛, եթե նույնիսկ ևս մեռած լինեմ»:

Այժմ նա վերջնականապես հեռանում է ծնողներից և թափառում Լեյլիի ցեղի բնակավայրի շրջակայքում: Լեյլիի հայրը, իմանալով այդ, զայրանում է և սպառնում, թե կսպանի նրան, եթե տեսնի իր տան շրջակայքում: Մեջնունի հայրը փորձում է տուն



տանել որդուն: Բայց ոչ հորդորները, ոչ սպանալիքներն արդյունք չեն տալիս: Այդ միջոցին Լեյլիի ձեռքը խնդրում է հարուստ Իրն-Սալամը, և աղջկա հայրը համաձայնում է, խնդրելով միայն մի փոքր ժամանակ, որպեսզի աղջիկը հանգստանա անախորժ պատմութեան պատճառած տանջանքներից:

Իր թափառումների ընթացքում Մեջնունը հանդիպում է մի հզոր ցեղի առաջնորդ Նոֆալին, մտերմանում է նրա հետ և պատմում իր պերճաբանությունը: Նոֆալն անկեղծորեն վշտակցում է նրան և խոստանում Լեյլիին նրա կինը դարձնել: Տեսնելով, որ խաղաղ ճանապարհով անկարելի է համոզել Լեյլիի հորը, նա գնալի է դիմում: Առաջին անհաջողությունից հետո՝ նա հավաքում է յուր ամբողջ զորքը և վճռական հարձակումով պարտության մատնում հակառակորդին: Բայց այս հաղթանակն էլ չի օգնում գործին: Լեյլիի հայրը աներկբայորեն ասում է, թե յուր աղջկան կուզանի, բայց Մեջնունին չի տա:

Կորցնելով վերջին հույսը՝ Մեջնունը բուրբոսով հեռանում է մարդկանց ընկերակցությունից և, իր վշտին անձնատուր, թափառում է ամառի վայրերում, ընկերանում թռչուններին ու կենդանիներին, դուրսում նրանց հետ... Մի վերջին անգամ էլ նա փորձում տեսնել Լեյլիին, մուրացկանի շորեր հագած նա գալիս է Լեյլիի տունը, բայց հենց նրան տեսնելը այնպես է ցնցում նրա էությունը, որ նա, անդառնալիորեն խելագարված, կրկին փախչում է լիտները:

Վերջապես Իրն-Սալամն ամուսնանում է Լեյլիի հետ: Բայց Լեյլին երբեք թույլ չի տալիս նրան՝ մերձենալ իրեն: Դժբախտ ամուսինը բավականանում է միայն նրան իր մոտ տեսնելով:

Մեջնունի հայրը տառապում է որդուց հեռու լինելով: Նա զրտնում է Մեջնունին և խնդրում վերադառնալ տուն: Բայց Մեջնունը, թեև խորապես զգացված հոր վշտից ու հիվանդապին վիճակից, մերժում է: Հայրը մեռնում է: Մեռնում է նաև մայրը: Մեջնունի տառապանքներն էլ ազիլի ծանրանում են:

Լեյլին, ամուսնուց զազտնի, իր մոտ է կանչում Մեջնունին: Երկու սիրահարները հանդիպում են: Մեջնունն իր հորինած գաղտնիքով երգում է իր սերը, իսկ Լեյլին խիտ մացառների հետևում ծածկված լսում է նրան: Այդպես էլ ավարտվում է նրանց հանդիպումը: Մեջնունը հորինում է վշտալից դազիկներ ու պատմում իր սերը թռչուններին ու կենդանիներին: Շուտով նրա անունը հռչակվում է իբրև սիրալին բանաստեղծությունների հեղինակ: Բաղ-

դազից նրա մոտ է գալիս ոմն Սալամ և, միառժամանակ մնալով նրա հետ, սովորում է նրա երգերը:

Հիվանդությունից մեռնում է Լեյլիի ամուսինը: Բայց շատ ուշ է արդեն: Մեջնունի սերը շափաղանց վերացական, անմարմնական է. իր սիրո տարիքին անձնատուր՝ նա նույնիսկ չի էլ կարողանում զգալ Լեյլիի ներկայութեան կարիքը. իր մուլուցքի մեջ նա հեռվում էլ արդեն միայն նրանով է ապրում: Վերջապես տառապանքից մեռնում է Լեյլին: Մեջնունը յուր ժամանակի մեծ մասն անց է կացնում սիրածի գերեզմանի մոտ: Իր հետ բարեկամացած դազանները թույլ չեն տալիս ոչ որի մոտենալ նրան: Այդ գերեզմանի մոտ էլ մեռնում է նա: Նրան թաղում են մի տարուց հետո միայն, երբ ցրվում են նրա դիակը պաշտպանող գազանները:

Ինչպես առև հնը արդեն, այս վիպերգի նյութը բաղված է արաբական ավանդությունից: Ըստ այդ ավանդության, և նույնիսկ արաբական շատ պատմիչների մոտ, Քեյսը համարվել է պատմական դեմք, որ ապրել է մեր թվականության VII դարում ու թողել է, իբրև ժառանգություն, իր քնքուշ քնարական բանաստեղծությունները: Այդ ավանդությունն ու բանաստեղծությունները հետագայում հավաքվել են արաբ բանասերների կողմից և պահպանվել դանազան տարբերակներով: Ավելի ուշ, դրանց ավելացվել են նորանոր նյութեր և հրատարակվել առանձին զիվանով: Թե որքանով ճիշտ է այդ ավանդությունը՝ Մեջնունի իբրև պատմական գեմքի մասին, առաջիմ դժվար է որոշել: Արաբական ուրիշ պատմիչներ ասում են, թե Մեջնունին վերագրվող բանաստեղծություններն ու նրա սիրո պատմությունը հորինված են Օմայյադների հարստության ներկայացուցիչներից մեկի կողմից, որ, չկամենալով իր անունը հռչակել իբրև բանաստեղծ, վերագրել է Մեջնուն մտացածին անվանը: Թերևս այս ավելի հավանական է:

Ինչ էլ որ լինի, նիզամին լիովին օգտագործել է այդ աղբյուրները և ընդհանրապես հարազատ է մնացել նրան՝ դեպքերի նկարագրության մեջ: Սակայն իր կերպարների զարգացման, նրանց հոգեբանությունն ու ցնցող հոգեբանական դրությունները կերտելու մեջ նա միանգամայն ինքնուրույն է եղել և էլ է իր նպատակադրումից: Այս ստեղծագործության մեջ հեղինակը նպատակ է ունեցել ցույց տալ անհաջող և հենց դրա հետևանքով աննորմալ դարձած սիրո կործանիչ հետևանքները: Եթե նախորդ ստեղծագործության մեջ նա գովերգում էր սերը, այն առողջ սերը, որ հերոսացնում ու սրբագործում է մարդուն, ապա այստեղ նկարագրում է ողբերգական այն սերը, որ, մուլուցք դառնալով՝ կործանման է



հասցնում սիրողներին: Իր այս սկզբունքը նա ստեղծագործութեան մեջ հիմնավորում է գեպքերի ընթացքով, գեպքեր, որոնք ուժգնորեն անդրադառնում են սիրահարների հոգեկան կացութեան վրա և մղում գեպի անհուստություն, մեհուություն, այդ և՛ գեպի խելագարություն ու կործանում: Յուր ումանախղճով հանդերձ՝ նիզամին մեծ վարպետությամբ կարողացել է հիմնավորել մարդկային հոգեբանության դարգացումը, այդ դարգացման վնասակար ընթացքը և, այդպիսով իսկ, համոզիչ դարձնել իր կերպարները:

Հետաքրքրական է այստեղ նիզամինի վերաբերմունքը հայրական սիրո նկատմամբ: Բուն ստեղծագործության մեջ նա ներկայացնում է իրար միանգամայն հակադիր երկու կերպարներ՝ Մեջնունի հորը և Լեյլիի հորը. իսկ եթե նկատի առնենք նաև այն ներածական գլուխը, որ պարունակում է իր խրատները որդուն, ապա իրեն հրապարակաբար կարող է ծառայել նաև հենց ինքը՝ նիզամին:

Մեջնունի հայրը պոեմում հանդես է գալիս իբրև մի մարդ, որ ծայրահեղորեն սիրում է իր որդուն և ստրկորեն կատարում է որդու բոլոր քմահաճույքները: Նա հաշվի չի առնում, թե այդ քմահաճույքները որքանով վնասակար են կամ օգտակար, բավական է, որ այսինչ բանը ցանկալի է որդուն, և նա պատրաստ է կատարել այն նիզամին չի համակերում այդպիսի հորը. ընդհակառակն, նա ցույց է տալիս, որ այդ կարգի հայրական սերը վնասակար է որդուն, որ որդու ամեն կարգի քմահաճույքները ստրկորեն կատարելը հաճախ կարող է վնասակար ուղու վրա կանգնեցնել ու վերջապես կորստի մատնել նրան: Այդպես էլ պատահում է Մեջնունի հետ, և Մեջնունի դժբախտության համար նիզամին հայտնի շփով հանցավոր է համարում նրա հորը, որ ժամանակին չի կարողանում կանխել որդու մուրումնությունը, արգելք չի հանդիսանում այդ սիրո բուռն դարգացմանը այն ժամանակ, երբ այդ զեն հնարավոր էր:

Լեյլինակը հայտնապես չի համակրում նաև Լեյլիի հորը. վերջինս ներկայացված է իբրև բռնակալ հոր տիպար, որը հաշվի չի նստում որդու ցանկությունների ու զղացմունքների հետ և առանց կշռադատելու, թե որդու հրջանկության համար ինչն է լավ, իր կամքը բռնի կերպով փաթաթում է աղջկա վզին: Նրա զործողությունների ելակետը մի կողմից՝ հաստատված, ընդունված ավանդություններն ու սովորություններն են, մյուս կողմից՝ հասարակական կարծիքը: Ավանդությունը թելադրում է, թե աղջիկն իրավունք չունի ամուսնանալու իր ազատ ընտրությամբ, իրավունք

չունի սիրելու մեկին, եթե այդ ցանկալի չէ նրա ծնողներին. ուստի և՛ Լեյլիի հայրը վճռականորեն զեմ է աղջկա ձգտումներին ու բզրացումներին, և ամեն միջոցի պատրաստ է դիմել՝ այդ սերը խափանելու համար: Մյուս կողմից, հասարակության մեջ այն կարծիքն է ստեղծվել, թե Մեջնունը խելագար է, գիվահար, և, ահա, նա պատասխանում է Մեջնունի հորը, թե՛ ի՞նչ կասեն մարդիկ, Լեյլի իմ աղջիկն ամուսնացնեմ մեկի հետ, որ խելագարի անուն է ստացել: Բայց հենց սրանով էլ նիզամին քննադատում է հասարակական կարծիքն ու քարացած, անհատի ձգտումներն ու զրացումները կաշկանդող ավանդությունը: Նիզամին կողմնակից է ազատ սիրուն, նա բողբոսում է կնոջ ստրկական վիճակի դեմ. մինչդեռ Լեյլիի հայրը հանդիսանում է այդ ավանդության ու հասարակական կարծիքի հյուստրուկը: Ահա, թե ինչու հեղինակը խստորեն քննադատում է նաև նրան:

Բայց ի՞նչ է ուղում նիզամին. ինչպիսի՞ հայրն է լավ: Այս հարցին պատասխանում է նա ներածական մասում, ուր խրատներ է տալիս որդուն: Այդտեղ նա ինքը հանդես է գալիս իբրև մի հայր, որ անսահմանորեն սիրում է որդուն, ոչինչ չի խնայում նրա երջանկության համար, բայց և, միաժամանակ, ուշադիր կերպով հսկում, հետևում է որդու յուրաքանչյուր քայլին և հարկ եղած դեպքում դիմում խստագույն միջոցների՝ վնասակար ուղուց որդուն փրկելու համար: Այսպիսի հայր էր ինքը՝ նիզամին, և նրա ճշմարիտ համոզմունքով, այդպես պետք է լինեն բոլոր հայրերը:

Այսպիսով, նիզամին մեծ վարպետությամբ կարողացել է իրագործել իր նպատակագրումը և կերտել է մի հոյակապ ստեղծագործություն, որ իր խոր հուզականությամբ, իր բարձր արվեստով և իր բարոյախոսական առողջ դաղափարներով դարձել է ժողովրդի ամենասիրելի երկերից մեկը:

«Յ ո ր գ ե ղ ե ց կ ու ճ ի ն ե ր».— Իր չորրորդ վիպերգի նյութը նիզամին դարձյալ ընտրում է պարսկական ժամանակագրությունից: Բնորոշ է սակայն, որ այս դեպքում էլ նա ընտրում է մի այնպիսի նյութ, որը որոշ գծերով կապվում է անդրկովկասյան ժողովուրդների ավանդությունների ու զիջաբանության հետ: Այսպես, իբրև իր վիպերգի հերոս նա վերցնում է Սասանյան շրջանի Բահրամ Գուր արքային, որին պարսկական ավանդությունը կապում է Վրացիական աստծու հետ՝ անվան շնորհիվ և դարձնում նրան հայտնի դուրյաղնափեպի հերոսը: Այսպես որ, այս դեպքում էլ պարսկական ժամանակագրությունը նրան ծառայում է միայն որպես առաջձ. նա այդ ընտրելով՝ հնարավորություն է ստեղծում



իր ստեղծագործութեան համար նյութ քաղել դարձյալ ժողովրդ-  
դական բանահյուսութեանից և հենց դրանով իսկ կապել իր ստեղ-  
ծագործութեանը անդրկովկասյան միջավայրի հետ:

Այնպէս որ, նիզամին, ազատ լինելով թեմայի բնութեան  
մեջ, դարձյալ իր երեսը դարձնում է դեպի Անդրկովկասի ժող-  
ովուրդների ավանդութեանները, թեև հերոսն անվանապես կապված  
է Երանի հետ:

Ներածական պլուխներից հետո հեղինակը պատմում է, որ  
Բահրամը՝ Մասանյան թագավոր Եղեգիրդ (Հաղկերտ) առաջինի  
որդին՝ դաստիարակութեան է ուղարկվում Եմենի տիրակալ Նումա-  
նի մոտ: Եղեգիրդը, որ «մեղապարտ» մականունն էր ստացել, իր  
դեմ էր հարուցել ուղղմանը հինգալկան արխատկրատիայի  
ատելությունն ու թշնամությունը՝ ուղղման գործի նկատմամբ  
ունեցած իր անփութությամբ: Նա իր դեմ էր հարուցել նաև հոգե-  
վորականությանը՝ դրադաշտական քրմության անող պահանջնե-  
րին չընդունալով: Այնպես որ, երկրի ներքին ծանր կացութեանից  
և արխատկրատիայի դավերից սրբուն հետո պահելու համար  
նա ստիպված է լինում նրան դաստիարակութեան ուղարկել օտար  
աշխարհ:

Եմենում Բահրամն ապրում է շորս տարի. սակայն այդտեղի  
տաք կլիման շուտով սկսում է վատ ազդել երիտասարդ արքայազ-  
նի առողջության վրա: Որոշվում է զոյակ կառուցել Բահրամի հա-  
մար գովաշունչ լեռնաստանում: Գոյակը կառուցելու համար հրա-  
վիրում են հայտնի ճարտարագետ-կառուցող Սիմնարին, որ հրու-  
շակվել էր Եղեգիրդի մոտ ու Սիրիայում կառուցած շինքերով: Ձեռ-  
նարկելով գործին՝ հմուտ կառուցողը հինգ տարվա բնթացքում  
կանգնեցնում է մի հռչակապ ողջակ, որ կախարդական հատկու-  
թյամբ օրը երեք անգամ փոխում էր գույնը՝ լինելով մերթ կա-  
պույտ, մերթ՝ սպիտակ և մերթ՝ դեղին: Իր այդ աշխատանքի  
համար նա վարձատրվում է մեծամեծ պարգևներով և, դրանից  
ոգևորված, հայտնում է, թե կարող է կառուցել նաև այնպիսի զրդ-  
չակ, որ յոթ գույն փոխի: Նումանը, կասկածելով, թե նա մի ու-  
րիշի համար կարող է կառուցել այդպիսի ողջակ և դրանով իսկ  
նահանգնել իր զոյակի հմայքը, հրամայում է աշտարակից ցած  
նետել հմուտ կառուցողին: Հրամանն անմիջապես կատարվում է:  
Թեև զոյակն այնպիսի մեծ հռչակ է ստանում, որ, նույնիսկ երգեր  
հորինելով զովիրդում են նրա հմայքը, բայց Նումանի խիղճը  
տանջվում է իր կատարած հանցանքի գիտակցութեամբ: Իր որդի

Մունգիրին հանձնելով Բահրամի դաստիարակութեանը՝ նա բաշ-  
վում է անապատ՝ իր մեղքը մեկնության մեջ քաղելու:

Բահրամը սովորում է մի ամբողջ շարք գիտություններ, ա-  
ռանձնապես՝ աստղաբաշխություն և գինավարժություն, ինչպես և՛  
երեք լեզու. արաբերեն, պարսկերեն ու հունարեն: Երիտասարդ ար-  
քայազնի ամենատիրելի զբաղմունքն է ցիռերի (վայրի էշերի) որ-  
սը. ըստ որում, նա սովորություն ունի սպանել միայն մեծերին,  
իսկ փոքրերին, որոնց շորս տարին դեռ չէ լրացել, միայն խարա-  
նում է իր գրողով ու քայ թողնում: Մի անգամ, դարձյալ իր սո-  
վորության համաձայն, մի ցիռի հետապնդում է մինչև մայրամուտ  
և, վերջապես, հասնում է մի քարանձավի: Այդտեղ, հենց մուտքի  
առջև նստած էր ցիռի քուռակին հոշոտած վիշապը. Բահրամը  
հասկանում է, որ ցիռն իրեն բերել է վրեժ լուծելու և, սպանելով  
նրան, ուղում է վերադառնալ: Բայց ցիռը մտնում է քարայրը և իր  
հետևից կանչում Բահրամին: Մունգիրով ներս՝ Բահրամը գտնում է  
անհամար գանձեր, որոնք տեղափոխելով իր զոյակը, կարճ ժամա-  
նակի բնթացքում բաժանում է բարեկամներին: Մի անգամ, իր  
զոյակում շրջելիս, նա մտնում է մի սենյակի, որտեղ շէր եղել ոչ  
մի անգամ: Մենյակի պատի վրա նա գտնում է յոթ գեեցկուհիների  
պատկերները, իսկ նրանց մեջ՝ իրենը: Երիտասարդը հասկանում  
է, որ դա յուր ապագայի նախագուշակությունն է և, արգելելով  
ուրիշների մուտքը, ինքը սովորություն է դարձնում միայն հար-  
բած ժամանակ գալ այդտեղ ու թախժել իր ապագայի մասին:

Բայց, վերջապես, արքայազնի հայրը՝ Եղեգիրդը մեռնում է,  
և մեծամեծները՝ վախենալով, որ Բահրամն էլ հոր նման շարա-  
գործ կլինի, պահ են բարձրացնում նրա հեռավոր, ծեր ազգակա-  
նին: Իր իրավունքների այս ոտնահարումից զայրացած Բահրամը  
Մունգիրից գործ է վերցնում ու դիմում դեպի Երան: Հայրենի երկ-  
րի սահմանի մոտ նա ստանում է նոր արքայի նամակը. արքան  
հայտնում է, թե ինքը գիտի, որ Բահրամն օրինական թագաժա-  
ռանդ է, բայց երկրի ավազները չսիրելով նրան, հոր պատճառով,  
թագը հանձնել են իրեն. ինքը կատարել է միայն նրանց կամքը:  
Ձայրացած Բահրամը պատասխան է գրում, պահանջելով իր օրի-  
նական զահր. այդ պահանջն արգարացնում է այն տրամաբանա-  
կան հիմունքով, թե հոր հանցանքների համար ինքը պատասխա-  
նատու չէ. իր կողմից նա խոստանում է լինել արգար ու բարի թա-  
գավոր: Մեծամեծներն ընդունում են նրա պահանջի արգարացի լի-  
նելը, բայց հայտնում են, թե իրենք երգվել են նոր թագավորին  
հավատարիմ լինել և առանց պատճառի չեն կարող դրժել այն:



Երիտասարդ արքայազնը պատասխանում է, թե ուխտը դրժելու կարիք չկա. թող թագը զենն երկու առյուծի միջև, ով նրանցից խլի այն, նա էլ զահին կտիրանա: Մեր արքան՝ լսելով այդ պայմանը, վախից հրաժարվում է զահից, բայց ամագները՝ կամենալով փորձել Բահրամի քաջութիւնը՝ պահանջում են, որ նա կատարի իր պայմանը: Անվեհեր երիտասարդը արիաբար մտնելում է առյուծներին, սպանում երկուսին էլ և, վերցնելով թագը, տիրում հոր գահին: Նա դիմում է ժողովրդին մի մեծ ճառով և խոստանում արդար լինել, միեւնոյն ժամանակ նաև հպատակներից պահանջում է նվիրվածութիւն ու հավատարմութիւն: Իրոք, նա կառավարում է երկիրն արդարութեամբ. շուտով երկիրը ծաղկած գրութիւն է հասնում. ամեն ինչ բարեհաջող է: Խրախուսված գրանից՝ Բահրամն անձնատուր է լինում զվարճութիւնների, այլևս չհոգալով երկրի կառավարման մասին: Երկրի հարստացումից շագած հպատակները ևս զոռոզանում են, կարծելով թե հավիտյան աշգպես կլինի: Եվ ահա, երկիրքը պատժում է և՛ արքային՝ իր անհոգութեան համար, և՛ ժողովրդին՝ գոռոզանալու համար: Երկրի անբերրիութեան հետևանքով տիրում է շրտամշտ սով: Բահրամի հրամանով բացում են արքունի բոլոր շտեմարանները, արքունական միջոցներով հարուստներից զնում են նրանց հացահատիկի պաշարները և բաժանում աղքատներին՝ ավելցուկը թշուրմներին բաժին հանելով: Չորս տարվա բնթացքում սովից մեռնում է միայն մի մարդ:

Վերջապես անցնում է սովը, գործերը կրկին բարեհաջող բնթացք են ստանում, երկիրը հարստանում է, բնակչութիւնը աճում: Երկիրն այնքան է հզորանում, որ այլևս ավելորդ են համարում վենքի մասին մտածել: Բահրամը նույնպես անձնատուր է լինում անհոգութեան ու հանուշքների. երկրի ուրախութիւններն ավելացնելու նպատակով նա ամեն կողմից հավաքում է լավագույն երամիշտներին և բաշխում քաղաքների միջև: Այժմ արդեն նա նորից իր սիրած գրադուներին՝ որսորդութեանն է տրվում: Հեղինակն այստեղ պատմում է մի գեղեցիկ միջադեպ՝ Բահրամի և նրա սիրեցյալ ստրկուհի Ֆիթնեի մասին: Դա հետևյալն է.

Որսորդութեան ժամանակ Բահրամի հետ էր նաև իր սիրելի Ֆիթնեն: Արքան զովում էր իր հմտութիւնը՝ նետամզութեան մեջ: Իբրև դրա ապացույց՝ ստրկուհին պահանջում է նրանից մի նետով վիթի ոտքը զլխին ամբացնել: Բահրամը վարպետութեամբ կատարում է այդ, բայց Ֆիթնեն առանձնապես շի վարմանում, ասելով, թե դա վարժութեան արդյունք է: Արքան դայրանում է և իր զորա-

վարին է հանձնում ստրկուհուն՝ մահապատժի հրամանով: Ստրկուհին աղերսում է զորավարին շտպանել իրեն՝ հետևյալ պայմանով. միաժամանակից հետո զորավարը թող հայտնի թագավորին, թե սպանել է Ֆիթնեին. եթե արքան գրանից ուրախանա, ապա զորավարը կկատարի իրեն տրված հրամանը, իսկ եթե տխրի՝ ոչ: Չորավարը համաձայնում է և մի շարափից հետո հայտնում է արքային, թե Ֆիթնեն սպանված է: Բահրամը դառնորեն սգում է իր սիրած ստրկուհու կորուստը: Այդ բանից խրախուսվելով՝ զորավարը Ֆիթնեին տանում է իր ամբոցը, որ գտնվում էր լեռան վրա: Դեպի նրա բարձր պատշգամբը ձգվում էր վաթսուն աստիճանից բազկացած սանդուղքը: Հենց այն օրը, որ Ֆիթնեն այդ ամբոցն է գալիս, ծնվում է մի հորթ, և նա, հորթը գրկած, բարձրանում է մինչև պատշգամբը: Այսպես կրկնվում է ամեն օր, ասանց բացառութեան, և Ֆիթնեն անբնական վարժութեան շնորհիվ, այդ նույն բանն առանց մեծ զոժվարութեան կատարում է նաև այն ժամանակ, երբ հորթը արդեն ցուլ էր դարձել:

Մի անգամ, երբ արքան որսորդութեան ժամանակ գտնվում էր այդ ամբոցի շրջակայքում, Ֆիթնեի խնդրանքով զորավարը նրան իր մոտ է հրավիրում: Արքան գալիս է, բարձրանում պատշգամբը և դիմարուրթի ժամանակ՝ գովիլով ամբոցի հրաշալի դիրքը, հարցնում է զորավարից, թե ինչպե՞ս նա պետք է վաթսուն աստիճաններով պատշգամբ բարձրանա ձերութեան օրերին: Չորավարը պատասխանում է, թե դրա մասին առայժմ չի մտածում և միաժամանակ հայտնում է, որ զարմանալի կերպով իր ամբոցում ապրող մի աղջիկ, ցուլը գրկած, առանց դադար անելու բարձրանում է մինչև պատշգամբը: Արքայի աչքերի առջև Ֆիթնեն կատարում է այդ: Թահրամը, թեև վարմանում է, բայց և այնպես ստում է, թե դա երկարատև վարժութեան արդյունք է: Աղջիկն անմիջապես պատասխանում է, թե ցուլ բարձրացնելը վարժութիւն է, իսկ աստիճանները՝ առանց վարժութեան է ձեռք բերվում: Այս պատասխանից իսկ Բահրամը ճանաչում է իր սիրելի Ֆիթնեին, ամուսնանում է նրա հետ, իսկ զորավարին պարգևներ է շնորհում՝ ըստըրկուհուն շտպանելու և իր մոտ խնամելու համար:

Մինչդեռ Թահրամն զճրաղված էր զվարճութիւններիով, կերխումով ու որսորդութեամբ, իսկ երկրի մեծամեծներն ու զորքը՝ անհոգութեան մեջ՝ մոռացութեան էին մատնել ուղղմական գործը, թշնամիները, օգտվելով առիթից, նոր դավիթ են լարում: Եվ, ահա, Չինաստանի խաբանը, իմանալով Թահրամի գրադուներների ու երկրի ուղղմական թուլութեան մասին՝ հարձակվում է Իրանի վրա:



Քահրամար, որ գիտեր, թե իր զորքը երկարատե փափկակնցությունից ու անզործությունից կորցրել էր ռազմականությունը, վտանգավոր է համարում պատերազմով դիմադրել և փախուստի է դիմում: Խաբանը՝ լսելով, որ թշնամին փախուստի է դիմել, տոնում է իր հաղթանակը խրախճանքով: Օգուտ քաղելով գրանից՝ Քահրամար մուժ գիշերով երեք հարյուր ընտիր հեծյալներով հարձակվում է թշնամու վրա: Խավարի և անակնկալի հետևանքով շինական զորքն անասելի խառնաշփոթության ու տազնապի մեջ է ընկնում և այդպիսով Քահրամար հաղթանակ է տանում:

Այժմ, երբ թշնամին զուրս էր վանդված երկրից, և երկիրը նորից խաղաղության ու լիության մեջ էր, Քահրամար, վերջապես, ձեռնամուխ է լինում երբեմնի գուշակության իրականացմանը: Իր ղեկավարի պատի վրա տեսած յոթ արքայազուտորների պատկերները հիշելով՝ նա իր պալատն է բերում հնդկական, թուրքեստանյան, խորեզմյան, սլավոնական, մադրիբյան, բյուզանդական և իրանական արքայազուտորներին, ապա՝ կանչելով Միմնարի աշակերտներից մեկին, հանձնարարում է կառուցել յոթ ղեկավարի ճարտարապետը հանձն է առնում կառուցել յոթ ղեկավարի և խոստանում է, որ յոթն էլ աարբեր գուշնով կլինեն, ըստ որում, յուրաքանչյուրի գուշը պետք է համապատասխաներ շարաթվա մի օրվա հովանավոր մոլորակի գուշին: Հմուտ ճարտարապետը երկու տարում ավարտում է ղեկավարների կառուցումը, որոնք ըստ գուշի և շարաթվա օրերի ու նրանց համապատասխան մոլորակների հաջորդականության, դասավորվում են այսպես. 1. Սև ղեկավար—շարաթ—Նրեվակ, 2. Գեղին ղեկավար—կիրակի—Արև, 3. Կանաչ ղեկավար—երկուշաբթի—Լուսին, 4. Կարմիր ղեկավար—երեքշաբթի—Հրատ, 5. Փիրուզագույն ղեկավար—չորեքշաբթի—Փայլածու, 6. Մանդաղագույն ղեկավար—հինգշաբթի—Լուսնթագ, 7. Սպիտակ ղեկավար—ուրբաթ—Արուսյակ:

Արքայազուտորից տեղավորվում են իրենց ղեկավարներում, և Քահրամար այցելում է նրանցից յուրաքանչյուրին շարաթվա համապատասխան օրը՝ ղգեստավորված ղեկավարի գուշին համաձայն նիւլամին ցուցադրում է իր ստեղծագործության մեջ Քահրամարի մի շարաթվա այցելությունները: Յուրաքանչյուր ղեկավար՝ երաժշտությունից, հյուրասիրությունից ու գինարբուրից հետո ղեկավար արքայազուտորը պատմում է մի պատմություն: Այսպիսով, ահա, սկսվում է յոթ հավելյալ պատմվածքների կամ, ավելի ճիշտ, նովելների շարանը, նովելներ, որոնցից յուրաքանչյուրն արժեստի մի հիանալի նմուշ է: Այդ նովելները հետևյալներն են.

Ս և գ ղ յ ա կ.—Հնդկական արքայազուտորը պատմում է, թե մանկության ժամանակ լսել էր, որ իրենց տունը այցելել է մի պատվավոր կին՝ մշտապես սև գուշի ղգեստ հագած: Երբ նրան հարցրել են, թե ինչու միայն սև ղգեստ է հագնում, նա հայտնել է հետևյալը. ինքը մի թագավորի ստրկուհին է: Թագավորը շատ սիրալիր, քնքուշ ու բարի մարդ էր. նա շատ ճանապարհորդներին էր հյուրընկալում, խնամում նրանց իր տանը և մտերմաբար պուցում նրանց հետ: Բայց մի անգամ նա հեռանում է իր տնից և, երկար ժամանակ անհայտության մեջ մնալուց հետո՝ վերադառնում է ամբողջապես սևով ղգեստավորված և այլևս ուրիշ գուշի հագուստ չի հագնում: Մի գիշեր ինքը՝ ստրկուհին, հանդգնում է հարցնել նրան, թե ինչու միայն սև ղգեստ է կրում, և թագավորը պատմում է նրան, որ իր մոտ հյուրընկալված ճանապարհորդներից մեկը ոտից զլուխ սև էր հագել: Երբ ինքը հարցրեց, թե ինչու նա այդ մոռյ գուշի ղգեստն է հագել, նա երկար ժամանակ հրաժարվեց պատասխանել այդ հարցին: Բայց, վերջապես, զիջելով իր թախանձանքներին՝ նա հայտնեց, որ Չինաստանում կա «Ջարմացյալների քաղաք» անունը կրող մի գեղեցիկ ու հարուստ քաղաք, որի բոլոր բնակիչները միայն սև ղգեստներ են հագնում: Այդ քաղաքն է իր՝ ճանապարհորդի, դժբախտության պատճառը դարձել: Ճանապարհորդն՝ այլևս ոչինչ չասելով, հեռանում է: Թագավորը համոզվում է անզուսպ հետաքրքրությունով և որոշում է անձամբ պարզել այդ դժբախտությունն ու զրա պատճառները: Գնալով այդ քաղաքը՝ նա մտերմանում է մի պատանու հետ, և, անսահման գանձեր նվիրելով նրան՝ խնդրում է հայտնել իրեն, թե ինչու այդ քաղաքի բնակիչները միայն սև են հագնում: Չիջելով իր բարերարին՝ պատանին հանձն է առնում հայտնել, և երբ վրա է հասնում գիշերը, թագավորին առաջնորդում է ղգայի քաղաքից զուրս գրանդով ափերակները: Թագավորն այստեղ պարանից կախված մի գամբյուղ է տեսնում և, չգտնելով ուրիշ ելք, նստում է նրա մեջ: Խորհրդավոր դամբյուղն անմիջապես ղգայի վեր է սլանում: Նրա մեջ նստած՝ թագավորը հասնում է վերջապես մի շատ բարձր աշտարակի գագաթը: Քիչ հետո այդ նույն աշտարակի վրա թառում է մի հսկայական թռչուն: Առավոտյան, երբ թռչունը դարձնելով, ուզում էր թռչել, թագավորը բռնում է նրա ստեղծ, և թռչունը նրան տանում է իր հետ: Այդպես օդում կախված տարվելով թագավորը ցած է նետվում այն ժամանակ, երբ թռչունը ցած էր իջնում: Երբ, գետնին հասնելով՝ թագավորն աչքերը բացում է, իրեն գտնում է մի պտղատու այգու մեջ: Գիշերը վրա հասնելուն պես



այդին լցվում է գեղեցիկ աղջիկներով: Նրանք, մոմերը ձեռքներին, լուսավորում էին մի գարմանահրաշ գեղեցիկուհու ճանապարհը, որ պալիս էր նրանց հետևից: Քաղաքը հմայված էր այդ անզուգական գեղեցկությամբ: Շուտով գեղեցիկուհին նկատում է թագավորին և կանչում նրան իր մոտ: Սկսվում է խրախճանքը. մատուցվում են մրգեր ու գինի: Խրախճուկները տևում է երկար ժամանակ. թագավորը հանդգնում է զրկել ու համբուրել գեղեցիկուհուն: Վերջինս էլ իր հերթին խոստովանում է իր սերը, բայց պայման է դնում, որ այդ օրը համբուրից ավելի ոչինչ չպահանջի թագավորը: Մինևույն ժամանակ նա առաջարկում է թագավորին այդ գիշերվա համար ընտրել ստրկուհիներից մեկին: Քաղաքը անստամ է գեղեցիկուհուն: Իր ընտրած ստրկուհին առաջնորդում է նրան գեպի մի զոլակ, որտեղ նրանք ամբողջ գիշեր անձնատուր են լինում հաճույքների: Առավոտյան գարթնելով, թագավորն իրեն մենակ է գտնում զոլակում և, զուրս գալով պարտեզը՝ ցերեկն անցկացնում թափառելով ու մրդեր ուսելով: Վերջապես օրը երեկոյանում է, և գեղեցիկուհին, իր ստրկուհիներով շրջապատված, կրկին հայտնվում է պարտեզում: Այդ օրն էլ գեղեցիկուհին նույն պայմանն է դնում, և թագավորը, շնայած իր հոգում վառված սիրուն, համաձայնում է: Այդպես շարունակվում է 29 գիշեր, և արքան ծայրահեղ տանջանքների գնով միշտ էլ կարողանում է զսպել իրեն: Բայց երեսուներորդ գիշերը նա այլևս չի համբերում և իր պահանջներն է դնում: Գեղեցիկուհին խնդրում է հետաձգել ևս մի գիշեր, սակայն թագավորը չի զիջում: Այդ ժամանակ գեղեցիկուհին խնդրում է նրան փակել աչքերը, մինչև որ ինքը հանի զգեստները: Քաղաքը՝ հնազանդելով նրան փակում է աչքերը և մի քանի րոպեից հետո բացելով՝ իրեն գտնում... նույն պամբուրի մեջ, որով բարձրացել էր խորհրդավոր աշտարակի զագաթը: Հայտնվում է նաև իրեն առաջնորդող պատանին, որ արդեն ծանոթ լինելով այդ արկածներին և հասկանալով նրա հոգեկան ապրումները, ասում է. «մնում է լսել միայն և սգի հագուստով զգեստավորվել»: Այդ օրվանից թագավորը սե զգեստ է հագնում: Ստրկուհին էլ, լսելով նրանից այդ պատմությունը, յուրացրել է նրա սովորությունը և ուրիշ գույնի զգեստ չի հագնում:

Պատմվածքը վերջանում է սև գույնի փառաբանությամբ, այն գույնի, ասում է հնդկական արքայադուստրը, որով փալում են գեղեցիկ աչքերը և հմայք ստանում խոպոպները:

Գեղին գոլակ.— Փուրքեստանի արքայադուստրը պատմում է, թե Իրաքի թագավորներից մեկը բախտացույցի (հորս-

կույի) միջոցով իմանում է, որ կանանցից իրեն գոթախառնություն է սպասվում: Հավատալով դրան՝ նա չի ամուսնանում, այլ գնում է գեղեցիկուհի-ստրկուհիների և վայելում է նրանց սերն ու գրգվանքը: Սակայն ստրկուհիները պառավ աղախնի խարզավանքների շնորհիվ, շուտով երես են առնում և զոտոզուկյամբ հիասթափեցնում թագավորին: Քաղաքը ստիպված վաճառում է նրանց և գնում նորերին, ձգտելով գտնել մի այնպիսի գեղեցիկուհի, որ լիներ համեստության ու խոնարհության մարմնացումը: Վերջապես մի անգամ էլ, երբ ստրկավաճառը ստրկուհիների մի նոր խումբ էր բերել, թագավորը գերվեց ստրկուհիներից մեկի գեղեցկությամբ: Ստրկավաճառը զգալով այդ հայտնում է, թե գեղեցիկուհին համառ է ու բիրտ, և խորհուրդ չի տալիս թագավորին այդ գնումը կատարել: Սակայն թագավորը չի լսում նրան և գնում է գեղեցիկուհուն: Վերջինս միանգամայն արգարացնում է իրեն իբրև աղախին, բայց ոչ մի կերպ չի զիջում թագավորին՝ նրա սիրուհին դառնալու Քաղաքը տանջվում է սիրուց և, սակայն, իր պործադրած միջոցներից և ոչ մեկն էլ արդյունք չի տալիս: Վերջապես մի անգամ նա պատմում է գեղեցիկուհուն Սուլեյմանի ու Քելիփեսի պատմությունը և խնդրում է նրան ասել, թե ինչու չի զիջում իր թախանձանքին: Ստրկուհին իր անզրգվելի համառությունը բացատրում է հետևյալ պատճառաբանությամբ. իրենց ընտանիքի բոլոր կանայք առաջին ծննդաբերությունից հետո մեռնում են. ինքն էլ, եթե ամուսնանա և որդի ունենա, պետք է մեռնի, ուստի և հրաժարվում է ամուսնությունից: Քաղաքը իմանալով այդ, նոր միջոցներ է սրտնում գեղեցիկուհու մտավախությունը ցրելու և նրա համառությունը կոտրելու համար: Յուր պառավ աղախնի խորհրդով նա աշխատում է խանդ առաջացնել գեղեցիկուհու մեջ: Իբրև այս միջոցը շուտով հաջողությամբ է պսակում թագավորի ջանքերը: Խանդից տառապելով՝ ստրկուհին վերջապես չի կարողանում զսպել իրեն և հայտնում է իր սերը: Քաղաքը բացատրում է նրան իր պործադրած խորամանկ միջոցի նպատակը, և ստրկուհին մոտանում է իր տանջանքները: Երջանիկ սիրու վայելքների մեջ թագավորը փառքով է պահում ստրկուհուն՝ զարգարելով նրան ոսկեղեն զարդերով:

Պատմվածքը վերջանում է գեղին գույնի փառաբանությամբ:

Կանաչ գոլակ.— Խորեզմի արքայադուստրը պատմում է հետևյալը: Ռուսի երկրում (Փոքր Ասիայում) ապրում էր Բիշր անունով մի արդար մարդ: Փողոցում նա մի անգամ հանդիպում է



աննման մի գեղեցկուհու և հմայվում նրանով: Մակայն նա չի հե-  
տևում գեղեցկուհուն և որոշում է հաղթահարել իր կրքերն ու մո-  
ռանալ այն սերը, որ բռնկվել էր իր մեջ գեղեցկուհուն տեսնելուց:  
Կամենալով առավել հեշտութեամբ հասնել իր այդ նպատակին՝ նա  
գնում է Երուսաղեմ, աստծու օգնությամբ ազատվելու սիրո կրա-  
կից: Վերադառնալու ժամանակ, ճանապարհին նրան ընկերանում  
է Մալխա անունով մի ուղևոր: Մալխան արտաքուստ շատ բա-  
րի մարդու տպավորություն էր թողնում, բայց ներքուստ ճիշտ հա-  
կառակն էր: Նա շար էր, հավակնոտ ու ամբարտապան: Ծանա-  
պարհն անցնում էր անապատով, ուղևորները նեղվում էին ծա-  
րավից, մինչև որ, վերջապես, հասնում են մի ծառի, որի տակ,  
գետնի մեջ թաղված էր սառը ջրով լի մի հսկայական կարաս:  
Զրույցի ժամանակ Բիշրը այն կարծիքն է հայտնում, թե այդ ինչ-  
որ արդար, բարեպաշտ մարդու գործ է: Հավանաբար, ուխտման  
համաձայն բարեպաշտ մի մարդ փորել է այդանոց գետինը, ջրով  
լցրած կարասը դրել փոսի մեջ՝ ծարավից տոչորված ուղևորներին  
փրկելու համար: Մալխան հակառակում է դրան և համառորեն  
պնդում, թե որսորդներն են սարքել այդ՝ իրրե թակարդ՝ գազան-  
նեք որսալու համար: Նախաձաշելուց և սառը ջրով հագնեալուց  
հետո՝ Մալխան ուզում է լողանալ այդ ջրում և ապա՝ կտրել կա-  
րասը: Բիշրի բոլոր հորդորներն ու ջանքերը՝ ընկերոջը արտառոց  
ու վնասակար արարքից հտ պահելու համար՝ իզուր են անցնում:  
Մալխան մերկանում ու նետվում է կարասի մեջ: Մակայն նրա  
սպասածին հակառակ, պարզվում է, որ դա մի խորունկ ջրհոր է,  
և նա խորասուզվելով գետի հատակը՝ ջրահեղձ է լինում: Բիշրը  
հանում է նրա դիակը, թաղում և, հավաքելով նրա իրերը, շարու-  
նակում է ճանապարհը: Մալխայի իրերի մեջ նա գտնում է մի  
բոակ, որի մեջ 1000 ոսկե դրնար փող կար: Հասնելով լուր բաղա-  
քը, Բիշրը մեծ գովարություններով վերջապես կարողանում է դրա-  
նել Մալխայի տունը՝ իրերը նրա ժառանգներին հանձնելու հա-  
մար: Այդտեղ նրան դիմավորում է ջրահեղձի այրին, որ, իմանա-  
լով ամուսնու մահվան մասին, հայտնում է, թե նա շար ամուսին  
է եղել, ինքն այժմ երջանիկ է գգում իրեն՝ նրանից ազատվելու  
համար: Միաժամանակ նա հայտնում է իր ցանկությունը՝ Բիշրի  
հետ ամուսնանալու մասին և բարձրացնում է երեսի քողը: Բիշրը  
ձանաչում է իրեն հմայող գեղեցկուհուն, որի սիրուց ազատվելու  
համար Երուսաղեմ էր գնացել, ամուսնանում է նրա հետ և այնու-  
հետև, ի նշան բախտավորության, հազնում է միայն կանաչ րդ-  
գեստներ:

Պատմվածքը վերջանում է կանաչ դույնի փառաբանությամբ,  
այն դույնի, ավելացնում է հեղինակը, որով զգեստավորված են  
դրախտի բնակիչները:

Կարմիր դղյակ.— Ռուսական արքայազուստը պատմում  
է հետևյալը: Ռուսաց երկրում մի շքնաղ արքայազուստը է լինում:  
Իր անասման գեղեցկության հետ նա ունենում է խորաթափանց  
միտք ու բազմակողմանի ընդունակություններ: Նա լիովին յու-  
րացնում է գիտության բոլոր ճյուղերը, այդ թվում՝ նաև հմայու-  
թյան արվեստը: Նրա գեղեցկության համբավը շուտով տարածվում  
է աշխարհի բոլոր մասերում, և ամենաճեղատու երկրներից անդամ  
անվանի ասպետները դալիս են նրա ձեռքը խնդրելու: Մակայն ար-  
քայազուստը չի կամենում նույնիսկ խոսել նրանց հետ: Հոր թույլ-  
տվությամբ նա կառուցել է տալիս մի կախարդական ամրոց լեռ-  
նաշխարհում և փակվում այնտեղ: Ամրոցն ուներ միայն գաղտնի  
մուտք. շորս կողմից նա շրջապատված էր բարձր պարիսպներով:  
Նրան պահապան էին բազմաթիվ խորհրդավոր արձանները, որոնք  
սրերով թոցնում էին ամրոցի ներսը թափանցել փորձող խիզախ-  
ների գլուխը: Արքայազուստը նկարել է տալիս իր պատկերը և  
նրա տակ գրում այն պայմանները, որոնք կատարողը կարող է  
ամուսնանալ նրա հետ: Այդ պայմաններն էին, իր հետ ամուսնա-  
նալ կամեցողը պետք է լուծեր բոլոր գաղտնի թալիսմանների գո-  
րությունը, գտներ գաղտնի մուտքը, թափանցեր ամրոցի ներսը,  
լուծեր այն բոլոր առեղծվածները, որ կառայարկիր ինքը՝ արքա-  
յազուստը: Այդ բոլորից հետո միայն նա կհամաձայնել ամուս-  
նանալ խիզախ ասպետի հետ: Իր պատկերը և այդ պայմանները  
պարունակող հայտարարությունը կախված էին բաղաքների դար-  
բասների վրա: Հարյուրավոր ու հազարավոր հերոսներ, գերված  
շքնաղ գեղեցկուհու պատկերով, խիզախեցին իրենց բախտը փոր-  
ծել, սակայն բոլորն էլ ամրոցի խորհրդավոր պահապանների սրե-  
րին զոհ դարձան: Զոհվածների գլուխները կախվում էին ամրոցի  
պարիսպներից, որոնք կարճ ժամանակից հետո ծածկվեցին մարդ-  
կային գանգերով:

Հեթքը հասնում է մի պատանի շահադաբի: Որոշելով անպաշ-  
տանորեն հասնել իր նպատակին՝ շահադաբն մի նկարչի մոտ սո-  
վորում է բոլոր կախարդական գիտությունները: Այդ բոլորը յու-  
րացնելուց հետո միայն՝ նա, բոլոր զոհվածների վրեժը լուծելու  
և արքայազուստը հետ ամուսնանալու վճռական որոշումով, հաղ-  
նելով կարմիր դույնտներ՝ դիմում է գետի անափի ամրոցը: Իր սո-  
վորած գիտությունների շնորհիվ նա հաղթահարում է բոլոր դժվա-



րութունները, շեղբացնում խորհրդավոր պահապանների գործ-  
թյունը, մտնում ամբողջ ներսը և ճշտորեն լուծում արքայադատեր  
առաջարկած առեղծվածները: Արքայագուստը գտնում է վերջա-  
պես իր ցանկացած փեսացուին և համայնաժողովում, խն-  
ջքով, թախանձով և զեղեցկությամբ, տալիս է իր համաձայնությունը՝  
նրա հետ ամուսնանալու մասին: Անմիջապես կատարվում է հար-  
սանիքը, շահագրեմ, ի նշան իր երջանկության ու հաղթանակի,  
այնուհետև հագնում է միայն կարմիր գգեսաներ:

Պատմվածքը վերջանում է կարմիր գույնի փառաբանությամբ,  
որ գեղեցկության ու երջանկության սագական գույնն է. այդ փա-  
ռաբանությունը հավելվում է բոսորագույն արշալույսի հակերձ  
նկարագրությամբ:

Փ ի ր ու զ ա դ ու չ ն զ զ յ ա կ.—Մաղբերյան արքայադատարը  
պատմում է, թե Եգիպտոսում Մախան անունով մի վաճառական  
է լինում: Մի օր, իրիկնամուտին, երբ նա, իր ընկերներով շրջա-  
պատված գրոսնում էր պարտեզում, նրա մոտ է գալիս յուր առե-  
տրական ընկերը և հայտնում, թե մեծագին ապրանքներով ու գան-  
ձերով բեռնավորված՝ նրա քարավանը ժամանել է: Ընկերոջ ու-  
ղեկցությամբ Մախանը դիմում է դեպի քաղաքի դարբասները,  
բայց երբ հասնում են այնտեղ, պարզվում է, որ դարբասներն ար-  
դեն փակվել են, որովհետև արևը մայր էր մտել. իսկ քաղաքի  
օրենքների համաձայն՝ արևի մայրամուտից հետո դարբասները  
բացելու իրավունք չկար: Մախանը որոշում է սպասել մինչև առա-  
վոտ, բայց ընկերը չի համաձայնում և խորհուրդ է տալիս ծպտյալ  
կերպով դուրս գալ քաղաքից, բեռները գիշերն իսկ տեղափոխել  
քաղաք և այդպիսով իսկ ազատվել մաքս վճարելուց: Մախանը  
համաձայնում է և հեռևում է ուղեկցին: Գուրս գալով քաղաքից՝  
ընկերը նրան առաջնորդում է դեպի ինչ-որ անապատ և, կանչելով  
նրան իր հետևից՝ հանկարծ թաքնվում: Մեն-մենակ մնալով անա-  
պատում՝ նա ճանապարհ է որոնում դեպի քաղաք, բայց նրա առջև  
են ելնում սարսափելի գազաններ, մարդակերներ ու հրեշտեր: Գեր-  
մարդկային ճիգերով հաղթահարելով բոլոր զոժվարությունները և  
ազատվելով գիշախիչների ձեռքից՝ նա վերջապես հասնում է մի  
այգի: Փարթամ բուսականությամբ ճոխացած հրաշալի այգում նա  
գտնում է ամեն տեսակ մրգեր և սառնորակ ջուր: Բայց հենց որ  
նա, իր երկար տանջանքներից հետո, սկսում է ճաշակել մրգերը,  
վրա է հասնում մահակով դիմված պահապանը: Մախանին հա-  
ջողվում է պատմել պահապանին իր ղոբախտ ճանապարհորդու-

թյան ու արկածների մասին. ծեր այգեպանը ցավակցում է նրան  
և թույլ է տալիս մնալ այգում, այն պայմանով միայն, որ նա  
ամբողջ գիշերն անց կացնի ծառի վրա և ինչ էլ որ տեսնի, ծառից  
չիչնի: Մախանը բարձրանում է գիշերելու համար իրեն ցույց տըր-  
ված ծառի վրա և ուղում է քնել: Բայց խավարն ընկնելուն պես  
պարտեզը լցվում է շքնադաղեղ աղջիկներով: Նրանք խրախճանք  
են սարքում հենց այն ծառի տակ, որի վրա պետք է գիշերեր ինքը:  
Բուրբ աղջիկներին պիտավորում է հրեշտակային գեղեցկությամբ  
մի պատվավոր կին: Մախանը ծառի վրայից համայնաժողովում է  
խրախճացող գեղեցկուհիներին: Ծուռով պատվավոր գեղեցկուհին  
նկատում է նրան և կանչում է իր մաս շիշելով ծեր այգեպանի  
խիստ պատվերը՝ Մախանը սկզբից հրաժարվում է ծառից իջնել,  
բայց վերջապես չի կարողանում դիմադրել շքնաղ գեղեցկուհու հը-  
մայրին և, գիջելով նրա հրավերին՝ իջնում է, նստում գեղեցկուհու  
մոտ ու խրախճանում նրա հետ: Ծուռով բորբորվում են նրա կըր-  
քերը, և նա՝ չկարողանալով այլևս դսպել իրեն, գրկում ու համբու-  
րում է գեղեցկուհու շուրթերը: Այդ համբուրից հմայիչ գեղեցկու-  
հին դառնում է մի ճիվաղ՝ վարպեի ժանիքներով: Ամբողջ գիշերը  
նա իր ճիքաններում սեղմելով Մախանին՝ հեշտանքով համբուրում  
է նրան, իսկ նա կիսապիտակից վիճակում այլևս չկարողանալով  
դիմադրել՝ մնում է հրեշտուհու գարշելի գրկում: Վերջապես բաց-  
վում է լույսը, և հմայքը շքանում է: Այժմ Մախանը գտնվում է մի  
անեղս անապատում, որ ծածկված էր մեռելոտիով: Խղբի՝ օգնու-  
թյամբ միայն նա կարողանում է ազատվել այգուցից և հասնել  
տուն: Այդ օրից ի վեր նա հագնում է միայն կապույտ գույնի հա-  
պուսաներ՝ ի նշան սգո:

Պատմվածքը վերջանում է փառաբանությամբ կապույտ գույ-  
նի, որով ներկված է երկնի կամարը:

Մ ա ն զ ա լ ա գ ու չ ն զ զ յ ա կ.—Երկու երիտասարդներ, պատ-  
մում է բյուզանդական արքայադատարը, ճանապարհորդում էին  
միասին: Նրանցից մեկի անունն էր Խեյր, մյուսինը՝ Շարք՝ Նը-  
րանց ճանապարհն անցնում էր մի ամալի տեղով, ուր ոչ բույս  
կա, ոչ մարդկային շունչ: Ծուռով ծարավն սկսում է նեղել նը-  
րանց: Շարքն իր հետ ջուր էր վերցրել: Խեյրը խնդրում է նրանից  
տալ իրեն թեկուզ մի կուժ ջուր, խոստանալով գրա փոխարեն Շար-

<sup>1</sup> Հագիսեհական կենդանության առապելական հերոսը:

<sup>2</sup> Խեյր եղանակում է բարիք, շարք (=շառ)՝ շարք:



քին տալ իր ունեցած երկու թանկագին հակինթները: Ծարրը մեր-  
ժում է ջուր տալ նրան, մտածելով, թե քաղաքում նա ետ կխլի հա-  
կինթները: Նա խոստանում է ջուր տալ միայն այն պայմանով, որ  
եկչրը թույլ տա հանել իր երկու աչքերը: Որքան էլ դաժան էր  
պայմանը, այնուամենայնիվ եկչրն այնքան խիստ պապակ էր ըզ-  
գում, որ համաձայնում է դրան: Ծարրը, օգտվելով այդ համա-  
ձայնությունից՝ հանում է ընկերոջ աչքերը, կոզոպտում նրան և,  
առանց խոստացած ջրով գոնե նրա ծարավը հաղեցնելու, թող-  
նում նրան անապատում՝ ավազների մեջ ընկած, ու հեռանում:  
Եկչրը մեծակ է մնում՝ թավալվելով իր աչքերից հոսող արյան մեջ  
և տառապելով ցավի ու ծարավի կրկնակի տանջանքով: Վերջապես  
նրան գտնում է մի հարուստ բուրյ խաշնարածի աղջիկը: Կույրին  
տանում են բուրդի տունը: Խաշնարածը գիտեր մի ծառ, որի տե-  
րեները բուժիչ գեղ էին և՛ կուրության, և՛ ընկնաժորության դեմ: Այդ  
ծառի տերեւներով եկչրը բուժվում է, ապա՝ ամուսնանալով խաշնա-  
րածի աղջկա հետ՝ ժողովում նրա ամբողջ հոտը: Երկար ժամա-  
նակ շահցած՝ լուր է տարածվում, թե շահի աղջիկը տառապում է  
ընկնաժորությամբ, և ով որ բուժի, կդառնա նրա փեսան: Քրդի  
խորհրդով եկչրը նույն ծառի տերեւների միջոցով բուժում է շահի  
աղջկան, ամուսնանում նրա հետ և թագավոր դառնում: Այդ մի-  
ջոցին նրա մոտ են բերում Ծարրին, որ դարձյալ ինչ-որ հանցանք  
էր կատարել: Եկչրը հիշեցնում է նրան՝ իր դեմ դորժած շարագոր-  
ծությունը, խստորեն հանդիմանում, բայց և այնպես ազատում է  
առանց պատժելու: Եկչրի գայրացած թագավոր աները չի հան-  
դուրժում այդ մեղմ վերաբերմունքը հրեշավոր շարագործի նկատ-  
մամբ, հետապնդում է նրան, հասնում հետեից ու սպանում:

Պատմվածքն ավարտվում է այն բացատրությամբ, թե այն  
ծառի բուժիչ տերեւները սանդալադույն էին:

Ս պ ի ա ա կ ղ ղ չ ա կ.— Իրանի արքայազուստը պատմում է,  
թե մի մեծահարուստ երիտասարդ քաղաքից գուրս ունեւր մի հրա-  
շալի պարտեղ: Մի անգամ, երբ նա այդ պարտեղն էր դնում, դեռ  
ներս չմտած ներսից լսում է ինչ-որ երաժշտության և երգի ձայն:  
Մտռնելով պարտեղի դարպասին՝ նա տեսնում է, որ փակված է  
զարպարը: Երկար ժամանակ նա բախում է փակ դռները, բայց ոչ  
ոք բացելու չի գալիս: Երիտասարդն ստիպված է լինում բանդել  
պարը և ներս մտնել: Այնտեղ նա տեսնում է մի խումբ աղջիկներ,  
որոնք աղատորեն ուրախանում են ու գրոսնում: Տեսնելով երի-  
տասարդին՝ աղջիկները կարծում են, թե նա գող է, և լավ ձեծում  
են նրան: Մակայն երիտասարդը, վերջապես, կարողանում է հա-

վատացնել նրանց, թե ինքն այգու տերն է: Աղջիկները հաշտվում  
են նրա հետ և պատմում, թե իրենք՝ քաղաքի բոլոր գեղեցկուհի-  
ները, հավաքվել են այգուեղ ուրախանալու ազատ, առանց հետա-  
քրքրվող աչքերից բաշվելու: Նրանք խորհուրդ են տալիս երիտա-  
սարդին լիանգարել իրենց և առաջարկում են նրան ընտրել իրեն-  
ցից մեկին ու համոզանալ նրա հետ: Երիտասարդը մտնում է տա-  
ղավարը և անցքից ուշադրությամբ դիտում ավազանում լողացող  
աղջիկներին ու համեմատում նրանց իրար հետ: Վերջապես նրա  
ընտրությունը կանգ է առնում մեկի վրա, որին և անմիջապես բե-  
րում են իր մոտ: Երկու երիտասարդները կամենում են անձնա-  
տուր լինել վայելքներին, բայց և, միաժամանակ, զգում են, որ  
բազմաթիվ խանգարիչ հանգամանքներ կան: Ի վերջո, երիտասար-  
դը այն մտքին է հանգում, որ բախտը ինքն է խանգարում իրենց՝  
թեթևամտորեն վայելքներին տրվելու, որոշում է ամուսնանալ  
աղջկա հետ բուրյ սովորությունների համաձայն և այն ժամանակ  
օրինական կերպով համոզանալ նրա հետ կամեցածին շափ:

Պատմվածքը վերջանում է սպիտակ գույնի՝ մաքրության ու  
խաղաղության խորհրդանշանի, փառաբանությամբ:

Վերջանում են նովելները, ավարտվում է Բահրամի մի շա-  
բաթվա կյանքի ցուցադրումը: Թողնելով Բահրամին իր սիրուհի-  
ների գլխակում՝ հեղինակը պատմում է, թե կրկին Իրանի վրա  
ժանրանում է կործանման սպառնալիքը: Գարնանը շինական խա-  
րանը կրկին հարձակվում է Իրանի վրա: Բահրամը ցանկանում է  
դիմադրել կազով, բայց այնևս ռազմունակ զորք չունի: Զուներ նաև  
բավականաչափ դրամ՝ վերստին զորք հավաքելու համար: Եվ, ա-  
հա, նրան օգնություն է գալիս վեպից Ռասա-Ռուշանը. նա խոր-  
հուրդ է տալիս թագավորին՝ բռնի կերպով հպատակներից կորզել  
դրամ և աչդպիսով փրկել երկիրը կործանումից: Բահրամը հանձ-  
նարարում է վեզիրին՝ անձամբ կատարել այդ և տալիս է նրան  
ամեն լիազորություն: Վեզիրը գտնում է երկրի փաստական  
անօրենքը: Կարճ ժամանակում նա անասնձ կեղեքումներով ու բռ-  
նություններով ավերում է երկիրը, բանտերը լցնում անհամար  
անմեղ բանտարկյալներով: Մինչդեռ Բահրամը, վայելքների,  
խցրածանքների ու որսորդությունների մեջ անցկացնելով օրերը,  
անտեղյակ է վեզիրի անիրավություններին, և հպատակներից ոչ  
ոք էլ չի համարձակվում այդ մասին հայտնել նրան: Նա մտահոգ-  
վում է երբեմն այն բանի համար, որ թշնամին չի պարտվում և եր-  
կիրը դեռևս մնում է վտանգի մեջ: Ի վերջո, մի անգամ որսորդու-  
թյան ժամանակ նա, ջուր որոնելով՝ ընկնում է մի հովվի մոտ:



Հովիի խրճիթի առջև սոսկնուց կախված էր մի անշնչացած շուն։ Բահրամը հարցնում է հովիից, թե ինչո՞ւ է այդպես պատժել շանը։ Հովիվը պատմում է, թե շունը չուր հոտի հավատարիմ պահապանն է եղել. շատ անգամ ինքը շանն է հանձնել ամբողջ հոտը և որևէ տեղ գնացել, իսկ շունը լիակատար ապահովության մեջ պահել է հոտը։ Սակայն մի անգամ հովիվը նկատել է, որ հոտը նվազում է։ Պարբերաբար ստուգելով նա համոզվում է, որ իսկապես ոչխարների թիվը պակասում է, բայց ոչ մի կերպ չի կարողանում պատճառը գտնել։ Մի օր, երբ առվի ափին, հոտի մոտ, ինքը՝ բնեւուց հետո, պառկած մտածում էր իր դժբախտության մասին, տեսավ, որ մի էգ գալլ մոտեցավ ու շան լեզվով կանչեց իր գամփոխին։ Գամփոխը մոտեցավ գալլին, գուրգուրեց նրան, ապա կատարելով իշ ցանկությունը՝ փովեց գետնին ու բնեց։ Գալլը, միանգամայն ապահովված, քաշելով տարավ հոտի առաջնորդ խոչին։ Այդ պատճառով էլ, ահա, նա կախել է շանը. «Ով դավաճանին շան մահով չի պատժի, իմացի՛ր, նրան աշխարհում ոչ ոք չի փառաբանի», — վերջացնում է հովիվն իր պատմությունը։ Բահրամը հասկանում է հովիի պատմության փոխաբերական միտքը և սուզվում է խոր մտածմունքների մեջ. «Հովիվը ես եմ, հպատակները՝ իմ հոտը, իսկ վստահություն վայելող պահապանը՝ իմ առաջին վեզիրը... Երբ թագավորության հիմքերը կործանվում են՝ վստահված անձինք պետք է հաշիվ պահանջել», — որոշում է նա, և, բաղաբ վերադառնալուն պես, պահանջում է բանտարկյալների ցուցակը։ Ցուցակում նա տեսնում է, որ բանտարկյալներից շատերի անվան գիմաց գրված է. «Թագավորը հրամայում է պատժել... Ներում է շնորհում վեզիրը»։ Բահրամը հասկանում է ամեն ինչ. նա հրամայում է վեզիրին բանտարկել, իսկ անմեղ բանտարկյալներին ազատել։ Այստեղ բանաստեղծը զարձալ ներմուծում է յոթ հավելյալ պատմվածքներ. բանտարկյալներից յոթ հոգի պատմում են թագավորին, թե ինչու են իրենք կալանավորվել։ Գրանք ցնցող տպավորություն թողնող պատմություններ են, որոնք մերկացնում են վեզիրի անլուր բնություններն ու մեքենայությունները։ Խաբանի կողմից Բահրամի մոտ ուղարկված սուրհանգակների միջոցով երևան է հանվում վեզիրի մի նողկալի հանցանքը ես. նա գողտնի բանակցություններով խոստացել է խաբանին՝ երկիրը նրան հանձնել։ Բահրամը մահապատժի է ենթարկում վեզիրին։ Սակայն դրանով ամեն ինչ չի վերջանում։ Խորապես ցնցված այդ գառն իրողություններից, նա համոզվում է, որ դրանց համար առաջին հերթին ինքն է պատասխանատու, ինքը, որ, անձնատուր

եղած իր հանույթներին, աչքաթող է արել իր պարտավորությունները հպատակների հանդեպ և երկրի կառավարումը հանձնել վեզիրին։ Նա հրաժարվում է իր նախկին կենցաղից, հրկիրում է յոթ զղչակները և հարեմը ցրում, չի կարողանում հրաժարվել միայն որսորդությունից և, ի վերջո, որսորդության միջոցին էլ մահ է դատում։ Մի անգամ երկու ժառանգի ընկերակցությունը նա հետապնդում է մի ցիոխի Զիուր տանում է նրան զեպի մի բարանձավ։ Մտնելով քարանձավի ներսը՝ նա այլևս չի վերադառնում։ Զորքը հասնում է այդտեղ, ուր սպասում էին շփոթված ժառանգները. երկար սպասելուց հետո՝ նրանք տեսնում են, թե ինչպես քարանձավից փոշի է ելնում ու լավում մի ձայն, որ ասում է. «գնացե՛ր տուն, թագավորը դորձ ունի»։ Մտնում են քարանձավը, որ շատ խոր չէր և շունեք ուրիշ էլը, բայց Բահրամին շեն գտնում։ Գալլս է Բահրամի մայրը. նրա հրամանով փորում են քարանձավի հիմքը, բայց զարձալ շեն գտնում թագավորին։ Այդպես էլ խորհրդավոր կերպով անհայտանում է Բահրամը։

Եթե նիզամիի առաջին ստեղծագործությունը կրում էր դիզակտիկ բնույթ, իսկ երկրորդն ու երրորդը՝ սիրային-նոստալիկական, ապա՝ այս ստեղծագործությունը կրում է գերազանցապես արկածային, մասամբ նաև՝ հեթաթախյին բնույթ։ Հատկապես պետք է նշել այն թեթև, հանգստացուցիչ տրամադրությունը, որով համակված է այս վիպերգը «Խոսրով ու Շիրինում» հաղթանակող սիրո բարեբաաստիկ ընթացքը զուգորդված է ցնցող, ողբերգական պահերով. մի կողմից՝ Զարհապի ողբերգական ինքնազոհումը, մյուս կողմից՝ Խոսրովի որդու զավագրություններն ու վիպերգի մոռալ վերջավորությունը խոր տրագիկոսի գրոշմ են թողնում վիպերգի վրա։ «Էնչի ու Մեջնունի» մեջ երկու սիրահարների դժբախտ սիրո անհաջող ընթացքը ավելի և ավելի խորացնում է ներանց տրագիկոսան՝ հասցնելով եղբրական վախճանի։ Մինչդեռ այստեղ, «Յոթ զեղեցկուհիների» մեջ, թե՛ Բահրամի ամբողջ արկածները և թե՛ սիրո պրորեմի լուծումը ոչ տրագիկ, այլ առավելապես լավատեսական բնույթ ունեն։ Այս բանի համար նա օգտագործել է և՛ արկածային տարրը, և՛ հեթաթախյինը, որ մի տեսակ վերացումն է իրական կյանքից, մոռացումն՝ բոլոր անարխորժությունների, ցավերի ու տառապանքների և սլացումն զեպի երջանիկը։ «Յոթ զեղեցկուհիների» պատմած նովելներով նա ընթերցողին հեռացնում է իրական կյանքից ու տանում զեպի հեթաթախյինը, որ նկարագրված է այնպես վառ զույներով։ Եվ սակայն, շնայած այդ բոլորին, նիզամին այստեղ էլ հետևողական է



իր սկզբունքների մեջ, այստեղ էլ նա հանդես է գալիս իբրև խիստ բննադատ ու ոչ մի զիջում չի կատարում: Չնայած հերթաթիւների ու արկածների առկայութեանը, այնուամենայնիվ այստեղ ևս իր հիմնական նպատակն է ունեցել և այդ երկրի կառավարման հարցն է:

Իր բոլոր արկածներով հանդերձ՝ Բահրամ Գուրը հանդես է գալիս առաջին հերթին իբրև թագաւորի կերպար, և Նիզամին օգտագործում է այդ կերպարն իր հայացքները գրեկորելու համար: Հեղինակը երկրի մեծամեծների բերանով դատապարտում է Բահրամի հորը, քննադատում նրան և արգարացնում նրա դեմ եղած դժգոհութիւնները: Բահրամը փոխարինում է յուր «անիծյալ» հորը և խոստանում է լինել արդար, բարի ու հողատար: Եվ, ահա, Նիզամին ցուցադրում է նրան գահի վրա: Ըստ ամենայնի Բահրամը ներկայացված է վիպերդում իբրև զրական հերոս: Հեղինակը ցույց է տալիս, որ երբ նա անձամբ դբազվում է պետութեան գործերով, երկիրը բարգաւաճում է, հպատակներն ապրում են երջանկութեան ու լիութեան մեջ: Բահրամը շափազանց բարի է ու հոգատար իր հպատակների նկատմամբ: Չորս տարի տեղող սովի ժամանակ նա առանց խնայելու իր դանձերը տրամադրում է ժողովրդին սովից փրկելու նպատակին և դրա շնորհիվ այդ շորս տարվա ընթացքում սովից մահում է միայն մի մարդ, որի համար թագաւորը դառնորեն սգում է, համարելով այդ իր մեղքը: Սակայն, իր բարութեամբ, արդարութեամբ ու հոգատարութեամբ հանդերձ՝ Բահրամը ունի նաև վնասակար հակումներ. նա շատ է տարվում իր վայելքներով, մոռանում է պետութեան գործերը, որի հետևանքով էլ երկիրը վտանգի է հնթարկում, վստահված մարդիկ անսանձ կամայականութիւններով ու բռնութիւններով կեղերում են հպատակներին և գրանով իսկ խախտում պետութեան հիմքերը, կործանում երկիրը: Եվ, ահա, Նիզամին երկու անգամ փորձութեան առաջ կանգնեցնելով իր հերոսին՝ վերջապես դարձի է բերում նրան, հրաժարեցնում վնասակար մոլորութիւններից ու դարձնում կատարելապես գովելի թագաւոր:

Ուշագրավ է, որ Նիզամին խրատական է կարգում հովվի բերանով, որ հանդես է գալիս որպէս կենսափորձի և ժողովրդի Իմաստութեան մարմնացում: Ի վերջո, այստեղ էլ հեղինակն անողոք բննադատութեան է ենթարկում պետական գործիչների անիրավութիւններն ու շարագործութիւնները: Յոթ բանտարկյալների պատմամեները, որոնք Նիզամին անշուշտ իրական կյանքից է բաղել, և որոնք շկան Ֆիրգուսու «Շահ-նամեի»՝ Բարամ Գուրին

նվիրված հատվածում, հիանալի ցուցադրումն ու մերկացումն են յուր ժամանակի տիրակալների կամայականութիւնների, սանձարձակ կեղեքումների ու բռնութիւնների: Հեղինակը անիրավաբար բանտարկվածների բերանով իր բողոքն է ուղղում ժամանակի բռնակալների դեմ, ներկայացնելով այդ պատմվածքներն իբրև մի մեղադրական ակտ՝ ֆեոդալական արիստոկրատիայի նկատմամբ: Նա վառ գույներով ցուցադրում է պալատական պաշտոնեւորութեան ծախվածութիւնը, նենգութիւններն ու դավաճանութիւնները, ապացուցելով, թերևս ոչ առանց ցավի, որ նույնիսկ արդար թագաւորը անօգնական ու անզոր է, որովհետև շրջապատված է այդպիսի պաշտոնյաներով:

Այսպիսով, այս ստեղծագործութեան մեջ ևս Նիզամին հարադատ մնալով այն սկզբունքին, թե զեղարվեստական ստեղծագործութիւնը ոչ միայն պետք է ծառայի ընթերցողի զեղարվեստական հաճույքներին, այլև պետք է ուսուցանի, հանդես է գալիս մի կողմից իբրև ընկալաւոր ու մերկացնող, մյուս կողմից՝ իբրև բարոյիչ ու խրատող: Բայց եթե «Գաղանիքների դանձարանում» նա նույն բանը կատարում էր անկախ, իրար հետ շկապակցված, երբեմն չոր խրատական «գրույցներով», ապա այստեղ նա իր խրատները տալիս է զեղարվեստական վառ, անջնջելի տպավորութիւն թողնող պատկերներով:

Առանձնահատուկ ուշադրութեան է արժանի այս ստեղծագործութեան կառուցվածքը: Մի կողմից՝ Բահրամի արկածները, իսկ մյուս կողմից՝ հավելադիր պատմվածքները, որոնցով միջնորդավորվում են այդ արկածները, զարգանում են վիպերգի մեջ գուգահեռաբար, և հենց դրա շնորհիվ էլ շափազանց բարդանում է պոեմի կառուցվածքը: Եվ, սակայն, չնայած այդ ամբողջ բարդութեան, հեղինակը բացառիկ վարպետութեամբ կարողացել է ներշնչուկ այդ բոլորն իրար և ստեղծել մի կուս ամբողջութիւն: Ինչպիսի՞ հիանալի ներդաշնակութիւն են կաղմում երիտասարդ արքայազների զոյակի կառուցումը և յոթ զոյակների կառուցումը, յոթ պատկերները և յոթ գեղեցկուհիները, նույնիսկ զոյումն ու ճղնակից գառնալը և Բահրամի հրաժարումն իր վայելքներից, զոյակների հրկիզումը, հարեմի ցրումը, յոթ գույների և յոթ նովելների համապատասխան հաջորդականութիւնը, վեղրի շարագործութիւնները և յոթ բանտարկյալների պատմամեները, Բահրամի գտած գանձերը՝ քարայրում և նրա խորհրդավոր անհայտացումը քարանձավում: Նիզամին ամենավառ երանգներով կարողացել է զուգորդել այդ բոլորն իրար հետ, շողկապել ու ձուլել մի ներդաշնակ ամ-



բողջութեան մեջ: Չափազանց բնորոշ է հատկապէս յոթ գեղեցկու-  
հիների պատմած նովելներէ և գղայակների գուշների ներդաշնակու-  
թյունը: Բահրամն իր այցելութիւններն սկսում է ամենամտաշլ  
գուշնի, սե գուշնի գղայակից ու վերջացնում սպիտակով: Յոթ նովել-  
ներն էլ իրենց բովանդակութեամբ համապատասխանում են գուշ-  
ների հաջորդականութեանը: Առաջին մտաշլ, ճնշող տպավորութիւն  
թողնող նովելին հաջորդում են երջանիկ ավարտում ունեցող նո-  
վելները, մինչև վերջինը, որի էութիւնն է կազմում անարատ ու  
երջանիկ սիրո փառաբանութիւնը՝ համապատասխան սպիտակ  
գուշնի գովքով:

«Յոթ պատկերներն», այսպիսով, գեղարվեստական մի հրա-  
շալի ստեղծագործութիւն է, անթառամ՝ իր վառ գուշներով, տպա-  
վորիչ՝ իր պատկերներով, ցնցող՝ բունութիւնների դեմ ուղղված  
բողքով: Իր հումանիզմով ու լավատեսութեամբ այս ստեղծագոր-  
ծութիւնը միշտ թարմ, միշտ զրավիչ ու հրապուրիչ է եղել, վարա-  
կել է ընթերցողներին առողջ տրամադրութեամբ: Այսօր էլ նա իր  
գեղարվեստական կատարելութեամբ գմայիչ ստեղծագործութիւն  
է և իբրև այդպիսին էլ կմնա:

«Իստանպուր-նամե».— Յուր վերջին ստեղծագործութեան հա-  
մար նիզամին իբրև սյուսե բնատրել է Ալեքսանդր Մակեդոնացու  
կյանքը: Այս թեման նրա բնատրութեանն արժանացավ, անշուշտ,  
այն բանի շնորհիվ, որ Ալեքսանդրի մասին ավանդութիւնները  
տարածվել էին Արեւելքի ժողովուրդների մեջ այլևայլ տարբերակ-  
ներով, ավանդութիւններ, որոնց մեջ Ալեքսանդրը ներկայանում  
էր իբրև մեծ զորավար ու մարզաբե: Այստեղ էլ հեղինակն իր քս-  
տեղծագործութեան համար նյութ է քաղում տեղական ժողովուրդ-  
ների՝ ոչ միայն մահմեդական, այլև քրիստոնէական ու հրեական  
ժողովուրդների ավանդութիւններից և, հետևաբար, այստեղ էլ  
նա իր ստեղծագործութիւնն, այսպէս ասած, տեղայնացնում է  
ու կապում հարեան ժողովուրդների հետ: Մյուս կողմից՝ Ալեք-  
սանդրի կերպարը նրան հնարավորութիւն էր տալիս ընդարձա-  
կորեն շարադրելու իր փիլիսոփայական հայացքները՝ օգտվելով  
Ալեքսանդրի ու Արիստոտելի միջև եղած կապերից: Այսպիսով,  
Ալեքսանդր Մակեդոնացուն նիզամին գիտում էր ոչ միայն որպէս  
հոգր նվաճողի, ինչպէս ներկայացված էր նա ավանդութիւնների  
մեջ, այլև որպէս փիլիսոփայի ու մարդարեի: Ծանոթանալով նրա  
մասին եղած ավանդութիւններին՝ նիզամին համազրում է դրանք,  
քաղում չորաբանչուրից այն, ինչ որ անհրաժեշտ է համարում և  
կերտում մի բացառիկ իդեալական կերպար: Ինքը՝ հեղինակը,

բնագատում է իր ուսումնասիրած ավանդութիւնների միակող-  
մանիութիւնը և հայտնում, թե ինքը գիտում է Ալեքսանդրին երեք  
կողմով՝ միացնելով դրանք մի ամբողջական, կատարյալ կերպար-  
ի մէջ:

Բացի նորագույն պատմութիւններից, ես կարգացել եմ նաև  
Հրեական, քրիստոնէական ու պահլավական գրքեր,—  
ասում է հեղինակը,—

...Ոմանք կոչում են նրան զահակալ,  
Երկրների հովանավոր, դեռ ավելին՝ հարկոսների նվաճող:  
Ուրիշները՝ նրա մերձավոր մարդկանցից,  
նրան իմաստութեան վկայագիր են տվել:  
Սուրբները՝ նրա մաքրութեան ու կրօնի նկատմամբ ունեցած  
հախածոնութեան շնորհիվ,—

նրան համարել են մարգարե:  
Իսկ ես իմաստունների ցանած երեք հատիկից  
Ուզում եմ անեցնել մի պտղաբեր ծառ:  
Նախ՝ ես կբախեմ բազավորութեան դոները,  
Կպտամեմ երկրների նվաճման մասին:  
Ապա կնուսեմ խոսքերը իմաստութեան մասին,  
Կնորոգեմ հնավանդ պատմութիւնները:  
Հետո կբախեմ մարգարեութեան դոները,  
Չի և տերն է կոչել նրան մարգարե:

Ինչպէս տեսնում ենք, նիզամին խիստ ընդարձակ ծանոթու-  
թիւն է ունեցել Ալեքսանդրի մասին եղած ավանդութիւններին,  
գիտակցաբար վերցրել է դրանցից ինչ-որ անհրաժեշտ է եղել իր  
նպատակադրմանը և, որ կարեոր է, օգտագործել է այդ աղբյուրները  
խիստ քննադատորեն: Նրա այդ քննադատական վերաբերմունքը  
առկա է միշտ՝ սկսած Ալեքսանդրի ծաղման պատմութիւնից մին-  
չև վերջ:

Ամբողջ ստեղծագործութիւնը նիզամին բաժանել է երկու մա-  
սի: Երկու մասերի ընդհանուր վերնագիրն է, ինչպէս ասել ենք, «Իս-  
քանդար-նամե»: Բացի այդ ընդհանուր խորագրից, չորաբանչուր  
մասը կրում է առանձին վերնագիր: Առաջին մասը, որ ծավալով  
շատ ավելի մեծ է, բան երկրորդը, կոչվում է «Շարաֆ-նամե»  
(Փառքի գիրք): Այդ վերնագիրը, ինչպէս երևում է ներածութիւնից,  
պատկանում է հեղինակին, և այդպէս նա վերնագրել է, անշուշտ,  
նկատի առնելով այն, որ հենց այդ մասում է պատմվում Ալեք-



սանդրի հաղթանակների մասին, հաղթանակներ, որոնց շնորհիվ նա փառքի գագաթնակետին է հասնում:

Սրկրորդ մասը որոշակի վերնագիրը չունի: Հիմք ընդունելով այն բառերը, որոնցով այն սկսվում է, հաճախ կոչում են «Խե-րադ-նամե» (Խրատագիրը), սակայն, նույն այդ մասը կոչում են նաև «Իկբալ-նամե» (Հաջողության գիրք): Բացի դրանից, հին աղ-բյուրներում երբեմն առաջին մասը կոչում են «Բերրի» (Ցամա-քային), իսկ երկրորդը՝ «Բեհրի» (Մովային), հիմք ընդունելով այն, որ երկրորդ մասում պատմվում է Ալեքսանդրի ծովային նա-նասպարհորդությունների մասին:

Գիրքն սկսվում է դարձյալ ներածական գլուխներով, որոնցից առանձնապես ուշագրավ են՝ այն մասը, որի մեջ համառոտակի շարադրված է գրքի ամբողջ բովանդակությունը, և այն մասը, որի մեջ ընթերցողի հատուկ ուշադրությունն է հրավիրում այս ստեղ-ծագործության վրա: Այս վերջին հանգամանքն առանձնապես կա-րևոր է այն բանով, որ ցույց է տալիս, թե որքան մեծ նշանակու-թյուն է տվել նիզամին իր այս վերջին պոեմին: Եվ այդ պատա-հական չէ, այստեղ բանաստեղծը լայնորեն ծավալելով իր մըտ-քերը, կարծես թե մի ընդհանուր հայտարարի է բերում նախորդ ստեղծագործություններում ասածները, ամբողջացնում գրանք և ասում իր վերջին խոսքը: Այսպես պետք է բացատրել այն փաս-տը, որ նիզամին իր նախորդ ստեղծագործություններից և ոչ մեկում չի գիմում ընթերցողին՝ հատուկ ուշադրություն նվիրելու, իսկ այստեղ առանձին պոեմ է հատկացնում գրանք:

Բուն ստեղծագործությունն սկսվում է Ալեքսանդր Մակեդո-նացու ծագման խնդրով: Հայտնի է, որ այդ առթիվ տարբեր ժողո-վուրդների մեջ տարբեր լեզուներ են հորինվել և, որ շափազանց հետաքրքրական է, մեծ մասամբ հորինել են նվաճված ժողո-վուրդները՝ ցեղակցական կապ ստեղծելով Ալեքսանդրի ու իրենց միջև: Այդ միանգամայն հասկանալի է, Ալեքսանդրի հաղթանակ-ներն այնքան անուրանալի էին, որ որևէ կերպ հերքել դրանք չէր կարելի: Եվ, ահա, նվաճված երկրի ֆեոդալական արխատորատիան հորինում է այն լեզուներ, որ, իբրև թե, Ալեքսանդրը ցեղակից է իրենց, և արդարացնում է նրա հաղթանակը: Իսկապես, եթե Ալեք-սանդրը, ասենք, Դարեհի որդին էր, ծնված Փիլիպպոսի աղջկա-նից, ապա՝ ի՞նչ զարմանալի բան է Իրանի նվաճումը նրա կող-մից: Այսպես ահա, յուրաքանչյուր երկրի վերնախավ Ալեքսան-դրի մահվանից հետո հորինում է իր և Ալեքսանդրի ցեղակցության առասպելը: Գրանցից առանձնապես պետք է հիշել սուտ կալիս-

թենեսի վեպը, որի մեջ Ալեքսանդրը համարվում է եգիպտական քուրմ նեկտանբեթի և Մակեդոնիայի թագավոր Փիլիպպոսի կնոջ որդին: Այնուհետև, տվյալ դեպքում ուշագրավ է նաև իրանական տարբերակը, որի մեջ պատմվում է, թե Ալեքսանդրը Աքեմենյան հարստության թագավոր Դարեհի և Փիլիպպոսի աղջկա որդին է, որ որդեգրվել է պապի՝ Փիլիպպոսի կողմից: Այս լեզուներ մանրա-մասնորեն, իբրև միակ ճշմարիտ բացատրություն Ալեքսանդրի ծագման մասին, պատմում է Ֆիրգուսին, շնայած այն բացա-հայտ թշնամանքին, որ տածում է դեպի Ալեքսանդրը: Ի դեպ, այս լեզուներով ոչ միայն արդարացվում էր պարտությունը, այլև ի-րենց ցեղակից դարձնելով մակեդոնացի զորավարին, տոհմիկ աղ-նըվականությունը բաժանում էր դրա հետ նաև նրա փառքը: Եվ, իբրև, տոհմիկ աղնվականության գաղափարախոս Ֆիրգուսին ոչ միայն արգարացնում է Ալեքսանդրի հաղթանակը Դարեհի դեմ, այլև ուղղակի ասում է, թե ինչպես այդ, այնպես էլ բոլոր մյուս հաղթանակներին Ալեքսանդրը հասել է այն բանի շնորհիվ մի-այն, որ նրա երակներով հոսում է Աքեմենյանների արյունը: Նի-զամին Ալեքսանդրի ծագմանը նվիրված գլխում պատմում է այս լեզուներ, բայց մերժում է, համարելով այն սուտ: Նա պատմում է նաև մի ուրիշ լեզուն, ըստ որի Ալեքսանդրը մի թշվառ միանձ-նուհու որդի է: Որսորդության ժամանակ Փիլիպպոսը գտել է նը-րան ավերակների մեջ՝ մոր դիակի կողքին, սեփական մատը ծծե-լիս, և որդեգրել է: Սակայն հեղինակը սրան էլ չի հավատում: Եր-կուտի մասին էլ նա ասում է հետևյալը.

Երկու պատմության մեջ էլ Նշմարությունը կորած է,  
Գատարկ խոսքեր ուշադրության առժանի չեն:

...Կարդացել եմ ես բոլոր երկրների պատմությունները  
և համոզված եմ,

Ու ազան Փիլիպպոսից է ծնվել:

Այսպես ուրեմն, նիզամին հիշում է այդ լեզուները, բայց քրե-նադատաբար մոտենալով դրանց, մերժում է դրանք ու գտնում, որ Ալեքսանդրը ուղղակի Փիլիպպոսի որդին է: Այսպես է լուծում նա Ալեքսանդրի ծագման հարցը:

Այնուհետև հեղինակը հատուկ ուշադրություն է նվիրում յուր հերոսի դաստիարակությանը: Ալեքսանդրը սովորում է Արիստո-տելի հետ և ստանում է բազմակողմանի կրթություն:



Վերջապես Ալեքսանդրը գահ է բարձրանում հոր մահից հետո: Նա երգվում է լինել արգար թագավոր և մտածել իր հպատակների երջանկության մասին: Ինչպես նկարագրում է Նիզամին, նա իսկապես իրագործում է իր երգումը: Շուտով ամբողջ աշխարհում սարածվում է նրա՝ իրրև արդար և իմաստուն թագավորի, համբավը: Եվ, ահա, այդ համբավը լսած եգիպտացիները օգնություն են խնդրում այդ արգար թագավորից: Նրանք հայտնում են Ալեքսանդրին, որ սեամորթ զինգիները (ղանգիբարդիները) ամալացնում են ամբողջ Նեղոսյան հովիտը, և խնդրում են օգնության հասնել: Ալեքսանդրը հանձն է առնում օգնել և արշավելով զինգիների գեմ, ահեղ մարտում հաղթում է նրանց: Իր հարուստ ուղամական ավարից նա մեծամեծ նվերներ է ուղարկում Դարեհին, որին հարկատու էր Փիլիպոսը: Սակայն Դարեհը մեծ արժեք չի տալիս Ալեքսանդրի կողմից ցուցաբերված այդ ուշադրությանը և ըստ արժանվույն չի գնահատում մեծագին գանձերը: Վիրավորված Ալեքսանդրը որոշում է այլևս հարկ չտալ նրան և խզել իր հարաբերությունները նրա հետ: Նա հանգամանորեն հաշվի է առնում Դարեհի զորությունը, կշռադատում է նրա և իր ուժերը, ապա՝ նոր տարվա օրը խնջույքում լսելով երգչի կոչը՝ ամբողջ աշխարհին տիրելու մասին, որոշում է սկսել իր արշավանքները Դարեհի գեմ պատերազմելուց ու ետ է պահանջում նրան ուղարկած իր նվերները: Մի անգամ նա որսորդության ժամանակ տեսնում է իրար հետ կռվող երկու կաթավ, որոնցից մեկին իր անունը դնելով, մյուսին՝ Դարեհինը, ուշադրությամբ հետևում է կռվի ընթացքին, մտածելով, որ իր առաջիկա պատերազմում կհաղթի նա, ում անունը կրող կաթավն այս կռվում հաղթող դուրս գա: Կռվն ավարտվում է այն կաթավի հաղթանակով, որ Ալեքսանդրի անունն էր կրում, բայց օդ բարձրանալով ընկնում է արծվի ձեռքը: Այս նախադուշակությունից Ալեքսանդրը համոզվում է, որ ինքը հաղթելու է, բայց իր կյանքն էլ կարճատև է լինելու: Այնուամենայնիվ, վստահ իր հաղթանակին, նա պատրաստվում է պատերազմի: Շուտով նրա մոտ են գալիս Դարեհի սուրհանդակները և հայտնում են, թե Իրանի թագավորը հարկ է պահանջում: Զայրացած Ալեքսանդրը խստորեն մերժում է նրանց. «Ով կամավոր կերպով նվերներ է ուղարկում, նա, վախկոտի նման, ստորացողիչ հարկ չի ուղարկի»,—ասում է նա և վերադարձնում սուրհանդակներին: Դարեհը կրկին ուղարկում է սուրհանդակներին, այս անգամ հանձնելով նրանց գնդակ, չովգան (խաղափայտ) և քնշուժ, որոնք սուրհանդակը պետք է տար Ալեքսանդրին, և թե նա մերժեր հարկ տալ:

Ալեքսանդրն իսկապես մերժում է, և սուրհանդակը տալով նրան գնդակն ու չովգանը, իսկ քնշուժը ցանկելով հատակին, բացատրում է դրանց միտքը. գնդակն ու չովգանն ուղարկելով՝ Դարեհն ուզում է ասել, թե Ալեքսանդրը դեռ երեխա է և պետք է խաղա դրանցով, իսկ քնշուժը նշանակում է, թե Դարեհի զորքերն անհամար են: Սակայն Ալեքսանդրը բոլորովին այլ մեկնություն է տալիս դրանց.

Ինձ Դարեհը նրա համար չէ՞ ուղարկել չովգանը, արդյոք,  
Որ իրենից խլեմ թագավորությունն ու իշխանությունը,—  
ասում է նա.

Իսկ գնդակը, որ ես տեսնում եմ իմ առջև,  
Աստղաբաշխները ձևով երկրագնդի հետ կհամեմատեն:

Հատակին թափված քնշուժի վրա թռչուններ է բաց թողնում, որոնք իսկույն մարբում են ամբողջ քնշուժը, և Ալեքսանդրը հայտնում է եզրակացությունը.

Քող Դարեհն ուղարկի ֆնջուրի նման բազմաթիվ գորկեր,  
Իմ գինվորները քաշումնեւ են, ֆնջուրը՝ նրանց կեր:

Քնշուժի փոխարեն Ալեքսանդրը վերագարձող սուրհանդակներին է հանձնում սպանդի (սիփինդ) դառն սերժերը, որ ուտելի չեն ոչ մի թռչունի համար, ապա՝ սկսում է արշավանքի պատրաստությունը: Շուտով նա լուր է ստանում, թե Դարեհը մեծ զորքով մտել է Հայաստան և արշավում է Ալեքսանդրի գեմ: Վերջինս յուր հերթին աներկյուղ կերպով շարժում է իր զորքը: Խորհրդակցելով իր մեծամեծների հետ և նախագծելով հարձակման գործողությունները՝ Դարեհը հանդիմանանքներով ու սպանալիքներով լի նամակ է ուղարկում Ալեքսանդրին ու պահանջում հնազանդություն: Ալեքսանդրը պատասխանում է մեղմ, բայց խրատական ու հրպարտ տոնով. «Աստված քեզ զորություն է տվել, բայց մի գոռոպանար ասածուց առանձնաշնորհվածների հանդեպ»,—ասում է նա և այդ ողով շարագրում ամբողջ պատասխանը:

Վերջապես սկսվում է ահեղ ճակատամարտը երկու զորքերի միջև: Մոտուլի մոտ, առաջին օրը երկու կողմերն էլ կռվում են անդիշտ ու կատաղի և մինչև երեկո ոչ մեկը չի գիշում իր դիրքերը: Զորքերը գիշերային դադար են առնում. և, ահա, հենց այդ ժամանակ Դարեհի զորավարներից երկուսը, որոնք անպատվված էին իրենց թագավորից, գալիս են Ալեքսանդրի մոտ ու խոստանում



սպանել Դարեհին, եթե Ալեքսանդրը վարձատրի իրենց առատորեն Ալեքսանդրը, մտածելով, որ սպանել տալով Դարեհին կարող է խուսափել արյունահեղ ճակատամարտից ու խնայել հազարավոր զինվորների կյանքը՝ ընդունում է նրանց առաջարկը և զորավարները գնում են: Հաջորդ օրն իսկ նա լուր է ստանում, որ Դարեհը խփված է: Գնալով Իրանի գոտուց թագավորի ճամբարը՝ գտնում է նրան մահվան տագնապի մեջ: Հուզիչ պատկերներով է հեղինակը նկարագրել երկու հզոր ախոյանների հանդիպումը: Ոչ հաղթողի գոտուցվածք, այլ վեհանձնորեն ու ցավակցաբար է դիմում Ալեքսանդրը Դարեհին, որ տառապում է մահվան դեմ իր անդորության գիտակցութեամբ, բայց հարգանքով ընդունում հաղթող ախոյանի ցավակցութեան խոսքերը: Ալեքսանդրը խնդրում է նրան հայտնել իր ցանկությունները՝ խոստանալով ճշտութեամբ կատարել դրանք: Դարեհը հայտնում է հետևյալ երեք ցանկությունները.

Առաջինն այն, որ անմեղներին սպանելու համար Դու լինես արդար դատավոր՝ մարդասպանների նկատմամբ: Երկրորդ՝ այն, որ աբխազական գանդ և բազը Իմասունաբար սպանես և շարիք չգործես: Մեռիցող հանիւր ատելութեան սերմը, Մի գրկիւր այս երկիրը մեր առնմից: Երրորդ՝ այն, որ իմ կանանց մտ գեւալով Չանպաավես իմ կանանցը: Ռովշենեկին, որ դուստրն է իմ Եվ խնամված է իմ իսկ ձեռքի տակ, Քո կինը դարձրու...

Ալեքսանդրն ընդունում է այդ պատվերները: Երկու զորավարներին, որոնք սպանել էին Դարեհին, նա վարձատրում է հարուստ պարգևներով՝ իր խոստումը կատարելով, բայց անմիջապես մահապատժի է ենթարկում նրանց՝ իբրև դավաճանների: Նա գահ է բարձրանում, հրովարտակ արձակում՝ խոստանալով արդարութեամբ կառավարել երկիրը և բռնությունը հալածել: Կամենալով վերացնել զրոգաշտական կրոնը՝ նա ամենուրեք կործանել է տալիս ատրուշանները և արգելում կրակապաշտությունը: Դարեհին տված խոստման համաձայն, ամուսնանալով գեղեցկուհի Ռովշենեկի հետ, Աբխաստելի հետ ուղարկում է նրան Հունաստան, իսկ ինքը գնում է Աբարիս, առանց պատերազմի իրեն հպատակեցնում արարներին, ապա Քարե գնալով՝ կատարում սահման-

ված պտույտը տաճարի շուրջը և Իրաքով ուղևորվում գեպի հայրենիք: Այդ միջոցին նրա մտտ են գալիս Ատրպատականի սուրհանդակները և օգնություն կանչում նրան՝ արմենների ու արխազների դեմ: Հնազանդեցնելով հայերին և ապա՝ արխազներին, որոնց Դուվալ թագավորի դեմ ատրպատականցիները բողոքել էին Ալեքսանդրին և օգնություն խնդրել, նա Աբաստան է մտնում ու կառուցում այնտեղ Թիֆլիս քաղաքը: Ուշագրավ է, որ նիդամին շատ մեծ գովասանքով է խոսում այդ քաղաքի մասին և համարում է այն ուղևակի երկրային դրախտ: Այստեղից նա ուղևորվում է գեպի Քերզա: Նիդամին վառ գույներով նկարագրում է այդտեղի բնության գեղեցկությունը, գեղեցկությունն այն երկրի, որ այնքան հարգատ էր իրեն: Ալեքսանդրը հիանում է այդ երկրի բացառիկ գեղեցկութեամբ ու հարցնում է, թե ո՞վ է այդ երկրի թագավորը: Պատմում են, որ Քերզայի տիրակալն է մի կին՝ Նուշաբե անունով, որ իր իմաստութեամբ ու արդարութեամբ երկիրը միշտ բարգավաճ վիճակում է պահում: Նրա ծառաները միայն կանայք են: Հրամարված մարմնական վայելքներից՝ նա նվիրվել է միայն հպատակների բարեկեցությունն ապահովելու գործին, թեև կին է, բայց իր ուզման հզորութեամբ նա անպարտելի է: Ալեքսանդրը զնում է Քերզա: Նուշաբեն ուղարկում է նրան մեծամեծ նվերներ ու շնորհավորում նրա գալուստը: Ալեքսանդրը, կամենալով անձամբ տեսնել նրան ու խոսել նրա հետ, սուրհանդակի կերպարանքով ներկայանում է ամբողջ, սակայն հենց առաջին իսկ վայրկյանին ինքն իրեն մատնում է: Քաղուհու սենյակը մտնելիս նա չի կատարում սուրհանդակների մի քանի սովորությունները.

Սուրհանդակը դռներից ներս մտավ խիզախ,  
Դեպի գանդ դիմեց առյուծի կեցվածքով,  
Իրանին կապած սուրբ ցած շորեց,  
Ինչպես որ կարգն էր սուրհանդակների:

Բացի այդ, Ալեքսանդրը խոսում է չափազանց հանդուգն ու ինքնավստահ կերպով, որ վայել չէր սուրհանդակին: Նուշաբեն հայտնում է, թե ինքը դիտի արդեն, որ ծպտյալ սուրհանդակը հենց ինքը՝ Ալեքսանդրն է և հաշտ ու խաղաղ կերպով բարեկամական ընթացք է տալիս այդ հանդիպմանը: Ուշագրավ է այստեղ Նուշաբեի հյուրասիրությունը, նրա հրամանով ամբողջում ճոխ պատրաստություն են տեսնում, բայց հակառակ դրան, ուստիզեղենի փոխարեն Ալեքսանդրի առջև նա գնում է ոսկով, հակինթով, սուտակով ու մարգարիտով լցված անոթները: Ալեքսանդրը զարմացած



դիմում է նրան, թե ինչո՞ւ իրեն ուտելիքի փոխարեն թանկագին քարեր են մատուցում, չե՞ որ նրանցով կշտանալ չի կարելի: Նուշաբեն մեղմությամբ պատասխանում է. եթե այդ քարերն արժեք չունեն, ինչո՞ւ դրանք կուտակելու համար կոխվ է մղում: Ալեքսանդրը համաձայնում է նրա դատողությանը, որ, իրոք, հարստություն դիպելու համար շպետք է արյուն թափել: Սկսվում է բուն հյուրասիրությունը, որից հետո Ալեքսանդրը՝ բարեկամության դաշն կնքելով նրա հետ, վերադառնում է իր ճամբարը: Իր հերթին նուշաբեն էլ փոխադարձաբար այցելում է Ալեքսանդրին ու մասնակցում ճոխ խրախճանքին:

Ալեքսանդրը, վերջապես, շարունակում է իր ճանապարհը, այժմ նա արդեն կամենում է մի կողմից՝ ամբողջ աշխարհում վերացնել բռնությունն ու կեղեքումը, արդարություն հաստատել բոլոր երկրներում, մյուս կողմից՝ իմանալ, թե որտեղ են մարդիկ առավել երջանիկ ապրում: Գրավելով Գերբենդի ամրոցը և պարսպաներ կանգնեցնելով նրա շուրջը՝ նա դնում է Սարիր ամրոցն, ուր պահված էին Քեյ-Նոսրովի գահն ու Ջամշիդ արքայի առասպելական աշխարհացույց գավաթը: Նա նստում է գահի վրա և ջուր խրձում գավաթով, իսկ Ապոլոնը (Քուլինաս), որ ուղեկցում էր նրան, գավաթի օրինակով հորինում է առաջին աստեղաշափը (աստրոլաբ):

Շարունակելով ճանապարհը՝ Ալեքսանդրը դիմում է զեպի Հնդկաստան: Քաղավոր Քայգը նրա նամակին պատասխանում է հարուստ նվերներով. ապա դնում է զեպի Զինաստան և, ոչ ուժեղ ընդհարումներից հետո, հաշտության դաշն կնքում չինական խաբանի հետ: Վերադարձի ճանապարհին նրա մոտ են գալիս Հայաստանի սուրհանդակները և հայտնում, թե արխազ Գուլալն Ալեքսանդրի օգնությունն է խնդրում ուսաների դեմ կռվելու համար, որոնք հարձակվել են Բերդաշի վրա: Ղալաղների ստեպներով Ալեքսանդրն շտապում է օգնության հասնել գերված թագուհուն: Ուշադրավ է այստեղ նիզամիի առանձնակի գովասանքը զալաղ կանանց գիզեցկության նկատմամբ: Ի վերջո Ալեքսանդրը հասնում է ռազմի դաշտ և, ծանոթանալով ուսական գործերի ուժերին ու նրբանց մարտունակությանը, համոզվում է, որ այնքան էլ հեշտ չէ նրանց դեմ կռվելը: Ի դեպ, նիզամին մեծ զովասանքով է խոսում ուսաների ուղիական քաջության ու խիզախության մասին, որ անշուշտ, չուր ժամանակում իսկ կատարված ուսական արշավանքի թողած տպավորության արտահայտությունն է: Հայտնի է, որ 1170 թ. ուսական տորմիզը Կասպից ծովով մտել էր Քուս

զեսը և դիմում էր զեպի երկրի խորքը. մյուս կողմից խաղարները հարձակվել էին Գերբենդի վրա ու գրավել այն: Շիրվանշահը միայն Վրաստանի թագավոր Գեորգի երրորդի օգնությամբ կարողացավ ետ մղել խաղարներին, իսկ ուսական տորմիզը ոչնչացավ փոթորկի ժամանակ: Բացի այդ, ուսաները հարձակվել էին Արբանի վրա նաև առաջ. օրինակ, 946—947 թվականներին նրանք գրավել էին Բերդան: Այս հարձակումների ցնցող տպավորության ազդեցությունն է եղել պատճառն, անշուշտ, որ նիզամին, ժամանակագրական հայտնի խախտում կատարելով, Եկարագրում է ուսաների արշավանքը Ալեքսանդրի օրոք: Ալեքսանդրը, բազմաթիվ տեղական ժողովուրդներին իր հետ միացնելով՝ յոթ ճակատամարտում հաղթում է վերջապես ուսաներին և ազատում նուշաբեին:

Ավարտելով այդ պատերազմը՝ Ալեքսանդրն ուղևորվում է զեպի հավիտենական մշուշի երկիրը, որ գտնվում էր հյուսիսային բևեռում: Հստ ավանդության, այդտեղ էր գտնվում կենաց ջրի աղբյուրը, և ով խմեր այդ ջրից, կանմահանար: Մեծ շարշարանքների գնով նա հասնում է մշուշի երկիրը, մտնում է մշուշների մեջ և քառասուն օրվա որոնումներից հետո՝ լսելով խորհրդավոր մի ձայն, որը հայտնում էր, թե միևնույն է, նրա որոնումներն ապարդյուն կանցնեն, դուրս է գալիս այնտեղից ու դիմում զեպի հայրենիք: Նիզամին պատմում է, որ անմահական ջուրը լուսատու բարի օգնությամբ գտել և խմել է Ալեքսանդրին ուղեկցող զինվոր երգբը, որ և, դրա շնորհիվ, անմահացել է: Պատմում է նաև այդ առասպելի հունական տարբերակը, ըստ որի երգբը Իլյասի հետ մշուշի երկրում թափառելիս պատահաբար նստել է այդ աղբյուրի մոտ և ճաշել. այդ միջոցին աղ զրած ձուկը նրանց ձեռքից ընկել է ջրի մեջ և կենդանացել, որից և նրանք իմացել են, որ դա անմահական ջրի աղբյուրն է:

Վերադարձի ճանապարհին Ալեքսանդրը հասնում է մի խորհրդավոր քաղաք: Բնակիչները պատմում են, որ հրքեմն երբեմն մոտակա լեռից մի խորհրդավոր ձայն կանչում է իրենց, բայց ովքեր բարձրանում են լեռը, այլևս չեն վերադառնում: Ալեքսանդրը փորձում է պարզել գաղտնիքը, բայց արդյունքի չի հասնում: Այնտեղ ուղարկված զինվորները նույնպես անվերադարձ կերպով անհետանում են: Ալեքսանդրը վերադառնում է, վերջապես, չուր հայրենիքը: Գրանով էլ վերջանում է առաջին մասը:

Նրկրորդ մասում հեղինակը ներկայացնում է Ալեքսանդրին նախ և առաջ իբրև փիլիսոփա: Վերադառնալով Ռում և կարգի գցելով ներքին գործերը՝ նա հոգ է տանում պիտության ու մշակութի



ծաղկման մասին: նա հրամայում է հունարենի թարգմանել իր հետ բերած արժեքավոր գրքերը՝ տարբեր լեզուներից, ապա՝ իր մոտ է հավաքում աշխարհի իմաստուններին: Ինքն էլ իր հերթին հանախ առանձնանում է իր համար կառուցված խցում և սուղվում խորհրդածությունների մեջ:

Այս նախապատրաստական գլուխներից հետո հեղինակը պատմում է տասը պատմվածքներ, որոնց մեծ մասը բաղված է հին հունական ավանդություններից (օր. Միդաս թագավորի մասին ավանդությունը, որ վերադրված է Ալեքսանդրին, Արքիմեդի սիրու պատմությունը, Հերմես Տրիսմեգիստի պատմությունը և այլն):

Սրանց հետևում է, եթե կարելի է այսպես ասել, փրխսոփայական մասը: Նիզամին ներկայացնում է Ալեքսանդրին հնդկական գիտունների հետ վարած վիճարանության մեջ: Այնուհետև, Ալեքսանդրի ներկայությամբ վիճարանության մեջ են մտնում հունական յոթ նշանավոր փրխսոփաները. Արիստոտելը, Ապոլոն Տիանացին, Սոկրատը, Պլատոնը, Թալեսը, Պորփյուրը և Հերմեսը: Թեև այս հասավածներն իրենց գեղարվեստական կատարելությամբ համեմատաբար ցածր են, բայց շափաղանց կարևոր են իրենց բովանդակությամբ: Վեճի նյութն է կազմում աշխարհի ծագման հարցը: Նիզամին, հաշվի չնստելով ժամանակադրական տվյալների հետ, Ալեքսանդրի մոտ է բերում հունական փրխսոփայության տարբեր ուղղությունների ներկայացուցիչներին և քննության առնում նրանց փրխսոփայական հայացքները: Յուրաքանչյուր իր հմտությունն ինչպես առհասարակ փրխսոփայական հարցերին, այնպես էլ, առանձնապես, հունական փրխսոփայությանը՝ նիզամին իր եզրակացությունն է հայտնում վիճարկվող հարցի նկատմամբ. այդ եզրակացությունը, որքանով առայժմ ուսումնասիրված է, հանգում է գնոստիկական-նեոպլատոնական ուղղությանը:

Նրջապատված փրխսոփաներով ու գիտնականներով, սուղված խորհրդածությունների մեջ՝ Ալեքսանդրը հասնում է գիտության ծայրագույն գագաթներին: Բայց, ահա, կրկին լսվում է խորհրդավոր ձայնը, որ կոչում է նրան դեպի ճանապարհորդություն՝ մարդկությանը դեպի բարիքի ուղին բերելու եվ նա ուղևորվում է նախ նա գնում է դեպի արևմուտք և հասնում երկրի արևմտյան սահմանին, ուր արեգակը սուղվում է օվկիանոսը: Այստեղ ծիծաղեցնող թանկագին քարերով նա մի անմատչելի ամրոց է կառուցում օաղիսում: Այնուհետև նա դիմում է դեպի հարավ, ապա՝ արևելք և հասնում է երկրի արևելյան սահմանին, որտեղ ծովը թափվում է տիեզերական օվկիանոսի մեջ: Ալեքսանդրը հրամայում է

կանգնեցնել այդտեղ պղնձյա արձան՝ վեր պարզած ձեռքով, իբրև նշան ծովագնացներին՝ իրենց ընթացքն այլևս չշարունակելու համար: Այդտեղից վերադառնալով Չինաստան և այնտեղ միամտյա հանգիստ վայելելուց հետո՝ Ալեքսանդրը գիմում է դեպի հյուսիս: Ճանապարհին նա հանդիպում է մի ժողովրդի, որ անընդհատ սպառակությունների է ենթարկվում ավազակաբարո մի ցեղի կողմից, և կառուցում է հսկայական պարիսպ՝ թշնամիների հարձակումն արգելելու համար: Ի վերջո նա հասնում է գրախտային մի երկիր, ուր ամեն ինչ բացառապես լավ է: Արգասաբեր է հողը, բարենրդաօտ կլիման, պտուղներն ու բերքն առատ, իսկ մարդիկ՝ բացարձակապես երջանիկ: Այդտեղ շկան հալածվածներ ու հալածողներ, կեղեքվածներ ու կեղեքիչներ, հարուստներ ու աղքատներ: Մարդիկ ապրում են լիակատար հավասարության ու ազատության մեջ, մեկը մյուսին իր եղբայրն է համարում. յուրաքանչյուրը շահագրգռված է ոչ միայն իր, այլև մյուսների ազատությամբ ու երջանկությամբ, յուրաքանչյուրն իր պարտքն է համարում օգնել ուրիշներին և, որ կարևոր է, իր երջանկությունը տեսնում է մյուսների երջանկության մեջ: Դրա շնորհիվ էլ այդ երկրում շկան իշխողներ և իշխանության ներկայացուցիչներ. առանց իշխանության կողմից հաստատված օրենքների էլ այդտեղ հասարակությունը կառավարվում է, նույնիսկ հատերը հովիվների կտրիք չունեն, որովհետև գողությունը, կողոպուտն ու ընչաթաղցությունն իսպառ վերացված են: Մարդիկ շափավոր են իրենց պահանջմունքների մեջ, աշխատասեր են և վնասակար հակումներից զերծ, որի շնորհիվ էլ նրանք ազատ են հիվանդություններից և մեռնում են խորին ծերության մեջ՝ գոհ իրենց կյանքից: Ինչպես Ալեքսանդրին իրենց կյանքը նկարագրող ծերունին է ասում, իրենց մեջ ապրել թույլ են տալիս միայն իրենց նմաններին, իսկ շարիքին վռնդում են: Այսպես, ա՛հ, վերջապես Ալեքսանդրը գտնում է իր որոնած երջանկավետ երկիրը: Իր ամբողջ կյանքում նա երազել էր այդպիսի երկրի մասին ու որոնել. այժմ երբ նա արդեն գտել էր այն, ցավ է հայտնում, որ շուտ չէր եկել այդտեղ և յուրացրել նրանց կենսաձևը: Բայց ուշ էր արդեն... Խորհրդավոր ձայնը կրկին կանչում է Ալեքսանդրին՝ հրամայելով անմիջապես վերադառնալ: Ալեքսանդրը ճանապարհվում է դեպի Ռում. բայց Եահրազուրում հիվանդանում է. երկարատև հիվանդության ընթացքում գիտունները ոչ մի կերպ չեն կարողանում օգնել նրան: Ալեքսանդրը զգում է մահվան մերձավորությունը և դրապրին թելադրում է մորն ուղղված նամակը, որով հայտնում է իր մոտալուտ մահվան մասին:



Նույն նամակում նա խնդրում է մորը չվշտանալ իր համար. Եթե իր հիշատակին պետք է անպայման կատարի սգո հանգես, ապա թող սարքի ձուխ խնջույք և հրավիրի միայն այնպիսի մարդկանց, որոնք երբեք չեն կորցրել որևէ մեքենավորի նամակն ուղարկելուց հետո Ալեքսանդրը մեռնում է ժպիտը դեմքին: Մտեղծագործությունը վերջանում է Ալեքսանդրի հայրենիքի և յոթ փիլիսոփաների վախճանի նկարագրությամբ: Մի գլուխ էլ նիզամին նվիրում է իր մահվան և իր թողած գրական ժառանգությանը վերաբերող խորհրդածություններին:

Ինչպես ասել ենք, իր այս վերջին ստեղծագործության մեջ նիզամին կամեցել է ամբողջապես բնթերցողին հաղորդել իր փիլիսոփայական ու բարոյախոսական հայացքները: Հենց դրա շնորհիվ էլ այս երկն ստացել է զիդակտիկ-փիլիսոփայական բնույթ և այս տեսակետից նման է առաջին ստեղծագործությանը՝ «Գաղտնիքները գանձարանին»: Սակայն, եթե «Գաղտնիքների գանձարանը» զուրկ է մի ամբողջական սյուժեից և նրա մեջ պատմողական կողմը երկրորդական տեղ է գրավում, իսկ առաջնակարգը՝ տեսական բարոյանքը, խրատներն ու դատողություններն են, ապա այստեղ փիլիսոփայական բնագրծակ դատողությունների, վեճերի ու մտորումների հետ միասին մեծ տեղ է գրավում պատմողական կողմը: Ճուր ընտրած հերոսի մասին ստեղծված ավանդությունները, և հենց նրա կարճատև, բայց փոթորկալից կյանքը լիովին հնարավորություն են տալիս հեղինակին զուգահեռաբար զարգացնել իր երկի թե՛ պատմողական և թե՛ տեսական-փիլիսոփայական կողմը: Մա էլ, իր հերթին, հնարավոր է դարձնում հրքեք չթուլացնել ստեղծագործության հետաքրքրությունը, չվերածել այն չափածո փիլիսոփայական տրակտատի:

Իրեն հերոս ընտրելով Ալեքսանդր Մակեդոնացուն, ներկայացնելով նրան իր երեք կողմերով ու նրա շուրջը համախմբելով ոչ միայն հույն, այլև ուրիշ ժողովուրդների նշանավոր փիլիսոփաներին՝ նիզամին կարծես իր առջև նպատակ էր դրել հաշվեհարկարի նատիզ ականգան փիլիսոփայական ուղղությունների հետ՝ մի կողմից, և բնդհանուր հայտարարի բերել նախորդ ստեղծագործություններում արտահայտած գաղափարները, ամփոփել դրանք ու վերջին խոսքն ասել՝ մյուս կողմից: Եվ, իրոք, այս ստեղծագործության մեջ նիզամին ամբողջացնում է իր գաղափարախոսությունը, զարգացնում այն ու հասցնում հնարավոր աստիճանին: Այստեղ էլ հիմնական հարցը հասարակության մեջ գոյություն ունեցող շարիքների բննադատությունն ու նրանց վերացման բարոյն է: Այդ

ձգտումն է մարմնացնում իր մեջ պոեմի հերոսը՝ Ալեքսանդրը: Եվ, եթե, ասենք Ֆիրդուսին, արդարացնում էր Ալեքսանդրի նվաճումներն այն նկատառումով, որ նա իրանական ծագում ուներ, սերում էր Արեմենյանների արքայական տոհմից, ապա՝ նիզամին արդարացնում է Ալեքսանդրի արշավանքներն այն պատճառաբանությամբ, թե նա վարում էր ոչ թե նվաճողական արշավանքներ, ոչ թե իր ռազմական հզորությունը դործադրում էր ազատ ժողովուրդներին ստրկացնելու համար, այլ, բնդհակառակն, ազատում էր ստրկացված ժողովուրդներին, ամենուրեք հալածում շարիքը, պատժում բռնակալներին, կեղեքիչներին ու կոզապտիչներին և մարդավայել կարգ ու կանոն հաստատում ամեն տեղ: Այսպիսով էլ, ահա, նիզամին ազատում է Ալեքսանդրին նվաճողի պատասխանատվությունից ու ներկայացնում նրան իբրև իդեալական թագավորի կերպար: Այս բանից հետո հեղինակն արդեն հեշտությամբ կարող էր հանդես բերել իր հերոսին որպես մարդկության ազատարար և որպես իր իսկ՝ հեղինակի գաղափարների կրողն ու արտահայտիչը: Իրոք, Ալեքսանդրին հեղինակը դարձնում է իր իսկ հոգսերի, մտորումների, դեգերումների ու գաղափարների արտահայտիչը: Արպեսի հպարտությամբ է պատմում հեղինակը Ալեքսանդրի արշավանքը բարբարոս զենդիների դեմ, հալածված երկրի շուրջը պարիսպներ կանգնեցնելու և այլ բաղձաթիվ այդորինակ զենպքերի մասին: Այդ բոլոր դեպքերում էլ Ալեքսանդրը հանդես է դալիս իբրև խեղճերի, թուլլերի ու հալածվածների պաշտպան և բռնակալներին, անիրավ ու անարդար ուժեղների պատժող, իսկ այդ իրավունք էր տալիս հեղինակին ոչ միայն սիրել իր հերոսին, ոչ միայն գովաբանել նրան, այլև հպարտանալ նրա գործերով: Իր բոլոր գործերով Ալեքսանդրը պոեմում ներկայանում է մեղ իբրև միայն դրական հերոս, նա բարի է, արդար, մարդասեր. նա չի կամենում թափել թեկուզ մի կաթիլ արյուն շահասիրական կամ փառասիրական նկատումներով: Միայն շարիքն ու բռնությունը վերացնելու համար է նա սուրբ հանում պատյանից, բայց նույնիսկ այդ զենպքում էլ, եթե հնարավոր է խուսափել արյունահեղությունից, ապա կանգ չի առնում ոչ մի միջոցի առջև: Այդպես նա խուսափում է բաղձաթիվ անմեղ զինվորների արյունը թափելուց՝ սպանել տալով Դարնահին, կամ՝ փոքրիկ բնդհարումներից հետո՝ հաշտություն կար գտնելով շինական խաբանի հետ: Եվ այս բոլոր դեպքերում նիզամին իր հերոսի հետ է և ուրախանում է արյունահեղության խափանումից: Բայց այդ բոլորը դեռ չեն բավարարում հեղինակին: Ալեքսանդրը ընտրյալ թագավոր է, նա իդեալական դե-



կավար է, բայց նրա հաստատած կարգերը դժուար լավագույնը չեն: Ինքը, Ալեքսանդրն էլ որոնում է մի ավելի երջանիկ երկիր, ավելի արգարացի կարգեր: Եվ, ահա, Նիզամին իր հերոսի հետ որոնում ու գտնում է այդ երջանկավետ երկիրը՝ ուսուպիական հյուսիսային երկիրը: Սրանով արդեն Նիզամին հասնում է իր սոցիալական հաջաքցների զարգացման վերջնակետին: Նա հանգում է, վերջապես, այն տեսակետին, որ հասարակության միջից կվերանան բոլոր նույնությունները, կեղերումներն ու անիրավությունները այն ժամանակ միայն, երբ հասարակության բոլոր անդամներն ապրեն իրենց աշխատանքով, երբ մի բուռն իշխանավորները երկիրն իրենց փառասիրական ու շահասիրական ձգտումների բավարարման աղբյուրը չդարձնեն: Հասարակության յուրաքանչյուր անդամը պետք է հոգա մյուսների համար այնպես, ինչպես իր համար: Ուրիշի շահերի պաշտպանությամբ պաշտպանիք թո շահերը. այս սկզբունքի վրա է հիմնված Նիզամիի ուսուպիական հասարակությունը, և այս ըսկրբունքն է քարոզում ինքը՝ Նիզամին: Այս է, ահա, նրա վերջին խոսքը, որով վերջացնում է իր ստեղծագործությունն ու իր գաղափարախոսությունը:

Մակայն այս ստեղծագործության մեջ Նիզամին իր ուշադրությունը միայն մարդկության սոցիալական կյանքի վրա չի բեռնել. նա քննության է առել նաև զուտ փիլիսոփայական հարցեր, ինչպես կյանքի ծագումը, աշխարհի զոչացումը և այլն: Գրանցից առավել կարևորն է մահվան պարբերությունը: Հայտնի է, որ մարդկությունը դժուար վաղնջական ժամանակներից մտածել է մարդկային կյանքի երկարացման, մարդու անմահացման մասին ու որոնել դրա միջոցը, բայց չգտնելով այն, հորինել է բազմատեսակ լեգենդներ՝ անմահական ջրի, առանձին հերոսների անխոցելիության, կենսատու բույսերի մասին Նիզամին էլ այդ հարցին անդրադառնում է այստեղ: Ալեքսանդրը որոնում է անմահական ջուրը՝ զնայով մշուշի երկիրը: Մակայն Նիզամին այստեղ էլ իրականն է երակետ ընդունում: Ալեքսանդրի բոլոր որոնումները ապարդյուն են անցնում. ասորք տալով մահճեղական կրոնին՝ Նիզամին հիշում է միայն ըստ այդ կրոնի անմահ ծրրի լեգենդը: Մինչդեռ իր հերոսը, իրական մարդը մահկանացու է և այդպես էլ մնում է: Եվ որքան ցնցող է ու հուղիչ այն պատկերը, երբ հաղթական հերոսը, որ իր ոտքի տակն էր առել ամբողջ աշխարհը, որ նույնիսկ բեռններն էր նվաճել, մահվան տաղնապի մեջ հեգնանքով է դիտում բժիշկների փորձերը՝ մահվան առաջն աննելու համար: Մահը անխուսափելի է, այս է Նիզամիի եղբակացությունը, բայց մեռնելուց հետո էլ մարդ

ապրում է իր գործերով: Այսպես է ավարտում նա իր մատրումները, այդպես է պատկերացնում նաև իր մահը՝ իբրև ավանդ հանձնելով հավերժության իր հոյակապ ստեղծագործությունը:

Վնարեղություն.— Ինչպես մենք ասել ենք արդեն, Նիզամիի թողած գրական ժառանգության մի մասն են կազմում նրա քնարական բանաստեղծությունները: Հին աղբյուրների տված տեղեկությունների համաձայն Նիզամիի քնարական բանաստեղծությունները չափազանց շատ են եղել, սակայն մեզ հասած ձևագրեր ժողովածուները պարունակում են շուրջ երկու հազար տող: Ցավոք սրտի այդ քիչն էլ հարկ եղածին չափ ուսումնասիրված չէ: Այդ է պատճառը, որ նույնիսկ այժմ էլ, Նիզամիի մասին խոսելիս, հիշում են միայն նրա պոեմները. մինչդեռ նրա քնարական բանաստեղծությունները ևս իրենց գեղարվեստական արժեքով՝ արժանի են մեծ ուշադրության: Այս համառոտ շարադրանքով՝ չխորանալով այդ բանաստեղծությունների մանրամասն ու բազմակողմանի վերլուծության մեջ, բավականանանք առաժմ Նիզամիի լիրիկայի մի բանիքնորոշ կողմերի մասին խոսելով և բնութագրելով այն ընդհանուր գծերով:

Նիզամիի լիրիկայի մեծագույն մասն են կազմում սիրային բանաստեղծությունները՝ զաղելները: Բանաստեղծը խոր հուզականությամբ ու բացառիկ անկեղծությամբ երգում է սերը, զեղում իր ապրումները: Ինչպես ճիշտ կերպով նկատել է արևելագետ Քերտելսը, այդ բանաստեղծությունների յուրաքանչյուր տողը տողոված է Նիզամիին հատուկ անկեղծությամբ ու զգացմունքների խորությամբ: Այդ նույնը վերաբերում է նաև նրա բանաստեղծությունների գեղարվեստական կողմին: Բանաստեղծությունների մեջ էլ նա հանդես է գալիս իբրև մեծ վարպետ: Ինչպես ինքը բանաստեղծն էլ վկայում է, իր զաղելների զգալի մասը գրել է դեռևս վաղ երիտասարդության տարիներին, միայն մի քանիսն են գրված հետագայում, որ և հաստատվում է հենց զաղելների բովանդակությամբ: Եվ սակայն, դեռևս երիտասարդ հասակում գրած այդ զաղելներն էլ աչքի են ընկնում լեզվի ճոխությամբ, նուրբ, գեղեցիկ պատկերներով ու համեմատություններով և բանաստեղծական, հատկապես չափական արվեստի կատարելությամբ:

Գաղելների մասին խոսելիս պետք է նկատի ունենալ մի հանգամանք. Արևելքում ստեղծված գրական ավանդության համաձայն զաղելի համար չի պահանջվում բովանդակության միասնականություն: Ինչպես հաստատում են հենց Արևելքի անցյալի տե-



սարանները, զազելի յուրաքանչյուր բեյթը (երկառղը) պետք է կալմի մի վնրչացած ամբողջություն՝ ըստ բովանդակության: Գազելի ամբողջությունն ու միասնությունը ստեղծվում էր գերազանցապես բեյթերի միատեսակ հանգով և շափով: Սրա հետեանքն, ինչպես հայտնի է, այն եղավ, որ տասներկու-տասներեքերորդ դարերից արդեն բանաստեղծների ուշադրությունը գլխավորապես կենտրոնանում է ձևական ու շափական տեխնիկայի վրա, իսկ բովանդակությունը հետին տեղն է բռնում: Այս՝ Արևելքի դրականության համար ընդհանուր դարձած հատկանիշներից մեկն է, որ իր ծայրահեղությունն է հասնում տասնհինգ-տասնվեցերորդ դարերում, երբ շափական արվեստը գազելների մեջ դառնում է արդեն ինքնանպատակ մի բան:

Այս կողմից ես, ինչպես ճիշտ կերպով գիտել է Քերտեւսը, նիզամիին կշտամբել չի կարելի: Ամբողջ ժողովածուում դժվար է դանել մի տող, որ ինքնանպատակ լինի, ծառայի սոսկ ձևական կատարելության. իբրև ավելորդ պերճաբանություն: Ընդհակառակն, նիզամիի գազելների յուրաքանչյուր տողը հազեցած է շատ խորը, բայց սեղմորեն արտահայտված բովանդակությամբ: Իբրև առանձնակի արժանիք պետք է ավելացնել, որ բովանդակության տեսակետից բեյթերի անկախությունն ու, մանավանդ, անջատվածությունը նկատելի չեն: Յուրաքանչյուր գազել ունի յուր ամբողջական, միասնական բովանդակությունը, որի հիմքում ընկած է մի որևէ հույզ կամ խոհ, որ զարգանում է բեյթ առ բեյթ և ամբողջանում է միայն ամբողջ գազելով: Այս մի այնպիսի վարպետություն է գազելների գրելու արվեստի մեջ, որին Արևելքի բանաստեղծներից քչերն են հասել: Սակայն, հակառակ դրան, որոշ արևելագետներ սովորաբար անտես են առնում նիզամիի քնարերգության այդ դրական կողմերը և, առանց հանգամանորեն ուսումնասիրելու այն, արժեզրկում: Գեո ավելին, նույնիսկ այն զեպքերում էլ, երբ խոսում են դրա մասին, ապա անպայմանորեն կամենում են գազելների մեջ էլ տեսնել սուֆիական աշխարհայացքը: Նրանք հայտնապես արվեստական կերպով փորձում են մեկնաբանել նիզամիի սիրո երգերը սուֆիական այլաբանությամբ: Մինչդեռ ամենաթեթևակի քննությունն, անզամ, բավական է ցույց տալու համար, թե այդ գազելների այլաբանական մեկնաբանությունը միանգամայն մտացածին է: Հայտնի է, որ սուֆի բանաստեղծների գազելների մեջ այլաբանորեն գործածվող սեր, սիրելի և նման բազմաթիվ բաներ գուրկ են կոնկրետությունից, սիրո

գովըն էլ նրանց մեջ վերացական է, անմարմին ու անիրական: Հենց այդ պատճառով էլ միանգամայն տեղին է դրանց այլաբանական մեկնությունը. ավելին՝ միայն այդպիսի մեկնաբանությունից հետո հասկանալի է դառնում նրանց բովանդակությունը: Վերջապես, այդպիսի գազելների վերջաբանում սովորաբար դրվում է նաև այլաբանության մեկնությունը՝ պատկերավոր ձևով կամ ուղղակի կերպով, այնպես որ այլևս որևէ կասկածի ենթակա չի կարող լինել նրա սուֆիական բովանդակությունը: Նիզամիի գազելներում մենք այդպիսի բան գտնել չենք կարող: Նրա գազելներում երգված սերը միանգամայն կոնկրետ է, մարդկային և որևէ այլաբանական մեկնության տեղիք չի տալիս. այն խոր զգացումները, այն անմիջականությունն ու անկեղծությունը, որոնք հատուկ են նրա գազելներին, սուֆիական որևէ այլաբանության չեն կարող ներդաշնակել: Ի վերջո, նիզամիի գազելների բովանդակությունը վերացական չէ և այլաբանական մեկնությունը ոչ թե կոնկրետացնում, այլ, ընդհակառակը, վերացական է գործնում նրանց բովանդակությունը: Իսկ այս ցույց է տալիս, որ բուրժուական արեվելագետներն այստեղ էլ առաջնորդվում են մի հայտնի միտումով՝ սրողել այն դրականը, որ կա նազիմիի գազելներում և ամեն տեղին արհեստականորեն սալ կրոնական բովանդակություն:

Մեր ասածները փաստերով հաստատելու համար իբրև նմուշ բերենք նիզամիի գազելներից երկուսը.

Գյոզալ, ֆեհլուց ոչ մի շահ չկա, եկ ուրախանանք  
մինչև առավոտ,  
Ուրիշ գիշերներ այդ ֆեհլու տեղակ ֆեռվ կծվանք  
մինչև առավոտ:  
Մերք աչուվ-ուճեռվ ֆեզ կփայփայեմ, մերք ֆեզ իմ սիրո  
օրախը կառնեմ.  
Մերք ֆեզ տեղ կառմ իմ սրտում, կզգաս դու սիրո ֆեհշանք  
մինչև առավոտ:  
Դու մի տիկնիկ ես՝ նուշ աշիկներով, գեղեցկուճի ես  
շաֆար շուրբերով,  
Իսկ գիւնովներին նուշն ու շաֆարը մազա է, բեկբանք  
մինչև առավոտ:  
Երեկ մինչ գրչե ֆեզանից բաժան ես զլուխս էի բակում  
ծով վշտից,  
Այսօր, յար, երկար, զլիսս թագ դիբ, շունեմ վիշտ,  
տանջանք մինչև առավոտ:



Իմ շանք ես քեզ մատաղ արեցի, — աօի, այս կնուշ ձեռք  
 քոնն է, յար,  
 Սիրուն, գառ գցիր, ինձ հետ միասին խաղա, նարդի տանք  
 մինչև առավոտ:  
 Մազրդ ուրիշ հանց ապաշխարանք, մինչև ուշ գիշեր տուր  
 ինձ համբույրներ,  
 Ապաշխարանք շող տուր վարսիդ պես, խմեմ գինին քանկ,  
 մինչև առավոտ:  
 Այս գիշեր նստի՛ր, դու պահե՛ր արա նիգամու հնչեղ  
 քաղցր երգերին,  
 Քող քա պահե՛րի մառանին շրկե՛րի ուրիշ ոչ մի հանգ  
 մինչև առավոտ:

\* \* \*

Սիրամարտերին, որպես առյուծներ, նա բուխ աչքով  
 որսում է էլի,  
 Եվ ով առյուծի սիրտ ունի սիրող, գրկում է արտից,  
 յարից սիրելի,  
 Հոնքերի նետը աղեղին դնում, լառում է, ձգում, բայց  
 չի արձակում,  
 Օ, հրաշ, նայի՛ր, նա ինձ խոցում է, քեկ չի նետում  
 նետերը ձեռի:  
 Էսօր Սանամիս երեսը տեսա, վշտից շապիկս ես ծվառեցի,  
 Ինչո՞ւ աշխարհում չփորձված գինին գինովցնում է  
 ինձ սխալելի,  
 Երբ քո երկաթե սրտում փնտրում եմ հավատարմություն,  
 նվիրվածություն,  
 Ոնց կազդեն բյուրեղ իմ սրտի վրա պարսափաբեր սիրտ,  
 պաշտելի՛:  
 Ես ամեն մի օր հիշատակում եմ գիշերներն անուշ  
 ժամադրության,  
 Դու ամեն գիշեր օտերես ես համբույր, պահում հաշիվը  
 սրտի զարկերի:  
 Քեկ յարի հետ հանդիպելը շատ նեղիչ է, ննջող, երգիչ  
 նիգամի,  
 Բայց ով վարդեր է կյանքում որոնում, նա հանդիպում է  
 նաև փշերի՛:

Այսպիսով, նիգամիի քնարական բանաստեղծությունները մեծ արժեք են ներկայացնում թե՛ իրենց խոր հուղականությամբ, թե՛ բովանդակությամբ և թե՛ բանաստեղծական արվեստի կատարելությամբ: Մեծ բանաստեղծը զբանց մեջ էլ հարազատ է մնացել իր սկզբունքներին, մասնավորապես սիրտ ու բարոյականության հարցերում և բարոզի է իր ժամանակի համար առաջադրական գաղափարներ: Ահա թե ինչու սովետական արևելագիտությունը դառնում է, որ նրա լիբրիկան նույնպես մեծ արժեք է ներկայացնում, որ գեահատել նրա ժառանգությունը, անտես առնելով լիբրիկան, նշանակում է սովորի տակ թողնել այդ ժառանգության մի արժեքավոր մասը և, հետևաբար, թերի գաղափար կազմել նրա մասին:

Ա մ փ ո ս ու մ. — Այժմ, երբ մենք ծանոթացել ենք նիգամիի ամբողջ գրական ժառանգության բովանդակությանը, հնարավոր է ի մի բերել այդ առանձին հատվածներն ու ամբողջական գաղափար կազմել այդ ժառանգության արժեքի մասին: Եթե նիգամիի առանձին ստեղծագործությունների, հատկապես հինգ պոեմների մեջ սյուժեի ու կառուցվածքի տեսակետից ընդհանուր բան գրեթե չկա, ապա դադարաբանական տեսակետից նրանք սերտորեն շաղկապված են իրար և կազմում են մի անխախտելի ամբողջություն: Իր բոլոր ստեղծագործությունների մեջ էլ նիգամին հանդես է գալիս իբրև իր ժամանակի մեծ մտածող ու բարոյախոս և հետևողական կերպով բարոզում է յուր գաղափարները: Նիգամին լիովին գիտակցում էր գրականության դաստիարակիչ դերը հասարակական կյանքում: Գեո ավելին. հետևելով իր ժամանակի հայեցակետին, նա ևս գտնում էր, որ գրականությունը հասարակական կյանքի վրա ազդելու գենք է և իր ստեղծագործությունների մեջ նպատակ էր դրել իր բարոզները, խրատներն ու քննադատությունը ծառայեցնել կյանքի վերափոխման, ժողովրդի համար բարեկեցիկ կյանք ստեղծելու գործին:

Իր ստեղծագործությունների մեջ նիգամին շոշափում է հասարակական կյանքի բոլոր կողմերը: Սակայն կարևորը, հիմնականը՝ հենց հասարակական կյանքի հոտի կողմերի քննադատությունն է ու հասարակության համար հրջանիկ կյանք ստեղծելու քարոզը: Նրա բոլոր երկերում առկա է սոցիալական բողոքը, հասարակական շարիքի անողոր քննադատությունը. իր բոլոր քառադրագործությունների մեջ նա հանդես է եկել իբրև բոնության ու կենդանության անհաշտ թշնամի: Սրա լավագույն ապացույցն է հենց այն, որ նա իր ստեղծագործությունների մեջ և ոչ մի առիթ բաց չի թողնում կյանքում դոլություն ունեցող անիրավությունները,

<sup>1</sup> Քառադրագործությունը Աշոտ Գրաշու:



անստնձ կեղեքումն ու կամայականությունները քննադատելու համար: Հասարակական կյանքի ամենախոշոր արատը, որ նա քննադատում է հատկապես «Գաղտնիքների գանձարանում», «Յոթ գեղեցկուհիներում» և «Իսրայելի արարածներում», ֆեոդալական վերնախավի կողմից աշխատավոր ժողովրդի շահագործումն է: Նա անողոր կերպով մերկացնում է իշխողների սանձարձակ կամայականություններն, անլուր կեղեքումն ու ճնշումը՝ աշխատավորների նկատմամբ: Վկա լինելով բռնակալների շահագործմանը, նրանց անարդարություններին՝ Նիզամին քննադատության է ենթարկում նրանց տմարդի արարքները և քարոզում «զարձի գալ», սովորել արդարություն ու կառավարել երկիրն արդարությամբ: Նրա սուր քննադատությունից շեն ազատվում ոչ իր ժամանակի տիրակալները, ոչ պարսկական էպոսում քարոսության ու արդարության տիպար համարված խոսքով Անուշիրվան արքան և ոչ իսկ Ալեքսանդր Մակեդոնացին, որին նա ներկայացնում է իբրև իդեալական թագավորի տիպար: Ինչպիսի՞ ցասումով է խոսում նա սուլթան Սանչարի, խոսքով Անուշիրվանի, կեղեքիչ թագավորի շարագործությունների մասին «Գաղտնիքների գանձարանում»: Ինչպիսի՞ գայրույթով է պատմում բռնակալ վեպերի մասին «Յոթ գեղեցկուհիներում» և ինչպիսի՞ բողոք կա յոթ բանտարկյալների պատմածներում: «Իսրայելի արարածներ» բովանդակությունը շարագրելիս մենք տեսանք, որ հեղինակն Ալեքսանդր Մակեդոնացուն ներկայացրել է որպես իդեալական կերպար: Բայց նույնիսկ Ալեքսանդրը Նիզամիի ստեղծագործության մեջ հանդես չի գալիս առանց թերությունների, նույնիսկ նա խոստովանում է, որ ինքն էլ, իբրև թագավոր, ունի խոտելի արարքներ, ասելով՝

Մածուկ պետք է մնա մեր գազանիք,  
Երև բազենեք մեր ներսը,  
Ապա գաշահոտությունը ողջ աշխարհը կբռնի:

Այս քննադատությունը տիրակալների անիրավությունների ու կեղեքման նկատմամբ վերջապես ուղղակի բողոքի է վերածվում, և հեղինակը իր ամբողջ ատելությունն ու թշնամանքը ամփոփում է այն մարտական բառերի մեջ, որոնցով բնություններին հրույթյամբ շենթարկվելու կոչ է անում: Ահա այդ տողերը.

Ինչո՞ւ մանձնում ես հարվածի պարանոցդ հույսեմ,  
Ինչո՞ւ տանում ես լուռ ու մուռն՝ բռնությունը անօրեմ.  
Նվի՛ր դու փուշ, պանի՛ր մեջքից պախները սրասայր...

Իհարկե դրանից չի կարելի եղբակացնել, թե նա քարոզել է ապստամբություն կամ նման մի բան: Ոչ այդ տողերով պարզապես նա գտնում է, որ շագետը է բռնակալների անիրավությունները տանել լուռ ու մուռն, որ բռնակալին պետք է պատժել: Իսկ այս քարոզով նա հակադրվում է սուֆիներին, և կապվում այսինքնի հետ, որոնց մասին խոսել ենք: Ինչ վերաբերում է հասարակական կյանքը փոխելուն, ապա այդ հարցում նրա հայացքների մեջ դգալի էվոլյուցիա է կատարվել: Իր առաջին պոեմի մեջ՝ «Գաղտնիքների գանձարանում» նա թեև խստորեն քննադատում է բռնությունն ու անհավասարությունը, այնուամենայնիվ ֆեոդալական հասարակական կարգը չի ժխտում: Նա նույնիսկ արդարացնում է պուրջային անհավասարությունը, իշխողների և իշխվողների գոյությունը, համարում այդ բնական երևույթ, քանի որ՝ «հագուստը կարված է մարմնի չափով» և «մարդու աստիճանը համապատասխանում է նրա արժանիքներին»: Այդպես էլ իր առաջին պոեմում նա հանդես է գալիս իբրև թագավորական միահեծան իշխանության կողմնակից, քանի որ՝ «երկու գլուխ չպիտի լինի, որովհետև մեկը կկտրեն»: Մրանով էլ պայմանավորված է նրա սկզբունքը՝ հասարակության համար երջանիկ կյանք ստեղծելու մասին: Նա խստորեն քննադատում է բռնակալներին, մերկացնում նրանց անիրավություններն ու կամայականությունները՝ ցուցադրելով յուր հասարակարգի խոցերը: Բայց այդ խոցերը բուժելու համար նա չի քննադատում հասարակության կառուցվածքը, չի ձգտում փոխել, այլ կամենում է բարելավել այն: Այս պատճառով էլ, եթե մի կողմից նա քննադատում է բռնակալներին, մյուս կողմից էլ քարոզում է նրանց՝ «զարձի գալ», կառավարել երկիրը արդարությամբ: Այսպես, պատմելով Անուշիրվանի մասին, նա պատմվածքն ավարտում է ասելով, թե Անուշիրվանը, բուրբի պուրջից հուզված, մտածեց իր անիրավությունների մասին, դատապարտեց իրեն և այնուհետև հղավ արդար թագավոր: Նույնպիսի «զարձ» է կատարում նաև կեղեքիչ թագավորը. նույնն է կատարում նաև Բահրամ Գուրը «Յոթ գեղեցկուհիներում»: Այսպիսի օրինակներ ցուցադրելով՝ Նիզամին կամենում է, որ տիրակալները խուսափեն անիրավություններից ու կեղեքումից և «ուղղվեն»: Նույն նպատակին են ծառայում նաև «բարի», «արդար» թագավորների կերպարները, որոնց հեղինակը ներկայացնում է իբրև օրինակելի իշխողներ և քարոզում՝ հետևել նրանց: Իբրև այս վերջինի մարմնացում կարելի է հիշել Ալեքսանդր Մակեդոնացուն: Այսպես, ուրեմն, իր կյանքի առաջին շրջանում Նիզամին պնդում էր, թե բարի խրատներով ու հարգոր-



ներով կարելի է ազդել բռնակալների վրա, «ուզիդ ճանապարհի» բերել նրանց և դրանով իսկ ստեղծել հասարակության համար նրջանիկ կյանք, մերացնել շահագործումը, բռնությունները, անիրավություններն ու կյանքի բոլոր դառնությունները: Այդ նպատակով էլ նա մի կողմից քննադատում էր բռնակալներին, բարի խրատներ ու պատվիրաններ տալիս տիրակալներին, մյուս կողմից իրենալիսնանցնում անցյալը, ներկայացնելով այդ անցյալն իբրև երջանիկ ժամանակ, իսկ անցյալի թագավորներին՝ իբրև արդարության մարմնացում, որոնք ստեղծվել են «Հպատակների հոգեկրթ թեթևացնելու և ոչ նրանց կեղեքելու համար»: Սակայն հետագայում, կյանքի դառն փորձով նիզամին համոզվեց, որ իր և իր նման հազարավորների բարոզներն ու խրատները չեն կարող վերացնել հասարակական կյանքի շարիքները, քանի դեռ գոյություն ունեն իշխողներ և ենթականեր, քանի դեռ գոյություն ունի գույքային անհավասարությունը: Կյանքը ինքնին հերքեց նրա սկզբնական համոզմունքը: Եվ, ահա, «Ժսքանդար-նամհում» նա որոնում և գտնում է երջանկավետ կյանքը: Նրա իրենալիսնանցրած հերոսը՝ Ալեքսանդրը, որ ամենուրեք վերացնում է շարիքները, անհաշտ կոնիվ է մղում բռնության ու կեղեքումների դեմ, իր ճանապարհորդությունների ընթացքում հասնում է ուտոպիական հյուսիսային երկիրը, ուր մարդիկ ապրում են կատարելապես ազատ ու երջանիկ, ուր չկա պետություն, չկա գույքային անհավասարություն, գոյություն չունի շահագործում, որովհետև գոյություն չունի հասարակության դասակարգային երկամուկությունը՝ շահագործողների և շահագործվողների միջև: Այսպես, ահա, քննադատելով յուր հասարակության խոցերը և որոնելով երջանիկ կյանքի հիմունքները՝ իր կյանքի վերջում նիզամին հանգում է ուտոպիային: Նա իր ժամանակի հասարակարգին հակադրում է ուտոպիական հասարակարգը, որ հիմնված է հավասարության ու ազատության սկզբունքների վրա: Այսպիսով՝ իր վերջին ստեղծագործության մեջ նա հանդես է գալիս որպես մարդկանց կատարյալ հավասարության կողմնակից և բացառում է ոչ միայն միապետությունը, այլև՝ անհասարակ պետությունը: Ինչ վերաբերում է այդ ուտոպիային հասնելու միջոցին, ապա այս հարցում նիզամին իրենալիսնանցնում այն սկզբունքին է, թե կարելի է հասարակության կառուցվածքը փոխել բարոյական կատարելության հասնելով:

Իր բոլոր ստեղծագործությունների մեջ էլ նիզամին հանդես է գալիս իբրև մեծ հումանիստ և ժողովուրդների համերաշխության բարոզիչ: Նրա երկերում չի կարելի գտնել որևէ ժողովրդի նկատ-

մամբ արտահայտված թշնամանք. ընդհակառակն, ներկայացնելով իր երկերում բազմաթիվ ժողովուրդների ներկայացուցիչների կամ հենց բուն ժողովուրդներին, նա աշխատում է ցույց տալ նրանց դրական կողմերը: Միայն մի հարցում նա մեղադրում է այս կամ այն ժողովրդին. այն դեպքում, երբ որևէ ժողովուրդ փորձում է ղենքի ուժով ստրկացնել մի ուրիշ ժողովրդի: Այդ դեպքում էլ, սակայն, նա ըստ մեծի մասին մեղադրում է տիրակալներին, որոնք փառքի ու հարստության համար արյունահեղ պատերազմներ են հրահրում: Հենց այս նույն տեսանկյունով էլ նա դիտում է պատերազմները: Նա քարոզում է հաշտություն ու խաղաղություն և անսահման հիացմունքով է պատմում այն բոլոր դեպքերի մասին, երբ վերահաս պատերազմը կանխվում է հաշտությամբ: Այդպես է նկարագրված Ալեքսանդրի ու շինական խաքանի հաշտությունը, այդպես է նկարագրված Ալեքսանդրի ու նուշաբեի բարեկամությունը և այլն: Նույնիսկ Ալեքսանդրի կողմից Գարեհին դավաճանների ձեռքով սպանել տալը նա հիմանվորում է այն նկատառումով, որ դրանով փրկում էր հազարավոր զինվորների կյանքը: Ընդհանուր առմամբ նիզամին դեմ է պատերազմներին և այդ արտահայտել է ամեն առիթով: Սակայն կա մի պատերազմ, որ նա անհրաժեշտ է համարում. այդ՝ օտար լծից ազատվելու համար մղված պատերազմն է, անիրավությունները վերացնելու համար մղված պատերազմը: Միայն դրանով է արդարացնում նա Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները:

Իր ստեղծագործությունների մեջ նիզամին չափազանց մեծ տեղ է հատկացնում բարոյախոսությանը: Եվ այդ պատահական չէ: Մենք ասացինք, արդեն, որ նրա համոզմամբ, կյանքը պետք է փոխել բարոյական կատարելության հասնելով: Գրանով էլ պայմանավորված է նրա բարոյախոսությունը: Հասարակության բարոյական կատարելագործման հարցում առաջնակարգ տեղը նա հատկացնում է դիտությանը և դաստիարակությանը: «Լեյլի և Մեչնունի» մասին խոսելիս մենք ասել ենք արդեն, թե ինչ էր պահանջում հորից՝ որդիների դաստիարակության հարցում: Այստեղ ավելացնենք միայն, որ նա իր կողմից բարոզում է ազնվություն, հոգատարություն ուրիշների նկատմամբ, աշխատասիրություն, համեստություն ու չափավորություն: Մարդ պետք է օգտակար լինի հասարակությանը. այլապես նա պիտանի չէ կյանքում: Ինչ վերաբերում է դիտության խնդրին, ապա նա գտնում է, որ երկրի զարգացման ու հզորության գործոններից հիմնականը գիտությունն է: Այդ բանի համար, իբրև օրինակ, նա հիշում է հին հույներին, ա-



սելով, թե հուլյանը իրենց հզորութեամբ պարտական էին գիտութեան գարգացմանը՝ Հունաստանում, և որ հուլյանի փառքը անմահ է նրանով, որ ամբողջ աշխարհը նրանցից է գիտութեան սովորելու։ Այդ նույն միտքը նա գարգացնում և արտահայտում է Ալեքսանդրի կերպարով, որի գրական հատկանիշներից մեկն, ինչպես ասել ենք, իմաստութեանն է։

Նիզամիի խրատների մեջ կարևոր տեղ է գրավում շարութեան ղեմ կովելը։ Նա գտնում է, որ շար մարդկանց պատմելը անհրաժեշտություն է. ավելին, անպատիժ թողնել շար մարդկանց, նշանակում է վնասել արդարներին։ Այս սկզբունքը նա բարոզում է ամեն պատեհ առիթով։ Նույնիսկ «Յոթ գեղեցկուհիների» յոթ պատմվածքներում, որոնք ավելի հերիաթային, թեթև ու հանգստացուցիչ տրամադրությամբ են համակված, առկա է այդ սկզբունքը։ Հիշենք Խեյրի և Շարրի պատմությունը, որի մեջ Խեյրը իր մոտ բերված հանցագործին՝ Շարրին, ազատում է, բայց թագավոր-աները սպանում է նրան։ Այս սկզբունքի մեջ Նիզամին տեսնում է հասարակական շարիքների վերացման կարևոր մոմենտներից մեկը։

Ի վերջո Նիզամիի բարոյախոսութեան մեջ կարևորագույն տեղ է գրավում ընտանիքի սիրո և հատկապես, կնոջ հարցը։ Առանձին ստեղծագործությունների վերլուծման ընթացքում մենք տեսանք արդեն, որ նա կողմնակից է ազատ սիրո սկզբունքին և գտնում է, որ ամուսնությունը պետք է հիմնված լինի ազատ բնատրություն, փոխազարծ ու անդամաճան սիրո վրա։ Հակադրելով մահմեդական աշխարհում քննադատված և Ղուրանով արտոնված բազմակնություն սովորությանը՝ նա բարոզում է միակնություն, ամփոփելով իր անսակետը հետևյալ խոսքերի մեջ. «Բազմակին մարդը, վերջապես, մենակ կմնա»։ Մական կնոջ հարցում նա էլ ավելի առաջադիմական հայացքներ է պաշտպանում, գտնելով, որ կինը կարող է և պետք է տղամարդուն հավասար դիրք ունենա, պետք է օգտվի այն բարոյա իրավունքներից, որոնք տղամարդկանց մենաշնորհ են դարձել։ Նա գտնում է, որ կինը կարող է նույնքան լավ հասարակական գործիչ լինել, որքան և տղամարդը։ Այս բանը նա հաստատում է այնպիսի կանացի կերպարներով, որպիսիք են Միհրինբանուն, Շիրինը, Նուշաբեն և այլն։ Այս համոզմունքը միջնադարում, մանավանդ մահմեդական աշխարհում, բացարձակապես հակադիր էր կնոջ նկատմամբ եղած հասարակական վերաբերմունքին։ Իսկ այդ նշանակում է, որ Նիզամին բոլոր հարցերում էլ իր սկզբունքներով պաշտպանել է առաջադիմական հայացքներ։

\* \* \*

Խոսելով առանձին ստեղծագործությունների մասին՝ մենք աշխատել ենք համառոտակի բնութագրել թե՛ առանձին կերպարները և թե՛ ամբողջ իրկի գեղարվեստական արժեքը։ Այժմ համառոտակի խոսենք Նիզամիի ստեղծագործական մեթոդի, նրա բանաստեղծական արվեստի ու լեզվի մասին՝ ամբողջությամբ վերցրած։ Առանձին հերոսների կերպարների վերլուծությունը նրկատի առնելով, անգամ, հեշտ է եղրակացնել, որ Նիզամին ուժանտիկ է։

Իրոք, Արևելքի ժողովուրդների գրականության պատմության մեջ նա հայտնի է որպես սիրային ու մանտիկայի խոշորագույն ներկայացուցիչներից մեկը։ Լեյլին, Մեջնունը, Խոսրովը, Փարհազը, Շիրինը, Բահրամ Գուրը և հերոսների մի ամբողջ շարք անկասկած ուժանտիկական կերպարներ են։ Իր պոեմների յուրաքանչյուր հատվածում իսկ նա հանդես է գալիս իբրև ուժանտիկ պոետ։ Նիզամիի ստեղծագործական մեթոդը ուժանտիկային է։ Թե՛ իր ստեղծագործական մեթոդով և թե՛ իր երկերի կառուցվածքային մի շարք հատկանիշներով նա հետևել է Արևելքի ժողովուրդների, հատկապես արաբների ու պարսիկների, հնամենի գրական ավանդություններին։ Մական, դրան զուգընթաց, որոշ հարցերում նա որոշակիորեն հեռացել է այդ ավանդություններից և իր սեփական, նոր ժամանակներով ու պատմական նոր իրադրություններով պայմանավորված ինքնուրույն ավանդը մտցրել պոեզիայի մեջ։ Առաջին մեծ նորությունը, որ հատուկ է Նիզամիի գրեթե բոլոր ստեղծագործություններին, այն է, որ շատ պոեմների մեջ նա տեղ չի տալիս գեղարվեստական ուժերին, մի բան, որ մինչև այդ մահմեդական Արևելքի գրականության ամենաբնորոշ մեթոդներից մեկն էր։ Նույնիսկ «Յոթ գեղեցկուհիների» մեջ տեղ գտած ֆանտաստիկական չի փոխում նրա դիրքը այդ հարցում։ Այստեղ, ինչպես գիտենք, ֆանտաստիկական չի ներհնուզվել երկի սյուժեին, այլ հանդես է եկել յոթ արաջադուատների պատմած նովելներում, որոնք բովանդակության տեսակետից որևէ կապ չունեն պոեմի հետ և ներմուծվել են միայն հերոսի՝ Բահրամ Գուրի կերպարն ամբողջացնելու համար, ցուցադրելով նրա գրադմունքը։ Այնպես որ այստեղ էլ Նիզամին՝ պարմելով այդ նովելներն արաջադուատների բերանով, պատասխանատրվությունը չի վերցնում իր վրա և, հետևաբար, չի հրաժարվում իր սկզբունքից։

Երկրորդ բնորոշ նորությունը հերոսների անհատականացումն



է և նրանց հոգեբանութեան, բնավորութեան, զգացումների ու գործելակերպի, մի խոսքով՝ ամբողջ կերպարի ոչ միատեսակ, ստանդարտ ու մեկընդմիջտ անփոփոխ մնալը, այլ նրանց զարգացումն ու տիպականացումը: Միջնադարյան Արևելքի գրականութեան, հատկապես էպոսի բնորոշ գծերից մեկը հերոսներին մշտապես կաշուն բնավորութեամբ կերտելն էր: Այսպես, օրինակ, Ռոստամի, Քեյ-Նոսրուդի, Աֆրասիաբի կերպարները շատ մեծ վարպետութեամբ են կերտված պարսկական էպոսում, բայց նրանցից յուրաքանչյուրը ամբողջ էպոսի մեջ օժտված է նույն գծերով, որոնցով հանդես է գալիս սկզբում. զարգացող զեպերը, փոփոխվող իրադրություններն ու հանգամանքները մազաշափ անգամ չեն ազդում նրանց հոգեբանութեան ու բնավորութեան վրա: Նիզամիի մոտ ճիշտ հակառակն է: Մեջնունը, ըստ ավանդութեան և ըստ արարական աղբյուրների, սիրահարութեան պահից իսկ խենթ էր, դիվաճար, որից և ստացել էր իր մականունը: Մինչդեռ Նիզամիի մոտ աչգպես չէ: Նիզամին ձրգատում է համոզել, որ պատանեկան հրապուրանքը հայտնի պայմաններում վերածվում է անդիմադրելի մոլուցքի և վերջապես խելագարութեան հասցնում Մեջնունին: Աչգպիսի զարգացում են ապրում նաև Նոսրուդի, Բահրամ Գուրի կերպարները: Բացի դրանից, Նիզամիի մոտ հերոսներից յուրաքանչյուրն ունի իր հատուկ վերաբերմունքն ու զոճելակերպը՝ միևնույն հանգամանքներում. որքան տարբեր են, օրինակ, Ֆարհադը, Նոսրուդը, Մեջնունը և Բահրամ Գուրը սիրո հարցում: Եվ, որ կարևոր է, յուրաքանչյուրի վերաբերմունքը պայմանավորված է յուր իսկ կերպարի ամբողջությամբ. հեղինակը ձգտում է համոզել, և մեծ մասամբ համոզում է, որ տվյալ հերոսն այլ կերպ վարվել չէր կարող: Այսպիսով, թեև Նիզամիի ստեղծագործական մեթոդը ուժանտիզմն է, բայց վերը հիշված այդ նորությունները առանց այլևայլության նշում են արդեն սեպիդի որոշ տարրերի առկայությունը: Իսկ այդ, անշուշտ, պայմանավորված էր բանաստեղծի ապրած ժամանակաշրջանով: Մենք ասել ենք արդեն, որ քաղաքների զարգացմանը զուգընթաց Նիզամիի ժամանակաշրջանում գիտություն որոշ ճյուղեր զգալի առաջընթաց էին կատարել և, որ գլխավորն է, քաղաքային արհեստավորական խավերն արդեն իսկ սկսել էին գործնական կյանքում օգտագործել գիտության որոշ նվաճումներ: Այս բանն իր հերթին աստիճանաբար խախտում էր միջնադարյան միամիտ պատկերացումները գերբնական ուժերի, ոգիների և այլնի վերաբերյալ: Իսկ այդ, անշուշտ, իր արտահայտությունն էր գտնում նաև գրականության մեջ:

Ինչ վերաբերում է Նիզամիի ստեղծագործությունների բանաստեղծական արվեստին ու լեզվին, ապա այս կողմից ևս նրանք կատարյալ են: Ամենից առաջ պետք է շեշտել պատկերների ու համեմատությունների ճոխությունն ու պիրճությունը, որ մի կատարյալ բարենորոգում էր Արևելքի պարսկալեզու պոեզիայի մեջ: Մինչև Նիզամին, գրականության մեջ հաստատված ավանդներին համաձայն, ճոխ պատկերներով և, առհասարակ վսեմ ոճով, կտրելի էր զրել միայն քնարական բանաստեղծությունները, առանձնապես՝ քասիդները: Այդ միանգամայն հասկանալի է. բովանդակությամբ ազբատիկ ու կեղծ ներբողները պետք էր զարդարել վսեմաշուք զարծվածքներով, պատկերներով ու համեմատություններով, որպեսզի արտաքին փայլով ծածկվեր բովանդակության աղքատությունը: Գրա համար էլ, վերջին հաշիվով, քասիդների մեջ լեզվի պիրճությունն ու տեխնիկայի վարպետությունը դառնում են ուղղակի նպատակ: Մինչդեռ էպիկական ստեղծագործությունները, որոնց մեջ պատմողական կողմը գերիշխողն է, զրվում էին շատ ավելի պարզ լեզվով բնական ոճով և անշուք: Ուշագրավ է, որ այդպիսի ստեղծագործությունների հեղինակները, կամենալով ցուցադրել իրենց վարպետությունը, անընդհատ դիմում են լիրիկական շեղումներին: Նիզամին իր ստեղծագործությունների մեջ վրձնաբար հրաժարվում է այդ ավանդներից: Նա չօր էպիկական քաստեղծագործությունները վարդարում է անզուգական պատկերներով ու համեմատություններով, և դրանով իսկ հիմնադրում մի նոր ուղղություն պոեզիայի մեջ, որին հետևում են հաջորդները: Հենց դրանով էլ պայմանավորված էր լեզվի հարցը: Եթե մինչև այդ էպիկական երկերում լեզուն շատ ավելի աղքատիկ պետք է լիներ, եթե լիրիկական ստեղծագործությունների պիրճ լեզուն վայել չէր համարվում էպիկական գործերին, ապա Նիզամին իր հոյակապ պատկերների ու համեմատությունների համար չէր կարող բավարարվել աղքատիկ լեզվով: Եվ իրոք, նրա երկերի լեզուն շափաղանց հարուստ է և ընտիր: Արևելագետներից ումանը, սակայն, այս հարցում ևս կշտամբում են Նիզամիին, ասելով, թե նրա լեզուն բարդ է: Որ, իսկապես, Նիզամիի լեզուն ավելի բարդ է, քան, ասենք, Ֆիրդոսունը, այդ ճիշտ է, և դրա պատճառը մենք ցույց տվինք: Բայց, ինչպես սովետական արևելագիտությունն է հաստատել, Նիզամիի լեզվի բարդությունն այն չէ, ինչ որ արբունական բանաստեղծների քասիդներինը: Այս վերջինների մեջ լեզվի բարդացումը, վերացական, առեղծվածային պատկերներ կերտելը նր-



պատակ է. ներքողագիրները, ասես, անհասկանալի, վերացակա ու անսպասելի պատկերներով կամենում են շշմեցնել ընթերցողի՝ Մինչդեռ նիղամիի մոտ այդպես չէ. նրա պատկերները շափազանք կոնկրետ են, իրական կյանքից բաղած և, մեծ մասամբ, հիմնված են տեսողական կամ, առհասարակ, զգայաբար ընկալելի տպավորությունների վրա: Այդ պատկերները դժվար հասկանալի են հենց այն պատճառով, որ նրանք կապված են յուր ժամանակի կենցաղի, կուլտուրայի ու պատկերացումների հետ. պետք է բազմակողմանիորեն ծանոթ լինել այդ դարաշրջանի ոչ միայն պատմությանը, այլև՝ նյութական կուլտուրային ու, մանավանդ, կենցաղին՝ այդ պատկերներն ու համեմատությունները լիովին հասկանալու համար:

Ի վերջո, մի քանի խոսք էլ նիղամիի թողած ազդեցությունների մասին: Մենք արդեն ասել ենք, որ հինգ պոեմների ժողովածուն, «Խամսե» ընդհանուր վերնագրով, գրական ավանդույթ է դարձել մահմեդական Արևելքի ժողովուրդների մեջ. Բայց այդ՝ նրա թողած ազդեցության մի շնչին կողմն է միայն: Սկսած տասներեքերորդ դարից նրա պոեմների նմանությամբ, հենց նույն սյուժեներով ու վերնագրերով բաղմամբիվ բանաստեղծներ գրում են «Խամսե»-ներու: Այդ նմանությունների զգալի մասը անհաջող կրկնություն է միայն, սակայն կան նաև այնպիսիները, որոնք շատ մեծ զեղարվեստական արժեք են ներկայացնում: Բաղմամբիվ նմանողներից հիշենք մի քանիսին, որոնց ստեղծագործությունները համաշխարհային հռչակ են վայելում. ազրբեջանական գրականության մեջ այդպիսին է Ֆիզուլին (մեռ. 1562 թ.), յուր «Լեյլի ու Մեջնուն» պոեմով, պարսկական գրականության մեջ այդպիսին են էմիր Խոսրով Գեհլեցին (մեռ. 1325), Սելման Սավեջին (մեռ. 1377), Արզուրրահման Ջամին (մեռ. 1492), ուզբեկական գրականության մեջ՝ Ալիշեր Նավոյին (մեռ. 1502) և այլն, և այլն:

\* \* \*

Այսպես, ուրեմն, նիղամին լինելով մեծ մտածող ու բարոյախոս և ունենալով բանաստեղծական մեծ ձիրք՝ յուր անմահ ստեղծագործություններով խոշոր ավանդ է ներդրել մարդկության առաջավոր մշակույթի ոսկե ֆոնդի մեջ: Դժգոհ լինելով իր ժամանակից, դատապարտելով անհավասարության, շահագործման ու բռնության վրա հիմնված իր հասարակարգը՝ նա միջնագարի խավարի միջից յուր հայացքն է հանել դեպի ապագան: Իր ամբողջ կյանքը նվիրելով ստեղծագործելուն՝ նա անընդհատ մտորել է ժողովրդի բարօրության մասին, տառապել աշխատավոր զանգվածների շարքաշ կյանքի հա-

ար ու երազել երջանիկ հյուսիսային երկրի մասին: Եվ, ահա, այսօր, երբ բուրժուական երկրներում մշակույթն ու գրականությունը՝ սոստանալով գոլարի քաղաքականության, անկում են ապրում, ստեղծական ժողովուրդը, որ հաղթական պայքարով կերտել է արդեն անդասակարգ սոցիալիստական հասարակություն, նիղամիի դրամայան ժառանգությունը յուր արժանի գնահատականն է տալիս՝ դարձնելով ժողովրդական լայն զանգվածների սեփականությունը:

Ես ոչ ոքից փոխառություն չեմ ստացել,  
Ինչ-որ սիրտս է թելադրել, այն եմ ասել,—

գրում է նիղամին «Գաղտնիքների գանձարանում»: Սովետական ժողովուրդը բարձր է գնահատում վաստակն այն բոլոր մարդկանց, որոնց սիրտը ժողովրդի համար է բարախել:



## ԱԼԻՇԵՐ ՆԱՎՈՒ

Ավելի բան հինգ հարյուր տարի է բաժանում մեզ այն ժամանակից, երբ ապրել ու գործել է ուղբեկ ժողովրդի մեծ զավակը՝ բանաստեղծ, գիտնական և պետական գործիչ Ալիշեր Նավոին: Եվ սակայն այդ հինգ հարյուր տարին չի ջնջել պատմության Էջերից մեծ բանաստեղծի անունը, սովեր չի ձգել նրա պայծառ դեմքի վրա: Ավելին. դար առ դար ուղբեկ ժողովրդի այդ մեծ զավակի փառքը բազմապատկվել է, հռչակը տարածվել Արևելուսք, մինչև որ մեր օրերում, սոցիալիզմի դարաշրջանում ուղբեկ ժողովուրդը, Սովետական Միության բազմաթիվ եղբայրական ժողովուրդների հետ, կարողացավ ըստ արժանվույն գնահատել իր հանձարեղ զավակին, վեր հանել նրա անմահ ստեղծագործության, գրական ու գիտական-բանասիրական գործունեության բոլոր արժանիքներն ու արժանի տեղը հատկացնել մարդկության առաջավոր մշակույթը ստեղծող ու զարգացնող մեծ մարդկանց շարքում: Ալիշեր Նավոին ապրել ու ստեղծագործել է տասնհինգերորդ դարում:

Այդ դարաշրջանը ֆեոդալական հասարակության աննախընթաց զարգացման շրջանն է Միջին Ասիայում: Քրիմուրի մահվանից հետո (1305) նրա հաջորդների ժամանակ հզոր նվաճողի ստեղծած կենտրոնական պետությունն աստիճանաբար քայքայվում, բաժան-բաժան է լինում, առաջ են գալիս բազմաթիվ մանր ու մեծ իշխանություններ: Բռնի, ազգական ուժով մի պետության մեջ մտղված ֆեոդալական իշխանությունների միջև անմիջապես բուհրվում են կենտրոնախույս շարժումներ, բռնկվում ապստամբություններ ու ներքին պատերազմներ կենտրոնական իշխանության դեմ: Բայց հենց այս կենտրոնախույս շարժումները և դրանց հետևանքով ստեղծված անկախ ֆեոդալական իշխանություններն էլ դարձան այն հիմքը, որի վրա կարգանում էին տեղական ֆեոդալական իշխանությունները:

Ֆեոդալական մանրատվածությունը նպաստում էր բազմաթիվ ֆեոդալական տների առաջացմանը: Նույն Քրիմուրյանների շրջանում արգեն կային մի քանի մեծ ու բազմաթիվ մանր իշխանական տներ: Այդ բոլորը համախմբված էին երկու զխավոր ֆեոդալական կենտրոնների՝ Սամարղանդի ու Հերաթի շուրջը: Այս երկու զխավոր իշխանություններն այն նմուշներն էին, որոնց նմանությամբ կառուցվում էին ավելի փոքր իշխանական տները, որոնք վասալական կախման մեջ լինելով կենտրոնական արքունիքից, իրենց իշխանության սահմաններում բացարձակ տեր ու տնօրեն էին: Այդպիսիներից առանձնապես կարևոր են Քահլի, Մերվի, Անդիժանի, Տաշքենդի և մի շարք ուրիշ տեղերի իշխանությունները, որոնց պոլսն էին կանգնած Քրիմուրյան տոհմի անդամները: Իր բանք թեև անվանապես կառավարելիք էին համարվում, բայց իրապես այդ նահանգների տիրակալներն էին, և բոլորն էլ, ըստ իրենց հնարավորությունների ու միջոցների, ձգտում էին ոչ միայն ավելացնելու իրենց հարստությունը, այլև ամեն կերպ աշխատում էին ձեռք բերել առավել մեծ ազգական հզորություն, ինչպես և բարձրացնել իրենց արքունիքի մշակութային մակարդակը՝ կենտրոնացնելով այնտեղ անվանի բանաստեղծներին, արվեստագետներին: Բնական է, որ ֆեոդալական այս աստիճանավորումը, որի պայմաններում յուրաքանչյուր իշխանական տուն մի փոքրիկ թագավորական պալատ էր, ստեղծում էր շահագործման անսահման միջոցներ ու ձեռք: Առավել շափերի էին հասնում բազմատեսակ հարկերն ու հարկադիր աշխատանքները՝ բեկարը: Թալական է հիշել, որ ֆեոդալական կալվածքները մշակող պուղագիներին աշխատանքով էին կառուցվում քաղաքների պարիսպները, մզկիթները, մազրառանները, իշխանական պալատները, ջրանցքները և այլն: Ըստ պատմիչների տեղեկությունների, ջրանցքների վրա աշխատելու համար միայն մի իշխան աշխատանքի է հանել երեք հազար մարդ: Այս ծայրահեղ շափերի հասնող շահագործումը բնահանարար էլ ավելի էր սրում դասակարգային հակասությունները, բորբոքում պայքարը. գյուղացիությունը հաճախ էր ըմբոստանում կեղեքիչների՝ աշխարհիկ ֆեոդալների ու մուսալմանական հոգևորականության դեմ: Այդպիսի ապստամբությունները հաճախ ստանում էին կրոնական երանգավորում, բայց զրանով նրանց սոցիալական էությունը չէր փոխվում: Կրոնական բողի տակ թաքնրված էր շահագործվող դասակարգերի դասակարգային պայքարը ֆեոդալական վերնախավի դեմ: Իրև օրինակ այդպիսի շարժման, ֆեոդալական վերնախավի դեմ: Իրև օրինակ այդպիսի շարժման, կարելի է հիշել Մուշաշաի շարժումը 1441—42 թթ. Խուժիստա-



նում, որ ընդգրկել էր ժողովրդական լայն զանգվածներին: Շարժման զործոն մասնակիցների թիվը հասնում էր 10000 մարդու. ապստամբությունը այնպիսի սպառնալից ընթացք էր ստացել ֆեոդալների համար, որ ընդհանուր շահերից զրգված, մի նահանգի իշխանը առանց սպասելու հարեան իշխանի հրավերին և առանց նրա Թուլլավությունը խնդրելու, զորքով մտնում էր նրա տերիտորիան և օգնում ապստամբությունը ճնշելուն: Ժողովրդական մի այլ ապստամբություն հայտնի է նույն ժամանակաշրջանում սուլթան Հուսեյնի գահ բարձրանալու (1469) շրջանում: Այն ժամանակ, երբ Սուլթան Հուսեյնը զբաղված էր ապստամբների դեմ կռիվով, նրա վեզիր Աբդալլահը գիվանի պաշտոնյա խոջա նիզամ էդ-Գին Բախտիար Սեմանիի հետ Հերաթում նորանոր հարկեր էր դնում ժողովրդի վրա և էլ ավելի ծայրահեղության հասցնում կեղեքումը: Այլևս չկարողանալով տանել կեղեքման ծանրությունը՝ Հերաթի ժողովուրդը սուբի ելավ, սկսվեց ժողովրդական ապստամբությունը: Սուլթան Հուսեյնը լսելով այդ՝ իր առանց այն էլ հուզված պետության մեջ այդ պահին ապստամբությունը ճնշելու միակ հարձար միջոցը համարեց պատժել պալատական կեղեքիչին և գրանով շահել ժողովրդի համակրանքը: Նա ուղարկեց Ալիշեր Նավոնին, որ իր ճամբարումն էր, գործը քննելու, հանցավորներին պատժելու և ժողովրդին խաղաղեցնելու համար:

Ալիշեր Նավոնին իրոք որ հանգամանորեն քննեց եղելությունը, համոզեց ժողովրդին, որ մեղավորները կպատժվեն, և մի քանի օր հետո անձամբ կարգաց սուլթանի հրամանը՝ խոջա նիզամ էդ-Գինին պատժելու մասին:

Այդ շրջանում ֆեոդալական բաղմամբով մանր ու մեծ կենտրոններ աստիճանաբար դառնում էին արհեստագործության ու առևտրի կենտրոններ: Արհեստների, արվեստների ու առևտրի զարգացման դուզրնթաց հենց նույն դարաշրջանում զարգանալ սկսեցին նաև ճշգրիտ գիտությունները, հատկապես աստղաբաշխությունը, մաթեմատիկան: Գրա լավագույն ապացույցն է այն, որ նույն դարում Ուլուգբեկի օրոք (1409—1449) հիմնվեցին հրշակավոր աստղադիտարանը և Սամարղանդի հայտնի մադրասան (դպրոցը), որտեղ, ինչպես հաստատել են սովետական արևելագետները, ուսուցանում էին ոչ միայն աստվածաբանական ու բանասիրական, այլև ճշգրիտ գիտություններ, իսկ այս պայմանավորված էր բաղաբային կյանքի զարգացմամբ՝ ճշգրիտ գիտությունները պետք է բավարարեին զարգացող արհեստագործության աճող պահանջներին: Հերաթում առանձնապես զարգացան ար-

վեստները, առավել աչքի ընկան գրականությունը, մանրանկարչությունը, կերպարվեստը և վայելագործությունը:

\* \* \*

Ալիշեր Նավոնին ծնվել է 1441 թ. փետրվարի 9-ին, Հերաթում: Նրա հայրը պալատական պաշտոնյա էր սուլթան Աբուլկասիմ Թարբուրի արքունիքում: Նավոնին ձեռք էր բերել այդ ժամանակի համար կատարյալ կրթություն: Նա պալատական ղեկավար պաշտոնյա զարձավ արդեն լիովին կազմակերպված աշխարհայացքով:

Տիրելով սուլթանական գահին՝ Հուսեյնի Բալկարան 1472 թվականին նշանակեց Նավոնին վեզիր՝ տալով էմիրի տիտղոս: Այս շրջանում է, որ Ալիշեր Նավոնին ձեռնամուխ եղավ իրագործելու իր հումանիստական պլանները և որոշ բարեփոխումներ մտցնելու երկհումանիստական պլանները և որոշ բարեփոխումներ մտցնելու երկհումանիստական պլանները խիստ ընդարձակ էին: Նախ, չափազանց բարձր գնահատելով դաստիարակության ու գիտության դերը՝ նա անհրաժեշտ էր գտնում ծավալել ժողովրդական լուսավորությունը, ինչպես նա էր ասում՝ յուրաքանչյուր ղշլաղում, քաղաքների յուրաքանչյուր թաղում անհրաժեշտ է հիմնել դպրոց, որպեսզի ամբողջ ժողովուրդը գրագիտություն ձեռք բերի:

Ականատես լինելով աշխատավոր ժողովրդի կեղեքմանը, նա հորդորեց ու կարողացավ համոզել սուլթան Հուսեյնին՝ որոշ շափով թեթևացնել հարկերը: Նրա նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ Թուսի գավառում կառուցվեց 70 կիլոմետր երկարությամբ մի ջրանցք, որով ջուր ստացան մինչև այդ ամաչի ու անմշակ մնացած հսկայական տարածություններ:

Նավոնին հատկապես պահանջում էր խստորեն պատժել կաշառակերությունը, որ անասելի չափերի էր հասել: Ի վերջո, Նավոնին տեսնելով, թե ինչպես ժողովուրդը կեղեքվում է նաև առևտրականների կողմից, որոնք ապրանքները տասնապատիկ բարձր գներով էին վաճառում առանց այն էլ թշվառ վիճակում ապրող ժողովրդին, պահանջեց խստորեն հետևել շուկայի գներին և որոշ կարգավորման ենթարկել առևտուրը:

Ֆեոդալական վերնախավը ոչ միայն գիմադրում էր Նավոնի բարեփոխություններին, այլև նրա մեջ առնում էր իր հակառակորդին ու ձգտում ասպարեկից հեռացնել նրան: Եվ այդ հաջողվեց ամեն կարգի զավերի ու խարդավանքների հմուտ պալատականներն ու կալվածատերերը կարողացան կասկած հարուցել սուլթան Հուսեյնի մեջ Նավոնի նկատմամբ, ապա և համոզել, որ նա իբրև թե



պետական հեղաշրջում է պատրաստում՝ կամենալով տիրանալ գահին, Սուլթան Նուսրեդ Ենթարկվեց նրանց ազդեցությանը և աստիճանաբար հեռանալով յուր հին ընկերոջից ու հմուտ վեպրից՝ ի վերջո հեռացրեց նրան պետության ղեկավարի պաշտոնից 1476 թ.:

Մեկուսացած պետական գործերից, հետո պալատական միջավայրից՝ Նավոին նվերվեց զրական աշխատանքի, Գեռես վեզիր եղած ժամանակ նա իր շուրջն էր համախմբել բազմաթիվ անվանի բանաստեղծների, գիտնականների ու բանասերների, հանձնարարել էր նրանց պատմական-ժամանակագրական աշխատություններ կազմել, մեկնաբանություններով ու բացատրություններով օժտել հին գիտական աշխատությունները և այլն: Նա ամեն կերպ նրպաստել էր մանրանկարչության, երաժշտության ու վախճանարվեստի զարգացմանը՝ խրախուսելով մասնագիտներին: Այժմ, երբ արդեն ազատ էր պետական գործերից, նա ինքն էլ նվերվեց գրականության և հենց այս շրջանում ստեղծեց իր հինգ պոեմները, որոնք կազմում են մի ժողովածու՝ Հնգամասյան (Խամսե) ընդհանուր խորագրով: Այդ միջոցին նա մտերմացավ ժամանակի պարսիկ խոշորագույն բանաստեղծ Աբդուռահման Ջամիի հետ (1414—1492), որ մեծ հուշակ էր վայելում ամբողջ արևելյան մահմեդական աշխարհում: Այս մտերմությունը մեծ նշանակություն ունեցավ Ալիշիր Նավոիի համար. Ջամին ոչ միայն բանաստեղծ էր, այլև փիլիսոփա, և ահա նրա օգնությամբ Նավոին ծանոթացավ մուսուլմանական փիլիսոփայությանը, առանձնապես պանթեիզմին:

Չղադարելով երկրի բարեկեցության մասին մտահոգվելուց՝ Նավոին այժմ իր ստեղծագործությունների միջոցով էր քարոզում իր քաղաքացիները և քննադատում ֆեոդալական վերնախավի անսանձ կամայականությունները, բռնություններն ու անիրավությունները: Կարճ ժամանակում նա, որպես բանաստեղծ, ժողովրդական լայն զանգվածների սիրելին դարձավ: Բայց հենց որսնով էլ ավելի ևս գրգռեց իր հակառակորդներին. պալատական պաշտոնյաներն անհանգստացած էին նույնիսկ այն բանից, որ նա իրենց բաղաբույն էր դնում և իր գրվածքներով մերկացնում իրենց շարագործությունները, ուստի և ամեն ջանք գործադրում էին նրան Հերաթից հեռացնելու համար: Քաղաքից ուղղակի արտոթի դժվար էր այն պարզ պատճառով, որ քաղաքացիների մեջ ունեցած նրա հեղինակությունը անախորժությունների տեղիք կարող էր տալ՝ գրգռելով նրան համակրողների մեծ բազմությունը: Մտնում էր միայն ավելի զգուշ ու քողարկված ձևով հեռացնել նրան:

Գրա համար էլ սուլթանին համոզեցին նշանակել նրան որևէ պալատի կառավարիչ: 45 տարեկան հասակում Նավոին նշանակվեց հեռավոր ու խուլ ծայրագավառներից մեկի՝ Աստրաբադի կառավարիչ:

Այստեղ էլ նա իր ամբողջ եռանդը նվիրեց և՛ պաշտոնական գործերին, և՛ գրական գործունեության: Սակայն հայրենիքի կարոտը, մտերիմների ու արվեստակիցների շրջանից մեկուսացած լինելը տանջում էին նրան: Եվ պատահական չէ, որ իր օգտակար ձեռնարկումների ձախողումը տեսած, օտարության մեջ ստապող բանաստեղծը հենց այս շրջանում գրել է այն բանաստեղծությունները, որոնք տողարկված են խորք վշտով ու հոռետեսությամբ: Բայց այդ անհաջողություններն էլ չկարողացան հուսահատեցնել նրան: Նա դարձյալ ձգտում էր վերադառնալ Հերաթ և ի կատար ածել իր ծրագրերը, մինչդեռ նրա հակառակորդները ո՛չ միայն աժակ իր ծրագրերը, մինչդեռ նրա հակառակորդները ո՛չ միայն աժակ կերպ արգելեցին հանդիսանում դրան, այլև ձգտում էին ֆիզիկապես ոչնչացնել թունավորելով նրան: Այս ստոր շարագործությունից Նավոին այնպես զայրացավ պալատական միջավայրի դեմ, որ իրեն ազատ համարեց իր գործողությունների մեջ ու այլևս չհնազանդվեց արքունական հրամանին: Ինքնակամ կերպով նա վերադարձավ հայրենի քաղաքը և վերջապես սուլթանից իրավունք ստացավ մնալ այնտեղ: Ավելին. սուլթան Նուսրեդ կրկին բարյացակամորեն վերաբերվեց նրան և շնորհեց «նորին գերազանցություն մերձավոր» պատվավոր տիտղոսը, իսկ հետագայում նորից նշանակեց վեպիր:

Սակայն դա այլևս չի ոգևորում նրան. շնայած բարեկամական վերաբերմունքին, սուլթանն այնուամենայնիվ չի ընդառաջում նրա ձեռնարկումներին. նա չի կարողանում ոչ մի բարեփոխություն կատարել: Մյուս կողմից՝ պալատականների դավադրություններն ու խարդավանքները շարունակվում են. 1949 թ. պետական դավադրության մեջ ամբաստանվելով՝ մահապատժի է ենթարկվում նրա կրտսեր եղբայր Հայդարը: Բանաստեղծը վերջնականապես հուսախաբվում է և որոշում ընդմիշտ հրաժարվել պետական գործերից ու հեռանալ հայրենի քաղաքից՝ ուխտագնացության պատրվակով, բայց այս ևս չի հաջողվում. 1500 թ. սուլթան Նուսրեդը զորքով շարժվում է իր ապստամբ որդու դեմ՝ Հերաթի կառավարումը հանձնելով Ալիշիր Նավոիին և մի ուրիշ պալատականի: Զսպելով որդուն և հաշտվելով նրա հետ՝ սուլթանը վերականգնում է մայրաքաղաքը. քաղաքի մեծամեծները, այդ թվում և նավոին, ըստ սովորության ընդառաջ են գնում սուլթանին՝ մեծ







Յե մարդ ես դու, այս աշխարհում  
մարդ մի՛ կոչիր բոլոր նրանց,  
Ովքեր անհոգ, անաարթեր են  
ժողովրդի վշտին անանց.—

ասում է նավոթին այդ պոեմում: Եվ այս խոսքերը միանգամայն համապատասխանում են այն խրատներին ու հորդորներին, որ տվել է բանաստեղծը սուլթան Հուսեյնին: Ասարաբազում եղած ժամանակ սուլթանին զրած նամակում նավոթին ասում է.

Օգնի՛ր երկրիդ խեղճ ու թշվառ ժողովրդին,  
Արդարությամբ բող երկիրդ ծաղկի՛ կրկին:

Այս հումանիզմով, խոր ժողովրդասիրությամբ, արգարության ու բարության ոգով է համակված «Արդարների սքանչացումն»: պոեմը, որ բանաստեղծի տեսական-քաղաքական հայացքների գեղարվեստական շարադրությունն է:

Երկրորդ պոեմն է «Լեյլի ու Մեջնունը»: Ինչպես նիզամիի մոտ, այնպես էլ այստեղ պոեմի սյուժեն արաբական ավանդությունն է Լեյլիի ու Մեջնունի դժբախտ սիրո մասին: Հարազատ մնալով ավանդությանը հիմնական կետերում՝ նավոթին տվել է նրան բոլորովին նոր շունչ, նոր բովանդակություն և ստեղծել մի ինքնուրույն երկ, որ իրավամբ արվեստի գեղեցիկ նմուշներից մեկն է համարվում: Շոշափելով երեկու սիրահարների դժբախտության պատճառները, ստեղծագործության առանցքը դարձնելով փոխադարձ, ազատ սիրո պրոբլեմը՝ բանաստեղծը ցույց է տալիս, թե ինչպես դժբախտ սիրահարների ազատ ու անկեղծ զգացումները հակադրվում են ֆեոդալական հասարակության մեջ ամբողջած ավանդությունների սառույցին և չկարողանալով հաղթահարել դա՛՛ դժբախտանում են սիրահարները: Բանաստեղծը բողոքում է քուրացած, վնասակար ու անհատի ազատ զգացումները կաշկանդող ավանդությունների ու հասարակական կարծիքի դեմ, բննդատում աղքատ ստրկական վիճակը իր դարաշրջանում, երբ կինը պարզապես ապրանք էր ազամարդու համար, երբ աղքիկը ծնողների համար անտրական գործարքի առարկա էր: Այդ իրողության դեմ է բողոքում անհա բանաստեղծը՝ քարոզելով ազատ ընտրություն և փոխադարձ սեր: Մեջնունի բերանով նա փառաբանում է սիրո անպարտելի գործությունը: Ամբողջ էությունը համակված խոր, ազնիվ ու անսահման սիրով, Մեջնունը դիմելով աստծուն՝ չի խնդրում

նրանից մոռացում, սիրո տանջանքներից ազատում, ոչ էլ երջանկություն՝ առանց սիրեցյալ աղքեկա՛ Լեյլիի, այլ, բնդհակառակը, խընդրում է է՛լ ավելի բորբոքել իր մեջ սիրո կրակը, որի բաղցր զգացումների առջև ոչինչ են դժոխքի պատիժներն ու զբախտի ապատիկ վաշխըները: Նա գերազասում է սերը դրախտից՝ ըմբոստանալով մահմեդական կրոնի պատվիրանների դեմ.

Մարդիկ ասում են. «Երջանիկ եղի՛ր,  
Սերը մոռացի՛ր, Լեյլուն մի՛ եիշիր»:  
Անպատիվ խոսքեր... Անճճ ու ծաղրա՛նք.  
Բարձրալը մի՛թե կեների դրանք:  
Ազալում եմ, ան՛՞ր, առավել լցու  
Սափօրը վշտիս՝ հուր գինով սիրո:  
...Երբ ինձ օհհասի աագնապը տիբի,  
Թո՛ղ արտասանեմ՝ «Լեյլի՛, ի՛մ Լեյլի՛»:  
Նքե կամե՛նա կյանք տալ ինձ կրկին,  
Թո՛ղ շնչեմ ծովսը Լեյլիիս գյուղի,  
Նքե դժոխքին արժանի եմ ես,  
Վառի՛ր դժոխքը սիրով Լեյլիիս,  
Իսկ քե դրախտո՛ւմ ես ինձ անց տալու  
Իրա փոխարեն աս՛՛ր ինձ իմ Լեյլուն:

Այսպիսի խոսքերով է դիմում աստծուն այն մարդը, որին հանձնարարված էր աստծուն ազաշել, որպեսզի նա սիրո մոլուցքից իրեն ազատի և բուժի: Իսկ սա ըմբոստացումն էր հասարակական կաշկանդիչ կարծիքի դեմ, ըստ որի ազատ սերը հիվանդություն էր, խնդադարություն: Պոեմի խոր հուզականությունը, զգացումների շերտությունն ու վեհությունը և գեղարվեստական բարձր մշակումը դարձնում են այս ստեղծագործությունը մի հույակապ կոթող, որ կարող է դասվել դրականության լավագույն նմուշների կողքին:

Երրորդ պոեմը «Ֆարհադ ու Շիրինն» է: Այս ավանդությունը, որ կազված է Իրանի թագավոր Խոսրով Փարվիզի անվան հետ, մըշակել է գեռես Ֆիրդուսին «Շահ-նամեի» մեջ: Նիզամին հիմնովին վերամշակելով «Շահ-նամեի» այդ հատվածը՝ բոլորովին այլ կերպարանք է տվել դրան. նիզամիի պոեմը, որ կրում է «Խոսրով ու Շիրին» խորագիրը, հաղթական սիրո գովքն է: Ալիքեր նավոթի պոեմը բոլորովին այլ բնույթ ունի: Նավոթին վերակառուցում է նախ և առաջ սյուժեն, թեև դարձյալ սիրո պրոբլեմը առկա է, բայց հիմ-



նական տեղը դրավում է հերոսական աշխատանքի փառաբանությունը: Քննադատորեն մտտեմալով նախորդների մշակումներին՝ նավոին գտնում է, որ Խոսրովի նման արքայազնը չի կարող դրական հերոս լինել: Նա, որ սովոր է կանանց համարել հաճույքի առարկա, որ առաջին իսկ հանգիստ գեղեցկուհու հետ կարող է դավանանել սիրեցյալին, որ ժողովրդին դիտում է որպես իր հորքստության աղբյուր և ամեն կարգի բռնությունների ընդունակ է, չի կարող լինել ղեկավարական հրկի դրական հերոս: Եվ իրոք նավոին իր ստեղծագործության մեջ ներկայացնում է Խոսրովին իբրև բացասական կերպար, որպես բռնակալ, նենգ, խորամանկ ու ստոր թագավոր: Դրան հակառակ, նա ներկայացնում է Ֆարհադին որպես դրական հերոս, դարձնելով նրան իր հրկի կենթանական ղեկավար: Սրանով էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ նա փոխում է նաև պոեմի վերնագիրը, դարձնելով «Ֆարհադ ու Շիրին»: Ֆարհադը չինական ասպետ է, խաբանի որդին: Երազում տեսնելով անժանոթ գեղեցկուհուն՝ Շիրինին ու սիրելով նրան, բաղձաթիվ խոչընդոտներ ու դժվարություններ հաղթահարելով՝ արքայորդին կարողանում է հասնել որոնած գեղեցկուհուն: Պաշտաստանի արքայադուստրն է, ղեկատեսիլ Շիրինը: Վերջինս նույնպես սիրում է Ֆարհադին, որը դյուցազնական ջանքերով հոյակապ ամրոց էր կառուցել սիրեցյալ արքայազատեր համար: Բայց ղեկաբերն արգելակում են նրանց ամուսնությունը: Իրանի թագավոր Խոսրովը, որ նույնպես կամենում էր ամուսնանալ Շիրինի հետ, մեծ զորքով հարձակվում է Հայաստանի վրա: Մոռանալով անձնական հոգսերը՝ Ֆարհադը հերոսաբար դիմադրում է Հայաստանը ավերող Խոսրովին, բայց վերջապես գերվում է ու զոհվում: Հայաստանի թագուհի Միհին-բանուն անօգնական վիճակում մնալով՝ հարկադրված է լինում Խոսրովին հանձնել պաշարված քաղաքը: Խոսրովը կամենում է ամուսնանալ Շիրինի հետ: Բայց հարազատ որդին՝ Շիրունն սպանում է հորը, փորձելով տիրել Շիրինին: Շիրինը հավատարիմ մնալով իր անբիծ զգացումներին, որոնում է Ֆարհադի դիակը, գտնում, ամփոփում դամբանում և ինքն էլ մեռնում սիրեցյալ դյուցազնի դիակի մոտ: Ֆարհադի ընկեր Բահրամը՝ որոնելով Ֆարհադին՝ գալիս է Հայաստան, իմանում ամբողջ իրողությունը և Խոսրովի արշավանքից կործանված Հայաստանում կարգ ու կանոն հաստատում:

Այս ստեղծագործության մեջ նավոին ներկայացնում է հակադիր կերպարների երկու խումբ, երկու աշխարհ: Մի կողմում կանգնած են Ֆարհադը, Շիրինը, Բահրամը, Շահուրն ու Միհին-բանուն, մյուս կողմում՝ Խոսրովը, նրա որդի Շիրունն ու կախարհը: Ֆարհադը, ինչպես ներկայացնում է նավոին, դյուցազն է, նրա բնավորության բնորոշ գծերն են հերոսությունը, արկածախնայությունը, անձնվիրությունն ու ժողովրդասիրությունը: Ստեղծագործ աշխատանքը նրա սխրագործությունների աղբյուրն է: Նա ապրում է ժողովրդի կյանքով, հոգ տանում նրա մասին, իսկ անհրաժեշտության դեպքում նաև իր կյանքը զոհում ժողովրդի համար, ըստ որում նա չի ձանաչում կրոնների, ազգերի ու ցեղերի խարություն: Նա ամենուրեք գտնում է իր ցանկալի, հարազատ ընկերը, մարդունկատմամբ ունեցած նրա անսահման սերը, անշահախնդիր ընկերությունը, անձնվիրությունը ընկերներին՝ այնպիսի հատկություններ են, որ նրան սիրելի են դարձնում բոլոր նրանց, ովքեր զնահատում են մարդուն: Եվ երբ այս բոլորին միանում է նաև զաղափարների ու զգացումների համապատասխանությունը, ապա պարզ է, որ ընկերությունն անխախտ պիտի լինի: Հենց այս համապատասխանությունն էլ երկու հերոսների՝ Ֆարհադի ու Շիրինի սերը հիմքն է: Շիրինը Ֆարհադի մեջ ամենից առաջ տեսնում է այն մարդուն, որ վե՛հ է իր զգացումներով, վսեմ՝ իր ձգտումներով, հաստատակամ ու հետևողական՝ իր գործողությունների մեջ, ձեռնեցեց, բոլոր խոչընդոտներն արհամարհող ու գժվարությունները հաղթահարող: Նա կատարյալ մարդ է. և այս բանն ուղղակի ասում է Շիրինը:

Լոկ սիրածիս չեմ ես ձգտում,  
Այլ նախ ազնիվ, վսեմ մարդուն:

Այսպես է պատասխանում նա Խոսրովին՝ սուրհանդակների միջոցով: Այլընտրանքով էլ արգեն ձգտում էր ներկայացնել իսկական մարդուն՝ ի զեմս Ֆարհադի: Եվ ոչ միայն այդ. Ֆարհադի շուրջը նա համախմբում է «խսկական մարդկանց», որոնք իրենց զգացումներով, զաղափարներով, ժողովրդասիրությամբ ու մարդկայնությամբ համապատասխանում են նրան: Որքա՛ն ներդաշնակ են Ֆարհադի կերպարին Շիրինի, Շահուրի ու Բահրամի կերպարները, որքա՛ն հարազատ են դրանք միմյանց, և որքա՛ն ամուր է նրանց բարեկամությունը: Մտքերի, հույզերի, ձգտումների միասնությունը, գործողությունների ու նպատակների միությունը,



անասան կամքը, անհուն հոանդն ու աշխատանքն են կոտիչ այդ բարեկամութիւնը, իսկ այսպիսի բարեկամութիւնն ու համագործակցութիւնն է, որ հատուկ է ժողովրդին, և նավոին հանձարեղ կերպով կարողացել է գտնել այն տարրերը, որոնցից բաղադրվում և որոնցով ամբողջանում է ժողովուրդների բարեկամութիւնը: Եվ պատահական չէ, որ այս անձնվեր բարեկամների միջոցով հեղինակը սիմվոլիկ կերպով ներկայացնում է տարբեր ժողովուրդների բարեկամութիւնը: Յարճազը չինական արքայազն է, Շիրինը՝ հայուհի, Շահփուրը՝ պարսիկ, բայց նրանք միասնական են իրենց գործողութիւնների մեջ, որովհետև նրանց բարեկամութիւնը հիմնված է փոխադարձ սիրո, անձնվիրութեան և զազափարների, ձգտումների ու զգացումների միասնութեան վրա: Պարսիկ է Շահփուրը, բայց նա Յարճազի հետ պաշտպանում է հայ ժողովրդին, կովում պարսից արքա Խոսրովի դեմ և այդ կոփք է՛լ ավելի է ամրապնդում նրանց բարեկամութիւնը: Սա հիանալի դրսևորումն է ժողովուրդների բարեկամութեան: Խոր հուզականութեամբ են տողորված այն հատվածները, որոնց մեջ նավոին նկարագրում է երեք տարբեր ժողովուրդների զավակների բարեկամութիւնը: Իսկ այս հնարանացիոնաշիզմը հեղինակին բարձրացնում է անցյալի ամենաառաջավոր մտածողների աստիճանին:

Եվ որքան վեհ է այս բարեկամութիւնը, որքան վսեմ ու գեղեցիկ են այս կերպարները, այնքան ավելի նողկալի և ստոր են դանում Խոսրովը և նրա շրջապատը: Ի հակադրութիւն առաջինների՝ Խոսրովը զաթան բռնակալ է, ժողովրդի կեղծքիչ, նա ըստըրկացնում է թույլ ու անպաշտպան ժողովուրդներին, նա պատրաստ է մի ամբողջ երկիր կործանել ու ժողովրդին թշվառութեան մատնել իր քմայքներին ու վաշխախորութեանը բավարարութիւն ապառ համար: Նա անազնիվ է, խարերա, տմարդի, նրա համար չկա որևէ սրբութիւն. նրա համար որևէ արժեք չունեն ո՛չ սերը, ո՛չ բարեկամութիւնը. նրա առաջնորդը իր իսկ քմահաճույքն է: Նա ևս ունի մերտիմներ, իր միջավայրը: Բայց նրա մտերիմներն էլ իր նման են: Ահա նրա գործակիցը՝ կախարգ կինը. դա մի ճիվաղ է՝ զուրկ մարդկային որևէ հատկութիւնից: Կախարգանքով նա հորը դարձնում է հարազատ աղջկա ամուսինը, իսկ մորը՝ հարազատ որդու կինը. կախարգանքով է սպանում նաև Յարճազին: Դրանից չի տարբերվում նաև նույն միջավայրի երրորդ ներկայացուցիչը՝ Խոսրովի որդի Շիրուին: Նա իր հոր արժանի զավակն է. նա ևս ոչ մի միջոցի առջև կանգ չի առնում իր քմայքներն իրագործելու համար. նրա համար նույնպէս որևէ սրբութիւն գոյութիւն չունի: Եվ պատահական չէ,

որ Շիրինին տիրանալու համար նա սպանում է հարազատ հորը: Ահա մարդկային կերպարանքից զուրկ, հոգեպես ալլանդակ այս կերպարներն են հակադրվում Յարճազին ու նրա միջավայրին: Ինչպէս տեսնում ենք՝ մեծ բանաստեղծը վերամշակելով արդեն իսկ մշակված սյուժեն՝ բոլորովին նոր բովանդակութիւն է դրել նրա մեջ, դարձրել մի նոր որակ: Հանելով սիրո շրջանակներից՝ նավոին Յարճազի ու Շիրինի պատմութեանը սոցիալական խոր բովանդակութիւն է հաղորդել, շոշափել համամարդկային պրոբլեմներ և այդպիսով մի նոր աստիճանի հասցրել այն: Ահա թե ինչու ուզեցի ժողովուրդն առանձնապէս բարձր է գնահատում այս ստեղծագործութիւնը. Յարճազը ուղբեկ ժողովրդի սիրելի հերոսն է դարձել:

Չորրորդ ստեղծագործութիւնը, որ մտնում է Խառնի մեջ, կրում է «Յոթ մուրախ» վերնագիրը: Այս ստեղծագործութեան սյուժեն նույնպէս վերցված է պարսկական էպոսից և մշակման է ենթարկվել նախապէս Ֆիրդուսու, ապա Նիզամիի և Խոսրով Գեշլիի կողմից: Սակայն այստեղ էլ նավոին միանգամայն ինքնուրույն, քննադատական մտեցում է ցուցաբերել: Ամենից առաջ նա քննադատում է նախորդների մոտեցումը. նրա կարծիքով դրական հերոս չի կարող լինել այն թագավորը, որ անձնատուր եղած կյանքի վաշխքներին՝ իր ամբողջ ժամանակն անց է կացնում որսորդութեան, կերուխումի ու սիրային արկածների մեջ և ժողովրդին թշվառութեան մեջ պահում: Նա դատում է, որ այդպիսի թագավորի մասին գրել անգամ չարժէ, ուստի և վերականուցելով ավանդութիւնը՝ նպատակ է դնում ցույց տալ, թե ինչպէս փառաբանված, բարի ու արդար թագավորը կործանման է հասնում իր անհոգութեան ու մոլի հակումների շնորհիւ: Պոեմի հերոսը՝ Իրանի թագավոր Բահրամը չախաբախում է թշնամիներին, երկրում խաղաղութիւն է հաստատում և իրեն է ենթարկում յոթ երկրների թագավորներին: Նա սիրում է ժողովրդին, հոգ տանում նրա մասին և իր հեղափոխը դարձնում:

Երջանկություն ապլ եմ ուզում ժողովրդին,

Արգաւորքամբ տիեղ երկրին ու գանին:

Այսպէս է բնորոշում նա իր նպատակը և այս սկզբունքով էլ կատարում է երկիրը: Բայց մի տեղում, որսի ժամանակ նրան հանդիպում է հռչակավոր նկարիչ Մանին ու մատուցում Չինաստանից հատկապէս նրա համար բերած իր նվիրը՝ գեղեցիկուհի



Գիլարամի պատկերը, որ ինքն էր նկարել: Բահրամը հմայվում է Գիլարամի գեղեցկությամբ. Մանիից տեղեկանալով, որ նա մի շին հարուստի որդեգրուհին է, գնում է գտնելու նրան: Գիլարամն իսկապես հմայիչ էր իր գեղեցկությամբ ու կախարական ձայնով: Բահրամն ամբողջապես տարվում է նրանով և անհոգության մատնում երկրի գործերը: Շուտով ծաղկած երկիրը բայքայման է հասնում. ժողովուրդը դժգոհում է: Բայց Բահրամը ոչ մի բանի ուշադրություն չի դարձնում: Նա իր ամբողջ ժամանակն անց է կացնում Գիլարամի հետ՝ որսորդության, կերուխումի ու սիրային վայելքների մեջ: Մի անգամ էլ, ահա, որսորդության պահին, երբ նա զովում է նեոտաձգության մեջ ունեցած իր գերազանց հմտությունը, Գիլարամը խնդրում է, որ նա մի նետով հարվածի հղնիկի երկու ոտքին, իսկ մշուտով՝ վզին, և սպանի նրան: Բահրամը անվրեպ կատարում է այդ. բայց Գիլարամը փոխանակ հիացմունքի խոսքեր ասելու, հայտնում է, թե ամեն մարդ էլ, եթե վարժվի, կարող է այդ անել: Բահրամը բորբոքվում է այս խոսքերից և մոլեգին ցածման մեջ կառկել է տալիս Գիլարամի ձեռքերն ու ոտքերը: Հետևյալ օրն իսկ նա զղում է, բայց Գիլարամն անհետացել է. իզուր է նա փնտրում սիրեցյալ գեղեցկուհուն: Եվ ահա այն հզոր արքան, որ երկրներ էր նվաճում, պարսվում է սիրուց: Անսահման սերն ու անհուստությունը նրան խելագարության են հասցնում: Պալատականների ձեռնարկած բոլոր միջոցները՝ նրան խելքի բերելու համար, ապարդյուն են անցնում: Վերջապես կառուցում են նրա համար յոթ գլխակ, բուրն էլ տարբեր գույներով. յոթ երկրների թագավորները Բահրամին կնություն են տալիս իրենց աղջիկներին: Յուրաքանչյուր զղյակի կահույքը, հագուստները և նույնիսկ գինին համապատասխանում են զղյակի գույնին. շաքաթվա լուրացանչուր օրը Բահրամը պետք է անցկացնեք մի զղյակում՝ կերուխումի ու հանույքների մեջ: Բայց սա էլ չի օգնում: Գիշերները նա լուսացնում է անքնությունը. և գիշերային տառապանքները մեղմելու համար ամեն գիշեր նրա մոտ են բերում մի ճանապարհորդի և ստիպում են նրան պատմել որևէ բան՝ թագավորին զրաղեցնելու համար: Ակսվում է յոթ հավելագիր նովելների շարանը, որոնց մեջ վառ զույներով ներկայացվում են կյանքը՝ յուր հոսի կողմերով, կեղեքումները, իշխողների բռնությունները, ժողովրդի ծանր վիճակը և ալին: Ճանապարհորդներից մեկը պատմում է Բահրամի ու Գիլարամի արկածները և հայտնում, որ Գիլարամը գտնվում է Զինաստանում, իր հոր մոտ: Բահրամն այս պատմվածքը լսելով՝ բուժվում է խելագարությունից և նորից բերել է տալիս Գիլարա-

մին իր մոտ: Կրկին երկու սիրահարները գտնում են իրար. Բահրամը նորից վերականգնում է իր սովորությունները՝ որսը, զվարճությունները, վայելքները: Եվ մի անգամ էլ որսորդության ժամանակ, իր պալատականների ու զորքի հետ գետնի աակն է անցնում:

Ինչպես տեսնում ենք, Նավոին իր հիմնական նպատակն է ունեցել՝ ցուցադրել մոլի թագավորի անփառունակ վախճանը: Բայց հենց այս րեղհանուր ֆոնի վրա նա ներկայացրել է բազմաթիվ այլ պատկերներ, որոնք կազմում են միջանկյալ նովելները: Այստեղ էլ հեղինակը բննազատում է իշխողների զաժանությունները, նկարագրում ժողովրդի վիճակը. այստեղ էլ նա իրար է հակադրում երկու կարգի կերպարներ. խտացած գույներով է կերտում նա Բահրամի, արշունարբու ծովահեն Ջաբիրի, գաժան Ջայսուրի ու Մալլալի, արդարության, բարության ու մարդասիրության թրշնամի Մասուդի կերպարները և զրանց հակադրում գլուցազուն Սուհեյլին, իր ժողովրդին ու հայրենիքին նվիրված, «մարդկության բարեկամ» Ջանին և ուրիշներին:

«Տեսնենք» հինգերորդ և վերջին պոեմը «Ալեքսանդրյան պարիսպն» է: Այս պոեմը, որ յուր թեմայով ու ծավալով նախորդներից շատ ու շատ մեծ է, վերաբերում է Ալեքսանդր Մակեդոնացու կյանքին ու գործունեությանը, ինչպես նիգամիի «Իսթանդուր-նամեն»։ Ամփոփելով իր մտքերն ու գաղափարները և միանգամայն հարմար հերոս ունենալով ոչ միայն պետության կառավարման, այլև փիլիսոփայական հարցերի մասին իր համոզմունքները արտահայտելու համար, Նավոին ամբողջական կերպով այս երկում արտահայտում է իր գաղափարները: Նա հետեոզականորեն արտահայտում է իր տեսակետները երկրի կառավարման, թագավորի քրավունքների և ժողովրդի առջև ունեցած պարտականությունների մասին, Ալեքսանդրին էլ ներկայացնում է իբրև այդ գաղափարների կրողն ու գործադրողը: Այստեղ էլ Նավոին հանգես է գալիս իր անասման ժողովրդասիրությամբ, արդարասիրությամբ ու մարդասիրությամբ: Այս երկը համեմատաբար նվազ ուշադրության է արժանացել արևելագետների կողմից. բայց հենց այս ստեղծագործությունն է, որի մեջ ավելի ամփոփ ու ամբողջական կերպով են արտահայտվել նրա տեսական սկզբունքները, առաջագիմական գաղափարները: Ուստի և այս ստեղծագործությունը հսկայական նշանակություն ունի նրա աշխարհայացքի ամբողջական ուսումնասիրության համար:



վերը հիշված հինգ պոեմները կազմում են միայն մի ժողովածու՝ «Նամսեն», որ և նրա գրական ժառանգության մի մասն է։ Քացի գրանից նա ունի ևս մի պոեմ՝ «Քոչունների լեզուն» և բանաստեղծությունների շորս ժողովածու։ Այս բոլորի մեջ էլ նավոին հանգես է գալիս իբրև իր առաջադիմական գաղափարների հետեւողական քարոզիչ, իբրև մեծ հումանիստ և իբրև զեղարվեստական խոսքի մեծ վարպետ։ Բանաստեղծական տեխնիկայի կատարելությունը, պատկերների ճոխությունը, լեզվական արվեստի վարպետությունը, որ ցուցաբերել է նա իր ստեղծագործությունների մեջ, այն գրավականն են եղել, որով դարերի խորքից նրա ստեղծագործությունները մեզ են հասել առանց կորցնելու իրենց թարմ շունչը։

Արևելագետները սովորաբար Ալիշեր Նավոին համեմատել են վերածննդի դարաշրջանի այնպիսի ներկայացուցչի հետ, ինչպիսին Լեոնարդո դա Վինչին է։ Այս համեմատությունը այն հիմքն ունի, որ նավոին ևս, իբրև վերածննդի դարաշրջանի գործիչ, այնպիսի բաղձակողմանիությամբ է օժտված, ինչպես դա Վինչին։ Բանաստեղծ, բանասեր, արվեստի տեսարան, երաժիշտ, նկարիչ, այս բոլորը միացել են մի անձի մեջ։ Հիրավի նավոին իր թագմակողմանիությամբ բացառիկ տեղ է գրավում Արևելքի ժողովուրդների անցյալի մեծ մարդկանց շարքում։

Իր ստեղծագործություններից մեկը՝ «Յոթ մոլորակը» նավոին վերջացնում է, ասելով.

Թո՛ղ ժողովրդի սրտի հետ խոսի այս  
 ցիբիբ անմահ,  
 Հարազատ լինի՛ կարդացողների աճառաւ  
 հոգուն.  
 Գու՛ր ևս այս գրեմ իբար միացրո՛ւ  
 յոք հարկը երկնի,  
 Եվ քո՛ղ ևս ցիբիբ հար և միշտ  
 կարդան ողջ տիեզերքում։

Բանաստեղծի այս կրակը իրագործվում է այսօր, իր մահվանից հինգ հարյուր տարի հետո։ Սոցիալիզմի երկրում, ժողովուրդների անխախտ բարեկամության երկրում ուզե՞կ ժողովրդի հանձարեղ զավակի անմահ ստեղծագործությունները նոր միայն գրանում են իրենց արժանի գնահատականը։

ՔՈՎԱՆԻՍՏՈՒՅՈՒՆ

	Էջ
Հեղինակի կողմից	3
Պարսկա-Քաշիկական գրականության սկիզբը	5
Ֆիրգուսի	19
Յաթեր ադ-Նին Գորգանի	82
Նասեր Խոսրով	116
Օմար Խայյամ	137
Նիզամի Գյանջևի	147
Ալիշեր Նավոի	226



ՀԻՈՒՍԵՐԻ ՔԱՆՐԱՏԻ  
Ա Ղ Ա Յ Ա Ն

ԳՐՎԱԳԵՆՐ  
ԱՐԵՎԵԼԻՔԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՌԻԹՅԱՆ

(Օժանդակ ձեռնարկ արևելագիտական ֆակուլտետի համար)

Խմբագիր՝ Բ. Լ. Զուխադյան  
Հրատ. խմբագիր՝ Լ. Լ. Աղայան  
Տեխն. խմբագիր՝ Հ. Ա. Հովասափյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Հ. Ա. Վարդանյան

ՎՅ 07015

Պատվեր 108

Տպաքանակ 10000

Հանձնված է արտադրության 17/11 1971 թ.:  
Ստորագրված է տպագրության 20/1 1971 թ.:  
Թուղթ 60×84<sup>3/16</sup>: Տպագր. 15,25 մամուլ:  
Հրատ. 12,86 մամուլ: Գրքիչ՝ 90 կողմ:

Երևանի համալսարանի հրատարակչություն:  
Երևան, Արսիյան փող. № 52:

Երևանի համալսարանի տպարան: Երևան, Արսիյան, փող. № 52: